COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

Ստրասբուրգ **Գաղտնի**

2010 թվականի դեկտեմբերի 1 **CPT (2010) 82**

ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՄ ՊԱՏԺԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ (CPT) ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-21

Ընդունվել է 2010 թվականի նոյեմբերի 12-ին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽԿԿ զեկույցի ուղեկցական գրության պատճենը ..... - 5 -

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... - 7 -

Ա. Այցի ժամկետները եւ պատվիրակության կազմը..... - 7 -

Բ. Այցելած հիմնարկները ..... - 8 -

Գ. Պատվիրակության կողմից անցկացված խորհրդակցությունները եւ նրան առաջարկված համագործակցությունը..... - 10 -

Դ. Ազգային կանխարգելիչ մեխանիզմի ձեւավորումը ..... - 13 -

II. ԱՅՑԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... - 14 -

Ա. Ոստիկանության հիմնարկները ..... - 14 -

1. Նախնական դիտարկումները ..... - 14 -
2. Խոշտանգումները եւ վատ վերաբերմունքի այլ դրսեւորումներ..... - 16 -
3. Ոստիկանության կողմից հնարավոր վատ վերաբերմունքի հետ կապված գործերի քննությունը ..... - 24 -
4. Ոստիկանության կողմից ցուցաբերվող վատ վերաբերմունքի դեմ ընթացակարգային երաշխիքները..... - 30 -
5. Անազատության մեջ պահելու պայմանները ..... - 36 -

Բ. Ռազմական հիմնարկները..... - 38 -

1. Նախնական դիտարկումները..... - 38 -
2. Վատ վերաբերմունքը ..... - 40 -
3. Երաշխիքները ..... - 40 -
4. Անազատության մեջ պահելու պայմանները ..... - 42 -

Գ. Ազգային անվտանգության ծառայության հիմնարկները..... - 45 -

1. Վատ վերաբերմունքը ..... - 45 -

2. Անազատության մեջ պահելու պայմանները ..... - 47 -

Դ. Քրեակատարողական հիմնարկները ..... - 47 -

1. Նախնական դիտարկումները ..... - 47 -

2. Վատ վերաբերմունքը ..... - 51 -

3. Ցմահ ազատազրկման դատապարտված անձինք ..... - 55 -

4. Քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացիները ..... - 60 -

5. Քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց պահելու պայմանները ..... - 63 -

ա. Հերթական այցը «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ ..... - 63 -

բ. «Կոշ» քրեակատարողական հիմնարկը ..... - 66 -

գ. «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկը ..... - 69 -

6. Առողջապահությունը ..... - 72 -

ա. Բուժանձնակազմը եւ բուժկետերը ..... - 72 -

բ. Քրեակատարողական հիմնարկ ընդունելիս բժշկական զննության ենթարկելը (բռնության կանխումը) ..... - 75 -

գ. Տուբերկուլոզ ..... - 77 -

դ. Հոգեբանական եւ հոգեբուժական օգնությունը այցելած քրեակատարողական հիմնարկներում ..... - 77 -

ե. Երեւանի «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ–ի հոգեբուժական բաժանմունքը ..... - 79 -

զ. Ինքնասպանությունների կանխումը ..... - 83 -

է. Հացադուլները ..... - 84 -

7. ԽԿԿ-ի մանդատին առնչվող այլ հարցեր ..... - 84 -

ա. Քրեակատարողական հիմնարկի անձնակազմը ..... - 84 -

բ. Կարգապահությունը ..... - 86 -

գ. Կապն արտաքին աշխարհի հետ ..... - 89 -

դ. Բողոքները եւ հսկման ընթացակարգերը ..... - 91 -

Ե. Հոգեբուժական հիմնարկները ..... - 92 -

1. Նախնական դիտարկումները..... - 92 -
2. Վատ վերաբերմունքը ..... - 94 -
3. Հիվանդների կենսապայմանները..... - 94 -
4. Անձնակազմը..... - 97 -
5. Բուժումը..... - 99 -
6. Զսպման միջոցները ..... - 101 -
7. Երաշխիքները ..... - 103 -

Զ. Սոցիալական օգնության հաստատությունները .....- 109 -

1. Նախնական դիտարկումները..... - 109 -
2. Վատ վերաբերմունքը ..... - 110 -
3. Հիվանդների կենսապայմանները..... - 111 -
4. Անձնակազմը եւ հիվանդների խնամքը ..... - 112 -
5. Զսպման միջոցները ..... - 114 -
6. Երաշխիքները ..... - 115 -

ՀԱՎԵԼՎԱԾ I..... - 119 -

ԽԿԿ-Ի ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ ..... - 119 -

ՀԱՎԵԼՎԱԾ II.....- 159 -

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՈՐՈՆՑ ՀԵՏ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ԱՆՑԿԱՑՐԵԼ.....- 159 -

<u>ԽԿԿ զեկույցի ուղեկցական գրության պատճենը</u>

Պրն Նիկոլայ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ
Արդարադատության նախարարի տեղակալ
Արդարադատության նախարարություն
Հալաբյան փողոց 41/ա
Երեւան 0079
ՀԱՅԱՍՏԱՆ

Ստրասբուրգ, 2010 թվականի դեկտեմբերի 1

Հարգելի պրն Առուստամյան,

Խոշտանգումների եւ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ սույն գրությանը կցում եմ Հայաստանի կառավարությանն ուղղված զեկույցը՝ կազմված Խոշտանգումների եւ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) կողմից 2010 թվականի մայիսի 10–21–ը Հայաստան կատարած իր այցից հետո: Զեկույցն ընդունվել է ԽԿԿ–ի կողմից իր 73–րդ նիստում, որը կայացել է 2010 թվականի նոյեմբերի 8–12–ը:

ԽԿԿ–ի կողմից ձեւակերպված տարբեր առաջարկությունները, դիտարկումները եւ տեղեկատվություն ստանալու համար հարցումները ներկայացված են I հավելվածում: Մասնավորապես, ինչ վերաբերում է ԽԿԿ–ի <u>առաջարկություններին</u>՝ ղեկավարվելով Կոնվենցիայի 10–րդ հոդվածով՝ Կոմիտեն դիմում է Հայաստանի իշխանություններին, որպեսզի նրանք **վեց ամսվա ընթացքում** ներկայացնեն պատասխան՝ առաջարկությունների իրականացման նպատակով ձեռնարկված գործողությունների լիարժեք հաշվետվությամբ:

ԽԿԿ–ն հավատացած է, որ Հայաստանի իշխանությունների համար հնարավոր կլինի նաեւ վեց ամսվա ընթացքում պահանջվող պատասխանում ներկայացնել սույն զեկույցում

ձեւակերպված դիտարկումների վերաբերյալ արձագանքները, ինչպես նաեւ տեղեկատվություն ստանալու համար հարցումների պատասխանները:

110–րդ պարբերությամբ հարցվող տեղեկատվության կապակցությամբ ԽԿԿ–ն խնդրում է, որ այն ներկայացվի **մեկ ամսվա ընթացքում**:

Պատասխանները հայերենով տրամադրվելու դեպքում ԽԿԿ–ն կխնդրեր, որ դրանք ուղեկցվեին անգլերեն կամ ֆրանսերեն թարգմանությամբ: Շատ օգտակար կլիներ, եթե Հայաստանի իշխանությունները պատասխանը կարողանային տրամադրել նաեւ էլեկտրոնային տարբերակով:

ԽԿԿ–ի այցի վերաբերյալ զեկույցի կամ հետագա ընթացակարգի վերաբերյալ հարցեր առաջանալու դեպքում, կարող եք ստանալ իմ անվերապահ աջակցությունը:

Հարգանքներով,

Մաուրո ՊԱԼՄԱ

Խոշտանգումների եւ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի նախագահ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Այցի ժամկետները եւ պատվիրակության կազմը

1. Համաձայն Խոշտանգումների եւ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 7–րդ հոդվածի՝ ԽԿԿ–ի պատվիրակությունը 2010 թվականի մայիսի 10–21–ը այցելել է Հայաստան: Այդ այցը 2010 թվականի համար նախատեսված՝ Կոմիտեի պարբերական այցերից մեկն էր:

Դա ԽԿԿ–ի երրորդ պարբերական այցն էր Հայաստան:[1]

2. Այցն իրականացրել են ԽԿԿ–ի հետեւյալ անդամները՝

- Մաուրո ՊԱԼՄԱ, Կոմիտեի նախագահ (պատվիրակության ղեկավար)
- Իվան ՅԱՆԿՈՎԻՉ
- Իզոլդե ՔԻԲԵՐ
- Մարզենա ՔՍԵԼ
- Ջորջ ՏՈՒԳՈՒՇԻ

Նրանց օժանդակել են Յոհան ՖՐԻՇՏԵԴՏԸ եւ Ստեֆանի ՄԵԳԻՍԸ ԽԿԿ–ի քարտուղարությունից:

Նրանց օգնել են՝

- Պոլ ԲՈՒՍԿԻՆԻՆ, Հետաքննությունների հարցերով տնօրեն, «Խաղաղության գվարդիա» ազգային ոստիկանության գործունեությանն առնչվող բողոքներ քննող՝ մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողով, Դուբլին, Իռլանդիա եւ Լանկաշիրի ոստիկանության նախկին ավագ խուզարկու, Միացյալ Թագավորություն (փորձագետ)

---

[1] 2002 եւ 2006 թվականներին կատարած նախորդ երկու պարբերական այցերի վերաբերյալ զեկույցները, ինչպես նաեւ ԽԿԿ–ի կողմից 2004 եւ 2008 թվականներին Հայաստան կատարած երկու հատուկ այցերի վերաբերյալ զեկույցները, դրանց պատասխանների հետ, հրապարակվել են Հայաստանի իշխանությունների խնդրանքով (տե՛ս CPT/Inf (2004) 25, CPT/Inf (2004) 26, CPT/Inf (2004) 27, CPT/Inf (2006) 38, CPT/Inf (2006) 39, CPT/Inf (2007) 47 եւ CPT/Inf (2007) 48, CPT/Inf (2010) 7 եւ CPT/Inf (2010) 8):

- Կլայվ ՄՅՈՒՆ, դատական հոգեբույժ–խորհրդատու, Օքսֆորդ, Միացյալ Թագավորություն (փորձագետ)
- Արամ ԲԱՅԱՆԴՈՒՐՅԱՆԸ (բանավոր թարգմանիչ)
- Անահիտ ԲՈԲԻԿՅԱՆԸ (բանավոր թարգմանիչ)
- Գեւորգ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ (բանավոր թարգմանիչ)
- Վահե ՄԿՐՏՉՅԱՆԸ (բանավոր թարգմանիչ)
- Լեւոն ՇԱՀԶԱԴԵՅԱՆԸ (բանավոր թարգմանիչ):

Բ. <u>Այցելած հիմնարկները</u>

3. Պատվիրակությունն այցելել է հետեւյալ վայրերը՝

<u>Ոստիկանության հիմնարկներ</u>

- Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ձերբակալված անձանց պահելու վայր
- Ոստիկանության Կենտրոն վարչական շրջանի բաժին, Երեւան
- Ոստիկանության Նոր Նորք վարչական շրջանի բաժին, Երեւան
- Ոստիկանության Շենգավիթ վարչական շրջանի բաժին, Երեւան
- Ոստիկանության Աբովյանի բաժին
- Ոստիկանության Արմավիրի բաժին
- Ոստիկանության Չարենցավանի բաժին
- Ոստիկանության Էջմիածնի բաժին
- Ոստիկանության Գավառի բաժին
- Ոստիկանության Մարտունու բաժին
- Ոստիկանության Սեւանի բաժին

- Ոստիկանության Վարդենիսի բաժին

Ռազմական հիմնարկներ

- Ռազմական ոստիկանության մեկուսարան, Երեւան
- Երեւանի կայազորի ռազմական ոստիկանության բաժնի կարգապահական մեկուսարան
- Հրազդանի կարգապահական գումարտակ (մենախցեր)
- Սեւանի կայազորի ռազմական ոստիկանության բաժնի կարգապահական մեկուսարան, Մարտունի

Ազգային անվտանգության ծառայության հիմնարկներ

- Ազգային անվտանգության ծառայության ձերբակալված անձանց պահելու վայր, Երեւան

Քրեակատարողական ծառայության հիմնարկներ

- «Կոշ» քրեակատարողական հիմնարկ
- «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ
- «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ (հոգեբուժական բաժանմունք)
- «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ

Պատվիրակությունն ուսումնասիրել է նաեւ «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում գտնվող՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց վիճակը:

Հոգեբուժական հաստատություններ

- Նուբարաշենի հանրապետական հոգեբուժական հիվանդանոց (հատուկ հսկվող բաժանմունքներ)

- Երեւանի «Նորք» հոգեկան առողջության կենտրոն

Սոցիալական խնամքի հաստատություններ

- Վարդենիսի նյարդահոգեբանական տուն–ինտերնատ («Ինտերնատ»)

Գ. Պատվիրակության կողմից անցկացված խորհրդակցությունները եւ նրան առաջարկված համագործակցությունը

4. Այցի ընթացքում ԽԿԿ պատվիրակությունը խորհրդակցություն է անցկացրել արդարադատության նախարար Գեւորգ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ, արդարադատության նախարարի տեղակալ Նիկոլայ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻ, ոստիկանության պետի առաջին տեղակալ Հունան ՊՈՂՈՍՅԱՆԻ, ոստիկանության պետի տեղակալ Արթուր ՕՍԻԿՅԱՆԻ, առողջապահության նախարարի տեղակալ Ալեքսանդր ՂՈՒԿԱՍՅԱՆԻ, պաշտպանության նախարարի տեղակալ Արա ՆԱԶԱՐՅԱՆԻ, ինչպես նաեւ այլ պետական բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ: Պատվիրակությունը հանդիպում է ունեցել նաեւ գլխավոր դատախազ Աղվան ՀՈՎՍԵՓՅԱՆԻ եւ հատուկ քննչական ծառայության պետ Անդրանիկ ՄԻՐԶՈՅԱՆԻ հետ: Այնուհետեւ, այն հանդիպել է Մարդու իրավունքների պաշտպան Արմեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հետ:

Քննարկումներ են անցկացվել նաեւ ԽԿԿ–ին հետաքրքրող ոլորտներում գործունեություն ծավալող միջազգային եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Այն պետական մարմինների, այլ մարմինների եւ միջազգային ու հասարակական կազմակերպությունների ցանկը, որոնց հետ պատվիրակությունը խորհրդակցություններ է անցկացրել, ներկայացված է սույն զեկույցին կից II հավելվածում:

5. ԽԿԿ պատվիրակության հետ պետական մարմինների եւ այցելած հիմնարկների անձնակազմի համագործակցությունն ընդհանուր առմամբ իրականացվել է բարձր մակարդակի վրա: Պատվիրակությանը հիմնականում արագորեն ընձեռնվել է այցելած վայրեր (նաեւ այն վայրերը, ուր այցի վերաբերյալ նախապես չէր տեղեկացվել) մուտք գործելու եւ

ազատությունից զրկված անձանց հետ առանձին զրուցելու հնարավորություն՝ Կոնվենցիայի դրույթներին համապատասխան: Ավելին, պատվիրակությանը, ընդհանուր առմամբ, տրամադրվել են անհրաժեշտ փաստաթղթեր, իսկ այցի ընթացքում կատարված՝ տեղեկատվություն ստանալու համար լրացուցիչ հարցումներն անմիջապես բավարարվել են:

Այնուամենայնիվ, նշված բարձր մակարդակի համագործակցությանը զուգահեռ եղել են նաեւ մի քանի բացառություններ: Պատվիրակությանը տրամադրվել էր հիմնարկների ոչ ամբողջական ցանկ, մասնավորապես՝ դրանում չէին ընդգրկվել ոստիկանության Երեւանի վարչական շրջանների բաժինները, թեեւ օրենքի համաձայն՝ այդպիսի հիմնարկներում անձանց կարելի է պահել մինչեւ երեք ժամ (եւ փաստացի երբեմն պահում են այդ վայրերում շատ ավելի երկար ժամանակ): ԽԿԿ–ն հավատացած է, որ Կոմիտեի հաջորդ պատվիրակություններին կտրամադրվի անձանց ազատությունից զրկելու (նույնիսկ կարճ ժամանակով) բոլոր վայրերի ամբողջական եւ թարմացված ցանկը՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի (2)(բ) պարբերությանը համապատասխան:

Բացի դրանից՝ պատվիրակությունը որոշակի խոչընդոտների է հանդիպել ոստիկանության Երեւանի Կենտրոն վարչական շրջանի բաժին երկրորդ այցի ժամանակ. պատվիրակությանը հաստատություն մուտք գործելու հնարավորություն է տրվել միայն մոտ 20 րոպե ուշացումով, եւ չեն տրամադրվել պահանջված բոլոր տեղեկություններն ու փաստաթղթերը: Նկարագրված իրադրությունը հստակորեն հակասում է 3–րդ հոդվածով սահմանված համագործակցության սկզբունքին, եւ մասնավորապես, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի (2)(գ) եւ (դ) պարբերությանը: ԽԿԿ–ն հորդորում է Հայաստանի իշխանություններին ապահովել, որ հետագայում նմանատիպ խոչընդոտները բացառվեն:

6. Ինչպես ԽԿԿ–ն ընդգծել է 2006 թվականին կատարած այցի վերաբերյալ զեկույցում, Կոնվենցիայի 3–րդ հոդվածով սահմանված համագործակցության սկզբունքը չի սահմանափակվում միայն այցելող պատվիրակությունների աշխատանքներին աջակցելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերով: Այն նաեւ պահանջում է, որ վճռական միջոցներ ձեռնարկվեն ի պատասխան Կոմիտեի առաջարկությունների: Հակառակ դեպքում, ԽԿԿ–ի առաջարկությունների առնչությամբ շարունակաբար գործողություններ չձեռնարկելը կարող է

հանգեցնել հարցը Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերության[2] համաձայն լուծելու անհրաժեշտության:

Այս առնչությամբ ԽԿԿ–ն մտահոգված է, որ մի շարք դրական զարգացումներ մնում են աննկատ՝ որոշ առանցքային ոլորտներում արձանագրված աննշան առաջընթացի կամ առաջընթացի բացակայության հետեւանքով: Օրինակ՝ Կոմիտեն նկատել է, որ ոստիկանության հիմնարկներում անազատության մեջ պահելու նյութակենցաղային պայմանները է՛լ ավելի էին բարելավվել. այնուամենայնիվ, ոստիկանության կողմից անազատության մեջ պահվող անձանց նկատմամբ վերաբերմունքի հարցը դեռեւս լուրջ խնդիր է: Ավելին, թեեւ պարզվել է, որ դրական տեղաշարժ էր արձանագրվել ցմահ ազատազրկման դատապարտված բանտարկյալների նկատմամբ քրեակատարողական հիմնարկի անձնակազմի կողմից ցուցաբերվող վերաբերմունքում, քրեակատարողական հիմնարկում գտնվող անձանց պահելու պայմանները շարունակում էին լինել լուրջ մտահոգության առարկա: Հոգեբուժական հաստատությունների առնչությամբ ԽԿԿ–ն նկատել է, որ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի հոգեբուժական բաժանմունքում եւ Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հատուկ հսկվող բաժանմունքներում հիվանդասենյակների պատուհանները ծածկող փեղկերը հանվել էին, Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հատուկ հսկվող բաժանմունքներում բակում այլեւս չէին պահվում պահակաշներ, եւ ընդունվել էին զսպման միջոցների կիրառման նոր կանոններ. այդուհանդերձ, հոգեբուժական օգնության տրամադրման եւ հոգեկան խանգարումով տառապող քաղաքացիական անձանց ոչ հոժարակամ հոսպիտալացման իրավական երաշխիքների իրականացման հետ կապված գրեթե ոչ մի դրական տեղաշարժ չի նկատվել: **ԽԿԿ–ն կոչ է անում Հայաստանի իշխանություններին մանրամասն գործողությունների ծրագրերի հիման վրա ձեռնարկել արդյունավետ քայլեր, բարելավել իրավիճակը՝ հաշվի առնելով Կոմիտեի առաջարկությունները եւ Կոնվենցիայի հիմքում ընկած համագործակցության սկզբունքին համապատասխան:**

7. Այցի ավարտին ԽԿԿ պատվիրակությունը հանդիպել է Հայաստանի իշխանությունների ներկայացուցիչների հետ՝ այցի ընթացքում հայտնաբերված հիմնական փաստերը վերջիններիս

---

[2] Համաձայն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերության՝ «Եթե Կողմը չի համագործակցում կամ հրաժարվում է բարելավել իրավիճակը՝ Կոմիտեի առաջարկություններին համապատասխան, Կոմիտեն, Կողմին իր տեսակետներն արտահայտելու հնարավորություն տալուց հետո, կարող է իր անդամների երկու երրորդ մեծամասնությամբ որոշել հարցի վերաբերյալ հանդես գալ հրապարակային հայտարարությամբ»:

ներկայացնելու նպատակով: Օգտվելով առիթից՝ պատվիրակությունն իր մտահոգությունն է արտահայտել «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի թիվ 18 եւ 21 խցերում պահվող՝ ցմահ ազատազրկման դատապարտված երկու անձանց վիճակի վերաբերյալ: Պատվիրակությունը դիմել է [Հայաստանի իշխանություններին], որ երկու ամսվա ընթացքում իրեն ներկայացվեն (i) ազատությունից զրկված համապատասխան անձանց մանրամասն ու անկախ հոգեբուժական փորձաքննության արդյունքները եւ (ii) ազատությունից զրկված նշված անձանց պահելու նյութակենցաղային պայմանների եւ ռեժիմի բարելավման ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին զեկույց:

Վերը նշված հարցումները հետագայում հաստատվել են ԽԿԿ–ի նախագահի 2010 թվականի հունիսի 3–ի գրությամբ: 2010 թվականի սեպտեմբերի 6–ի գրությամբ եւ 2010 թվականի սեպտեմբերի 9–ի հաղորդագրությամբ Հայաստանի իշխանությունները տեղեկություններ են տրամադրել Կոմիտեին այդ հարցումներին ի պատասխան ձեռնարկված միջոցների մասին եւ մեկնաբանություններ ներկայացրել պատվիրակության նախնական դիտարկումների վերաբերյալ: Այդ տեղեկություններին անդրադարձ կկատարվի ստորեւ:

Դ. <u>Ազգային կանխարգելիչ մեխանիզմի ձեւավորումը</u>

8. ԽԿԿ–ն նշում է, որ քայլեր են ձեռնարկվել ազգային կանխարգելիչ մեխանիզմի (ԱԿՄ) ձեւավորման ուղղությամբ՝ Խոշտանգումների եւ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ Հայաստանի ստանձնած պարտավորությունները կատարելու համար: 2008 թվականին այդ խնդիրը վերապահվել է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին: 2010 թվականի այցի ժամանակ գործողություններ էին իրականացվում ԿԱՄ–ի աշխատանքներում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին ներգրավելու ուղղությամբ՝ մասնավորապես խոշտանգումների կանխարգելման խորհուրդ ստեղծելու միջոցով: **ԽԿԿ–ն կցանկանար այդ խնդրի կապակցությամբ թարմացված տեղեկություններ ստանալ:**

II. ԱՅՑԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Ոստիկանության հիմնարկները

1. Նախնական դիտարկումները

9. Անհրաժեշտ է վերստին նշել, որ կասկածյալն ազատությունից փաստացի զրկվելուց հետո ոստիկանությունում անազատության մեջ կարող է պահվել մինչեւ 72 ժամ[3], որի ընթացքում նա պետք է տարվի կալանավորման, այլ խափանման միջոցի կիրառման կամ ազատ արձակման վերաբերյալ որոշում կայացնող դատավորի մոտ: Ձերբակալման մասին արձանագրությունը պետք է կազմվի համապատասխան անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի[4] մոտ տանելուց հետո երեք ժամվա ընթացքում:

2010 թվականի այցի ընթացքում ԽԿԿ պատվիրակությունը պարզել է, որ սահմանված 72 ժամ ժամկետը սովորաբար պահպանվում է: Ըստ հարցազրույցին մասնակցած ոստիկանության ծառայողների՝ կիրառվող գործելակերպը հետեւյալն է՝ արգելանքի վերցված անձը նախ օպերլիազորների կողմից տարվում է հարցաքննությունների սենյակ, իսկ ձերբակալման մասին արձանագրությունը կազմվում է ավելի ուշ փուլում:[5] Պատվիրակությունը նկատել է բազում դեպքեր, երբ ձերբակալման մասին արձանագրություն կազմելուն նախորդող ազատությունից զրկելու ժամանակահատվածը էապես գերազանցել է երեք ժամը (այսինքն՝ մինչեւ մոտ 70 ժամ՝ արգելանքի վերցնելուց հետո): Ակնհայտ է դարձել, որ այդ ժամանակը հաճախ օգտագործվում էր խոստովանական ցուցմունքներ կորզելու եւ (կամ) ապացույցներ ձեռք բերելու համար՝ նախքան արգելանքի վերցված անձին պաշտոնապես կասկածյալ ճանաչելը եւ իր իրավունքների մասին տեղեկացնելը: Այդ գործելակերպը առաջացնում է վատ

---

[3] Տե՛ս, մասնավորապես, քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի երրորդ մասը եւ 138–րդ հոդվածը:

[4] Տե՛ս քրեական դատավարության օրենսգրքի 131[1] հոդվածը:

[5] 2010 թվականի սեպտեմբերի 6–ի իրենց գրությունում Հայաստանի իշխանությունները նշել էին, որ ոստիկանության ծառայողները կարող են արգելանքի տակ գտնվող անձանցից ստանալ «բացատրություններ» կամ նրանց ենթարկել «օպերատիվ հարցաքննության»՝ նախքան ձերբակալման մասին արձանագրություն կազմելը:

վերաբերմունքի դրսեւորման մեծ վտանգ: **ԽԿԿ–ն կոչ է անում Հայաստանի իշխանություններին քայլեր ձեռնարկել՝ ապահովելու համար, որ ձերբակալման մասին արձանագրությունը կազմվի արգելանքի վերցնելուց հետո անհապաղ: Ավելին, անհրաժեշտ է նաեւ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համար, որ ձերբակալման մասին արձանագրության մեջ նշվի արգելանքի վերցնելու եւ ոստիկանության հիմնարկ ընդունելու ժամը (ի հավելումն ձերբակալման մասին արձանագրության կազմումը սկսելու ժամի):**

10. Հայաստանի օրենսդրության համաձայն՝ կալանավորված անձը չպետք է պահվի ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայրերում ավելի, քան երեք օր, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են օբյեկտիվ տրանսպորտային դժվարություններ:[6] 2010 թվականի այցի ընթացքում պարզ է դարձել, որ կալանավորված անձանց մեծ մասը քրեակատարողական հիմնարկ է տեղափոխվել երեք օրվա ընթացքում: Այդուհանդերձ, պատվիրակությունը զրուցել է մի քանի անձանց հետ, ովքեր անազատության մեջ են պահվել ոստիկանության շենքում մինչեւ երկու շաբաթ: ԽԿԿ–ն պետք է ընդգծի, որ վատ վերաբերմունքի կանխարգելման նպատակով առավել արդյունավետ կլինի, եթե կասկածյալն առավելագույնս շուտ հանձնվի անազատության մեջ պահող մարմին, որը ֆունկցիոնալ եւ ինստիտուցիոնալ տեսակետից անջատ է ոստիկանությունից: **Կոմիտեն առաջարկում է, որ Հայաստանի իշխանություններն ապահովեն, որ կալանավորված անձինք հնարավորինս արագորեն տեղափոխվեն քրեակատարողական հիմնարկ:** ԽԿԿ–ի կարծիքով՝ **ոստիկանության կողմից հետագա հարցաքննությունները, որոնց անհրաժեշտությունը կարող է առաջանալ, պետք է հնարավորինս իրականացվեն քրեակատարողական հիմնարկներում** (ոստիկանության կողմից հարցաքննությունների առնչությամբ՝ տե՛ս 18–րդ պարբերությունում արված առաջարկությունները):

11. Այցի ընթացքում պատվիրակությունն ստացել է բազմաթիվ հայտարարություններ այն մասին, որ ոստիկանության ծառայողներն անազատության մեջ պահվող անձանցից (կամ նրանց հարազատներից) գումար են պահանջում նրանց ազատ արձակումը կազմակերպելու դիմաց: Ավելին, պատվիրակության հետ զրուցած՝ անազատության մեջ պահվող անձանց շրջանում լայն տարածում ուներ այն համոզմունքը, որ որոշակի արտոնություններ կարելի էր

[6] Տե՛ս քրեական դատավարության օրենսգրքի 137–րդ հոդվածի չորրորդ մասը եւ «Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 6–րդ հոդվածը:

ստանալ կաշառքի միջոցով. սա ինքնին անհանգստության տեղիք է տալիս: **ԽԿԿ–ն առաջարկում է, որ Հայաստանի իշխանությունները ոստիկանության բոլոր ծառայողներին հստակ զգուշացնեն, այդ թվում՝ մշտական վերապատրաստման միջոցով, որ նրանք, ովքեր կչարաշահեն իրենց դիրքը ազատությունից զրկված անձանցից կամ նրանց հարազատներից դրամ ստանալու նպատակով, կենթարկվեն քրեական հետապնդման: Ընդհանուր առմամբ, այս առնչությամբ հղում է կատարվում Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խմբի (ԳՐԵԿՈ) ներկայացրած առաջարկություններին:**[7]

2. Խոշտանգումները եւ վատ վերաբերմունքի այլ դրսեւորումներ

12. 2010 թվականի այցի ընթացքում պատվիրակությունը լսել է զգալի թվով արժանահավատ ու համահունչ հայտարարություններ ոստիկանության օպերլիազորների, երբեմն նաեւ բարձրաստիճան ծառայողների կողմից նախնական հարցաքննությունների ժամանակ (այսինքն՝ նախքան ձերբակալման մասին արձանագրություն կազմելը) <u>անազատության մեջ պահվող անձանց նկատմամբ վերջերս դրսեւորված ֆիզիկական բնույթի վատ վերաբերմունքի մասին</u>:[8] Ենթադրյալ վատ վերաբերմունքը հիմնականում դրսեւորվել է բռունցքով, ոտքով, ինչպես նաեւ ռետինե մահակներով, ջրով լի շշերով կամ փայտե ձողերով հարվածներով, որոնց նպատակը խոստովանական ցուցմունք կորզելը կամ այլ տեղեկություններ ստանալն էր: Որոշ դեպքերում ենթադրյալ վատ վերաբերմունքը դրսեւորվել է այն աստիճան դաժանությամբ, որ այն կարելի է համարել խոշտանգում (օրինակ՝ դաժան ծեծ, էլեկտրաշոկի կիրառում՝ կայծային պարպիչների միջոցով, հարվածներ կրունկներին): Ավելին, շատ անձինք, այդ թվում՝ ոստիկանության կողմից որպես վկաներ հարցաքննված անձինք պնդել են, որ իրենց նկատմամբ կիրառվել են հարցաքննության ճնշող մեթոդներ (օրինակ՝ անդադար

[7] Տե՛ս ԳՐԵԿՈ–ի՝ Հայաստանի վերաբերյալ գնահատման եւ պարտավորությունների կատարման մասին զեկույցները (www.coe.int/t/dghl/monitoring/greco):

[8] Պետք է նշել, որ այն անձինք, ում հետ զրուցել է պատվիարկությունը, համաձայնել են պատմել ոստիկանությունում ունեցած իրենց փորձի մասին՝ պայմանով, որ իրենց անունները չբացահայտվեն:

հարցաքննություն մինչեւ ութ հարցաքննողների կողմից, ֆիզիկական բնույթի վատ վերաբերմունքի կամ պատժի կամ ընտանիքի անդամներին ուղղված սպառնալիքներ)՝ նպատակ ունենալով ցուցմունքներ կորզել իրենցից կամ ստիպել, որ հանդես գան որպես ոստիկանությանը տեղեկություններ հաղորդողներ: Անձանց մեծ մասը, որ նշում էր, թե նման հարցաքննությունների ընթացքում իրենց նկատմամբ չի կիրառվել վատ վերաբերմունք, ընդհանուր առմամբ դա պայմանավորում էին այն փաստով, որ իրենք արգելանքի էին վերցվել հանցանք կատարելու պահին կամ անմիջապես ստորագրել էին ոստիկանության ծառայողների կողմից ակնկալվող ցուցմունքները:

Պատվիրակությունն ստացել է նաեւ որոշ հայտարարություններ այն մասին, որ Երեւանի Նոր Նորք վարչական շրջանում 2010 թվականի ապրիլի 17–ին ոստիկանության իրականացրած լայնամասշտաբ օպերացիայի ընթացքում չափից ավելի ֆիզիկական ուժ է կիրառվել արգելանքի վերցնելու ժամանակ: Օպերացիան, որի հետեւանքով արգելանքի է վերցվել մոտ 50 անձ, իրականացրել են մի քանի ոստիկանական ուժեր, այդ թվում՝ դիմակավորված ոստիկաններ, որոնց համազգեստի վրա ակնհայտորեն չեն եղել նույնականացման համարներ կամ տարբերանշաններ:[9] Մեկ այլ դեպքում, պատվիրակության հետ զրուցած մեկ անձ նշեց, որ արգելանքի վերցվելիս կայծային պարպիչի կիրառման հետեւանքով կորցրել է գիտակցությունը:

Որպես դրական նկատառում կարելի է նշել, որ ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայրերի՝ անազատության մեջ պահվողների հետ առնչություն ունեցող ծառայողների կողմից վատ վերաբերմունքի դրսեւորման մասին հայտարարություններ չեն ստացվել:

13. 2010 թվականի ապրիլի 13–ին ոստիկանությունում անազատության մեջ գտնվելիս մահացած Վահան Խալաֆյանի գործը վատ վերաբերմունքի խնդրի առկայության վկայությունն է. այն Հայաստանում լայնորեն լուսաբանվել է լրատվամիջոցների կողմից: Այցի ժամանակ,

[9] Միջոցառմանը մասնակցել են Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության եւ Ոստիկանության Նոր Նորք վարչական շրջանի բաժնի ծառայողները, ոստիկանության պարեկապահակային ծառայությունը (այսպես կոչված՝ «կարմիր բերետավորները») եւ Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչությունը: Պատվիրակությանը հայտնի է դարձել, որ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչության ծառայողներն այդպիսի միջամտությունների ժամանակ կարող են կրել դիմակներ:

գործի նախաքննությամբ ձեռք բերված ապացույցներն արդեն հստակորեն վկայում էին, որ պրն Խալաֆյանը պահվել էր ոստիկանության Չարենցավանի բաժնում մոտ յոթ ժամ՝ առանց ձերբակալման մասին արձանագրություն կազմելու, եւ որ նա հարցաքննության ընթացքում ենթարկվել էր դաժան ծեծի ոստիկանության չորս ծառայողների, այդ թվում՝ քրեական հետախուզության բաժանմունքի պետի կողմից: Ինչպես հայտնվել էր՝ պրն Խալաֆյանը իր կողքին գտնվող պահարանից դանակ է վերցրել եւ երկու անգամ հարվածել իր որովայնի ներքեւի հատվածին: Հետմահու փորձաքննությամբ հաստատվել է, որ Խալաֆյանը մահացել է նշված վնասվածքներից, սակայն հայտնաբերվել են նաեւ բազմաթիվ այլ վնասվածքներ, որոնք վկայում էին նախքան դանակով մահացու վերքերը հասցնելը նրա նկատմամբ կիրառված բռնության մասին (այն է՝ գլխի վերեւի հատվածում գլխամաշկի արյունազեղումներ, որոնք ուղեկցվել են դեպի ուղեղ արյունահոսությամբ, արյունազեղումներ բերանի մեջ, ստորին ծնոտի վրա, աջ ծնկի հետնամասում, աջ սրունքի եւ աջ ոտքի կոճի վրա):[10]

14. Ոստիկանության ծառայողները (ներառյալ օպերլիազորները), ում հետ զրուցել է պատվիրակությունը, լիովին գիտակցում էին, որ իրենց մոտ անազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ վատ վերաբերմունք դրսեւորելն անընդունելի է եւ՛ իրավական, եւ՛ մասնագիտական տեսանկյունից: Մյուս կողմից, ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաները, որոնց հանդիպել է պատվիրակությունը, նշել են, որ ոստիկանության հակահիրավական վարքագիծը շարունակում է խնդիր լինել, եւ որ իրենք ջանքեր են գործադրում այդ խնդիրը հաղթահարելու ու ոստիկանության նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու ուղղությամբ: ԽԿԿ–ի կարծիքով՝ այս խնդրի հետ կապված որոշակի փոփոխությունների հասնելու եւ հանրության վստահությունը բարձրացնելու հիմնական պարտականությունն ընկած է ոստիկանության ղեկավարության վրա, որը ոստիկանության համակարգում պետք է ձեւավորի մի մշակույթ, ըստ որի ճիշտ վարքագիծը գործընկերների կողմից դրսեւորված վատ վերաբերմունքի մասին զեկուցելն է: **Կոմիտեն առաջարկում է Հայաստանի իշխանություններին պարբերաբար ոստիկանության բոլոր ծառայողներին հստակ զգուշացնել <u>վատ վերաբերմունքի «բացարձակ անհանդուրժելիության» մասին</u>՝**

[10] Տե՛ս նաեւ 22–րդ պարբերությունը: Այս առթիվ պետք է նշել, որ գործի առնչությամբ նախաքննություն սկսելուց կարճ ժամանակ անց ոստիկանության պետը լրատվամիջոցներին ասել է, որ պրն Խալաֆյանի նկատմամբ ոստիկանության կողմից վատ վերաբերմունք չի ցուցաբերվել: Հետագայում նա նշել է, որ իրեն շփոթության մեջ են գցել իր աշխատակիցները:

ամենաբարձր մակարդակով ընդունված համապատասխան հայտարարությունների միջոցով: Որպես այդ զգուշացման մի մաս՝ պետք է հստակորեն նշվի, որ ցանկացած տեսակի վատ վերաբերմունք ցուցաբերած, դրան օժանդակած եւ դրդած կամ այն հանդուրժած ոստիկանության ցանկացած ծառայող խստորեն պատժվելու է: Բացի դրանից՝ ոստիկանության աշխատակիցներին անհրաժեշտ է հիշեցնել, որ խիստ անհրաժեշտ ուժից ավելի ուժ չպետք է կիրառվի արգելանքի վերցնելիս, եւ որ արգելանքի վերցված անձանց հսկողության տակ առնելուց հետո երբեք որեւէ արդարացում չի կարող լինել նրանց հարվածելու համար: Միեւնույն ժամանակ, անազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ մարդասիրական վերաբերմունքը պետք է խրախուսվի:

15. Պարզվել է, որ 2008 թվականի դեպքերից հետո[11] ոստիկանությունը որդեգրել է վատ վերաբերմունքի խնդրի դեմ պայքարի բազմակողմանի ռազմավարություն: Մասնավորապես, 2009 թվականին ընդունվել են օրենսդրական փոփոխություններ՝ <u>ֆիզիկական ուժի եւ «հատուկ միջոցների» (ներառյալ էլեկտրահարող սարքերը) կիրառման</u> մասին զեկուցելու մեխանիզմը կատարելագործելու համար: Ուժ, «հատուկ միջոցներ» կամ հրազեն գործադրած ոստիկանը պետք է դրա մասին անհապաղ զեկուցի իր վերադասին, իսկ վնասվածքի կամ մահվան ցանկացած դեպքի մասին պետք է անմիջապես հայտնել քրեական հետապնդման եւ առողջապահական մարմիններին:[12]

Ավելին, պատվիրակությունը տեղեկացվել է, որ մշակվում են ուժի եւ «հատուկ միջոցների» կիրառման խիստ չափորոշիչներ՝ հաշվի առնելով միջազգային չափանիշները: **ԽԿԿ-ն կցանկանար համապատասխան ժամկետում ստանալ համապատասխան իրավական ակտերի կամ հրահանգների օրինակը:**

16. Այցելած հիմնարկներում ոստիկանության ծառայողների տրամադրության տակ գտնվող «հատուկ միջոցների» շարքում էին կայծային պարպիչները: Այս համատեքստում ԽԿԿ-ին

---

[11] 2008 թվականի նախագահական ընտրություններից անմիջապես հետո 2008 թվականի մարտի 1-ին տեղի է ունեցել ոստիկանական օպերացիա, որի նպատակը Երեւանում ընդդիմության հավաքները ցրելն էր: Այդ օպերացիայի ընթացքում եւ դրանից հետո մի քանի տասնյակ մարդիկ ձերբակալվել են, հարյուրավոր մարդիկ վիրավորվել, եւ մի քանի մարդ մահացել է: Մանրամասների համար տե՛ս ԽԿԿ զեկույցը 2008 թվականի այցի վերաբերյալ եւ կառավարության պատասխանը (CPT/Inf (2010) 7 եւ CPT/Inf (2010) 8):

[12] Տե՛ս «Ոստիկանության մասին» օրենքի 29-րդ հոդվածը՝ փոփոխված 2009 թվականի ապրիլին:

անհանգստացնում է այն հանգամանքը, որ այդ զենքերի գործադրումը թույլատրվում է մեծ թվով իրավիճակներում: Օրինակ՝ անընդունելի է այդպիսի զենքերի կիրառումը սոսկ հրամանի կատարումն ապահովելու նպատակով:[13] Ավելին, այցի արդյունքում պատվիրակության ձեռք բերած փաստերը վկայում են, որ լուրջ թերացումներ էին առկա դրանց գործադրման նկատմամբ անհրաժեշտ վերահսկողության առումով: Կոմիտեն պետք է շեշտի, որ էլեկտրահարող սարքերը կարող են առաջացնել սուր ցավ, եւ դրանց ներհատուկ է սխալ կիրառվելու հավանականությունը: Այդ զենքերի գործադրումը պետք է սահմանափակվի այնպիսի իրադրություններով, երբ առկա է կյանքին սպառնացող կամ լուրջ վնասվածքի իրական եւ անմիջական վտանգ: Ոստիկանության ծառայողները, ում պետք է տրամադրվեն էլեկտրահարող սարքեր, պետք է լինեն հատուկ ընտրված եւ համապատասխանաբար վերապատրաստված,[14] ինչպես նաեւ պետք է ստանան մանրամասն ցուցումներ այդ զենքերի կիրառման մասին: Կարեւոր է նաեւ, որ «Ոստիկանության մասին» օրենքում նշված զեկուցման իրավական պարտականությունները չլինեն պարզապես ձեւականություն, այլ փոխարենը հանգեցնեն ոստիկանության, քրեական հետապնդման ու առողջապահական իրավասու մարմինների կողմից խիստ վերահսկողության էլեկտրահարող սարքերի կիրառման նկատմամբ: **ԽԿԿ–ն առաջարկում է, որ էլեկտրահարող սարքերի կիրառումը վերանայվի՝ հաշվի առնելով վերը նշված դիտարկումները:[15] Համապատասխան օրենքներում ու կանոնակարգերում պետք է կատարվեն անհրաժեշտ փոփոխություններ:**

Բացի դրանից՝ **2009 եւ 2010 թվականների համար Կոմիտեն կցանկանար ստանալ հետեւյալ տեղեկությունները**.

i) ոստիկանության ծառայողների կողմից «հատուկ միջոցների», մասնավորապես՝ էլեկտրահարող սարքերի կիրառման արձանագրված դեպքերի թիվը,

---

[13] Համաձայն «Ոստիկանության մասին» օրենքի 31–րդ հոդվածի՝ էլեկտրահարող սարքեր կարող են կիրառվել «ոստիկանության ծառայողին կամ հասարակական կարգի պահպանության եւ հանցագործությունների դեմ տարվող պայքարին աջակցող, իրենց հասարակական կամ ծառայողական պարտականությունները կատարող անձանց նկատմամբ ցուցաբերվող անհնազանդությունը հաղթահարելիս կամ դիմադրությունը խափանելիս»:

[14] Վերապատրաստման ընթացքում պետք է տեղեկություններ ներառել այն հանգամանքների մասին, որոնց պարագայում նպատակահարմար չէ դրանց գործադրումը բժշկական պատճառներով, ինչպես նաեւ անհետաձգելի օգնության մասին:

[15] Տե՛ս նաեւ ԽԿԿ գործունեության մասին 20-րդ ընդհանուր զեկույցի 65-84-րդ պարբերությունները:

ii) իրավասու մարմիններին զեկուցված՝ նման միջոցների կիրառման հետեւանքով վնասվածքների եւ մահվան դեպքերի թիվը:

17. 2008 թվականի այցի վերաբերյալ զեկույցում ԽԿԿ–ն կարծիք է հայտնել, որ միայն բացառիկ հանգամանքներում կարելի է արդարացնել <u>իրենց պարտականությունները կատարող ոստիկանության պաշտոնատար անձանց ինքնությունը թաքցնելու միջոցները</u>: Եթե կիրառվում են այդպիսի միջոցներ, ապա պետք է առկա լինեն համապատասխան երաշխիքներ, որոնք կապահովեն, որ համապատասխան պաշտոնատար անձանց հնարավոր լինի հետագայում պատասխանատվության ենթարկել իրենց գործողությունների համար (օրինակ՝ համազգեստի վրա պարզորեն տեսանելի համարի միջոցով): 2010 թվականի այցի ընթացքում պատվիրակությունը տեղեկացվել է, որ բարձր ռիսկային օպերացիաների ժամանակ ոստիկանության գործողությունների նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու եւ դիմակավորված առանձին ոստիկանների առավել արդյունավետ նույնականացումն ապահովելու նպատակով ոստիկանության հատուկ ուժերում ծառայողների համար այցի ժամանակ նախատեսվում էին նոր համազգեստներ՝ նույնականացման համարներով: **Կոմիտեն կցանկանար մանրամասն տեղեկություններ ստանալ այդ խնդրի վերաբերյալ, այդ թվում՝ ոստիկանության այն հատուկ ուժերի մասին, որոնց կտրվեն այդ համազգեստները:**

18. Պատվիրակությանը տրամադրված տեղեկությունների համաձայն՝ մշակվել է ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011թթ. բարեփոխումների ծրագիր: Այն ընդգրկում է այնպիսի քայլեր, որոնք ուղղված են <u>հանցագործությունների քննության առավել առաջադեմ մեթոդների</u> մշակմանը եւ նախնական ու աշխատանքի ընթացքում վերապատրաստման դասընթացների վերանայմանը: Իրոք, 2010 թվականի այցի ընթացքում պատվիրակության բացահայտած փաստերը վկայում են, որ ոստիկանության օպերլիազորների եւ քննիչների վերապատրաստման ինտենսիվ դասընթացների, ինչպես նաեւ ոստիկանության կողմից կասկածյալների հարցաքննության ընթացակարգերի ու միջոցների վերանայման անհրաժեշտություն կա:

ԽԿԿ–ի կարծիքով՝ ոստիկանության օպերլիազորների եւ քննիչների համար մասնագիտական վերապատրաստման դասընթացներում առանձնակի ուշադրություն պետք է դարձվի իրեղեն ապացույցների վրա հիմնված մոտեցմանը, դրանով իսկ հնարավորինս հրաժարվելով մեղադրական դատավճռի ապահովման նպատակով հարցաքննության միջոցով

տեղեկությունների եւ խոստովանական ցուցմունքների վրա հիմնվելու պրակտիկայից: Մասնավորապես, նախնական ու աշխատանքի ընթացքում՝ կատարելագործված վերապատրաստման դասընթացներ պետք է անցկացվեն իրեղեն ապացույցների առգրավման, պահպանման, փաթեթավորման, կառավարման ու գնահատման, ինչպես նաեւ դրանց ամբողջականության հետ կապված հարցերի վերաբերյալ: Բացի դրանից՝ անհրաժեշտ է ներդրումներ կատարել ժամանակակից գիտական մեթոդներից, ինչպես օրինակ՝ ԴՆԹ տեխնոլոգիաներից եւ մատնահետքերի նույնականացման ավտոմատ համակարգերից ազատորեն օգտվելու հնարավորություն ապահովելու համար: **Կոմիտեն առաջարկում է, որ ներկայացված դիտողությունները լիովին հաշվի առնվեն ոստիկանության գործունեության ոլորտում բարեփոխումների հետագա ծրագրեր իրականացնելիս:**

Զուգահեռաբար, ոստիկանության համապատասխան ծառայողների համար պետք է պարբերաբար անցկացվեն հատուկ դասընթացներ հարցաքննության առաջադեմ, ընդունված ու թույլատրելի մեթոդների մասին: Անձի անցյալը (ներառյալ ոստիկանության հետ նախկինում ունեցած առնչությունը եւ համապատասխան պատմությունը) ուսումնասիրելու հնարավորությունը ոստիկանության ծառայողներին պետք է տրամադրվի նախքան հարցաքննությունը: Բացի դրանից՝ որպես կանոն, ոստիկանության կողմից հարցաքննությունները պետք է կատարվեն մեկ կամ երկու հարցաքննողների կողմից՝ հատուկ այդ նպատակով կահավորված ու նախատեսված սենյակներում: Պետք է նաեւ ներդրվի ոստիկանության կողմից հարցաքննության չափանիշների ու ընթացակարգերի մշտական վերահսկման համակարգ. դրա համար կարող է պահանջվել ոստիկանության կողմից հարցաքննությունների ճշգրիտ արձանագրում, որը, հնարավորության դեպքում, պետք է կատարվի էլեկտրոնային գրառման (ձայնագրման եւ (կամ) նախընտրելի է՝ տեսաձայնագրման) սարքավորումների միջոցով: Անհրաժեշտ է նաեւ, որ պարբերաբար գրանցվեն հարցաքննությունների սկիզբը եւ ավարտը, անազատության մեջ պահվող անձի կողմից հարցաքննության ընթացքում ներկայացված պահանջները եւ յուրաքանչյուր հարցաքննությանը ներկա անձինք: **ԽԿԿ–ն առաջարկում է, որ միջոցներ ձեռնարկվեն՝ ոստիկանության կողմից հարցաքննություններին առնչվող վերապատրաստման դասընթացները, ընթացակարգերը եւ միջոցները վերանայելու համար՝ հաշվի առնելով ներկայացված դիտարկումները:**

19. 2010 թվականի այցի ընթացքում պարզվել է, որ միջոցներ են ձեռնարկվում <u>բողոքների քննման առավել արդյունավետ ներքին ու արտաքին մեխանիզմների</u> ներդրման ուղղությամբ,

որոնց նպատակը ոստիկանությունում էթիկայի եւ կարգապահության ամրապնդումն է: Ըստ ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաների, ում հետ պատվիրակությունը հանդիպել է, ոստիկանությանը կից հասարակական խորհրդի ձեւավորումը եւ հեռախոսակապի միջոցով թեժ գծերի ներդրումը, որոնց նպատակը ոստիկանության հակահիրավական վարքագծի մասին անհապաղ հայտնելը հեշտացնելն էր, հանգեցրել է ոստիկանության կողմից՝ ոստիկանության դրսեւորած վատ վերաբերմունքի դեմ բողոքների թվի (2008 թվականին արձանագրված 131 դեպքից 2009 թվականին հասել է 245–ի) եւ կարգապահական տույժի ենթարկված ծառայողների թվի աճի (2008 թվականին արձանագրված 16 դեպքից 2009 թվականին հասել է 51–ի): Այնուամենայնիվ, պետք է նշել, որ այդ բողոքներից եւ տույժերից հետո 2008 թվականին ազատազրկման են դատապարտվել ոստիկանության միայն երկու ծառայող, իսկ 2009 թվականին՝ մեկ ծառայող:[16]

Բացի դրանից՝ Հայաստանի իշխանությունները քայլեր էին ձեռնարկում բողոքներ քննող արտաքին հանձնաժողով ստեղծելու ուղղությամբ, որն օժտված կլիներ պետական պաշտոնատար անձանց[17] կողմից թույլ տրված չարաշահումների գործերը քննելու եւ իրավասու մարմիններին կարգապահական միջոցների վերաբերյալ առաջարկություններ անելու իրավասությամբ: 2010 թվականի ապրիլին Հայաստանի իշխանություններին ներկայացվել է Եվրոպայի խորհրդի փորձագիտական եզրակացությունը կանոնակարգի նախագծի վերաբերյալ:

ԽԿԿ-ն հավատացած է, որ Եվրոպայի խորհրդի փորձագիտական եզրակացությունը հաշվի կառնվի այդ նոր մեխանիզմը մշակելիս, եւ որ կձեռնարկվեն վճռական գործողություններ, այդ թվում՝ համապատասխան ֆինանսավորման միջոցով, այդ մեխանիզմի անկախությունն ու անաչառությունը եւ որպես այդպիսին դրա ընկալումն ապահովելու համար: Քանի որ ոստիկանության հակահիրավական վարքագիծն իր մեջ կարող է պարունակել եւ՛ կարգապահական, եւ՛ քրեական իրավախախտումների տարրեր, պետք է խրախուսել սերտ համագործակցությունը քննչական մարմինների հետ:

---

[16] Այս կապակցությամբ տե՛ս II.Ա.3 բաժինը, որը վերաբերում է հանցագործությունների քննությանը:

[17] Ներառյալ ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության եւ քրեակատարողական հիմնարկների անձնակազմը:

3. Ոստիկանության կողմից հնարավոր վատ վերաբերմունքի հետ կապված գործերի քննությունը

20. Եթե ոստիկանության կողմից դրսեւորվող վատ վերաբերմունքի դեմ պայքար չի ծավալվում քրեական արդարադատության համակարգում, ապա այդպիսի վարքագիծը կարող է հեշտությամբ դառնալ ոստիկանության գործելակերպի ընդունված հատկանիշ: Այդ իսկ պատճառով խիստ կարեւոր է, որ նախաքննություն եւ քրեական գործերով վարույթներ իրականացնելու համար պատասխանատու մարմիններն արդյունավետ գործողություններ ձեռնարկեն, երբ հայտնի է դառնում հնարավոր վատ վերաբերմունքի մասին վկայող որեւէ տեղեկություն:

Այն չափորոշիչները, որոնց համապատասխանելու պայմանով միայն ենթադրյալ վատ վերաբերմունքի գործերի քննությունը կարող է որակվել որպես «արդյունավետ», սահմանվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննված բազում գործերով եւ արդեն իսկ ընդգծվել են 2008 թվականի այցի վերաբերյալ զեկույցում:[18] Մասնավորապես, քննությունը պետք է լինի *բազմակողմանի*, այն պետք է կատարվի *անհապաղ* եւ *արագորեն*, եւ քննությունն իրականացնելու համար պատասխանատու մարմինները պետք է *անկախ* լինեն նշված դեպքերում ներգրավված մարմիններից: Նշված պահանջները բավարարելու եւ իրավունքի գերակայությունը պահպանելու՝ իրավասու մարմինների իրական ջանքերը կարեւոր տարհամոզիչ ազդեցություն կունենան ազատությունից զրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերելուն հակված անձանց վրա:

21. 2007 թվականի վերջերին ստեղծվել է առանձին մարմին՝ հատուկ քննչական ծառայությունը (ՀՔԾ), որը մասնագիտացած է պետական պաշտոնատար անձանց կողմից հնարավոր չարաշահումների հետ կապված գործերի քննության հարցերում:[19] 2010 թվականի այցի ժամանակ ՀՔԾ–ի աշխատակազմը բավարար չափով համալրված էր եւ հնարավորություն

---

[18] Տե՛ս CPT/Inf (2010) 7-ի 21–րդ պարբերությունը: Տե՛ս նաեւ ԽԿԿ գործունեության մասին 14–րդ ընդհանուր զեկույցի 25-42–րդ պարբերությունները:

[19] ՀՔԾ–ի կազմավորման մասին օրենքն ուժի մեջ է մտել 2007 թվականի դեկտեմբերի 1–ին: ՀՔԾ–ի պետը նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից՝ գլխավոր դատախազի ներկայացմամբ: Իր կողմից նշանակված տեղակալի հետ պետը ղեկավարում է 25 հատկապես կարեւոր գործերի քննիչներից բաղկացած խումբը:

ուներ օգտվելու այլ մարմինների աշխատողների ծառայություններից՝ իր ղեկավարության ներքո:[20] Այցը հնարավորություն է ընձեռել ուսումնասիրելու, թե ինչպես է ՀՔԾ–ն քննություն իրականացնում ոստիկանության կողմից անազատության մեջ պահվող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դրսեւորման մեղադրանք պարունակող գործերի առնչությամբ: Հաջորդ պարբերություններում կնկարագրվի երկու գործ:

22. Արդեն խոսվել է անազատության մեջ գտնվելու պայմաններում Վահան Խալաֆյանի նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի եւ նրա մահվան մասին (տե՛ս 13–րդ պարբերությունը): Նրա մահից կարճ ժամանակ հետո հարազատի ներկայությամբ կատարվել է դիակի փորձաքննություն, եւ ՀՔԾ–ի ծառայողներն ուսումնասիրել են ոստիկանության Չարենցավանի բաժնում կազմված համապատասխան արձանագրություններն ու փաստաթղթերը: Այնուհետեւ, անհապաղ հարցաքննվել են հնարավոր վկաները (օրինակ՝ ապրիլի 13–ին արգելանքի վերցված այլ անձինք, այդ օրը ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողները), ինչպես նաեւ հնարավոր կասկածյալները (օրինակ՝ նրան արգելանքի վերցրած եւ (կամ) հարցաքննած օպերլիազորները): Պետք է նշել, որ վկաները եւ կասկածյալները, ում հետ զրուցել է պատվիրակությունը, դրական էին գնահատում ՀՔԾ ծառայողների վարքագիծը հարցաքննությունները կատարելիս: Պարզվել է, որ նախաքննության ընթացքում հատուկ ուշադրություն էր դարձվել այդ օրը ոստիկանության Չարենցավանի բաժնում գտնված՝ ազատությունից զրկված այլ անձանց նկատմամբ հնարավոր վատ վերաբերմունքի դրսեւորման դեպքերին: Ավելին, ՀՔԾ–ն միջոցներ էր ձեռնարկել դատափորձագիտական ապացույցներ ձեռք բերելու ուղղությամբ:

Այդ բոլոր քայլերը ՀՔԾ–ին հնարավորություն են տվել ձեռք բերելու ապացույցներ այն մասին, որ հարցաքննության ժամանակ Վահան Խալաֆյանը բռնության է ենթարկվել ոստիկանության ծառայողների կողմից: Քննության այդ փուլում հաստատվել է նաեւ, որ այնուհետեւ Խալաֆյանն ինքնասպանություն է գործել (կամ գոնե ինքն իրեն լուրջ վնասվածքներ հասցնելու մտադրություն է ունեցել) դանակով, որը նա գտել է հարցաքննության

[20] Այցի պահին հատկապես կարեւոր գործերի քննիչների բոլոր պաշտոնները համալրված էին: Բացի դրանից՝ ՀՔԾ–ն կարող է աջակցություն ստանալ տարբեր իրավապահ մարմինների ներքին անվտանգության ծառայություններից (այդպիսի դեպքերում, ինչպես ներկայացվեց պատվիրակությանը, ընդունված գործելակերպը հետեւյալն է՝ աջակցության խնդրանքով դիմում են մեկ կոնկրետ իրավապահ մարմնի ներքին անվտանգության ծառայությանը՝ մեկ այլ մարմնի ծառայողների կողմից ենթադրաբար կատարված հանցագործությունների առնչությամբ քննություն իրականացնելու համար):

սենյակում: Պրն Խալաֆյանի մահից հետո երկու շաբաթվա ընթացքում ոստիկանության ծառայողների շարքերում բացահայտվել են չորս կասկածյալ, որոնցից երկուսը, այդ թվում՝ ոստիկանության Չարենցավանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետը կալանավորվել են: Վերջինիս մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերով՝ պաշտոնեական լիազորություններն անցնելու համար, որը զուգորդվել է ծանր հետեւանքներ առաջացնող բռնություն գործադրելով:[21]

Պետք է արձանագրել նաեւ նախաքննության ընթացքում թափանցիկությանը տրվող առանձնահատուկ ուշադրությունը. ՀՔԾ–ն մամուլում պարբերաբար հանդես է եկել հայտարարություններով՝ ընթացքի մեջ գտնվող քննության վիճակի մասին հանրությանը տեղյակ պահելու համար:

Հետեւաբար, պատվիրակությունը հանգել է այն եզրակացության, որ իր կողմից իրականացվող նախաքննության այդ փուլում ՀՔԾ–ի կողմից ձեռնարկված գործողությունները եղել են անհապաղ, արագ ու բազմակողմանի՝ հաշվի առնելով սահմանափակ ռեսուրսներն ու նմանատիպ քննությունների ժամանակ սովորաբար առաջացող դժվարությունները: ՀՔԾ–ի՝ այդ գործով պատասխանատու ավագ քննիչը եղել է հետեւողական եւ պարզ ու հստակ պատկերացում է ունեցել իր դերի պատասխանատվության մասին: Պարզվել է նաեւ, որ ուսումնասիրվել են բոլոր իրատեսական քննչական վարկածները: Նախաքննություն իրականացնելու այս եղանակը պետք է լավ օրինակ լինի ոստիկանության կողմից ենթադրյալ վատ վերաբերմունքին առնչվող այլ գործերի համար՝ անկախ այն հանգամանքից՝ արժանանում են դրանք լրատվամիջոցների ուշադրությանը, թե ոչ: **ԽԿԿ–ն կցանկանար մանրամասն տեղեկություններ ստանալ այս գործի արդյունքների վերաբերյալ:**

23. Ինչ վերաբերում է 2008 թվականի մարտյան դեպքերի համատեքստում արված՝ վատ վերաբերմունքի մասին հայտարարությունների վերաբերյալ քննություններին, ապա պատվիրակության գնահատականը ՀՔԾ–ի կողմից ձեռնարկված գործողություններին պակաս

[21] Այդպիսի հանցագործությունները պատժվում են մինչեւ 10 տարի ազատազրկմամբ, որը ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի վերաբերյալ գործերով ամենախիստ պատիժներից է: Մնացած երեք ծառայողներին մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը): Պետք է նշել նաեւ, որ ոստիկանությունում իրականացված ներքին քննության շրջանակներում կարգապահական տույժի է ենթարկվել ոստիկանության վեց ծառայող, այդ թվում՝ հանցագործությունների համար մեղադրվող չորս ծառայողները եւ ոստիկանության Չարենցավանի բաժնի պետը:

դրական է: Այս առնչությամբ հատկապես պետք է նշել Քրիստափոր ԷԼԱՋՅԱՆԻ գործը, ով պնդում էր, որ 2008 թվականի մարտի 5–ին եւ 6–ին ծեծի էր ենթարկվել իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից: 2008 թվականի այցի վերաբերյալ զեկույցում ԽԿԿ–ն հատուկ առաջարկություն է ներկայացրել Հայաստանի իշխանություններին այդ գործի առնչությամբ արդյունավետ քննություն իրականացնելու մասին:[22]

Պետք է վերստին նշել, որ պրն Էլազյանը ծանուցում էր ստացել 2008 թվականի մարտի 4–ին ոստիկանության Երեւանի Մարաշ վարչական շրջանի բաժին ներկայանալու մասին՝ մարտի 1–ի դեպքերի ժամանակ, ըստ տեղեկությունների, ոստիկանության ծառայողին հարվածելու համար: Գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ 2008 թվականի մարտի 26–ին պրն Էլազյանը ենթարկվել է դատաբժշկական փորձաքննության՝ պաշտպանի հատուկ պահանջի համաձայն: Փորձաքննության ժամանակ դատական բժիշկը եզրակացրել է, որ պրն Էլազյանի աջ հոնքի վրա առկա մեկ սանտիմետր երկարությամբ սպին հավանաբար բութ, ամուր գործիքով 2008 թվականի մարտի 5–6–ին հասցված հարվածի հետեւանք է: Հղում պետք է կատարվի նաեւ 2008 թվականի մարտի 10–ին «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ նրան ընդունելիս կազմված բժշկական տեղեկանքին, որում նշվում էր, որ այդ վնասվածքը նա հավանաբար ստացել էր չորս օր առաջ (այսինքն՝ 2008 թվականի մարտի 6–ին):

Չնայած նշված բժշկական ապացույցներին՝ ՀՔԾ–ն համարել է, որ նշված վնասվածքը հասցվել է 2008 թվականի մարտի 1–ի դեպքերի ընթացքում եւ քրեական վարույթ հարուցելու հիմք չկա: Այդ եզրակացությանը հանգելիս ՀՔԾ-ն մեծապես հիմնվել է ոստիկանությունից ստացված տեղեկությունների, մասնավորապես՝ 2008 թվականի մարտի 6–ին արված հայտարարության վրա, որի համաձայն՝ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ձերբակալվածներին պահելու վայրի բուժանձնակազմի կողմից կատարված բուժզննության ժամանակ պրն Էլազյանը նշել էր, որ աջ հոնքի վրա առկա վնասվածքը նա ստացել է նախքան ոստիկանության բաժանմունք ժամանելը. այդ հայտարարությունը ստորագրել էին ոստիկանության երկու ծառայողներ, բուժզննությունն իրականացրած ոստիկանության ֆելդշերը եւ պրն Էլազյանը: Նշված հայտարարությունից պարզ է դառնում, որ պրն Էլազյանին բուժզննության ենթարկելու ժամանակ ներկա են եղել ոստիկանության ծառայողներ, ինչը

[22] Տե՛ս CPT (2010) 37 փաստաթղթի 13–րդ եւ 14–րդ պարբերությունները:

կասկածի տակ է դնում նշված անձի կողմից արված հայտարարության արժանահավատությունը:[23]

Գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դարձել նաեւ, որ ըստ պրն Էլազյանի՝ ենթադրյալ վատ վերաբերմունքը ցուցաբերվել է ՀՔԾ–ի տարածքում՝ ՀՔԾ–ի ծառայողների ներկայությամբ եւ նույնիսկ մասնակցությամբ: Քանի որ ենթադրյալ վատ վերաբերմունքի առնչությամբ քննությունն իրականացվել էր ՀՔԾ–ի կողմից, քննության համար պատասխանատու անձը չի կարող անկախ համարվել հավանաբար դեպքերին մասնակցած անձանցից:

Կարճ ասած, այս գործի ուսումնասիրությամբ պատվիրակությունը պարզել է, որ նախաքննությունն իրականացնելիս տեղ են գտել թերացումներ, մասնավորապես՝ բավարար չափով հաշվի չեն առնվել դատաբժշկական փորձաքննության արդյունքները, որոնք համապատասխանում էին վատ վերաբերմունքի մասին հայտարարություններին, եւ չի պահպանվել անկախության հիմնարար պահանջը: **ԽԿԿ–ն առաջարկում է վերսկսել այս գործի քննությունը:**

24. 2008 թվականի իր այցի վերաբերյալ զեկույցում ԽԿԿ–ն առաջարկել է 2008 թվականի մարտի 1–ի դեպքերի քննությունն իրականացնել արդյունավետ քննության չափորոշիչներին համապատասխան:[24] Այնուամենայնիվ, ոստիկանության բարձրաստիճան պաշտոնատար անձանց խոսքերով, ում հետ պատվիրակությունը հանդիպել է 2010 թվականի այցի սկզբում, ՀՔԾ–ի կողմից իրականացված քննությունը հիմնվել է ոստիկանության ներքին անվտանգության ծառայության կողմից ձեռք բերված արդյունքների վրա: Երկու կրտսեր եւ երկու միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ոստիկանության ծառայողներ դատապարտվել են ազատազրկման (պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար), սակայն համաներման արդյունքում (որը տարածվում էր 2008 թվականի 10 ամիսների ընթացքում առաջին անգամ հանցագործություն կատարած անձանց վրա) նրանցից ոչ մեկը

[23] Տե՛ս նաեւ 35–րդ պարբերությունը՝ ոստիկանության ֆելդշերների մասով:

[24] Տե՛ս CPT/Inf (2010) 7 փաստաթղթի 21–րդ պարբերությունը:

ազատազրկման ձեւով պատիժ չի կրել:[25] **Կոմիտեն կցանկանար ստանալ Հայաստանի իշխանությունների մեկնաբանությունները այդ հարցի վերաբերյալ:**

25. Ընդհանուր առմամբ, ԽԿԿ պատվիրակությունն այն տպավորությունն էր ստացել, որ իրավապահ մարմինների նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս ՀՔԾ–ի նկատմամբ նկատվել էր եւ դեռ նկատվում էր վստահության պակաս: Ավելի կոնկրետ, ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի մասին պնդող անազատության մեջ պահվող անձինք, ում հետ պատվիրակությունը զրուցել էր 2010 թվականի այցի ժամանակ, նշել են, որ չեն ցանկացել պաշտոնապես բողոք ներկայացնել՝ վախենալով, որ դա ծանր հետեւանքներ կթողնի իրենց նկատմամբ ընթացող քրեական հետապնդումների վրա:

26. Հաշվի առնելով վերը նշվածը՝ **ԽԿԿ–ն առաջարկում է առավել մեծ ուշադրություն դարձնել ՀՔԾ–ի կառուցվածքային անկախությանը եւ թափանցիկ ընթացակարգերի առկայությանը, որպեսզի հնարավոր լինի ամրապնդել հանրային վստահությունը:** Ավելին, **պետք է ապահովվի, որ վատ վերաբերմունքի մասին հայտնող անձինք հնարավորություն ունենան դիմելու ՀՔԾ–ին ուղղակիորեն, գաղտնիության պահպանմամբ:**

Իրավիճակի ամբողջական եւ ընթացիկ պատկերն ունենալու համար **Կոմիտեն կցանկանար ստանալ 2009 եւ 2010 թվականների համար հետեւյալ տեղեկությունները.**

- **ոստիկանների կողմից վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքների թիվը,**
- **այդ բողոքների արդյունքում ՀՔԾ–ի կողմից հարուցված գործերի թիվը,**
- **ամփոփագիր՝ նշանակված քրեական պատժամիջոցների մասին:**

Այնուհետեւ, ԽԿԿ–ն կցանկանար թարմացված տեղեկություններ ստանալ իրավապահ մարմինների կողմից անազատության մեջ պահվող անձանց՝ վատ վերաբերմունքի մասին բողոքների վիճակագրական տվյալների կենտրոնացված բազա ձեւավորելու գործում արձանագրված առաջընթացի վերաբերյալ:[26]

---

[25] Տե՛ս, այս առնչությամբ, սույն զեկույցի 11–րդ ծանոթագրությունը եւ CPT/Inf (2010) 7 փաստաթղթի 12–րդ եւ 13–րդ պարբերություններում ներկայացված՝ ԽԿԿ-ի ձեռք բերած փաստերը:

[26] Տե՛ս, այս առնչությամբ, CPT/Inf (2008) 7 փաստաթղթի 16–րդ պարբերությունը:

27. ԽԿԿ–ն եւս մեկ անգամ պետք է շեշտի այն դատավորների առանցքային դերակատարությունը, որոնց մոտ տարվում են անձինք՝ դատավարական կանխարգելիչ միջոցների կիրառման մասով. նրանք, ըստ էության, կոչված են ապահովելու հնարավոր վատ վերաբերմունքի գործերով անհապաղ քննության իրականացումը: Ինչպես եւ նախորդ այցերի ժամանակ, պատվիրակությունը հաղորդումներ է ստացել անազատության մեջ պահվող անձանցից այն մասին, որ դատավորներն անտեսում էին իրենց վնասվածքները եւ (կամ) ոստիկանությունում իրենց նկատմամբ ցուցաբերված վատ վերաբերմունքի մասին իրենց բողոքները: **ԽԿԿ–ն կրկնում է իր առաջարկությունն այն մասին, որ բարձրագույն դատական ատյանների միջոցով եւ (կամ), անհրաժեշտության դեպքում, համապատասխան իրավական ակտերի ընդունմամբ դատավորներին հիշեցվի միջոցներ ձեռնարկելու իրենց պարտականության մասին այն դեպքերում, երբ նրանց մոտ բերվող անձը հաղորդում է ներկայացնում ոստիկանության կողմից բռնության ենթարկվելու մասին: Վատ վերաբերմունքի վերաբերյալ հստակ հաղորդման նույնիսկ բացակայության դեպքում, դատավորը պետք է ապահովի, որ դատաբժշկական քննության անցկացման պահանջ ներկայացվի այլ հիմքերի (օրինակ՝ տեսանելի վնասվածքների, անձի ընդհանուր տեսքի կամ վարքի) առկայության դեպքում, որոնք ցուցաբերված վատ վերաբերմունքի հավանականության մասին ենթադրելու տեղիք են տալիս:**

4. Ոստիկանության կողմից ցուցաբերվող վատ վերաբերմունքի դեմ ընթացակարգային երաշխիքները

28. Մեծապես ուժի մեջ են մնում 2006 թվականի այցի վերաբերյալ զեկույցում ԽԿԿ–ի ներկայացրած եւ իրենց կողմից հիմնավորապես խրախուսվող դիտարկումները, որոնք վերաբերում են վատ վերաբերմունքի դեմ երեք հիմնարար երաշխիքներին, այն է՝ անազատության մեջ պահվող անձանց՝ մերձավոր հարազատին կամ իրենց ընտրությամբ որեւէ երրորդ կողմի իրենց գտնվելու վայրի մասին տեղեկացնելու եւ պաշտպանի ու բժշկի ծառայություններից օգտվելու իրավունքները: Պատվիրակության ձեռք բերած փաստերը ցույց են տալիս, որ դրական տեղաշարժ գրեթե չկա այդ երաշխիքների հետ կապված իրավական դաշտի բարելավման ուղղությամբ, ավելին, գործող իրավական ակտերի եւ դրանք գործնականում կիրառելու միջեւ դեռ առկա է լուրջ անհամապատասխանություն:

29. Ինչ վերաբերում է անազատության մեջ պահելու մասին ծանուցմանը՝ «Ոստիկանության մասին» օրենքի 5–րդ հոդվածով[27] սահմանվում է ոստիկանության աշխատակիցների՝ ոստիկանություն բերելու պահից սկսած երեք ժամվա ընթացքում ձերբակալված անձի հարազատներին նրա գտնվելու վայրի մասին տեղյակ պահելու պարտականությունը: Միեւնույն ժամանակ, քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 2–րդ մասի 9–րդ կետում[28] նշվում է առավելագույնը տասներկու ժամվա մասին, որի ընթացքում պետք է տեղեկացվեն մերձավոր հարազատները: **ԽԿԿ–ն կցանկանար պարզաբանում ստանալ այդ առնչությամբ կիրառվող իրավական դրույթների վերաբերյալ:**

2010 թվականի այցի ընթացքում հարցված՝ անազատության մեջ պահվող մի շարք անձինք նշել են, որ իրենք չեն տեղեկացվել անազատության մեջ պահելու մասին ծանուցման իրավունքի վերաբերյալ: Ավելին, մի շարք անձինք հայտարարել են, որ իրենց որեւէ բացատրություն չի տրվել՝ հարազատներին իրենց գտնվելու վայրի մասին տեղեկացնելը մերժելու վերաբերյալ: Արդյունքում, անազատության մեջ պահվող շատ անձանց, ում հետ պատվիրակությունը հանդիպել է, հնարավորություն չի տրվել օգտվելու այդ իրավունքից մինչեւ ձերբակալման մասին արձանագրությունը կազմելը (ինչը, գործնականում, կարող էր տեղի ունենալ արգելանքի վերցնելուց հետո մինչեւ երեք օրվա ընթացքում) կամ մինչեւ նրանց ձերբակալված անձանց պահելու վայր ընդունելը կամ մինչեւ դատավորի մոտ տանելը:

ԽԿԿ–ն կրկնում է 2008 թվականի այցի վերաբերյալ զեկույցում իր ներկայացրած առաջարկությունն այն մասին, որ անազատության մեջ պահվող բոլոր անձինք ազատությունից փաստացի զրկվելու հենց առաջին իսկ պահից պետք է կարողանան արդյունավետ կերպով օգտվել անազատության մեջ պահելու մասին ծանուցելու իրավունքից: Բացի դրանից՝ անազատության մեջ պահելու մասին ծանուցելու իրավունքի իրականացումը ձգձգող ցանկացած հնարավորություն պետք է հստակ կերպով ամրագրվի օրենքում՝ պահպանելով համապատասխան երաշխիքները (օրինակ՝ ցանկացած հապաղում պետք է գրավոր արձանագրվի՝ նշելով դրա համար հիմք հանդիսացող պատճառները, եւ պարտադիր կերպով հաստատվի գործի հետ կապ չունեցող՝ ներկա գտնվող վերադաս ոստիկանի կամ դատախազի կողմից), եւ ունենա խիստ սահմանափակ ժամանակ:

30. Հարկ է նշել, որ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 2–րդ մասի 4–րդ կետի համաձայն, կասկածյալը ձերբակալման մասին արձանագրությունը կազմելու պահից իրավունք ունի պաշտպան ունենալ: 2010 թվականի այցի ժամանակ անազատության մեջ պահվող մի շարք անձինք նշել են, որ այդ իրավունքի մասին իրենց տեղեկացրել են միայն այն ժամանակ, երբ ձերբակալման մասին արձանագրությունը կազմված էր, եւ հետեւաբար իրենք մինչեւ ոստիկանության կողմից հարցաքննվելը կամ հարցաքննությունների ընթացքում

[27] Փոփոխվել է 2006 թվականի հունիսի 1–ին:

[28] Փոփոխվել է 2006 թվականի մայիսի 23–ին:

պաշտպանի հետ խորհրդակցելու հնարավորություն չեն ունեցել: Ավելին, ոմանք պնդում էին, որ իրենց թույլ չեն տվել խոսել պաշտպանի հետ մինչեւ առաջին դատական նիստը. այս համատեքստում, հարկ է նշել, որ պատվիրակության կողմից ուսումնասիրվող ձերբակալման մասին բազմաթիվ արձանագրություններում բացակայում էին պաշտպանի անունը եւ ստորագրությունը:

Այցից հետո 2010 թվականի սեպտեմբերի 6–ի նամակով Հայաստանի իշխանությունները նշել են, որ 2010 թվականի ապրիլի 29–ին ընդունվել են ոստիկանության հատուկ հրամաններ՝ ապահովելու համար, որ ձերբակալման մասին արձանագրությունը կազմելուց առաջ անցկացվող՝ արգելանքի վերցված անձանց ցանկացած հարցաքննության ժամանակ ներկա գտնվի նաեւ նրանց պաշտպանը:

ԽԿԿ–ն Հայաստանի իշխանություններին կոչ է անում ապահովել պաշտպանի ծառայություններից օգտվելու՝ ազատությունից զրկված անձանց իրավունքի արդյունավետ իրականացումը ոստիկանության կողմից ազատությունից փաստացի զրկվելու հենց առաջին իսկ պահից: Անհրաժեշտության դեպքում, պետք է փոփոխություններ կատարվեն համապատասխան իրավական դրույթներում:

31. Նախորդ այցերի վերաբերյալ զեկույցներում ԽԿԿ–ն առաջարկել էր, որ քայլեր ձեռնարկվեն իրավաբանական օգնության համակարգն իրապես որակյալ դարձնելու ուղղությամբ, եւ որ հանրային պաշտպաններն անկախ լինեն ոստիկանությունից եւ դատախազությունից: Ի պատասխան՝ Հայաստանի իշխանությունները նշել են, որ արդարադատության նախարարությունը եւ փաստաբանների պալատը «Փաստաբանության մասին» օրենքի կիրարկման կատարելագործման եւ հնարավոր փոփոխությունները քննարկելու նպատակով ստեղծել են աշխատանքային խումբ: **ԽԿԿ–ն կցանկանար դրա վերաբերյալ թարմացված տեղեկություններ ստանալ:**

32. Պատվիրակությանը տեղեկացրել են, որ հարցաքննության նպատակով ոստիկանական բաժանմունք ներկայացող վկաներն այժմ իրավունք ունեն ներկայանալ իրենց պաշտպանի ուղեկցությամբ: Սա դրական տեղաշարժ է: Սակայն 2010 թվականի այցի ժամանակ պարզվել է, որ այդ հնարավորության մասին անձանց սովորաբար տեղյակ չի պահվել: **Կոմիտեն առաջարկում է, որ ոստիկանական մարմին ներկայանալու ծանուցագիր ստացած անձինք համակարգված կերպով տեղեկացվեն ոստիկանությունում հարցաքննությունների ժամանակ իրենց հայեցողությամբ ընտրված պաշտպանի կողմից օգնություն ստանալու հնարավորության մասին:**

33. Ինչ վերաբերում է (նաեւ անազատության մեջ պահվող անձի հայեցողությամբ ընտրված) բժշկի ծառայություններից օգտվելու իրավունքին, ապա օրենսդրության մեջ որեւէ փոփոխություն չի արվել՝ ապահովելու համար, որ այդ իրավունքն իրականացվի ազատությունից փաստացի զրկվելու հենց առաջին իսկ պահից: Այցի ընթացքում պատվիրակությանը հաղորդումներ են ներկայացվել այն մասին, որ բժշկական

ծառայություններից օգտվելու հնարավորությունն ուշացվել է (օրինակ՝ մի քանի օրով)՝ չնայած դրա մասին բազմաթիվ խնդրանքներին: Նման իրավիճակները անազատության մեջ պահվող անձանց ոչ միայն զրկում են իրենց՝ կարեւոր նշանակություն ունեցող երաշխիքից, այլ կարող են նաեւ ծանր հետեւանքներ ունենալ ձերբակալված անձանց պահելու վայրերում անձանց առողջության վրա: Միանշանակ է, որ բժշկական ծառայություններից օգտվելու հնարավորության տրամադրումը չպետք է թողնվի ոստիկանության աշխատակիցների հայեցողությանը:

Ավելին, այցի ընթացքում պարզվել է, որ բժշկական զննությունները շատ հաճախ անցկացվել են հենց ոստիկանության աշխատակիցների ներկայությամբ, եւ որ բժշկական տեղեկանքները հասանելի էին բուժանձնակազմի անդամ չհանդիսացող անձանց:

Պատվիրակության կողմից հարցված՝ անազատության մեջ պահվող մի քանի անձինք նշել են, որ իրենց բժշկական զննությունն անցկացրել էր դատաբժիշկը: Սակայն, նման զննությունները գործնականում ակնհայտորեն թույլատրվել են ոստիկանության քննիչի կողմից՝ չնայած «Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 15–րդ հոդվածին:[29]

34. Հաշվի առնելով վերը նշվածը՝ ԽԿԿ–ն մատնանշում է 2006 եւ 2008 թվականների այցերի վերաբերյալ զեկույցներում ներկայացված առաջարկությունները եւ **կոչ անում Հայաստանի իշխանություններին միջոցներ ձեռնարկել, այդ թվում՝ հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ, որպեսզի հստակորեն սահմանվի, որ՝**

- **բժշկի ծառայություններից օգտվելու իրավունքն իրականացվում է ազատությունից փաստացիորեն զրկվելու պահից.**

- **անազատության մեջ պահվող անձանց բժշկական զննությունը պետք է անցկացվի այնպես, որ ոստիկանության աշխատակիցների չկարողանան լսել եւ, եթե բժիշկը տվյալ դեպքում հստակորեն հակառակը չի պահանջում, չկարողանան տեսնել այն.**

- **յուրաքանչյուր զննության արդյունքները, ինչպես նաեւ անազատության մեջ պահվող անձի ցանկացած հայտարարություն եւ բժշկի եզրակացությունները պետք է պաշտոնապես արձանագրվեն բժշկի կողմից եւ հասանելի լինեն ձերբակալված անձին եւ, վերջինիս պահանջով, նրա պաշտպանին.**

- **եթե բժիշկը վնասվածքներ է արձանագրում, որոնք համարվում են հնարավոր վատ վերաբերմունքի հետեւանք, ապա արձանագրությունը պետք է համակարգված ձեւով ներկայացվի համապատասխան դատախազի ուշադրությանը:**

Այնուհետեւ, ցանկացած ժամանակ, երբ անազատության մեջ պահվող անձը ցույց է տալիս վնասվածքները եւ հայտարարում վատ վերաբերմունքի մասին, ապա նա անհապաղ

---

[29] Օրենքի 15–րդ հոդվածի համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված անձը կամ (վերջինիս համաձայնության դեպքում) նրա պաշտպանը իրավունք ունեն պահանջելու անցկացնել դատաբժշկական հետազոտություն:

պետք է բժշկական զննության ենթարկվի ճանաչված դատաբժշկական փորձով անկախ դատաբժշկի կողմից, որը պետք է եզրակացություն կազմի արված հայտարարությունների եւ բժշկական օբյեկտիվ արդյունքների համապատասխանության աստիճանի վերաբերյալ: Անազատության մեջ պահվող անձը պետք է հնարավորություն ունենա ենթարկվելու նման զննության առանց քննիչի, դատախազի կամ դատավորի նախնական թույլտվության:

Միջոցներ պետք է ձեռնարկվեն նաեւ ապահովելու համար, որ բժշկական փաստաթղթերի հետ գործ ունենալիս պահպանվի խիստ գաղտնիություն: Ոստիկանության կողմից անազատության մեջ պահվող անձանց զննող բուժաշխատողները, բնականաբար, կարող են ծառայողական անհրաժեշտության սկզբունքով ոստիկաններին տեղեկացնել անազատության մեջ պահվող անձի առողջական վիճակի, այդ թվում՝ ընդունած դեղամիջոցների եւ առողջությանը սպառնացող կոնկրետ վտանգների մասին:

35. Երեւանում ոստիկանության կողմից անազատության մեջ պահվող շատ անձինք նշել են, որ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ձերբակալված անձանց պահելու վայրում իրենք առաջին հերթին ենթարկվել են բուժզննության բուժանձնակազմի կողմից: Այս հաստատությունում ֆելդշերների շուրջօրյա ներկայությունը ողջունելի է: Այնուամենայնիվ, ԽԿԿ–ին մտահոգվելու տեղիք է տալիս այդ ֆելդշերների պաշտոնեական դիրքը, որոնք ոստիկանության համակարգի աշխատողներ են: Նրանց անկախությունը երաշխավորելու նպատակով **Կոմիտեն կարեւոր է համարում, որ ձերբակալված անձանց պահելու վայրերում աշխատող բուժանձնակազմի անդամները որքան հնարավոր է ներգրավված լինեն համայնքային առողջապահական համակարգից:**

36. Այցի ընթացքում հստակորեն պարզ դարձավ, որ իրավունքների մասին իրազեկումը չի իրականացվում ազատությունից զրկելու հենց առաջին իսկ պահից: Հարցված շատ անձինք նշել են, որ ձերբակալման մասին արձանագրությունը կազմելուց, ձերբակալված անձանց պահելու վայր ընդունելուց կամ դատավորի մոտ տանելուց առաջ իրենց չեն ներկայացրել իրենց իրավունքները: Պատվիրակության այցելած բոլոր ոստիկանական բաժանմունքներում առկա էր իրավունքների մասին փաստաթղթի ձեւը հայերենով, բայց պատվիրակության հետ զրուցած անձանցից գրեթե ոչ մեկը չէր ստացել դրա օրինակը: Ինչ վերաբերում է ձերբակալման մասին արձանագրությանը, ապա դրանք սահմանափակվում էին միայն իրավական դրույթներին արված որոշ հղումներով (մասնավորապես ՔԴՕ 63–րդ հոդվածի 2–րդ մասի 4–րդ կետի դրույթները պաշտպան ունենալու մասին), իսկ դիտարկված արձանագրություններում իրավունքների մասին տողի տակ հաճախ բացակայում էր անազատության մեջ պահվող անձի ստորագրությունը: Ավելին, օտարերկրյա քաղաքացիները չեն ստացել իրենց իրավունքների մասին գրավոր տեղեկություն իրենց հասկանալի լեզվով:

ԽԿԿ–ն կրկնում է 2008 թվականի այցի վերաբերյալ զեկույցում իր ներկայացրած առաջարկությունն այն մասին, որ ոստիկանության կողմից արգելանքի վերցված բոլոր անձանց համակարգված ձեւով բանավոր տեղեկություն տրվի իրենց իրավունքների մասին ազատությունից փաստացի զրկվելու հենց առաջին իսկ պահից: Ինչ վերաբերում է

իրավունքների մասին ծանուցմանը, ապա այն համակարգված ձեւով պետք է տրվի անազատության մեջ պահվող բոլոր անձանց, հենց որ նրանք բերվում են ոստիկանության մարմին, եւ հասանելի լինի համապատասխան մի քանի լեզուներով:

37. Ինչ վերաբերում է անազատության մեջ պահվող անձանց հաշվառման գրանցամատյաններին, ապա այստեղ եւս պատվիրակությունը հայտնաբերել է մի շարք թերություններ (օրինակ՝ նշված չէր արգելանքի վերցնելու եւ (կամ) տեղափոխման (ազատ արձակման) ժամանակը, առկա էին ոչ ճշգրիտ կամ մոլորեցնող տեղեկություններ):[30]

Անձին ազատությունից զրկելու մասին փաստը սահմանված կարգով արձանագրելու պահանջը վատ վերաբերմունքի դեմ հիմնարար երաշխիքներից մեկն է: Անձի՝ անազատության մեջ գտնվելու ժամանակահատվածին վերաբերող բոլոր հարցերի պատշաճ արձանագրումը կարող է ոչ միայն օգտակար լինել ոստիկանությունում պահվելու վերաբերյալ իրավական դրույթները պահպանելու մասով հսկողություն իրականացնելու հարցում, այլ նաեւ ոստիկաններին պաշտպանել իրենց դեմ ներկայացված կեղծ հաղորդումներից: **ԽԿԿ–ն Հայաստանի իշխանություններին կոչ է անում ապահովել, որ անազատության մեջ պահվող անձանց հաշվառման գրանցամատյանները վարվեն սահմանված կարգով, ճշգրիտ կերպով արձանագրվեն փաստացի արգելանքի վերցնելու, պահման վայր ընդունելու, խցում տեղավորելու, ազատ արձակելու կամ տեղափոխելու ժամանակը, եւ արտացոլեն անազատության մեջ պահելու հետ կապված բոլոր հարցերը (կոնկրետ վայրը, որտեղ պահվում է անազատության մեջ գտնվող անձը, պաշտպանի, հարազատի, բժշկի կամ հյուպատոսական հիմնարկի ներկայացուցչի հետ տեսակցությունները, հարցաքննության համար խցից դուրս բերվելը, ձերբակալված անձի հետ կապված ցանկացած դեպք եւ այլն):**

Ավելին, **ԽԿԿ–ն առաջարկում է, որ իրավասու դատախազները եւ ոստիկանության վերադաս պաշտոնյաները վերահսկողություն իրականացնեն ոստիկանության մարմիններում վարվող՝ անազատության մեջ պահվող անձանց հաշվառման գրանցամատյանների ճշտության նկատմամբ:**

38. ԽԿԿ–ն գոհունակությամբ է նշում, որ վերահսկողություն իրականացնող դատախազներից ու Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակիցներից բացի՝ 2006 թվականից ի վեր հաճախ եւ առանց զգուշացման ոստիկանության մարմիններ է այցելում նաեւ Հանրային մոնիթորինգի խումբը: Սակայն խումբն իրավունք չունի այցելելու ձերբակալված անձանց պահելու համար օրենքով նախատեսված վայրերից բացի այլ տարածքներ: **Կոմիտեն առաջարկում է, որ Հանրային մոնիթորինգի խմբի լիազորությունների շրջանակն ընդլայնվի այնպես, որ խմբի անդամները կարողանան**

---

[30] Օրինակ՝ ոստիկանության Երեւանի Կենտրոն վարչական շրջանի բաժնում, ըստ տեղեկությունների, մինչեւ 48 ժամով պահված որոշ անձանց մասով գրանցամատյանում արձանագրված էր, որ նրանք պահվել են երեք ժամով՝ յուրաքանչյուր օրվա համար:

մուտք գործել ոստիկանության ցանկացած տարածք, որտեղ անձինք կարող են, թեկուզ կարճ ժամանակով, զրկվել ազատությունից:

5. Անազատության մեջ պահելու պայմանները

39. ԽԿԿ–ն գոհունակությամբ է նշում, որ վերջին մի քանի տարիների ընթացքում ձերբակալված անձանց պահելու վայրերում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ: Ձերբակալված անձանց պահելու վայրերը, այդ թվում՝ ոստիկանության Սեւանի բաժնի ձերբակալված անձանց պահելու վայրը,[31] ուր այցելել էր պատվիրակությունը, վերանորոգվել էին եւ այնտեղ ընդհանուր առմամբ ապահովվել էին նյութակենցաղային լավ պայմաններ: Խցերն ունեին համապատասխան չափեր (օրինակ՝ մենախցերն առնվազն 6 քառակուսի մետր էին, իսկ երկտեղանոց խցերը՝ 9–13.5 քառակուսի մետր) եւ կահավորանք (օրինակ՝ մահճակալներ, սեղան, աթոռներ, լվացարան): Անազատության մեջ պահվող անձանց ապահովել էին գիշերակացի համար նախատեսված անկողնային պարագաներով, զուգարանից ազատ օգտվելու եւ կանոնավոր հաճախականությամբ ցնցուղ ընդունելու հնարավորությամբ եւ տրամադրել անձնական հիգիենայի առաջին անհրաժեշտության պարագաներ: Ինչ վերաբերում է սննդին, ապա պայմաններ էին ստեղծվել անազատության մեջ պահվող անձանց օրական երեքանգամյա սնունդ, այդ թվում՝ մեկ տաք կերակուր տալու համար: Ավելին, ձերբակալված անձանց պահելու վայրերն ունեին բացօթյա զբոսանքի բակեր (32–80 քառակուսի մետր մակերեսով եւ ծածկապատ տարածքով), իսկ **անազատության մեջ պահվող** անձինք հաստատել են, որ իրենց ամեն օր թույլ է տրվել գտնվել այնտեղ: Այցելած բազմաթիվ վայրերում ձերբակալված անձանց համար կային նաեւ ընթերցանության համար անհրաժեշտ նյութեր եւ ռադիոընդունիչներ:

Այնուամենայնիվ, պատվիրակությունը նկատել է, որ ձերբակալված անձանց պահելու շատ վայրերում (օրինակ՝ Երեւանում, Չարենցավանում, Մարտունիում, Սեւանում եւ Վարդենիսում) գտնվող խցերում բնական լուսավորության պակաս կար, ինչը պայմանավորված

[31] Նախորդ զեկույցներում ԽԿԿ–ն ներկայացրել էր, որ Ոստիկանության Սեւանի բաժնի ձերբակալված անձանց պահելու վայրում առկա էին նյութակենցաղային բավականին վատ պայմաններ (տե՛ս CPT/Inf (2004) 25 փաստաթղթի 44–րդ պարբերությունը եւ CPT/Inf (2007) 47 փաստաթղթի 31–րդ պարբերությունը):

էր պատուհանների փոքր չափերով, որոնք էլ իրենց հերթին երբեմն ծածկված էին մի քանի շերտ մետաղական ցանցերով: Ավելին, Ոստիկանության Գավառի բաժնի ձերբակալված անձանց պահելու վայրի խցերում օդափոխությունը շատ վատն էր, իսկ ընդհանուր զուգարանները կեղտոտ էին: **ԽԿԿ–ն առաջարկում է վերացնել այդ թերությունները:**

Բացի դրանից՝ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ձերբակալված անձանց պահելու վայրում գտնվող անձանց դեռ թույլ չի տրվում դուրս գալ բացօթյա զբոսանքի օրական 30 րոպեից ավելի ժամանակով: **Կոմիտեն կրկնում է իր առաջարկությունն այն մասին, որ այստեղ 24 ժամից ավելի ժամանակով պահվող բոլոր անձինք օրական առնվազն մեկ ժամ տեւողությամբ բացօթյա զբոսանքի հնարավորություն ունենան:**

40. Այցելած <u>ոստիկանության բաժիններից շատերը</u>, այդ թվում՝ Երեւանի վարչական շրջանի ոստիկանության բաժինները, ունեին անազատության մեջ պահելու մեկ կամ ավելի խցեր՝ ընդամենը 2–3 քառակուսի մետր տարածքով, որոնք նախատեսված էին մինչեւ երեք ժամ տեւողությամբ պահման համար: Այդ խցերը լավ վերանորոգված էին, ունեին համապատասխան լուսավորություն եւ օդափոխություն ու կահավորված էին հանգստի համար նախատեսված միջոցներով: Այնուամենայնիվ, **անազատության մեջ պահվող** շատ անձինք պնդում էին, որ այդ խցերում պահվել են գիշերակացով մինչեւ մի քանի օր ժամանակով (երբեմն անազատության մեջ պահվող մեկ այլ անձի հետ միասին): Ավելին, հարցված անձանցից ոմանք պնդում էին, որ իրենց սնունդ չի տրվել, իսկ զուգարանից օգտվելն ուշացվել է:

ԽԿԿ–ի կարծիքով՝ այդ չափերի խցերը պետք է օգտագործվեն միայն շատ կարճ ժամանակով, բայց ոչ գիշերակացով պահման համար: **ԽԿԿ–ն կոչ է անում Հայաստանի իշխանություններին անհապաղ քայլեր ձեռնարկել եւ ապահովել, որ պահման խցերում անազատության մեջ պահելու ժամանակը չգերազանցի երեք ժամը:**

Ավելին, ակնհայտ էր, որ կասկածյալներին ոստիկանության բաժնի աշխատասենյակներում եւ միջանցքներում մինչեւ 24 ժամով (իսկ երբեմն էլ ավելի երկար ժամանակով) պահելը միանգամայն սովորական երեւույթ էր: **ԽԿԿ–ն առաջարկում է, որ անհապաղ միջոցներ ձեռնարկվեն՝ ապահովելու համար, որ միջանցքները եւ աշխատասենյակները չօգտագործվեն որպես ձերբակալված անձանց պահելու համապատասխան վայրերը փոխարինող տարածքներ:**

Բ. Ռազմական հիմնարկները

1. Նախնական դիտարկումները

41. Պատվիրակությունն այցելել է ռազմական չորս մարմին, որտեղ կարող էին պահվել քրեական օրենքի եւ (կամ) զինվորական կարգապահության կանոնների խախտման համար ազատությունից զրկված զինծառայողները: Ինչպես եւ 2002 թվականի այցի ժամանակ, Երեւանում տեղակայված ռազմական ոստիկանության մեկուսարանն ի սկզբանե օգտագործվում էր քրեական օրենքի խախտման համար զինծառայողներին անազատության մեջ պահելու նպատակով, իսկ Երեւանի կայազորի ռազմական ոստիկանության բաժնի կարգապահական մեկուսարանն օգտագործվում էր բացառապես զինվորական կարգապահության կանոնների խախտման համար զինծառայողներին պահելու համար:[32] Սեւանի կայազորի ռազմական ոստիկանության բաժնի՝ Մարտունիում գտնվող կարգապահական մեկուսարանում, որտեղ այցելել էր ԽԿԿ–ն առաջին անգամ, պահվում էին այդ երկու կատեգորիաների խախտումները կատարած՝ անազատության մեջ գտնվող անձինք: Պատվիրակությունն այցելել է նաեւ Հրազդանում գտնվող կարգապահական գումարտակ, որտեղ պատվիրակության հիմնական ուշադրությունն ուղղված էր մենախցերին:

42. Ինչ վերաբերում է <u>քրեական օրենքի խախտման համար պահվող զինծառայողներին</u>, ապա հարկ է նշել, որ կասկածյալները ռազմական ոստիկանությունում կարող են պահվել մինչեւ 72 ժամ,[33] ինչից հետո նրանց գործն ուղարկվում է քաղաքացիական գործերով դատարան՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշում կայացնելու համար, եւ այնուհետեւ նրանք տեղափոխվում են քրեակատարողական հիմնարկ: Այս համատեքստում, այցի ընթացքում պատվիրակությունը նկատել է, որ կալանավորված զինծառայողները կարող էին, որոշ դեպքերում, նույնիսկ մինչեւ երկու ամիս ժամանակով պահվել ռազմական

---

[32] 2002 թվականի այցի վերաբերյալ զեկույցում այս վայրերը նշվել են որպես «Երեւանի կենտրոնական կալանավայր» եւ «Երեւանի կայազորի կալանատուն»:

[33] Տե՛ս 3–րդ ծանոթագրությունը:

ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում: **Այս կապակցությամբ, տե՛ս 10–րդ պարբերությունում արված առաջարկությունը:**

Իրենց պատժի բողոքարկման արդյունքներին սպասող կամ ազատությունից զրկելու ձեւով (կալանք) մինչեւ երեք ամիս ժամկետով պատիժ կրող զինծառայողները կարող են նաեւ պահվել ռազմական ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում:[34] Ավելին, հանցագործություն կատարած ժամկետային զինծառայողների եւ այլ զինծառայողների նկատմամբ կարող է դատավորի որոշմամբ կիրառվել երեք ամսից մինչեւ երեք տարի ժամկետով կարգապահական գումարտակում պահելը: Կարգապահական գումարտակի ներքին կանոնակարգի խախտումը պատժվում է պատժախցում մինչեւ 15 օր ժամկետով կալանքով:[35]

43. <u>Կարգապահական մեկուսարանում զինծառայողները</u> կարող են պահվել մինչեւ 10 օր, իսկ ներքին կանոնները խախտելու կամ կարգապահական կալանքի ընթացքում իրենց պարտականությունները չկատարելու համար պատիժը կարող է երկարացվել եւս 10 օրով:[36] Այցի հենց սկզբից ավագ սպայակազմի զինծառայողները պատվիրակությանը տեղեկացրին, որ ՀՀ Կառավարությունում մշակվում է զինված ուժերի կարգապահական նոր կանոնագիրք: Կանոնագրքի հիմնական հայեցակետերից մեկն այն է, որ կարգապահական կալանքը փոխարինվում է կարգապահական վաշտ ուղարկելով, որտեղ այդ զինծառայողները կշարունակեն իրենց զինվորական ծառայությունն ավելի խստացված ռեժիմով: Ըստ տեղեկությունների՝ սա կհանգեցնի ռազմական ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերի թվականակի կրճատման, քանի որ դրանք կօգտագործվեն զինծառայողներին քրեական օրենքի խախտման համար պահելու համար միայն:

ԽԿԿ–ն կցանկանար թարմացված տեղեկություններ ստանալ պլանավորվող փոփոխությունների եւ, մասնավորապես, կարգապահական վաշտ տեղափոխելու հետ կապված կարգապահական միջոցի փոփոխությունների վերաբերյալ: Կոմիտեն, մասնավորապես, կցանկանար տեղեկություններ ստանալ այն մասին, թե արդյոք այդ

---

[34] Տե՛ս քրեական օրենսգրքի 57–րդ հոդվածի 3–րդ մասը:

[35] Տե՛ս քրեական օրենսգրքի 58–րդ հոդվածը եւ քրեակատարողական օրենսգրքի 52–րդ հոդվածը:

[36] Տե՛ս 1996 թվականի օգոստոսի 12–ի ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրության 54–րդ եւ 74–րդ կետերը: Տե՛ս նաեւ «ՀՀ զինված ուժերի կայազորային եւ պահակային ծառայությունների կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքի 14–րդ հավելվածի 4–րդ պարբերությունը:

կարգով տեղափոխման ենթարկվող զինծառայողները որոշակի ժամանակահատվածներում գտնվելու են մեկուսացման վայրերում:

2. Վատ վերաբերմունքը

44. Պատվիրակությունը որեւէ հաղորդում չի ստացել այն զինծառայողների նկատմամբ վատ վերաբերմունքի մասին, ովքեր գտնվում էին կամ վերջերս գտնվել են ռազմական ոստիկանության մարմիններում:

Իրավիճակի ամբողջական եւ ընթացիկ պատկերն ունենալու համար **Կոմիտեն կցանկանար ստանալ 2009 եւ 2010 թվականների համար հետեւյալ տեղեկությունները.**

- **ռազմական ոստիկանության ծառայողների կողմից վատ վերաբերմունքի դեմ բողոքների թիվը,**
- **այդ բողոքների հիման վրա հարուցված քրեական եւ կարգապահական գործերի թիվը,**
- **ամփոփագիր՝ նշանակված քրեական պատժամիջոցների մասին:**

3. Երաշխիքները

45. Հանցագործություն կատարելու մեջ կասկածվող զինծառայողները պետք է օգտվեն միեւնույն ընթացակարգային իրավունքներից, ինչ մյուս կասկածյալները:[37] Զինծառայողներից շատերը, ում հետ զրուցել է պատվիրակությունը, տեղեկացվել էին իրենց իրավունքների մասին եւ իրենց հնարավորություն էր տրվել օգտվել այդ իրավունքներից արգելանքի վերցնելուց անմիջապես հետո: Այնուամենայնիվ, որոշ անձինք, ում հետ զրուցել է պատվիրակությունը, բողոքել են, որ իրենց գտնվելու մասին ընտանիքի անդամին տեղեկացնելու եւ պաշտպանի

[37] Տե՛ս սույն զեկույցի 28–րդ պարբերությունը եւ Զինված ուժերում մարդու իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)4 առաջարկության 24–րդ պարբերությունը:

հետ հանդիպելու իրենց իրավունքի իրականացումը հետաձգվել է մինչեւ 10 օրով: **Այս կապակցությամբ, տե՛ս 29-30–րդ պարբերություններում արված առաջարկությունները:**

46. 2010 թվականի այցի ընթացքում պարզվել է, որ զինծառայողների դեմ կարգապահական վարույթների հետ կապված երաշխիքներն ամրապնդելու անհրաժեշտություն կա, մասնավորապես իրենց ներկայացված մեղադրանքների մասին տեղեկություն ստանալու, ինչպես նաեւ ավելի բարձր ատյաններ կամ անկախ մարմիններ դիմելու հնարավորությունների կապակցությամբ: Պաշտոնատար այն անձինք, ում հետ զրուցել է պատվիրակությունը, շեշտել են, որ Զինված ուժերի կարգապահական նոր կանոնագրքի ընդունմամբ էլ ավելի են ամրապնդվում անազատության մեջ պահվող անձանց իրավունքները. օրինակ, զինծառայողներն իրավունք կունենան կարգապահական հետաքննության ընթացքում ծանոթանալու գործի նյութերին եւ իրավունք կունենան իրենց նկատմամբ նշանակված կարգապահական պատժամիջոցը բողոքարկելու ավելի բարձր ատյանում կամ դատարանում:[38] Այնուամենայնիվ, պարզվել է, որ մի շարք երաշխիքներ հստակ չէին կամ ընդհանրապես բացակայում էին (օրինակ՝ իրենց դեմ ներկայացվող մեղադրանքների մասին անմիջապես գրավոր տեղեկացվելու իրավունքը, իրենց դիրքորոշումը հայտնելու իրավունքը, պաշտպանությանը պատրաստվելու համար բավարար չափով ժամանակ ունենալու իրավունքը, պաշտպան ունենալու եւ խափանման միջոցի նշանակման վերաբերյալ որոշման օրինակն ունենալու իրավունքը, որում պետք է հստակ տեղեկություններ պարունակվեն բողոքարկման ընթացակարգի վերաբերյալ):

ԽԿԿ-ն հավատացած է, որ Հայաստանի իշխանությունները, հաշվի առնելով ներկայացված դիտողությունները եւ Զինված ուժերում մարդու իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)4 առաջարկությունը, իրավական եւ գործնական միջոցներ կձեռնարկեն՝ ապահովելու համար, որ կարգապահական վարույթներում ներգրավված զինծառայողներն օգտվեն համապատասխան բոլոր երաշխիքներից:

47. Ինչ վերաբերում է <u>անկախ մարմինների կողմից իրականացվող ստուգումներին,</u> ապա զինվորական դատախազները եւ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի

[38] Զինված ուժերի կարգապահական կանոնագրքի նախագծի 11–րդ եւ 16–րդ հոդվածներ:

աշխատակիցներն իրավունք ունեն այցելելու զինծառայողների համար նախատեսվող՝ ձերբակալված անձանց պահելու վայրեր: ԽԿԿ–ն նշում է նաեւ, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին հնարավորություն տրվել է մուտք գործելու այդ վայրեր՝ կոնկրետ մոնիթորինգային ծրագրի շրջանակներում, այնուամենայնիվ, ռազմական ոստիկանությանը նախապես ծանուցում է ուղարկվել իրենց այցերի վերաբերյալ: ԽԿԿ–ն անհրաժեշտ է համարում շեշտել, որ լիարժեքորեն արդյունավետ լինելու համար մոնիթորինգի խմբերի այցերը պետք է կրեն հաճախակի բնույթ եւ իրականացվեն առանց նախազգուշացումների:

Կոմիտեն Հայաստանի իշխանություններին առաջարկում է էլ ավելի զարգացնել մոնիթորինգ իրականացնող անկախ մարմինների կողմից ռազմական հաստատություններ այցելելու համակարգը: Այս կապակցությամբ, տե՛ս 8–րդ պարբերությունը:

4. Անազատության մեջ պահելու պայմանները

48. Այցելած ռազմական հաստատությունների <u>նյութակենցաղային պայմանների</u> կապակցությամբ ԽԿԿ–ն գոհունակությամբ նշում է, որ Երեւանում տեղակայված ռազմական ոստիկանության մեկուսարանի 14 խցերն ամբողջությամբ վերանորոգվել էին: Դրանք ունեին նախատեսված թվով անձանց պահելու համար համարժեք տարածք,[39] համապատասխան կերպով օդափոխվում էին եւ մաքուր էին:

Հրազդանում գտնվող ռազմական կարգապահական գումարտակի երկու մենախցերն ունեին 6 քառակուսի մետր մակերես: Դրանք գերազանց վերանորոգված էին, ունեին բավականին լավ ներքին լուսավորություն (այդ թվում՝ բնական լուսավորություն) եւ օդափոխություն:

49. Հակառակ պատկերն էր Երեւանի կայազորի ռազմական ոստիկանության բաժնի կարգապահական մեկուսարանում, որի 12 խցերում վերանորոգման ընդհանուր վիճակը վատն էր: Ավելին փոքր խցերը բավականին գերծանրաբեռնված էին (օրինակ՝ ձերբակալված երեք

[39] Սկսած չորս անձի համար նախատեսվող 18 քառակուսի մետր տարածքից, մինչեւ ութ անձի համար նախատեսվող 50 քառակուսի մետր:

անձի համար նախատեսվել էր 8 քառակուսի մետր տարածք ունեցող խուց),[40] իսկ բոլոր խցերի պատուհաններն ունեին փայլատ ապակիներ, ինչը սահմանափակում էր բնական լուսավորության ներթափանցումը: Ի պատասխան այցի վերջում պատվիրակության կողմից ներկայացված նախնական դիտարկումների՝ Հայաստանի իշխանությունները 2010 թվականի սեպտեմբերի 6–ի նամակով ԽԿԿ–ին տեղեկացրել են, որ այդ խցերը վերանորոգվել են, իսկ պատուհանների ապակիները՝ փոխվել՝ բնական լուսավորության ներթափանցումը հնարավորինս բարելավելու համար: Սա ողջունելի տեղաշարժ է:

Սեւանի կայազորի ռազմական ոստիկանության բաժնի՝ Մարտունիում գտնվող կարգապահական մեկուսարանի խցերն ապահովված էին բնական լուսավորությամբ եւ մաքուր էին: Այնուամենայնիվ, որոշ խցեր շատ փոքր էին՝ ընդամենը 4 քառակուսի մետր մակերեսով. այս ամենն էլ ավելի է խորացնում մտահոգությունը, քանի որ դրանք օգտագործվում են քրեական օրենքի խախտման համար զինծառայողներին երկարացված ժամկետներով պահելու նպատակով: Իսկ ինչ վերաբերում է կարգապահական կալանքի ձեւով պատիժ կրող զինծառայողներին պահելու համար օգտագործվող ընդարձակ խցերին, ապա դրանք չափազանց փոքր էին դրանցում պահվող անձանց նախատեսված թվի համար (օրինակ՝ մոտ 8.5 քառակուսի մետր տարածք ունեցող խցերում կարող էին պահվել մինչեւ չորս զինծառայող):

50. Պատվիրակությունը նկատել է, որ 2002 թվականի այցից հետո որեւէ քայլ չի արվել՝ ապահովելու համար, որ կարգապահական կալանքի ձեւով պատիժ կրող բոլոր անձանց (այսինքն՝ ոչ միայն սպաներին եւ ենթասպաներին) գիշերվա համար տրամադրվեն ներքնակներ եւ ծածկոցներ: Հայաստանի իշխանությունները 2010 թվականի սեպտեմբերի 6–ի իրենց նամակում նշել են, որ այս խնդիրը, այն է՝ խցերի չափերի հետ կապված հարցը, պետք է լուծվի կարգապահական կալանքը վերացնելու միջոցով, ինչը նախատեսվում է Զինված ուժերի կարգապահական կանոնագրքի նախագծով (տե՛ս 43–րդ պարբերությունը): ԽԿԿ–ն կարծում է, որ դա չպետք է դիտվի որպես խոչընդոտ, որ Հայաստանի իշխանությունները, նախքան կանոնագրքի ընդունումը, վերացնեն այդ թերությունները:

51. Սանիտարական պայմանները, ընդհանուր առմամբ, բավարար էին. այցելած մարմիններում առկա ընդհանուր զուգարանը եւ լոգանքի հարմարություններն ունեին, ընդհանուր առմամբ,

---

[40] Բեռնվածության մակարդակը գրեթե համարժեք էր ավելի մեծ խցերում (օրինակ՝ 40 քառակուսի մետր մակերես տարածք ունեցող խցում կարող էր պահվել ինը զինծառայող):

բավարար վերանորոգում եւ մաքուր էին: Երեւանի կայազորի ռազմական ոստիկանության բաժնի կարգապահական մեկուսարանի սանհանգույցը բացառություն էր կազմում. այն կիսաքանդ էր եւ կեղտոտ:

52. Անազատության մեջ պահվող զինծառայողները, ում հետ զրուցել է ԽԿԿ պատվիրակությունը, ունեին առնվազն մեկ ժամ տեւողությամբ բացօթյա զբոսանքի հնարավորություն համապատասխան հարմարություններ (այդ թվում՝ վատ եղանակից պատսպարվելու համար ծածկապատ տարածք) ունեցող բակերում:

53. Ինչպես եւ 2002 թվականին, զինվորական կարգապահական կանոնների խախտման համար պահվող զինծառայողներն ունեին խցերից դուրս զբաղմունք (օրինակ՝ աշխատանք): Այնուամենայնիվ, կալանքի տակ գտնվող կամ պատիժը կրող զինծառայողներն օրական 23 ժամ փակված էին իրենց խցերում՝ չունենալով գրեթե ոչ մի զբաղմունք:

Բացի դրանից՝ պատժախցերում պահվող զինծառայողների համար սահմանված ռեժիմը որոշ դեպքերում անհարկիորեն խիստ էր (օրինակ՝ այդ զինծառայողներին արգելվում էր օգտվել անկողնուց 06:00-ից մինչեւ 22:00, եւ ենթադրվում է, որ նրանց հնարավորություն չի տրվել նաեւ նստել կամ պառկել հատակին): ԽԿԿ-ի կարծիքով՝ **պատժախցերում օրվա ընթացքում մահճակալները պատին ամրացնելը ոչ մի բանով հիմնավորված չէ: Ավելին, կարգապահական կալանքի տակ պահվող զինծառայողները պետք է հնարավորություն ունենան օրվա ընթացքում պառկելու մահճակալին, եթե դա անհրաժեշտ է՝ ելնելով նրանց առողջական վիճակից:**

54. Այցի ընթացքում պատվիրակությունը նկատել է, որ կալանքի տակ պահվող եւ հանցագործություն կատարելու համար պատիժ կրող զինծառայողները հեռախոսից օգտվելու հնարավորություն ունեին, եւ նրանց թույլ էր տրվում պարբերաբար տեսակցել ընտանիքի անդամների հետ:[41] Այնուամենայնիվ, զինվորական կարգապահության կանոնները խախտելու կամ կարգապահական գումարտակի ներքին կանոնները խախտելու համար պահվող զինծառայողների համար հեռախոսազանգերը կամ տեսակցություններն արգելված էին:[42]

---

[41] Տե՛ս 124–րդ եւ 125–րդ պարբերությունները:

[42] Տե՛ս «ՀՀ զինված ուժերի կայազորային եւ պահակային ծառայությունների կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքի 14–րդ հավելվածի 20–րդ պարբերությունը, ինչպես նաեւ քրեակատարողական օրենսգրքի 52–րդ հոդվածի 3–րդ մասը:

ԽԿԿ–ն մատնանշում է 123–րդ պարբերության երրորդ ենթապարբերությունում նշված առաջարկությունը:

55. Հաշվի առնելով վերոնշյալը՝ **Կոմիտեն առաջարկում է.**

- **Երեւանի կայազորի ռազմական ոստիկանության բաժնի կարգապահական մեկուսարանում եւ Սեւանի կայազորի ռազմական ոստիկանության բաժնի՝ Մարտունիում գտնվող կարգապահական մեկուսարանում նվազեցնել ծանրաբեռնվածության մակարդակը՝ ընդհանուր խցերում ապահովելով առնվազն 4 քառակուսի մետր բնակելի տարածք անազատության մեջ պահվող մեկ անձի հաշվով,**

- **Սեւանի կայազորի ռազմական ոստիկանության բաժնի՝ Մարտունիում տեղակայված կարգապահական մեկուսարանի 4 քմ տարածք ունեցող խցերն ընդլայնել կամ հանել օգտագործումից,**

- **կարգապահական կալանքի ենթարկված բոլոր անձանց գիշերն ապահովել ներքնակներով, ծածկոցներով եւ բարձերով,**

- **բարելավել Երեւանի կայազորի ռազմական ոստիկանության բաժնի կարգապահական մեկուսարանի սանհանգույցի վերանորոգման եւ մաքրության վիճակը,**

- **կալանավորված կամ իրենց պատիժը կրող զինծառայողներին խցից դուրս որեւէ զբաղմունք ունենալու հնարավորություն տալ (օրինակ՝ աշխատանք, սպորտ):**

Գ. <u>Ազգային անվտանգության ծառայության հիմնարկները</u>

1. <u>Վատ վերաբերմունքը</u>

56. ԽԿԿ պատվիրակությունը որոշ հաղորդումներ է ստացել ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից հարցաքննությունների ժամանակ կասկածյալների նկատմամբ ցուցաբերված <u>ֆիզիկական բնույթի վատ վերաբերմունքի</u> դեպքերի մասին: Հաղորդվող վատ վերաբերմունքը վերաբերում էր այցին նախորդող հինգ ամիսների

ժամանակահատվածին եւ հիմնականում դրսեւորվում էր բռունցքով, ոտքով եւ փայտե ձողերով ձեռնաշղթայված անձին հարվածելով՝ խոստովանական ցուցմունք կորզելու ակնհայտ նպատակով: Ավելին, հարցված մի քանի անձինք բողոքել են, որ սպառնալիքներ են ստացել, որ իրենց նկատմամբ բռնություն կկիրառվի:

ԽԿԿ–ն առաջարկում է, որ ազգային անվտանգության ծառայության բոլոր աշխատակիցներին պետք է հստակ հասկացնել, որ անազատության մեջ պահվող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքն անընդունելի է եւ ենթակա է խիստ պատժամիջոցների կիրառման:

57. Կոմիտեն կցանկանար շեշտել, որ կադրերի ներգրավման հետեւողական ընթացակարգերը եւ կատարելագործված վերապատրաստման դասընթացները կարեւոր նշանակություն ունեն վատ վերաբերմունքի հետ կապված խնդիրները հենց սկզբից արմատախիլ անելու հարցում: Դասընթացների ընթացքում պետք է հստակ ներկայացվի, որ կասկածյալներին հարցաքննելու կոնկրետ նպատակը՝ անկախ այն հանցագործության ծանրությունից, որի կատարման մեջ նրանք կասկածվում են, պետք է լինի հետաքննության առարկա հանդիսացող հարցի վերաբերյալ ճշմարտության բացահայտման նպատակով ճշգրիտ եւ հուսալի տեղեկություններ ձեռք բերելը, այլ ոչ թե խոստովանական ցուցմունքներ կորզելը մեկից, ով ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կարծիքով արդեն մեղավոր է ճանաչված: **ԽԿԿ–ն առաջարկում է, որ Հայաստանի իշխանությունները, հաշվի առնելով վերոնշյալ դիտարկումները, միջոցներ ձեռնարկեն ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության կատարելագործման ուղղությամբ:**

Հարկ է նշել, որ II.Ա.4 բաժնում (Ոստիկանության կողմից ցուցաբերվող վատ վերաբերմունքի դեմ ընթացակարգային երաշխիքներ) արված առաջարկությունները հավասարապես վերաբերվում են նաեւ ազգային անվտանգության ծառայության կողմից ազատությունից զրկված անձանց:

2. Անազատության մեջ պահելու պայմանները

58. Ազգային անվտանգության ծառայության Երեւանի վարչական շենքում տեղակայված ձերբակալված անձանց պահելու վայրում, որ բաղկացած է երկու խուց ունեցող մեկուսարանից, անազատության մեջ պահելու նյութակենցաղային պայմաններն ընդհանուր առմամբ լավ վիճակում էին (տե՛ս CPT/Inf (2010) 7 փաստաթղթի 27–րդ պարբերությունը): Այդուհանդերձ, 6 քառակուսի մետր մակերես ունեցող խցում կարող էին պահվել անազատության մեջ գտնվող երկու անձ. հաշվի առնելով այդ խցի սահմանափակ տարածքը՝ այդտեղ չպետք է պահվի մեկից ավելի անձ: Ավելին, բնական լուսավորությունը շատ սահմանափակ էր (խցի պատուհանի դիմաց պատ էր): 2010 թվականի սեպտեմբերի 6–ի իրենց նամակում Հայաստանի իշխանությունները տեղեկացրել են, որ միջոցներ են ձեռնարկվել այդ խցում բնական լուսավորությունը բարելավելու ուղղությամբ, իսկ աշխատակազմին հանձնարարվել է այդտեղ չպահել մեկից ավելի անձ: Կոմիտեն ողջունում է այդ քայլերը:

59. Հարցված բոլոր անձինք, ովքեր անազատության մեջ էին պահվում կամ պահվել այդ վայրում, նշել են, որ ամեն օր առնվազն մեկ ժամ իրենց թույլատրվել է բացօթյա զբոսանքի հնարավորություն ունենալ: Այնուամենայնիվ, բացօթյա զբոսաբակը շատ փոքր էր եւ չուներ վատ եղանակից պատսպարվելու համար նախատեսված ծածկապատ տարածք: **ԽԿԿ–ն առաջարկում է վերացնել այդ թերությունները:**

Դ. Քրեակատարողական հիմնարկները

1. Նախնական դիտարկումները

60. Պատվիրակությունն առաջին անգամ այցելել է «Կոշ» քրեակատարողական հիմնարկ: Դրան հետեւել են նաեւ այցելությունները «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ, «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ–ի հոգեբուժական բաժանմունք եւ ամբողջական այցելությունը «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ, ուր 2008 թվականին ԽԿԿ-ն կատարել էր կարճ այցելություն: Հետագայում պատվիրակությունն ուսումնասիրել է ցմահ

ազատազրկման դատապարտված անձանց վիճակը «Երեւան–Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում:

Այցելության ժամանակ պատվիրակության կողմից կատարված ուսումնասիրությունները վեր են հանել մտահոգության առարկա հանդիսացող որոշ առանցքային ոլորտներ, որոնք մանրամասն կքննարկվեն զեկույցի սույն բաժնում. (i) քրեակատարողական հիմնարկների գերբնակեցումը, (ii) քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց զբաղվածության ծրագրերի սակավաթիվ լինելը, (iii) քրեակատարողական հիմնարկների անձնակազմի եւ դրանց հետ առնչություն ունեցող պետական պաշտոնատար անձանց կոռումպացված լինելը, (iv) քրեակատարողական հիմնարկներում պատշաճ կարգուկանոն պահպանելու նպատակով քրեակատարողական հաստատությունների ոչ պաշտոնական աստիճանակարգման վրա հույսը դնելը: Ավելին, ցմահ ազատազրկման դատապարտված անձանց վիճակը շարունակում է մտահոգությունների տեղիք տալ:

61. Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թիվը վերջին չորս տարիների ընթացքում աճել է. 2010 թվականի սեպտեմբերին այն 4928 էր (4346 տեղ ընդհանուր ծավալի դեպքում)՝ համեմատած 2006 թվականի ապրիլին քրեակատարողական հիմնարկներում պահվող 2997 անձանց հետ (այսինքն՝ արձանագրվել է 40 տոկոս աճ): Գերբնակեցումը բնորոշ էր պատվիրակության այցելած քրեակատարողական բոլոր հաստատություններին, որոնցից ամենացայտուն օրինակը «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկն էր: Պատվիրակությունն ականատես եղավ գերբնակեցման բացասական ազդեցությանը քրեակատարողական հիմնարկում կյանքի մի շարք կողմերի վրա, այն է՝ նույն խցում պահվողների՝ առկա մահճակալների վրա հերթով քնելը, կացարանի փոքր լինելը եւ հակահիգիենիկ պայմանները, զբաղվածության գրեթե լրիվ բացակայությունը եւ բացօթյա զբոսանքների սահմանափակումները, աճող լարվածությունը քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց միջեւ եւ ժամանակ առ ժամանակ՝ նրանց ու քրեակատարողական հիմնարկի անձնակազմի միջեւ:[43] 2010 թվականի սեպտեմբերի 6–ի նամակով Հայաստանի իշխանությունները տեղեկացրել են ԽԿԿ–ին, որ քրեակատարողական

[43] Անհրաժեշտ է նշել նաեւ, որ խիստ գերբնակեցումն ինքնին կարող է վերածվել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3–րդ հոդվածով կարգավորվող խնդրի (տե՛ս, օրինակ՝ Վելիեւն ընդդեմ Ռուսաստանի 2010 թվականի հունիսի 24–ի գործը):

հիմնարկների գերբնակեցումը նվազեցնելու նպատակով պլանավորվում է կառուցել չորս նոր քրեակատարողական հաստատություն, որոնցից մեկը՝ Երեւանում:

ԽԿԿ–ն պետք է ընդգծի՝ անձանց քրեակատարողական հիմնարկ ընդունելու եւ դրանից ազատելու վերաբերյալ ռազմավարության մշակման անհրաժեշտությունը, որպեսզի ազատազրկումն իսկապես ծառայի որպես վերջին միջոց. ավելի շատ քրեակատարողական հիմնարկներ կառուցելը հարցի միակ լուծումը չէ: Սա ենթադրում է, որ, առաջին հերթին, շեշտը պետք է դրվի՝ նախքան պատիժ նշանակելն ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վրա, երկրորդ՝ արդյունավետ միջոցներ ընդունելու վրա, որոնք կհեշտացնեն ազատությունից զրկված անձանց վերաինտեգրումը հասարակություն: **Կոմիտեն առաջարկում է Հայաստանի իշխանություններին կրկնապատկել իրենց ջանքերը քրեակատարողական հիմնարկների գերբնակեցման դեմ պայքարելու ուղղությամբ եւ այդ կապակցությամբ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի համապատասխան բոլոր առաջարկություններին հետեւում**:[44]

ԽԿԿ–ն հավատացած է նաեւ, որ Հայաստանի իշխանությունների քրեակատարողական հիմնարկների կառուցման ծրագիրը կկազմի մարդասիրական քրեակատարողական համակարգ ստեղծելու ընդհանուր ռազմավարության մի մասը, որն ի հավելումն ֆիզիկական ենթակառուցվածքների բարելավման, հասցեագրում է քրեակատարողական հիմնարկների կառավարման հետ կապված խնդիրները, քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց բաշխվածությունն իրենց տներին հնարավորինս մոտ գտնվող հաստատություններում եւ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց հասարակություն վերաինտեգրվելու հնարավորությունները:

62. Վերջին մի քանի տարիների ընթացքում իրականացվել են որոշ նախաձեռնություններ, որոնց նպատակն էր դատապարտյալներին ապահովել զբաղվածությամբ, (օրինակ՝ արհեստագործությունը, հեռավար ուսուցման ծրագրերը, կազմակերպված սպորտային

[44] Տե՛ս «Քրեակատարողական հիմնարկների գերբնակեցման եւ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թվի աճի» վերաբերյալ Rec(99)22 առաջարկությունը, «Այլընտրանքային պատիժների եւ միջոցների մասին եվրոպական կանոնների իրականացումը բարելավելու» մասին Rec(2000)22 առաջարկությունը, «Պայմանական ազատելու» մասին Rec(2003)22 առաջարկությունը, ինչպես նաեւ «Կալանավորման, դրա կիրառման պայմանների եւ չարաշահման դեմ երաշխիքների» մասին Rec(2006)13 առաջարկությունը:

իրադարձությունները): Այդուհանդերձ, այցելության ընթացքում պարզ դարձավ, որ քրեակատարողական հիմնարկում պահվող սահմանափակ թվով անձինք են ներգրավված նմանօրինակ գործունեության մեջ: ԽԿԿ–ն կցանկանար կրկին շեշտել, որ դատապարտյալներին լայնամասշտաբ եւ նպատակային զբաղվածությամբ ապահովելը նրանց սոցիալական վերականգնման ու վերաինտեգրման էական մասն է կազմում: Ինչ վերաբերում է, մասնավորապես, կալանավորված անձանց, ապա զբաղվածության գրեթե ամբողջովին բացակայությունը վատթարացրել էր ազատազրկման պայմանները, եւ ավելի խստացրել դրա պատժելիությունը՝ դատապարտված անձանց ռեժիմի համեմատ: **Կոմիտեն առաջարկում է Հայաստանի իշխանություններին փորձել ստեղծել զբաղվածության ծրագրեր եւ՛ դատապարտյալների, եւ՛ կալանավորված անձանց համար: Դրա նպատակն է ապահովել, որ քրեակատարողական հիմնարկում պահվող երկու խմբի անձինք էլ հնարավորություն ունենան օրվա զգալի մասն (8 ժամ կամ ավելի) անցկացնել իրենց խցերից դուրս՝ ներգրավվելով տարբեր բնույթի նպատակային աշխատանքներում:**

63. Ինչպես ցույց է տվել 2006 թվականի այցելությունը, քրեակատարողական համակարգում կոռուպցիան քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց կողմից համատարած ընկալվում էր որպես լուրջ խնդիր. սա մտահոգում է Կոմիտեին: Պատվիրակությունը քրեակատարողական հիմնարկում պահվող անձանցից լսել է բազմաթիվ բողոքներ այն մասին, որ անձնակազմը նրանցից եւ (կամ) նրանց ազգականներից պահանջել է գումար կամ այլ տեսակի օգուտներ, որպեսզի նրանց թույլատրվի իրականացնել իրենց իրավունքները (օրինակ՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում՝ առանց բաժանարար միջնորմների կարճատեւ տեսակցությունները, «Կոշ» քրեակատարողական հիմնարկում՝ բժշկի կամ ատամնաբույժի ծառայություններից օգտվելը, «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում՝ քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացիների կողմից ցնցուղ ընդունելը) կամ որպեսզի նրանք այլ՝ ավելի խիստ ռեժիմի քրեակատարողական հաստատություն չտեղափոխվեն (օրինակ՝ «Կոշ» քրեակատարողական հիմնարկ): Ավելին, բազմաթիվ բողոքներ են լսվել նաեւ քրեակատարողական հիմնարկի անձնակազմի կամ քրեակատարողական համակարգի հետ առնչություն ունեցող պետական պաշտոնատար անձանց կողմից քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց վաղաժամկետ ազատելու մասին դրական որոշմանը նպաստելու համար նրանցից եւ (կամ) նրանց ազգականներից գումար պահանջելու մասին: **ԽԿԿ–ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին էլ ավելի շատ ջանքեր**

գործադրել քրեակատարողական համակարգում կոռուպցիայի դեմ պայքարելու ուղղությամբ:[45] Ավելին, քրեակատարողական հիմնարկի ամբողջ անձնակազմին եւ քրեակատարողական համակարգի հետ առնչություն ունեցող պետական պաշտոնատար անձանց պետք է հստակ հաղորդվի այն մասին, որ քրեակատարողական հիմնարկում պահվող անձանցից կամ նրանց ազգականներից անհիմն օգուտ ստանալը կամ պահանջելն անընդունելի է. նրանց պետք է համապատասխան ժամանակահատվածներում այդ մասին պատշաճ ձեւով հիշեցվի:

2. Վատ վերաբերմունքը

64. Քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց ճնշող մեծամասնությունը պատվիրակության անդամների հետ ունեցած զրույցում նշել է, որ քրեակատարողական հիմնարկի անձնակազմն իրենց նկատմամբ ճիշտ վերաբերմունք է ցուցաբերում: Սա անձնակազմի վրա դրական ազդեցություն է ունեցել: «Կոշ», «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներում կամ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ–ի հոգեբուժական բաժանմունքում ֆիզիկական բնույթի վատ վերաբերմունքի վերաբերյալ որեւէ բողոք չի ստացվել:

Հակառակ 2006 թվականին ստեղծված դրությանը՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ցմահ ազատազրկման դատապարտված անձինք, ում հետ զրուցել է պատվիրակությունը, նշել են, որ զգալի դրական փոփոխություն են նկատել անձնակազմի վերաբերմունքի մեջ, եւ որ նրանք չեն ենթարկվել վատ վերաբերմունքի կամ ականատես չեն եղել որեւէ նման դեպքի: Այնուամենայնիվ, նույն քրեակատարողական հաստատությունում ստացվել են մի քանի բողոքներ քրեակատարողական հիմնարկում պահվող այլ անձանցից՝ անձնակազմի կողմից ֆիզիկական բնույթի վատ վերաբերմունքի ենթարկվելու մասին: Վատ վերաբերմունքը, որը դրսեւորվել էր մահակներով ծեծի ենթարկելով, տեղի էր ունեցել անմիջապես այն բանից հետո, երբ իրենք հրաժարվել էին տեղափոխվել ավելի վատ պայմաններ ունեցող խցեր:

---

[45] Այս առնչությամբ, տե՛ս CPT/Inf(2007)47 եւ CPT/Inf(2007)48 փաստաթղթերի 38–րդ պարբերությունը:

«Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում մի քանի՝ քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացիները բողոքել են այն մասին, որ իրենք ենթարկվել են ռասսայական բնույթի վիրավորանքների անձնակազմի մի քանի աշխատակիցների կողմից, սակայն պարզվել է, որ ղեկավարությունն այդ բողոքների առնչությամբ ձեռնարկել է համապատասխան միջոցներ:

ԽԿԿ-ն առաջարկում է, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի անձնակազմին պարբերաբար հիշեցվի, որ քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքն անընդունելի է, եւ այդպիսի վերաբերմունքի դրսեւորումը խստորեն կպատժվի:

65. Այցելած հաստատություններում «հատուկ միջոցներին» (օրինակ՝ մահակներ, ձեռնաշղթաներ) դիմելու դեպքերը, ընդհանուր առմամբ, ավելի շատ էին արձանագրվել, քան նախկինում: Այնուամենայնիվ, պատվիրակության հավաքած տեղեկություններից պարզ է դարձել, որ մահակների օգտագործման դեպքերի մասին միշտ չէ, որ գրառում է կատարվել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում: **ԽԿԿ-ն առաջարկում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի ղեկավարությանը եւ վերահսկողություն իրականացնող դատախազներին ուշադրությունը բեւեռել լրացուցիչ զգոնություն ցուցաբերելու անհրաժեշտության վրա՝ ապահովելու համար, որ քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց նկատմամբ «հատուկ միջոցներ» կիրառելու բոլոր ատյանների վերաբերյալ համապատասխան գրառումներ կատարվեն, եւ որպեսզի «հատուկ միջոցները» երբեք որպես պատժամիջոցներ չկիրառվեն: Ավելին, անհրաժեշտ է վերստին նշել, որ քրեակատարողական հիմնարկում պահվող անձը, որի նկատմամբ կիրառվել են «հատուկ միջոցներ», պետք է ունենա անմիջապես բժշկական զննության ենթարկվելու կամ, անհրաժեշտության դեպքում, բուժանձնակազմից բուժում ստանալու իրավունք: Բժշկական զննության արդյունքները (այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից արված ցանկացած համապատասխան հայտարարություն եւ բուժանձնակազմի եզրակացությունները) պետք է պաշտոնապես գրառվեն եւ հասանելի լինեն քրեակատարողական հիմնարկում պահվող անձի համար, ով պետք է նաեւ դատաբժշկական փորձաքննություն անցնելու իրավունք ունենա:**

66. Քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց ֆիզիկական եւ հոգեկան անձեռնմխելիությունը պաշտպանելու եւ քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց միջեւ ահաբեկման դեպքերը կանխելու նպատակով անհապաղ, վճռական եւ նույնիսկ նախնական միջոցներ ձեռնարկելու պարտականությունը դրված է քրեակատարողական հիմնարկի անձնակազմի եւ վարչակազմի վրա: Պատվիրակությունը 2010 թվականին կատարած իր այցի ժամանակ նկատել է, որ «Նուբարաշեն» եւ «Կոշ» քրեակատարողական հիմնարկներում առկա է անձնակազմի կողմից քրեակատարողական հիմնարկում պահվող՝ ընտրված թվով անձանց իրավասություններ պատվիրակելու ընդհանուր միտում, որոնք գտնվում են քրեակատարողական հիմնարկի ոչ պաշտոնական աստիճանակարգման գագաթամասում, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկում պահվող «առաջնորդին» (այսպես կոչված՝ «զոն նայողին»), եւ որոնց օգտագործում են՝ վերահսկելու համար քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց: «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում «առաջնորդին», իր իրավասությունն իրականացնելու համար, ակնհայտորեն տրվել էին որոշ արտոնություններ, ինչպես օրինակ՝ հաստատությունում համեմատաբար ազատ տեղաշարժվելու եւ ցանկացած բանտախուց մտնելու հնարավորություն: «Կոշ» քրեակատարողական հիմնարկում «առաջնորդը» պարզապես պատասխանատու էր քրեակատարողական հիմնարկում պահվողների շրջանում կարգուկանոն պահպանելու համար: Պարզվել է նաեւ, որ նրանք, ովքեր չէին ցանկացել կամ ի վիճակի չէին եղել լիարժեք պաշտպանություն ստանալու դիմաց «առաջնորդին» տրամադրել ֆինանսական կամ այլ միջոցներ, մեկուսացվել եւ հայտնվել էին ահաբեկման վտանգի տակ:

Ավելին, «համասեռամոլ»[46] համարվող՝ քրեակատարողական հիմնարկում պահվողները, որոնց քրեակատարողական հիմնարկում պահվող մյուս անձինք (եւ անձնակազմը) համարում էին ոչ ֆորմալ աստիճանակարգման ամենացածր մակարդակում գտնվողներ եւ տեղավորված էին այցելած հաստատությունների ամենաանմխիթար վիճակում գտնվող մասերում, բողոքում էին, որ նրանք քրեակատարողական հիմնարկում պահվող մյուս անձանց կողմից հաճախ ենթարկվում էին բանավոր վիրավորանքների ու զայրացուցիչ վերաբերմունքի եւ վախենում

[46] Քրեակատարողական հիմնարկում պահվողների այս կատեգորիայի մեջ մտնում են ոչ միայն սեռական նման կողմնորոշում ունեցող՝ քրեակատարողական հիմնարկում պահվող անձինք, այլ կարող են մտնել նաեւ քրեակատարողական հիմնարկում պահվող այն անձինք, որոնք մերժված են քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց հիմնական մասի կողմից տարբեր պատճառներով (օրինակ՝ սեռական բռնությունից տուժած լինելու պատճառով, սեռական բնույթի հանցագործություններ կատարած լինելու համար եւ այլն):

էին, որ կդառնան բռնության զոհ, եթե պահվեն քրեակատարողական հիմնարկի նույն վայրում, ինչ քրեակատարողական հիմնարկում պահվող մնացած անձինք:

67. Անձնակազմի այն անդամները, ում հետ զրուցել են պատվիրակության անդամները, նշել են, որ սահմանափակ թվով աշխատողներ ունենալու հանգամանքը նրանց այլընտրանքի հնարավորություն չէր տվել, քան «առաջնորդին» իրավասությունների զգալի մասը վերապահելը՝ քրեակատարողական հիմնարկում անվտանգությունն ապահովելու համար: Միեւնույն ժամանակ, անձնակազմը խորապես համոզված էր, որ «կառավարման» այս տեսակը կենսունակ էր այնքան ժամանակ, քանի դեռ նրանք կարող էին ապահովել, որ «առաջնորդը» չկարողանա օգտագործել քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց մեծամասնության վրա ունեցած իրենց ազդեցությունն ի վնաս քրեակատարողական հիմնարկի վարչակազմի:

Ըստ ԽԿԿ–ի՝ նման մոտեցումը ոչ միայն պոտենցիալ վտանգ է ներկայացնում քրեակատարողական հիմնարկում կարգուկանոնի հաստատմանը, այլ նաեւ մեծ ռիսկային իրավիճակ է ստեղծում քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց միջեւ ահաբեկման իմաստով, եւ դա հանգեցնում է քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց միջեւ անհավասար վերաբերմունքի մշակույթի ձեւավորմանը:

68. **ԽԿԿ–ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին ընդունել քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց միջեւ ահաբեկման պրակտիկայի դեմ պայքարի ազգային ռազմավարություն, այդ թվում՝ ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնք վերջ կդնեն՝ քրեակատարողական հաստատություններում կարգուկանոն պահպանելու նպատակով քրեակատարողական հիմնարկի ոչ պաշտոնական աստիճանակարգման վրա հույսը դնելուն:** Այս համատեքստում հղում է կատարվում 119–րդ պարբերության մեջ նշվող աշխատողների թվի վերաբերյալ արված առաջարկությանը:

Ավելին, Կոմիտեն առաջարկում է, որ «Կոշ» եւ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկների ղեկավարությունն ու անձնակազմը ձեռնարկեն իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցները՝ քրեակատարողական հիմնարկի ոչ պաշտոնական աստիճանակարգման բացասական ազդեցության եւ ազատությունից զրկված անձանց միջեւ ահաբեկման պրակտիկայի դեմ պայքարելու համար: Քրեակատարողական հիմնարկի ղեկավարությունը պետք է զգոն լինի այնքանով, որ բացառի անձնակազմի եւ

«առաջնորդի» միջեւ բախումները, իսկ քրեակատարողական հիմնարկի անձնակազմը պետք է հատկապես արձագանքի անհանգստության նշաններին, հատուկ ուշադրություն դարձնի քրեակատարողական հիմնարկում պահվող մյուս անձանց կողմից քրեակատարողական հիմնարկում պահվող խոցելի անձանց նկատմամբ դրսեւորվող վերաբերմունքին, լինի եւ՛վճռական, եւ՛ պատշաճորեն պատրաստված՝ անհրաժեշտության դեպքում միջամտելու համար:

3. Ցմահ ազատազրկման դատապարտված անձինք

69. 2006 թվականի հերթական այցից մի քանի ամիս անց «Գորիս» քրեակատարողական հիմնարկում պահվող ցմահ ազատազրկման դատապարտված անձինք տեղափոխվել են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ, որը համարվում էր առավել հարմար պայմաններ ունեցող: 2010 թվականի այցելության ժամանակ պարզվել է, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվում էին 92 ցմահ ազատազրկման դատապարտված անձ: Ցմահ ազատազրկման դատապարտված երկու անձ բուժում էին ստանում «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ–ում: Ցմահ ազատազրկման դատապարտված երեք այլ անձանց տեղավորել էին «Երեւան–Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում:

70. «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ցմահ ազատազրկման դատապարտված անձանց, ընդհանուր առմամբ, առաջարկվում էին ավելի լավ նյութակենցաղային պայմաններ, քան քրեակատարողական հիմնարկում պահվող մնացած անձանց: Նրանց տեղավորել էին 4–րդ մասնաշենքի երեք խցերում եւ ամբողջ 5–րդ մասնաշենքում, որոնք տեղակայված էին հիմնական կացարանային շենքի ամենավերեւի երկու հարկերում: Խցերն ունեին նախատեսված թվով անձանց պահելու համար համապատասխան չափ՝ (օրինակ՝ մոտավորապես 28 քմ մակերեսով խցում չորս մահճակալ, այդ թվում՝ առանձնացված սանհանգույց): Ջանքեր են գործադրվել 5–րդ մասնաշենքում խոնավության խնդիրը լուծելու ուղղությամբ: Ավելին, խցերի սանհանգույցներում տեղադրվել էին ցնցուղներ, որպեսզի քրեակատարողական հիմնարկում պահվող անձինք կարողանան ավելի հաճախ լոգանք ընդունել: Այդուհանդերձ, մի քանի խցեր (օրինակ՝ թիվ 77 եւ 79) գտնվում էին վերանորոգման անմխիթար վիճակում, եւ պատուհանները դեռեւս փակված էին մետաղյա ճաղավանդակներով

եւ շերտերով, որոնք էականորեն սահմանափակում էին բնական լույսի հնարավորությունը: **ԽԿԿ–ն առաջարկում է վերացնել այս թերությունները:**

ԽԿԿ–ն մեծապես մտահոգված է այն հանգամանքով, որ որեւէ առաջընթաց չի արձանագրվել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց զբաղվածության ապահովման հարցում: Խցից դուրս աշխատանք այլեւս չի առաջարկվում (աշխատանքի համար նախատեսված սենյակները եւ մարզասրահները վերածվել էին խցերի): Ավելին, քրեակատարողական հիմնարկում պահվող ոչ մի անձ աշխատանք չուներ: Քրեակատարողական հիմնարկում պահվող 92 անձանցից միայն երկուսն էին ներգրավված հեռավար ուսուցման ծրագրերում: Ինչ վերաբերում է բացօթյա զբոսանքին, ապա հաճախ այն ակնհայտորեն սահմանափակված էր շաբաթական երկու կամ երեք անգամով, եւ բացակայում էր շաբաթ եւ կիրակի օրերին:[47] Ամփոփելով նշենք, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձինք օրվա 24 ժամն անցկացնում էին իրենց խցերում՝ մատնված հարկադիր պարապուրդի. նրանց հիմնական զբաղմունքը հեռուստացույց կամ տեսաձայնային մագնիսական կրիչներով նյութեր դիտելն էր կամ գրքեր կարդալը: **ԽԿԿ–ն կոչ է անում Հայաստանի իշխանություններին մշակել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց զբաղվածության ծրագիր (ներառյալ՝ աշխատանքային, կրթական, շփման ու սպորտային, ինչպես նաեւ նպատակային վերականգնման ծրագրեր):** Ավելին, հղում է կատարվում 38–րդ պարբերության մեջ նշվող բացօթյա զբոսանքների վերաբերյալ արված առաջարկությանը:

71. «Երեւան–Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի նյութակենցաղային պայմաններում ցմահ ազատազրկման դատապարտված երեք անձանց պահելը լուրջ մտահոգության տեղիք է տալիս: Նրանց խցերը փոքր էին՝ ընդամենը 6 քմ մակերեսից ավելի, եւ չափազանց նեղ էին (այսինքն՝ պատերի միջեւ տարածությունը 2 մետրից էլ քիչ էր): Ավելին, բնական լույսի հնարավորությունը սահմանափակ էր, եւ բացակայում էր արտաքին տեսարանը (քանի որ պատուհանները նայում էին պատին): Թիվ 20 եւ 21 խցերը գտնվում էին վերանորոգման եւ սանիտարահիգիենիկ համեմատաբար լավ վիճակում, սակայն թիվ 18 խուցը կեղտոտ էր, լեցուն էր մկներով եւ ջրի ծորակը կոտրված էր՝ ջրի անընդհատ հոսքով: Այցի վերջում պատվիրակությունը խնդրել է զեկույց ներկայացնել քրեակատարողական հիմնարկում պահվող այդ անձանց պահելու նյութակենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ

[47] Տե՛ս նաեւ 82-րդ պարբերությունը:

ձեռնարկված քայլերի մասին: Հայաստանի իշխանությունները 2010 թվականի սեպտեմբերի 6–ի եւ 9–ի իրենց պատասխաններում ԽԿԿ–ին տեղեկացրել են, որ միջոցները ձեռնարկվում են (օրինակ՝ բնական լույսի հնարավորության բարելավումը, ջրի ծորակի նորոգումը եւ թիվ 18 խցի կրծողների վարակազերծում): Այնուամենայնիվ, հիմնական խնդիրը՝ կապված խցերի ոչ համապատասխան չափերի հետ, մնում է չլուծված: **ԽԿԿ–ն առաջարկում է անհապաղ լուծել նշված խնդիրը. կամ անհրաժեշտ է ընդարձակել խցերը, կամ նախընտրելի է, որ նշված քրեակատարողական հիմնարկում պահվող երեք անձինք տեղափոխվեն մեկ այլ վայր:**

Իրավիճակն ավելի վատթար էր երեք ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ մենախցի ռեժիմ կիրառելու պատճառով: Նրանցից երկուսը նման պայմաններում պահվել էին ինը տարուց ավելի: Նրանց չի թույլատրվել շփվել միմյանց կամ քրեակատարողական հիմնարկում պահվող մյուս անձանց հետ: Նրանք նույնիսկ հեռուստացույց կամ ռադիո չեն ունեցել իրենց խցերում (ի տարբերություն քրեակատարողական հիմնարկում պահվող երրորդ անձի): Խցից դուրս նրանց միակ կանոնավոր զբաղմունքը ամենօրյա զբոսանքն է եղել, որը դրսեւորվում էր քրեակատարողական հիմնարկի վերին հարկի զբոսահրապարակում մենակ զբոսնելով: Նման պայմանները կարող էին համարվել որպես անմարդկային վերաբերմունք եւ նպաստում էին ազատությունից զրկված անձանց հոգեկան առողջության վատթարացմանը (այս առնչությամբ տե՛ս 110–րդ պարբերությունը):

70–րդ կետում արված առաջարկությունը հավասարապես կիրառելի է նաեւ «Երեւան–Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում պահվող՝ ցմահ ազատազրկման դատապարտված երեք անձի նկատմամբ: Ինչ վերաբերում է հատկապես ցմահ ազատազրկման դատապարտված այն երկու անձանց, որոնք տարիներ շարունակ պահվել են մենախցի ռեժիմով, պետք է շտապ միջոցներ ձեռնարկվեն նրանց՝ քրեակատարողական հիմնարկում պահվող մյուս անձանց հետ շփումն ապահովելու ուղղությամբ: Կոմիտեն կցանկանար հաստատում ստանալ այն մասին, որ քրեակատարողական հիմնարկում պահվող նշված երկու անձանց խցերում տեղադրվել են հեռուստացույցներ:[48]

---

[48] 2010 թվականի սեպտեմբերի 9–ի հաղորդագրության մեջ Հայաստանի իշխանությունները տեղեկացրել են Կոմիտեին այն մասին, որ քրեակատարողական հիմնարկում պահվող այս երկու անձանց թույլատրվել է ունենալ հեռուստացույց:

72. Պարզվել է, որ 2006 թվականի այցից հետո միջոցներ են ձեռնարկվել, որպեսզի զբոսանքների ժամանակ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց համար ձեռնաշղթաներ օգտագործելը հիմնվի միայն ռիսկի գնահատման վրա՝ կոնկրետ դեպքից ելնելով: Այնուամենայնիվ, երբ 2009 թվականի նոյեմբերին «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից փախուստի դիմեցին ցմահ ազատազրկման դատապարտված երկու անձ, կրկին քրեակատարողական այդ հաստատություն ներմուծվեց խցից ձեռնաշղթաներով դուրս բերելու պրակտիկան:[49] Ըստ ԽԿԿ–ի՝ սա անհամաչափ է, եւ կարող է դիտարկվել որպես կոլեկտիվ պատժի ձեւ: Ավելին, ցմահ ազատազրկման դատապարտված անձինք ատամնաբույժի ծառայություններից, ինչպես նաեւ հեռախոսազանգերից օգտվելիս ակնհայտ ձեռնաշղթաներով էին եղել:

ԽԿԿ–ին մտահոգում է նաեւ այն հանգամանքը, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց եւ քրեակատարողական հիմնարկի անձնակազմի միջեւ հարաբերություններն այցելած հաստատություններում հասցվել էին խիստ նվազագույնի: Ըստ Կոմիտեի՝ ավելի մեծ նշանակություն պետք է տրվի անձնակազմի եւ քրեակատարողական հիմնարկում պահվող այդ անձանց միջեւ դրական հարաբերություններ ձեւավորելուն: Սա ոչ միայն բխում է քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց նկատմամբ մարդկային վերաբերմունքի, այլ նաեւ արդյունավետ հսկողության եւ անվտանգության պահպանման, ինչպես նաեւ անձնակազմի անվտանգության ապահովման շահերից:[50]

ԽԿԿ–ն կոչ է անում Հայաստանի իշխանություններին վերանայել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության ապահովման միջոցները՝ նշված դիտարկումների լույսի ներքո: Անհրաժեշտ է անհապաղ քայլեր ձեռնարկել՝ ապահովելու համար, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ նրանց խցերից դուրս բերելիս ձեռնաշղթաներ կիրառվեն բացառիկ դեպքերում՝ միշտ հենվելով ռիսկի գնահատման վրա՝ ելնելով կոնկրետ դեպքից:

---

[49] Նման պրակտիկա չի կիրառվել «Երեւան–Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում:

[50] Սա նաեւ «դինամիկ անվտանգության» հայեցակարգի առանցքային տարրերից է:

73. Ինչ վերաբերում է արտաքին աշխարհի հետ հաղորդակցման հնարավորություններին, ապա ցմահ ազատազրկման դատապարտված անձանց թույլատրվում էր ուղարկել եւ ստանալ նամակներ եւ շաբաթական մեկ անգամ օգտվել հեռախոսազանգերից: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ դեռեւս նախատեսվում են խիստ սահմանափակումներ՝ կապված ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տեսակցություններ թույլատրելու հետ:[51] ԽԿԿ–ն ստիպված է հիշեցնել, որ այս մոտեցումը հակասում է համընդհանուր ճանաչում գտած այն սկզբունքին, համաձայն որի՝ հանցագործություն կատարած անձինք ուղարկվում են քրեակատարողական հիմնարկներ ոչ թե պատժվելու համար, այլեւ որպես պատիժ: Ավելին, կարճատեւ տեսակցությունները, որպես կանոն, տեղի էին ունենում այնպիսի պայմաններում, որոնք չէին թույլատրում քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց ֆիզիկական շփումը նրանց այցելուների հետ (խցիկում, օրգանական ապակյա միջնորմով): Կոմիտեն գտնում է, որ հատուկ ջանքեր պետք է գործադրվեն՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց ընտանեկան կապերի փլուզումը կանխելու համար, ինչպես նաեւ նրանց պետք է հնարավորություն ընձեռվի իրականացնելու Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8–րդ հոդվածով սահմանված իրավունքները: **ԽԿԿ–ն կոչ է անում Հայաստանի իշխանություններին փոփոխել օրենսդրությունն այնպես, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց հնարավորություն ընձեռվի քրեակատարողական հիմնարկում պահվող մյուս անձանց հետ հավասար պայմաններով օգտվելու տեսակցության հնարավորությունից: Որպես ընդհանուր կանոն՝ տեսակցությունները պետք է տեղի ունենան առանց բաժանարար միջնորմների (օրինակ՝ սեղանի շուրջ), այդ միջնորմների առկայությամբ տեսակցությունները պետք է բացառություններ կազմեն:**

---

[51] Քրեակատարողական օրենսգրքի 92–րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր տարի ցմահ ազատազրկման դատապարտված անձանց եւ, մասնավորապես, առանձնապես ծանր հանցագործություններ կատարած՝ քրեակատարողական հիմնարկում պահվող մյուս անձանց տրամադրվում է առնվազն 3 կարճատեւ (մինչեւ չորս ժամ տեւողությամբ) եւ մեկ երկարատեւ տեսակցություն (մինչեւ 72 ժամ տեւողությամբ) (այս առնչությամբ տե՛ս 124–րդ պարբերությունը):

74. Ընդհանուր առմամբ, ԽԿԿ–ն կրկին անգամ նշում է, որ այն չի արդարացնում ցմահ ազատազրկման դատապարտված անձանց պարբերաբար մեկուսացումը:[52] Նման մոտեցումը չի համապատասխանում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003 թվականի հոկտեմբերի 9–ի «Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից ցմահ ազատազրկման դատապարտված անձանց եւ երկարաժամկետ ազատազրկման դատապարտված այլ անձանց պատժի կրումը կազմակերպելու» վերաբերյալ (2003) 23 առաջարկությանը: Նշված առաջարկությանը կից ներկայացված զեկույցում նշվում է, որ հաճախ սխալ ենթադրություն կա այն մասին, որ ցմահ ազատազրկումը ենթադրում է, որ քրեակատարողական հիմնարկում պահվող անձը վտանգավոր է: Ուստի, ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տեղավորելը պետք է լինի ոչ թե նրանց ազատազրկման, այլ ռիսկերի եւ կարիքների համապարփակ ու շարունակական գնահատման արդյունքը՝ հիմք ընդունելով անհատականացված պատիժը կրելու պլանը: **ԽԿԿ–ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին վերանայել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց մեկուսացմանը վերաբերող օրենսդրությունն ու պրակտիկան՝ ելնելով նշված դիտարկումներից:**

4. Քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացիները

75. 2010 թվականին կատարած իր այցի ժամանակ ԽԿԿ պատվիրակությունը հատուկ ուշադրություն էր դարձրել քրեակատարողական հիմնարկներում պահվող օտարերկրացիների վիճակի վրա: «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի 6–րդ մասնաշենքում պահվում էին քրեակատարողական հիմնարկում պահվող 38 օտարերկրացիներ, 16–ը՝ «Կոշ» եւ 27–ը՝ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներում:

76. Ինչ վերաբերում է նյութակենցաղային պայմաններին, ապա «Կոշ» քրեակատարողական հիմնարկում եւ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի կիսաբաց ռեժիմի պայմաններում պահվող օտարերկրացիները հիմնականում ունեն նույն խնդիրները, ինչ քրեակատարողական

[52] Քրեակատարողական օրենսգրքի 68–րդ հոդվածի 8–րդ մասով նախատեսվում է, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձինք պետք է անջատ պահվեն որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանցից:

հիմնարկում պահվող մյուս անձինք (տե՛ս ստորեւ նշված 5–րդ մասը): «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվող յուրաքանչյուր օտարերկրացի, ի տարբերություն քրեակատարողական հիմնարկում պահվող շատ այլ անձանց, ուներ իր անձնական մահճակալը. այլ կերպ ասած՝ 6–րդ մասնաշենքի մյուս խցերում դիտարկված գերբնակեցման հարցն ավելի լուրջ էր, քան նրանց խցում (օրինակ՝ 13 օտարերկրացի պահվում էին 22 քմ մակերեսով խցում): Նույն խնդիրն առկա էր նաեւ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի փակ ռեժիմի պայմաններում (օրինակ՝ 6 օտարերկրացի պահվում էին 13 քմ մակերեսով խցում): **ԽԿԿ–ն առաջարկում է ձեռնարկել հրատապ քայլեր՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում եւ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի փակ ռեժիմի պայմաններում նվազեցնելու օտարերկրացիների խցերի գերբնակեցումը՝ պահպանելու համար քրեակատարողական հիմնարկում պահվող յուրաքանչյուր անձի հաշվով առնվազն 4 քմ բնակելի տարածք ապահովելու մասին պետական չափորոշիչները:**

«Նուբարաշեն» եւ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներում պատվիրակությունն օտարերկրացիներից ստացել է բազմաթիվ բողոքներ՝ կապված իրենց կարիքների բավարարման համար անհրաժեշտ հատուկ սննդակարգերի բացակայության հետ:

ԽԿԿ–ն հորդորում է Հայաստանի իշխանություններին սնունդ պատրաստելիս երկու հաստատությունում էլ հաշվի առնել օտարերկրացիների հատուկ սննդակարգի կարիքների ապահովումը:

77. Ի տարբերություն քրեակատարողական հիմնարկում պահվող այլ անձանց՝ քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացիների համար զբաղվածության ծրագրեր, որպես այդպիսիք, չեն նախատեսվել: Ավելի կոնկրետ, ոչ մի ջանք չի գործադրվել նրանց, իրենց կարիքներին համապատասխան, որեւէ զբաղմունքով ապահովելու համար: «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի գրադարանում հայերեն եւ ռուսերեն գրքերից բացի այլ լեզուներով գրականությունը սահմանափակվում էր Ղուրանով եւ Աստվածաշնչով: Ավելին, թե՛ «Նուբարաշեն» եւ թե՛ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներում կրոնական արարողություններ կազմակերպվում էին միայն նրանց համար, ովքեր քրիստոնեական եկեղեցու հետեւորդներ էին: **83–րդ (վերջին կետը) եւ 96–րդ պարբերություններում արված առաջարկությունները հավասարապես կիրառելի են քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացիների նկատմամբ: Ավելին, ԽԿԿ–**

ն առաջարկում է քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացիներին տրամադրել իրենց հասկանալի լեզուներով ընթերցանության նյութեր, ինչպես նաեւ նրանց ապահովել լեզվի դասընթացներով, եւ միջոցներ ձեռնարկել՝ կրոնական արարողությունների անցկացման համար անհրաժեշտ տարածքների մատչելիության ուղղությամբ:

78. Պատվիրակությունը նկատել է, որ քրեակատարողական հիմնարկի անձնակազմի եւ քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացիների միջեւ շփումը, որպես կանոն, սահմանափակ էր հաղորդակցման դժվարությունների պատճառով: Սա հանգեցնում է օտարերկրացիների՝ որոշ իմաստով մեկուսացմանը, ինչը հանգեցնում է պոտենցիալ լարվածության առաջացմանը անձնակազմի եւ քրեակատարողական հիմնարկում պահվողների միջեւ: Ըստ ԽԿԿ–ի՝ կարեւոր է, որ քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացիների հետ անմիջական շփում ունեցող քրեակատարողական հիմնարկի անձնակազմը ճիշտ ընտրված լինի եւ անցնի պատշաճ վերապատրաստում: Անձնակազմը պետք է ունենա զարգացած հմտություններ միջանձնային հարաբերությունները կարգավորելու եւ մշակութային առանձնահատկությունները հարգելու հարցում՝ հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց տարբերությունները: Ավելին, նրանցից առնվազն մի քանիսը պետք է ունենան համապատասխան լեզվի իմացություն: **Կոմիտեն առաջարկում է ձեռնարկել համապատասխան քայլեր այն քրեակատարողական հիմնարկներում, որոնցում հաճախ պահվում են օտարերկրացիներ՝ հիմք ընդունելով նշված դիտարկումները: Անհրաժեշտ է խրախուսել անձնակազմի եւ քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացիների միջեւ հաղորդակցման ընդլայնումը:**

79. Քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացիներն ունեին տեսակցություններից եւ հեռախոսազանգերից օգտվելու նույն իրավունքները, ինչ քրեակատարողական հիմնարկում պահվող մյուս անձինք: Այլ կերպ ասած՝ գործնականում իրենց ընտանիքների հետ կապ հաստատելու հիմնական միջոցը շաբաթական հինգ րոպե տեւողությամբ հեռախոսազանգն էր: **ԽԿԿ–ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին որդեգրել ճկուն մոտեցում՝ կապված տեսակցությունները հեռախոսազանգերով փոխարինելու հնարավորությունների հետ՝ հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկում պահվող այս կատեգորիայի անձանց հատուկ կարիքները:**

5. Քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց պահելու պայմանները

ա. Հերթական այցը «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ

80. 2002 թվականին ԽԿԿ–ի կողմից կատարվելիք այցելության ամբողջ նպատակը «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկն էր:[53] Թեեւ պաշտոնապես առկա էր 840 անձ պահելու հնարավորություն, վերջին ութ տարվա ընթացքում քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց թիվն աճել էր գրեթե երկու անգամ՝ 2010 թվականի այցի ժամանակ հասնելով 1259–ի (այդ թվում՝ 402 կալանավորված անձ, քրեակատարողական հիմնարկում պահվող 590 անձ, որոնց գործերը գտնվում են բողոքարկման տարբեր փուլերում եւ քրեակատարողական հիմնարկում պահվող 134 պատիժը կրող անձ):[54]

81. Ինչ վերաբերում է քրեակատարողական հիմնարկի նյութակենցաղային պայմաններին, ապա խցերի մեծ մասը լրջորեն գերբնակեցված էր, քրեակատարողական հիմնարկում պահվող անձինք քնում էին հերթով՝ մահճակալին կամ հատակին (օրինակ՝ 26 քմ մակերեսով խցում 19 անձի համար դրված էր 12 մահճակալ):[55]

Խցերի մեծամասնությունը (ինչպես նաեւ խցերի ներսում տեղադրված զուգարանները) գտնվում էին քանդված վիճակում, ազատությունից զրկված «համասեռամոլ» անձանց խցերը տեղադրված էին պատժախցերին մոտ եւ վատագույնների շարքում էին: Օդափոխությունը վատ էր իրականացվում եւ հոսող ջուր մատակարարվում էր օրական առավելագույնը 4 ժամ (երկու ժամ՝ առավոտյան եւ երկու ժամ՝ երեկոյան): Ավելին, ձմռանը խցերը տաքացվում էին էլեկտրական ջեռուցիչներով, սակայն հոսանքազրկումը հազվադեպ չէր:

---

[53] Տե՛ս CPT/Inf (2004)25 փաստաթղթի 69-75–րդ պարբերությունները:

[54] 2002 թվականի այցի ժամանակ քրեակատարողական հիմնարկում պահվում էին 665 անձ:

[55] Որոշ կալանավորված անձինք նման պայմաններում պահվել էին մոտ 16 ամիս:

Ավելին, լոգասենյակները հիմնականում անմխիթար վիճակում էին, եւ քրեակատարողական հիմնարկում պահվողները հնարավորություն ունեին օգտվելու դրանցից լավագույն դեպքում շաբաթական մեկ անգամ, իսկ ավելի հաճախ՝ միայն երկու շաբաթը մեկ անգամ:

82. «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում բացօթյա զբոսանքների հարցը ԽԿԿ–ի 2002 թվականի առաջին այցից ի վեր շարունակում էր մնալ չլուծված: Բացօթյա զբոսանքը մինչ այժմ չէր կազմակերպվում շաբաթ եւ կիրակի օրերին, հիմնականում անձնակազմի սակավաթիվ լինելու պատճառով, եւ քրեակատարողական հիմնարկում պահվող՝ հարցված անձանց մեծ մասը նշել էր, որ, գործնականում նրանց թույլատրվում էր զբոսնել միայն մեկ անգամ՝ շաբաթական երեք անգամ զբոսանքի փոխարեն:

Բացի քրեակատարողական հիմնարկում պահվող քիչ թվով անձանցից, որոնք աշխատում էին հիմնարկի ընդհանուր սպասարկման ոլորտում (օրինակ՝ մաքրությունը, վերանորոգման աշխատանքները, խոհանոցային աշխատանքը), քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց գերակշիռ մեծամասնությունը փակված էին իրենց խցերում օրական 23 եւ նույնիսկ 24 ժամ՝ չունենալով այլ զբաղմունք, քան հեռուստացույց դիտելը, սեղանի խաղեր խաղալը կամ գրքերի ընթերցանությունը:

83. Ըստ ԽԿԿ–ի՝ նշված բացասական գործոնների համակցությունը «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում, ընդհանուր առմամբ, կարելի է բնորոշել որպես անմարդկային եւ դաժան վերաբերմունք: **ԽԿԿ–ն կոչ է անում Հայաստանի իշխանություններին ստորեւ նշված կետերը սահմանել որպես կարճաժամկետ նպատակներ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի համար.**

i) ազատությունից զրկված յուրաքանչյուր անձին իր մահճակալով ապահովելը,

ii) անխափան հոսանքամատակարարում ապահովելը,

iii) ջրամատակարարումը բարելավելը,

iv) լոգասենյակները վերանորոգելը եւ առնվազն շաբաթական մեկ անգամ լողանալու հնարավորությամբ ապահովելը,

v) անազատության մեջ պահվող բոլոր անձանց օրական, այդ թվում՝ շաբաթ եւ կիրակի օրերին առնվազն մեկ ժամ բացօթյա զբոսանքով ապահովելը,

մինչդեռ ստորեւ նշված կետերը՝ որպես միջնաժամկետ նպատակներ.

i) գերբնակեցումը նվազեցնելը՝ բազմատեղանոց խցերում ազատությունից զրկված յուրաքանչյուր անձին առնվազն 4 քմ բնակելի տարածք ապահովելու նպատակով,

ii) ազատությունից զրկված անձանց խցերը վերանորոգելը եւ դրանց օդափոխությունն ու սանիտարահիգիենիկ պայմանները բարելավելը,

iii) բոլոր կատեգորիաների ազատությունից զրկված անձանց՝ խցերից դուրս զբաղմունքով (աշխատանք, ժամանց (շփում), կրթություն, սպորտ) ապահովելը:

ԽԿԿ–ն կոչ է անում նաեւ Հայաստանի իշխանություններին, որպես միջնաժամկետ նպատակ, ավելացնել անազատության մեջ պահվող անձի լոգանք ընդունելու հաճախականությունը՝ հիմք ընդունելով Եվրոպական բանտային կանոնների 19.4 կանոնը:[56]

84. Այցի ժամանակ պատվիրակությունն իրազեկվել է, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը պետք է փակվի, երբ ավարտին հասցվի Երեւանի նոր քրեակատարողական հիմնարկի կառուցումը (տե՛ս 61–րդ պարբերությունը): **ԽԿԿ–ն կցանկանար առավել մանրամասն տեղեկություններ ստանալ նշված ծրագրերի վերաբերյալ:**

[56] Եվրոպական բանտային կանոնների 19.4 կանոնով սահմանվում է. «Անհրաժեշտ է տրամադրել համապատասխան հարմարություններ, որպեսզի ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ կարողանա լոգանք կամ ցնցուղ ընդունել կլիմային համապատասխան ջերմաստիճանի պայմաններում, հնարավորության դեպքում՝ ամեն օր, բայց առնվազն շաբաթական երկու անգամ (կամ, անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախ)՝ ելնելով ընդհանուր հիգիենայի պահպանման նկատառումներից»:

բ. «Կոշ» քրեակատարողական հիմնարկը

85. «Կոշ» քրեակատարողական հիմնարկը գտնվում է Կոշ գյուղում՝ Երեւանից մոտ 45 կմ հեռավորության վրա: Մինչեւ 1990 թվականին քրեակատարողական հիմնարկի վերածվելը, շենքը մոտ 40 տարի ծառայել է որպես ուսումնական հաստատություն: Չնայած պաշտոնապես 640 անձանց պահելու հնարավորությանը՝ այցի ժամանակ «Կոշ» քրեակատարողական հիմնարկում պահվում էին ազատազրկման դատապարտված 731 տղամարդ, 718–ը պահվում էին կիսափակ ռեժիմի պայմաններում եւ 13–ը՝ բաց ռեժիմի պայմաններում: Պատվիրակությանը տրամադրված տեղեկատվությունից պարզվել է, որ անազատության մեջ պահվող անձանց թվի նման աճը համեմատաբար նոր երեւույթ է (2008 եւ 2009 թվականներին այստեղ միջինում պահվել են 590–ից պակաս ազատությունից զրկված անձինք):

86. Ինչ վերաբերում է քրեակատարողական հիմնարկի նյութակենցաղային պայմաններին, ապա անազատության մեջ պահելու տարածքները, ընդհանուր առմամբ, լավ լուսավորված էին, բավարար չափով օդափոխված եւ մաքուր: Այնուամենայնիվ, ազատությունից զրկված անձինք պահվում էին մեծ ընդհանուր կացարաններում: ԽԿԿ–ն նախկինում անդրադարձել է այս տիպի կացարանների բազմաթիվ թերություններին եւ բացասական կողմերին,[57] որոնք ստեղծվում են այն ժամանակ, երբ ազատությունից զրկված անձինք պահվում են սուղ պայմաններում, ինչպես որ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի դեպքում էր (օրինակ՝ ազատությունից զրկված 13 անձ՝ 40 քմ մակերեսով կացարանում, անազատության մեջ պահվող 54 անձ՝ մոտ 110 քմ մակերեսով կացարանում): Հատկանշական է նաեւ, որ այս տիպի կացարանների առկայությունը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:[58]

87. Քրեակատարողական հիմնարկի ղեկավարությունը կանգնել էր ազատությունից զրկված անձանց հիմնական կարիքները հոգալու լուրջ դժվարությունների առջեւ: Երկու շենքերի կաթացող տանիքները վերջերս չէին վերանորոգվի, եթե ազատությունից զրկված անձինք ֆինանսական աջակցություն չցուցաբերեին:[59] Ավելին, մի քանի էլեկտրական տաքացուցիչներ

[57] Տե՛ս, օրինակ, CPT/Inf(2007) 47 փաստաթղթի 71–րդ պարբերությունը:

[58] Տե՛ս քրեակատաողական օրենսգրքի 18–րդ գլուխը:

[59] Ազատությունից զրկված անձանց ֆինանսական աջակցությունը, ամենայն հավանականությամբ, հավաքվել է միեւնույն ճանապարհով, ինչպես նկարագրված է 66–րդ պարբերության մեջ:

էին գնվել ազատությունից զրկված անձանց ֆինանսական աջակցությամբ, որպեսզի ձմռանն ընդհանուր կացարանները հնարավոր լինի պատշաճ կերպով ջեռուցել: Հարկ է նշել նաեւ, որ վերջին ժամանակներում հաճախակի տեղի են ունեցել ջրամատակարարումից զրկելու դեպքեր: 2010 թվականի սեպտեմբերի 6–ի նամակով Հայաստանի իշխանությունները տեղեկացրել են ԽԿԿ–ին, որ ջրամատակարարման հետ կապված խնդիրները լուծվել են, եւ ազատությունից զրկված անձինք ապահովվել են շուրջօրյա ջրամատակարարմամբ. սա ողջունելի առաջընթաց է:

88. Սանիտարահիգիենիկ պայմաններն ակնհայտորեն անբավարար էին: Ընդհանուր զուգարանը բաղկացած էր 35 զուգարանախցերից, որոնք կեղտոտ էին եւ չէին ապահովում բավարար առանձնություն: Ավելին, լոգասենյակը քանդված էր, որից հնարավոր էր օգտվել լավագույնը երկու շաբաթը մեկ անգամ: Պատվիրակությանը հայտնել են, որ նախատեսվում է ազատությունից զրկված անձանց աջակցությամբ կառուցել նոր լոգասենյակ:

89. Պատվիրակությունը բազմաթիվ բողոքներ է ստացել սննդի վատ որակի մասին: Ճաշացանկից պարզ էր դարձել, որ կենդանական սպիտակուցը հաճախ բացակայում էր ազատությունից զրկված անձանց սննդում: Այս առումով, պատվիրակությանը հայտնել են, որ պետության կողմից նախատեսված սննդային նորմերը պահպանվել են միայն 80 տոկոսով:

90. **ԽԿԿ–ն կոչ է անում Հայաստանի իշխանություններին «Կոշ» քրեակատարողական հիմնարկում վերանորոգել զուգարանն ու լոգասենյակը եւ ապահովել, որ ազատությունից զրկված անձանց տրվող սննդի որակն ու քանակը համապատասխանի սննդի պետական չափորոշիչներին:**

Ավելին, **Կոմիտեն առաջարկում է քայլեր ձեռնարկել մեծ կացարանները փոքր խցերի վերածելու ուղղությամբ, որը ազատությունից զրկված անձանց կտա առանձնության ավելի մեծ հնարավորություն, իսկ անձնակազմին՝ հսկողություն իրականացնելու ավելի մեծ հնարավորություններ, ինչպես նաեւ նվազեցնել կացարանում պահվող անձանց թիվը՝ պահպանելով ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի հաշվով 4 քմ բնակելի տարածք ապահովելու իրավական պահանջը:**

Ավելին, **ԽԿԿ–ն կոչ է անում Հայաստանի իշխանություններին ավելացնել անազատության մեջ պահվող անձանց՝ ցնցուղ ընդունելու հաճախականությունը՝ հիմք ընդունելով Եվրոպական բանտային կանոնների 19.4 կանոնը**:

Կոմիտեն կցանկանար նաեւ ընդգծել, որ ազատությունից զրկված անձանց պահելու պատշաճ պայմաններ ապահովելու պարտականությունը դրված էր քրեակատարողական հիմնարկի վարչակազմի վրա: Եթե ազատությունից զրկված որոշ անձանց իշխանություն տրվի օգտագործելու իրենց գումարները, ապա սա կարող է շատ արագ թուլացնել քրեակատարողական հիմնարկի վարչակազմի դիրքերը տվյալ հաստատությունում:

91. «Կոշ» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձանց համար նախատեսված զբաղվածության ծրագրերը սակավաթիվ էին: Այն հանգամանքը, որ անազատության մեջ պահվող անձինք կարող էին ամբողջ օրվա ընթացքում զբոսնել ընդարձակ տարածությունում, ինչպես նաեւ օգտվել սարքավորումներով հագեցած սպորտային դահլիճից, պետք է դրական համարել: Ավելին, վերանորոգման մեջ էր նաեւ եկեղեցին: Այնուամենայնիվ, անազատության մեջ պահվող անձանց միայն 9 տոկոսն էր ներգրավված աշխատանքի մեջ. ազատությունից զրկված 25 անձ վճարովի աշխատանք էին կատարում հաստատության ընդհանուր սպասարկման բնագավառում (խոհանոցային, մաքրության ապահովման եւ այլն), մյուս 25-ը կատարում էին անվճար աշխատանք (օրինակ՝ վերանորոգման (կառուցման) աշխատանքներ) եւ անազատության մեջ պահվող 11 անձ ընտրվել էին աշխատելու իրենց մասնագիտական ունակություններին համապատասխան (օրինակ՝ արհեստագործական աշխատանք): Կրթական ծրագրեր չկային: Ավելին, հիմնարկի գրադարանը հագեցված չէր գրականությամբ, եւ պատվիրակությունն ստացել է բազմաթիվ բողոքներ այն մասին, որ բավարար թվով հեռուստացույցներ չկան հաստատությունում պահվող ազատությունից զրկված անձանց համար: **ԽԿԿ–ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին մշակել զբաղվածության ծրագրեր «Կոշ» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձանց համար, մասնավորապես, կրթական կամ մասնագիտական ուսուցման ծրագրեր եւ ավելացնել ազատությունից զրկված անձանց զբաղվածության հնարավորությունները: Ավելին, անհրաժեշտ է մշակել նաեւ ժամանցային, ինչպես նաեւ կազմակերպված սպորտային ծրագրեր (հեռուստացույց, գրքերի, թերթերի տրամադրում, սպորտային միջոցառումների կազմակերպում):**

92. Պատվիրակությանը հատկապես մտահոգել են ազատությունից զրկված «համասեռամոլ» անձանց պահելու պայմանները, որոնք կարող են ավելի շատ դիտվել որպես խտրական վերաբերմունք: Նրանք տեղավորված էին ավելի վատ պայմաններում, քան քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ պահվող մնացած անձինք, այն է՝ կաթացող տանիքով պահեստում, որտեղ սահմանափակ էր բնական լույսի հնարավորությունը:[60] Չնայած նրանք բոլորն էլ աշխատում էին, սակայն նրանք սովորաբար կատարում էին տհաճ առաջադրանքներ (օրինակ՝ մաքրում էին զուգարանները) եւ, ենթադրաբար, ստիպված էին աշխատել շաբաթը յոթ օր՝ օրական յոթից ութ ժամ:

ԽԿԿ-ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ «Կոշ» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված «համասեռամոլ» անձանց համար ապահովելու միեւնույն նյութակենցաղային պայմանները եւ զբաղվածության ծրագրերը, ինչ անազատության մեջ պահվող մյուս անձանց համար: Ավելին, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ազատությունից զրկված «համասեռամոլ» անձանց շաբաթական գոնե մեկ հանգստյան օր տրամադրելու եւ կրթություն ստանալու ու այլ գործունեությամբ զբաղվելու համար բավարար ժամանակ տրամադրելու ուղղությամբ (տե՛ս նաեւ Եվրոպական բանտային կանոնների 26.16 կանոնը):

գ. «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկը

93. «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկն ի սկզբանե 1990-ականներին կառուցվել է որպես զորամաս եւ հետագայում 2005 թվականին վերածվել է քրեակատարողական հիմնարկի: Չնայած պաշտոնապես 154 անձ պահելու հնարավորությանը՝ այցի ժամանակ շենքում անազատության մեջ պահվում էին 200 անձ (142 դատապարտյալ եւ 58 կալանավորված անձ), որոնց մեծամասնությունը իրավապահ մարմինների նախկին աշխատակիցներ են:[61] Այն բաղկացած էր երկու հիմնական մասերից՝ փակ (անազատության

[60] Տե՛ս նաեւ 81-րդ պարբերությունը, որը վերաբերում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ պահվող այս կատեգորիայի անձանց վիճակին:

[61] Ազատությունից զրկված օտարերկրացիների առնչությամբ տե՛ս սույն զեկույցի II.Դ.4. բաժինը:

մեջ պահվող 90 անձ) եւ կիսաբաց (ազատությունից զրկված 97 անձ): Ավելին, ազատությունից զրկված 13 անձ պահվում էին բաց ռեժիմի պայմաններում:

94. «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկն ուներ ավելի լավ նյութակենցաղային պայմաններ, քան այցի ընթացքում հետազոտված մյուս հաստատությունները: Խցերը, ընդհանուր առմամբ, գտնվում էին վերանորոգման լավ վիճակում, բավարար չափով լուսավորվում եւ օդափոխվում էին, ապահովված էին անհրաժեշտ կահավորմամբ (այդ թվում՝ խցի ներսում առանձնացված զուգարանով): Լուրջ ջանքեր էին գործադրվում ջրամատակարարման հետ կապված խնդիրները լուծելու ուղղությամբ (օրինակ՝ փոխվել էին գրեթե բոլոր ջրատար խողովակները, տեղադրվել էին ջրի նոր պոմպեր եւ ջրի բաքեր):[62] Ավելին, վերանորոգվել էին նաեւ լոգասենյակները, որոնցից ազատությունից զրկված անձինք կարող էին օգտվել շաբաթական մեկ անգամ: Այլ կերպ ասած՝ այցի ժամանակ պարզվել էր, որ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի հաշվով 4 քմ բնակելի տարածք ապահովելու մասին պետական չափորոշիչը հաճախ չէր պահպանվում (օրինակ՝ փակ ռեժիմի պայմաններում 13 քմ մակերեսով խցում անազատության մեջ պահվում էին չորս անձ, կիսաբաց ռեժիմի պայմաններում 27 քմ մակերեսով կացարանում՝ ազատությունից զրկված ինը անձ):

ԽԿԿ-ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին ջանքեր գործադրել «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի խցերում պահվող անձանց թիվը նվազեցնելու ուղղությամբ՝ պահպանելով ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի հաշվով 4 քմ բնակելի տարածք ապահովելու պետական չափորոշիչը: Ավելին, 90-րդ պարբերության մեջ արված դիտարկումը՝ կապված ցնցուղ ընդունելու հաճախականության հետ, հավասարապես տարածվում է նաեւ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի վրա:

95. Փակ ռեժիմի պայմաններում պահվող ազատությունից զրկված բոլոր անձինք ունեին ամեն օր առնվազն մեկ ժամ բացօթյա զբոսանքի իրավունք, այդ թվում՝ շաբաթ եւ կիրակի օրերին, մինչդեռ կիսաբաց ռեժիմի պայմաններում պահվող անձինք կարող էին ամբողջ օրն ազատորեն շրջել նշված ռեժիմով տարածքի շրջանակներում: Երկու ռեժիմի տարածքներն էլ ապահովված էին ընդարձակ եւ կահավորված բացօթյա զբոսահրապարակներով:

---

[62] Ակնհայտ է, որ նախկինում հաստատությունում եղել են ջրամատակարարումից զրկելու դեպքեր, եւ անազատության մեջ պահվող անձինք շաբաթվա յոթ օրը ապահովված չեն եղել ջրով:

96. Ինչ վերաբերում է զբաղվածության ծրագրերին, ապա իրավիճակը նույն էր, ինչ ուսումնասիրված մյուս հաստատություններում: Միայն բաց ռեժիմի պայմաններում անազատության մեջ պահվող 13 անձինք էին ապահովված աշխատանքով (այսինքն՝ անազատության մեջ պահվող անձանց 6.5 տոկոսը): Ավելին, կիսաբաց ռեժիմի պայմաններում ազատությունից զրկված անձինք հնարավորություն ունեին ողջ օրվա ընթացքում կանոնավոր կերպով օգտվելու սպորտային դահլիճից: Այդուահանդերձ, փակ ռեժիմի պայմաններում անազատության մեջ պահվող անձինք օրվա մոտ 23 ժամն անցկացնում էին իրենց խցերում, նրանց միակ գործը հեռուստացույց դիտելը, սեղանի խաղեր խաղալը կամ գրքերի ընթերցանությունն էր:

ԽԿԿ–ն առաջարկում է գործողություններ ձեռնարկել «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ պահվող տարբեր կատեգորիայի անձանց համար զբաղվածության համապատասխան ծրագրեր մշակելու ուղղությամբ (ներառյալ աշխատանքային, կրթական, սպորտային, մշակութային եւ ժամանցային ծրագրեր):

97. Պատվիրակությունը մտահոգված էր ազատությունից զրկված այն անձի վիճակով, որը մեկուսացվել էր իր իսկ անվտանգության ապահովման նկատառումներից ելնելով եւ ամիսներ շարունակ պահվել էր առանձին՝ մենախցի պայմաններով՝ ընդունման (մեկուսացման) բաժնի խցերից մեկում:[63] Նրան թույլ չի տրվել զրուցել անազատության մեջ պահվող մյուս անձանց հետ, մենակ դուրս գալ բացօթյա զբոսանքի, եւ նրա՝ անձնակազմի հետ շփվելու հնարավորությունը հասցված է եղել նվազագույնի. նա կապ պահպանելու հնարավորություն չի ունեցել նաեւ իր ընտանիքի հետ: **ԽԿԿ–ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին ստեղծել անհատականացված զբաղվածության ծրագրեր, որտեղ ներգրավված կլինեն թե՛ հոգեբանական աջակցություն ցուցաբերող մասնագիտացված անձնակազմը եւ թե՛ քրեակատարողական հիմնարկի անձնակազմը, «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ պահվող ցանկացած անձի համար, ով երկար ժամանակ պահվել է անջատ՝ իր իսկ անվտանգությունն ապահովելու նկատառումներից ելնելով:**

[63] Տե՛ս 122–րդ պարբերությունը:

6. Առողջապահությունը

ա. Բուժանձնակազմը եւ բուժկետերը

98. Այն անձինք, ում հետ պատվիրակությունը պաշտոնապես հանդիպել է 2010 թվականի այցի սկզբում, ընդգծել են, որ աստիճանաբար քայլեր են ձեռնարկվել քրեակատարողական հիմնարկի առողջապահական ծառայություններում, այդ թվում՝ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ–ում քաղաքացիական բուժանձնակազմն ավելի շատ աշխատողներով համալրելու ուղղությամբ:

99. «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի <u>բուժանձնակազմը</u> բաղկացած էր լրիվ աշխատաժամանակով աշխատող 13 բժիշկներից (ներառյալ գլխավոր բժիշկը, սրտաբանը, մաշկաբանը, ատամնաբույժը, ներքին հիվանդությունների գծով երկու մասնագետ, երկու թոքախտաբան եւ մեկ հոգեբույժ). բժիշկներից երեքը քաղաքացիական բժիշկներ էին: 2006 թվականի այցից հետո լրիվ աշխատաժամանակով աշխատող բուժակների թիվը կրճատվել էր՝ հասցվելով յոթի (որոնցից չորսը քաղաքացիական բուժակներ էին): Աշխատանքային օրերին բժիշկները հերթապահում էին առավոտյան ժամը 9-ից մինչեւ երեկոյան 6–ը, իսկ բուժակները հերթապահում էին շուրջօրյա՝ ներառյալ շաբաթ եւ կիրակի օրերը:

100. «Կոշ» քրեակատարողական հիմնարկի բուժանձնակազմը բաղկացած էր երեք բժշկից (երեքն էլ թերապեւտներ էին) եւ մեկ բուժակից: Երկու բժշկի եւ երեք բուժակների հաստիքները թափուր էին այցի ժամանակ.[64] այս առումով պատվիրակությունն իրազեկվել է, որ ցածր աշխատավարձերի պատճառով դժվարություններ էին առաջացել բուժանձնակազմը որակյալ աշխատողներով համալրելու եւ պահելու հարցում: Ավելին, քրեակատարողական հիմնարկը չուներ ատամնաբույժ, եւ ատամնաբուժական ծառայություններ մատուցում էր հաստատության բուժակներից մեկը (ով վերապատրաստվում էր ատամնաբուժության գծով):

Բուժանձնակազմը կանոնավոր չէր հերթապահում ինչպես գիշերները, այնպես էլ շաբաթ եւ կիրակի օրերին. բացառություն էր կազմում երեք օրը մեկ շուրջօրյա հերթապահող բուժակը: Անհրաժեշտության դեպքում կանչվում էր շտապ օգնություն: Այդ իրավիճակը վտանգում է ազատությունից զրկված անձանց առողջությունը: Օրինակ՝ մի քանի շաբաթ առաջ,

[64] Հաստատություն այցելել են նաեւ Երեւանի քրեակատարողական հիմնարկների որոշ բուժաշխատողներ:

նախքան պատվիրակության այցը, ազատությունից զրկված անձանցից մեկը բժշկական օգնության կարիք էր ունեցել գիշերը: Բավական ժամանակ էր պահանջվել մինչեւ քրեակատարողական հիմնարկի անձնակազմը դրա մասին տեղեկացվել էր, եւ մոտ 45 րոպե հետո նոր ժամանել էր շտապ օգնությունը: Անազատության մեջ պահվող տվյալ անձը մահացել էր:

101. «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկն ուներ լրիվ աշխատաժամանակով աշխատող երկու բժիշկ (գլխավոր բժիշկը եւ ներքին հիվանդությունների գծով մասնագետը): Չորս քաղաքացիական բժիշկները (նյարդաբանը, մաշկաբանը, ակնաբույժն ու ատամնաբույժը) հաստատություն էին այցելում շաբաթական երկու անգամ: Այնուամենայնիվ, բուժանձնակազմի որեւէ անդամ չէր հերթապահում ո՛չ գիշերները, ո՛չ էլ շաբաթ եւ կիրակի օրերին:

102. Ամփոփելով կարելի է փաստել, որ այցելած քրեակատարողական հաստատություններն, ընդհանուր առմամբ, ապահովված են բժիշկներով: Այդուհանդերձ, դրանցից բոլորում էլ բուժակների (բուժքույրերի) պակաս էր զգացվում: **ԽԿԿ-ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին համապատասխան գործողություններ ձեռնարկել[65] «Նուբարաշեն», «Կոշ» եւ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկների բուժանձնակազմը բուժակներով եւ (կամ) բուժքույրերով համալրելու ուղղությամբ եւ, մասնավորապես.**

- **«Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկը համալրել առնվազն երկու բուժակով (բուժքույրով),**
- **համալրել «Կոշ» քրեակատարողական հիմնարկի բուժակների թափուր հաստիքները,**
- **ապահովել, որ առաջին օգնություն ցուցաբերելու որակավորում ունեցող անձը, ցանկալի է, որ ունենա բուժքրոջ ճանաչված որակավորում, եւ «Կոշ» ու «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներում հերթապահի շուրջօրյա, այդ թվում՝ շաբաթ եւ կիրակի օրերին:**

Ավելին, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ անհապաղ ապահովելու համար, որ ատամնաբույժը պարբերաբար այցելի «Կոշ» քրեակատարողական հիմնարկ:

---

[65] Ներառյալ ապահովելով բավականաչափ գրավիչ աշխատանքային պայմաններ, որոնք հնարավորություն կտան համալրելու բուժանձնակազմը եւ պահելու այն:

103. Այցելած՝ բուժկետերով ու սարքավորումներով հաստատությունների պայմանները, ընդհանուր առմամբ, համեմատաբար բավարար էին: Այնուամենայնիվ, չկար համապատասխան ախտահանիչ սարք: Այցից հետո, 2010 թվականի նոյեմբերի 6–ի նամակով Հայաստանի իշխանությունները տեղեկացրել են ԽԿԿ–ին, որ քրեակատարողական հիմնարկի բժշկական մարմնի ղեկավարները պաշտոնապես դիմել են նման սարքավորում ձեռք բերելու խնդրանքով: **Կոմիտեն ցանկանում է ստանալ հաստատում այն մասին, որ ախտահանիչ սարք է տրամադրվել այցելած հիմնարկներին:**

Ավելին, քրեակատարողական հաստատությունների բժշկական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պատվիրակությունը պարզել է, որ բուժկետերում պահվում էին ազատությունից զրկված մի քանի անձինք, ովքեր չունեին այնպիսի առողջական խնդիրներ, որոնք կպահանջեին նրանց պահել քրեակատարողական հիմնարկի բուժկետերում: **Կոմիտեն կցանկանար Հայաստանի իշխանություններից ստանալ մեկնաբանություններ այս հարցի առնչությամբ:**

104. «Կոշ» քրեակատարողական հիմնարկում արձանագրվել էին անազատության մեջ պահվող անձանց այլ բուժկետեր, այդ թվում՝ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ տեղափոխելու լուրջ ուշացման դեպքեր (այսինքն՝ մինչեւ 6 ամիս ժամկետով): Այս խնդիրը ԽԿԿ–ի համար լուրջ մտահոգության առարկա է: **Կոմիտեն հորդորում է Հայաստանի իշխանություններին ապահովել հիվանդանոցային բուժման կարիք ունեցող՝ ազատությունից զրկված անձանց արագ տեղափոխումը համապատասխան բուժկետեր: Անհրաժեշտության դեպքում, պետք է վերանայել որոշումների ընդունման գործընթացը:**

105. Քրեակատարողական հաստատություններին դեղորայքով ապահովելու (բացառությամբ տուբերկուլոզի բուժման համար անհրաժեշտ դեղորայքի) խնդիրը մշտապես մտահոգել է ԽԿԿ–ին: Ցավոք, 2010 թվականի այցի ժամանակ որեւէ առաջընթաց այս բնագավառում չէր արձանագրվել: Անհրաժեշտ բյուջեն շատ սահմանափակ էր, եւ անազատության մեջ պահվող անձինք հաճախ ստիպված էին բժշկի կողմից նշանակված դեղորայքը գնել իրենց կամ իրենց ազգականների ֆինանսական միջոցներով: **ԽԿԿ-ն կոչ է անում Հայաստանի իշխանություններին քրեակատարողական հիմնարկներն ապահովել անհրաժեշտ դեղորայքով:**

բ. Քրեակատարողական հիմնարկ ընդունելիս բժշկական զննության ենթարկելը (բռնության կանխումը)

106. Այցելած քրեակատարողական հաստատություններում ազատությունից զրկված անձինք տվյալ քրեակատարողական հիմնարկ փոխադրվելուց կարճ ժամանակ անց ենթարկվել էին բժշկական զննության: Այնուամենայնիվ, «Կոշ» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձինք անցնում էին մակերեսային նախնական բժշկական զննություն (օրինակ՝ չէին ենթարկվում ֆիզիկական զննության):

Ավելին, «Նուբարաշեն» եւ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներում բժշկական զննությունը, որպես կանոն, անցկացվում էր քրեակատարողական հիմնարկի անձնակազմի, ինչպես նաեւ ոստիկանությանն ուղեկցող անձնակազմի ներկայությամբ (ոստիկանական մարմիններից կամ դատարաններից քրեակատարողական հիմնարկ փոխադրելու դեպքում): Այցի ընթացքում պարզվել է, որ նման գործողությունները կարող էին լրջորեն խեղաթյուրել բժշկական զննության արդյունքները: Օրինակ՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ուսումնասիրված փաստաթղթերը վերաբերում էին ազատությունից զրկված անձանց հայտարարություններին, որոնց համաձայն քրեակատարողական հիմնարկ ժամանելուն պես հայտնաբերված վնասվածքները նրանք ստացել էին մինչեւ արգելանքի վերցնելը կամ արգելանքի վերցնելու ընթացքում ընկնելու պատճառով. այնուամենայնիվ, պատվիրակության հետ հարցազրույցի ընթացքում ազատությունից զրկված այս անձինք նշել էին, որ նրանք նախընտրել էին քրեակատարողական հիմնարկի անձնակազմի եւ (կամ) ոստիկանների առջեւ ընդհանրապես չխոսել այն մասին, որ իրենք ենթարկվել են վատ վերաբերմունքի՝ վախենալով հաշվեհարդարից: Ավելին, բժշկական արձանագրությունները հիմնականում չէին պարունակում եզրակացություններ՝ ցանկացած արված հայտարարության եւ բժշկական հետազոտությունների արդյունքների միջեւ համապատասխանության աստիճանի վերաբերյալ:

107. ԽԿԿ–ն ցանկանում է հիշեցնել, որ քրեակատարողական հիմնարկների բժշկական ծառայությունները կարող են եւ պետք է էական դերակատարություն ունենալ վատ վերաբերմունքի կանխման գործում: Հետեւաբար, **Կոմիտեն Հայաստանի իշխանություններին**

կոչ է անում մանրամասն ցուցումներ տալ բուժանձնակազմին՝ ազատությունից զրկված անձանց բժշկական զննության ենթարկելու առնչությամբ: Մասնավորապես.

i) քրեակատարողական հիմնարկ փոխադրվելուն պես՝ բժշկական զննության առնչությամբ,

– դրանք երբեք չպետք է իրականացվեն ոստիկանության ուղեկցող անձնակազմի ներկայությամբ,

– եթե անձը վնասվածքներ է ստացել հնարավոր վատ վերաբերմունքի պատճառով, դրա մասին միշտ պետք է անհապաղ ծանուցվի համապատասխան դատախազին, եւ նրան փոխանցվի վնասվածքների մասին զեկույցը: Անազատության մեջ գտնվող անձը եւ նրա պաշտպանը նույնպես պետք է իրավունք ունենան միաժամանակ ստանալու տվյալ զեկույցի պատճենը,

ii) ամեն տեսակի բժշկական զննության առնչությամբ (անկախ այն հանգամանքից, թե դրանք իրականացվում են քրեակատարողական հիմնարկ փոխադրվելիս, թե հիմնարկում տեղի ունեցած բռնության հետեւանքով)՝

- ազատությունից զրկված անձանց բժշկական զննությունը պետք է իրականացվի քրեակատարողական հիմնարկի բուժանձնակազմի անդամ չհանդիսացող անձանց լսողության, իսկ մինչեւ համապատասխան բուժաշխատողի կողմից հակառակը չպահանջելը՝ նաեւ տեսողության սահմաններից դուրս.

- դրանք պետք է լինեն համապարփակ՝ ներառելով վնասվածքների համապատասխան զննությունը.

- նման զննության ընթացքում ազատությունից զրկված համապատասխան անձի կողմից արված հայտարարությունները, բժշկական զննության օբյեկտիվ արդյունքները եւ բժշկական եզրակացությունները չպետք է հասանելի լինեն քրեակատարողական հիմնարկի բուժանձնակազմի անդամ չհանդիսացող անձանց համար (ազատությունից զրկված անձանց զննող բուժանձնակազմը կարող է, ըստ անհրաժեշտության, տեղեկացնել քրեակատարողական հիմնարկի անձնակազմին քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ պահվող անձանց առողջական վիճակի, այդ թվում՝ անցկացվող բուժման եւ առողջությանը սպառնացող կոնկրետ վտանգների մասին):

գ. Տուբերկուլոզ

108. 2006 թվականին կատարված այցից սկսած՝ Հայաստանի իշխանություններն առաջընթաց են ունեցել քրեակատարողական համակարգում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի համատեքստում (օրինակ՝ ազատությունից զրկված անձանց պարբերաբար զննությունը, սուր տուբերկուլոզով տառապող անձանց անհապաղ առանձնացումը, ազատվելուց հետո շարունակական բուժման ապահովմանն ուղղված քայլերը եւ այլն): Կոմիտեին տեղեկացրել են նաեւ, որ գործողություններ են ձեռնարկվել տուբերկուլոզի բազմադեղորայքակայուն տեսակների հետազոտություն կազմակերպելու եւ տուբերկուլոզով տառապող հիվանդներին հնարավորինս լավ բուժում տրամադրելու համար: **ԽԿԿ-ն հավատացած է, որ Հայաստանի իշխանությունները ջանք չեն խնայի՝ քրեակատարողական հիմնարկներում տուբերկուլոզի դեմ պայքարելու համար:** Այս առումով, **Կոմիտեն կցանկանար ստանալ վերջին չորս տարվա ընթացքում քրեակատարողական հիմնարկում տուբերկուլոզով (այդ թվում՝ տուբերկուլոզի բազմադեղորայքակայուն տեսակներով) հիվանդացության եւ մահացության դեպքերի վիճակագրական տվյալներ:**

դ. Հոգեբանական եւ հոգեբուժական օգնությունը այցելած քրեակատարողական հիմնարկներում

109. Ազատությունից զրկված անձանց հոգեբուժական օգնություն ցուցաբերելու առնչությամբ իրավիճակը դեռեւս գոհացուցիչ չէ: «Կոշ» եւ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներում հոգեբույժ չկար, իսկ դրսից հազվադեպ էին հրավիրվում խորհրդատուներ: «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում աշխատում էր մի հոգեբույժ, սակայն «հոգեբույժի հսկողության տակ գտնվող» ազատությունից զրկված անձանց բուժմանը լուրջ խոչընդոտում էին քրեակատարողական հիմնարկի վատ նյութակենցաղային պայմանները[66] եւ դեղորայքից բացի այլ բուժման միջոցների բացակայությունը:

[66] Ինչպես եւ 2002 թվականին էր, ազատությունից զրկված անձինք տեղավորվել էին հիմնական կացարանային շինության առաջին հարկում: Խցերը գտնվում էին վերանորոգման անմխիթար վիճակում, բնական լույսն

ԽԿԿ-ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին խթանել ազատությունից զրկված անձանց հոգեբուժական օգնություն ցուցաբերելը՝ մասնավորապես ապահովելով հոգեբույժների պարբերաբար այցերը «Կոշ» եւ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներ: Ավելին, ինչ վերաբերում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում «հոգեբույժի հսկողության տակ գտնվող» ազատությունից զրկված անձանց, Կոմիտեն պետք է կրկին ընդգծի այն, որ խոցելի վիճակում գտնվող՝ անազատության մեջ պահվող անձինք երբեք չպետք է պահվեն այնպիսի նյութակենցաղային պայմաններում, որոնք զիջում են ազատությունից զրկված անձանց պահելու նորմալ պայմաններին: Ավելին, հոգեկան խանգարում ունեցող՝ ազատությունից զրկված անձինք, որոնք ստացիոնար հոգեբուժական բուժման կարիք ունեն, պետք է անհապաղ տեղափոխվեն՝ համապատասխան սարքավորումներ եւ պատշաճ վերապատրաստում անցած անձնակազմ ունեցող բուժկետեր:

110. «Երեւան–Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում պահվող՝ ցմահ ազատազրկման դատապարտված երկու անձանց մոտ մենախցում երկար ժամանակով պահվելու պատճառով առաջացել էին հոգեկան առողջության խնդիրներ, որոնք չէին լուծվել (տե՛ս 71-րդ պարբերությունը): Այցի ավարտին պատվիրակությունը պահանջել է ազատությունից զրկված տվյալ երկու անձանց ենթարկել մանրամասն ու անկախ հոգեբուժական հետազոտության՝ անհրաժեշտ բուժում անցկացնելու նպատակով: 2010 թվականի սեպտեմբերի 9-ի հաղորդագրությամբ Հայաստանի իշխանությունները Կոմիտեին տեղեկացրել են, որ եւ՛ քրեակատարողական հիմնարկների, եւ՛ քաղաքացիական հոգեբույժների կողմից իրականացված տվյալ հետազոտությունների արդյունքում ազատությունից զրկված այդ երկու անձանցից մեկի մոտ հայտնաբերվել է հոգեկան խանգարում՝ երկար ժամանակ մեկուսացման հետեւանքով եւ, հետագայում նա ստացել է դեղորայքային բուժում: **Կոմիտեն կցանկանար <u>մեկ ամսվա ընթացքում</u> ստանալ հոգեբուժական հետազոտությունների եզրակացությունների պատճենները:**[67]

անբավարար էր, իսկ օդափոխությունը վատ էր իրականացվում (տե՛ս նաեւ՝ CPT/Inf (2004)25-ի 74-րդ պարբերությունը):

[67] 2010 թվականի նոյեմբերի 15-ին (այսինքն՝ սույն զեկույցի ընդունումից երեք օր հետո) Կոմիտեին ուղարկվել է ազատությունից զրկված այս երկու անձանց հոգեբուժական հետազոտությունների եւ նրանց բուժման մանրամասները: Այդ տեղեկատվությունը ԽԿԿ–ն կուսումնասիրի հոգեբուժական հետազոտությունների եզրակացությունների հետ մեկտեղ:

111. Ինչ վերաբերում է հոգեբանական աջակցությանը, այցելած յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկ ուներ մի հոգեբան, որն իրենից դրական առաջընթաց է ներկայացնում: Հոգեբանը գնահատում էր ազատությունից զրկված անձանց ռիսկայնության աստիճանը եւ կարեւոր դերակատարում ուներ նաեւ ինքնասպանությանը հակված կամ հացադուլ հայտարարած՝ անազատության մեջ պահվող անձանց կառավարելու գործում: **Կոմիտեն Հայաստանի իշխանություններին կոչ է անում բարելավել քրեակատարողական հիմնարկում հոգեբանական աջակցության տրամադրումը եւ բարձրացնել քրեակատարողական հիմնարկի հոգեբանների դերը, հատկապես՝ պոտենցիալ խոցելի վիճակում գտնվող՝ անազատության մեջ պահվող տարբեր կատեգորիայի անձանց հետ բուժական աշխատանքներ տանելու առումով**:

ե. Երեւանի «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ–ի հոգեբուժական բաժանմունքը

112. Պատվիրակությունն այնուհետեւ այցելել է Երեւանի «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ–ի հոգեբուժական բաժանմունքը՝ նպատակ ունենալով գնահատել 2002 թվականի այցից ի վեր արձանագրված առաջընթացը:[68]

Չնայած պաշտոնապես 45 անձ պահելու հնարավորությանը՝ այցի ժամանակ այդ հոգեբուժական բաժանմունքում տեղավորված էին հոգեկան խանգարում ունեցող 34 անձինք: Նրանց մեծ մասը տառապում էր ուղեղի ֆունկցիաների օրգանական խանգարմամբ: Հոգեկան խանգարում ունեցող հիվանդները հոգեբուժական բաժանմունքում պահվում էին միջինը 90 օր, այլ կերպ ասած՝ ազատությունից զրկված որոշ անձինք մեկ տարուց ավելի անցկացրել էին հոգեբուժական բաժանմունքում:

Հոգեկան խանգարում ունեցող հիվանդները հոգեբուժական բաժանմունքում տեղավորված էին մոտ 15 սոմատիկ հիվանդների հետ՝ հիվանդանոցում հիվանդների տեղավորման դժվարությունների պատճառով:[69] Սա բացասաբար էր անդրադարձել հոգեկան

[68] Տե՛ս CPT/Inf (2004)25 փաստաթղթի 131–139–րդ եւ 141–րդ պարբերությունները:

[69] Հիվանդանոցն ուներ 420 մահճակալ, որտեղ տեղավորված էին 210 հիվանդ (ինչպես նաեւ ազատությունից զրկված 52 աշխատող անձ): Չօգտագործված տարածություն հիմնականում հայտնաբերվել էր 220 մահճակալ ունեցող նոր կառուցված առանձին չորս հարկանի տուբերկուլոզային դիսպանսերում, որտեղ պահվում էին միայն

խանգարում ունեցող հիվանդների բուժման վրա: 2010 թվականի սեպտեմբերի 6–ի նամակում Հայաստանի իշխանությունները Կոմիտեին տեղեկացրել են, որ հոգեբուժական բաժանմունքում սոմատիկ հիվանդներ այլեւս չկային: **ԽԿԿ-ն կցանկանար տեղեկանալ, թե ուր են տեղափոխվել ազատությունից զրկված տվյալ անձինք:**

113. Ինչ վերաբերում է հոգեբուժական բաժանմունքի նյութակենցաղային պայմաններին, 2002 թվականի այցից ի վեր սահմանափակ բարեփոխումներ են իրականացվել: Բաժանմունքը վերանորոգվել էր 2003 թվականին, եւ պատվիրակությունը հատկապես նշել է, որ պատուհաններին փակցված երկաթյա փեղկերը հանվել են: Սենյակներից մի քանիսը, որոնք առաջարկում էին համեմատաբար ընդարձակ պայմաններ (օրինակ՝ 16 քմ մակերեսով սենյակում երկու հիվանդ), վերջերս կրկին ներկվել եւ գեղեցիկ կահավորվել էին (այդ թվում՝ սպասքապահարաններ, անձնական իրերի պահարաններ, հեռուստացույց եւ այլն):

Այնուամենայնիվ, հոգեկան խանգարում ունեցող շատ հիվանդներ տեղավորված էին նեղ պայմաններում (օրինակ՝ մոտավորապես 10 քմ մակերես ունեցող սենյակում՝ երեք հիվանդ): Ավելին, մի շարք սենյակներ կեղտոտ էին, գտնվում էին վերանորոգման անմխիթար վիճակում, որոնց պատուհաններից մի քանիսն էլ ապակի չունեին (օրինակ՝ թիվ 19 եւ 20 սենյակները): Ավելին, սենյակները շարունակում էին ջեռուցվել փոքրիկ էլեկտրական վառարաններով:

Զուգարանից եւ լոգարանից օգտվելը կարծես թե խնդիր չէր, սակայն զուգարանի եւ լոգարանի պարագաները կոտրված էին եւ շատ կեղտոտ: Ավելին, պատվիրակությունը նշել է, որ բավականաչափ ուշադրություն չի դարձվում որոշ հիվանդների անձնական հիգիենայի վրա:

Ելնելով վերը շարադրվածից՝ **ԽԿԿ–ն առաջարկում է ձեռնարկել հետեւյալ քայլերը.**

- **նվազեցնել հոգեբուժական բաժանմունքի սենյակների ծանրաբեռնվածության աստիճանը՝ մասնավորապես օգտագործելով սոմատիկ հիվանդներով զբաղեցրած սենյակները (այս կապակցությամբ տե՛ս 112–րդ պարբերությունը),**
- **վերանորոգման կարիք ունեցող սենյակները վերականգնել եւ տեղադրել պատուհանների բացակայող ապակիները,**

տուբերկուլոզով տառապող 48 հիվանդ: Հիվանդանոցի տնօրենը պատվիրակությանը տեղեկացրել է, որ վարակից խուսափելու նպատակով սոմատիկ այլ հիվանդներ հաստատության տվյալ մասում չէին կարող տեղավորվել:

- **վերանորոգել սանհանգույցը,**
- **տեղադրել ջեռուցման արդյունավետ համակարգ,**
- **աջակցել հիվանդներին անձնական հիգիենան պահպանելու հարցում:**

114. Բուժումը մեծամասամբ հիմնված էր դեղային թերապիայի վրա:Հոգեբուժական դեղորայք ստանալու հետ կապված՝ հիմնականում խնդիրներ չկային (չնայած որ հասանելի չեն արդի նեյրոլեպտիկ միջոցները): Այնուամենայնիվ, հիվանդների համար բուժման անհատականացված պլաններ չկային: Ավելին, հոգեբուժական բաժանմունքում պահվող հոգեկան խանգարում ունեցող հիվանդների բուժման եւ զբաղվածության ապահովման բոլոր հնարավորությունները տարրական էին եւ ներառում էին հիմնական հանգստի տեսակներ (օրինակ՝ հեռուստացույց դիտելը, իրենց սենյակներում սեղանի խաղեր խաղալը): Հիվանդները կարող էին ազատ դուրս գալ հիվանդանոցի ընդարձակ այգի (եթե թույլ էր տալիս առողջությունը), սակայն չկար որեւէ սենյակ կամ այլ տարածք՝ բուժական, վերականգնողական աշխատանքների կամ հանգստի համար:

ԽԿԿ–ն վերահաստատում է իր՝ 2002 թվականին կատարած այցի հիման վրա կազմված զեկույցում արված առաջարկությունն այն մասին, որ անհրաժեշտ է բարելավել հոգեբուժական բաժանմունքում պահվող հիվանդների բուժումը, որի նպատակն է առաջարկել մի շարք բուժական եւ վերականգնողական աշխատանքներ, այդ թվում՝ աշխատանքային թերապիա, խմբակային եւ անհատական հոգեթերապիա եւ հնարավոր կրթական գործունեություն ու համապատասխան աշխատանք: Դրա համար պահանջվում է բաժանմունքում տեղադրել համապատասխան սարքավորումներ եւ կազմել բուժման անհատական պլաններ:

115. Բաժանմունքի կտրվածքով բուժանձնակազմը բաղկացած է ունի երեք հոգեբույժից (այդ թվում՝ մեկ քաղաքացիական հոգեբույժ),[70] մեկ բուժակից եւ երեք սանիտարից:[71] Չորրորդ սանիտարի հաստիքը մեկ տարուց ավելի թափուր էր մնացել: Հոգեբույժները եւ բուժակը բաժանմունքում հերթապահում էին շաբաթական հինգ օր, առավոտյան ժամը 9-ից մինչեւ

[70] Ի լրումն, շաբաթը երկու անգամ հոգեբուժական բաժանմունք էր այցելում հրավիրված ավագ հոգեբույժը:

[71] Բաժանմունքում անընդմեջ աշխատում էր նաեւ մեկ քրեակատարողական հիմնարկի ծառայող («հսկիչ»): «Հսկիչները» գործում էին բուժանձնակազմի ցուցումներով:

երեկոյան ժամը 6-ը: Սանիտարները հերթապահում էին շուրջօրյա հերթափոխով (յուրաքանչյուր 4-րդ օրը ոչ մի սանիտար չէր հերթապահում)[72]: Ամենամեծ խնդիրն այն էր, որ բաժանմունքի կտրվածքով չկար բազմապրոֆիլային հիվանդանոցային անձնակազմ (հոգեբաններ, աշխատանքային թերապիայի գծով մասնագետներ եւ այլն)[73]:

ԽԿԿ-ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին քայլեր ձեռնարկել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ–ի հոգեբուժական բաժանմունքում թերապեւտիկ եւ վերականգնողական ծառայություններ մատուցելու նպատակով որակավորված մասնագետների, ինչպես օրինակ՝ հոգեբանների, աշխատանքային թերապիայի գծով մասնագետների կանոնավոր հերթապահության ապահովման ուղղությամբ: Բացի դրանից՝ անհրաժեշտ է ջանքեր գործադրել բաժանմունքի կտրվածքով բուժակների (բուժքույրերի) թիվն ավելացնելու եւ սանիտարների թափուր հաստիքները համալրելու ուղղությամբ:

116. ԽԿԿ-ին գոհացրել է այն հանգամանքը, որ մեկուսարանը, որի հետ կապված քննադատություն է արվել 2002 թվականին, անհրաժեշտ պայմաններ չունենալու պատճառով, շահագործումից հանվել էր: Ըստ անձնակազմի՝ զսպման մեխանիկական միջոցներ այլեւս չէին օգտագործվում, եւ ագրեսիվ հիվանդները տեղափոխվել էին հոգեբուժական այլ հաստատություններ: Այլ կերպ ասած՝ բացակայում էր զսպման դեպքերի հատուկ գրանցամատյանը (լինի դա ձեռքով, մեխանիկական, թե քիմիական զսպում): Պատվիրակությունը տեղեկացել է, որ ծրագրվում էր ստեղծել նման գրանցամատյան առողջապահության նախարարության 2010 թվականի մայիսի 3-ի կանոնակարգերին համապատասխան (տե՛ս 114-րդ պարբերությունը): **ԽԿԿ-ն կցանկանար ստանալ հաստատում այն մասին, որ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ–ի հոգեբուժական բաժանմունքում ստեղծվել է նման գրանցամատյան:**

---

[72] Գիշերը եւ շաբաթ ու կիրակի օրերին հիվանդանոցում հերթապահում էին մեկ բժիշկ, մեկ կամ երկու բուժակ եւ մեկ բուժքույր:

[73] Ամբողջ հիվանդանոցում աշխատում էր մեկ հոգեբան:

գ. Ինքնասպանությունների կանխումը

117. Ինքնասպանությունները կամ ինքնասպանության փորձերը կարծես թե շատ հազվադեպ երեւույթներ էին այցելած հաստատություններում: Այնուամենայնիվ, Կոմիտեին մտահոգում է որոշ ծայրահեղ միջոցներ, որոնք կարող են ձեռնարկվել, եթե ազատությունից զրկված անձն առանձնապես հակված է ինքնասպանություն կատարելուն: «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ցմահ ազատազրկման դատապարտված անձը, որին ճանաչել էին որպես ինքնասպանությանը հակված, ավելի քան մեկ ամիս 2009 թվականի դեկտեմբեր եւ 2010 թվականի հունվար ամիսների ընթացքում խցում պահվել էր ձեռքերն ու ոտքերն իր մահճակալին գամված: Բուժկետ նա չէր տեղափոխվել: Շղթաները աշխատակիցների կողմից հանվել էին զուգարան գնալիս կամ սնվելու ժամերին: Ազատությունից զրկված տվյալ անձի խոսքերով՝ աշխատակիցներն այդ միջոցն այլեւս չէին կիրառել այն բանից հետո, երբ նա ինքնուրույն է փորձել հանել շղթաները:

Ըստ Կոմիտեի՝ ազատությունից զրկված անձանց այդքան երկար ժամանակ մահճակալին գամված պահելը կարող էր համարվել անմարդկային եւ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք: Ավելին, հոգեկան ծանր վիճակում գտնվող՝ անազատության մեջ պահվող անձի տեղաշարժման հնարավորության սահմանափակումը չի կարող դիտվել որպես ինքնասպանությունը կանխելու պատշաճ միջոց: Ինքնասպանությունների կանխումը գտնվում է քրեակատարողական հիմնարկի բուժանձնակազմի իրավասության ներքո: Նրանք պետք է ապահովեն, որ այս խնդրի մասին բավարար չափով տեղեկացված լինի ամբողջ հաստատությունը, եւ որ գործեն պատշաճ ընթացակարգեր: Ինքնասպանություն կատարելու լուրջ նշաններ դրսեւորող՝ ազատությունից զրկված անձանց պետք է տեղավորել հոգեբույժի անմիջական հսկողության ներքո, ցանկալի է նրանց պահել համապատասխան սարքավորումներով հագեցած բուժկետում: Անհրաժեշտ է մշակել, դիտանցել եւ վերահսկել անհատական խնամքի ծրագիր, որում կընդգրկվի բազմապրոֆիլային խումբ (այդ թվում՝ հոգեբանական մասնագիտական աջակցություն ցուցաբերող անձնակազմ): Բացի դրանից՝ տվյալ անձինք պետք է միշտ պահվեն այնպիսի ապահով պայմաններում, որպեսզի նրանց հեշտությամբ հասանելի չլինեն ինքնասպանության միջոցները (պատուհանների փականները, կոտրված ապակիները, գոտիները կամ լարերը եւ այլն): **ԽԿԿ-ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին դադարեցնել ինքնասպանությանն առանձնապես հակված՝**

անազատության մեջ պահվող անձանց նկատմամբ կիրառվող պրակտիկան եւ այս դիտարկումների լույսի ներքո քրեակատարողական հիմնարկում ներդնել ինքնասպանության կանխման համապատասխան ընթացակարգեր:

է. Հացադուլները

118. ԽԿԿ–ն մտահոգություններ ունի՝ կապված հացադուլ հայտարարած՝ ազատությունից զրկված անձանց բուժման հետ: 2010 թվականի այցի ընթացքում Կոմիտեն նկատել էր, որ ազատությունից զրկված նման անձինք հիմնականում կրում էին հատուկ համազգեստ եւ պահվում էին պատժախցի ներսում առանձնացված կամ դրան մոտ գտնվող հատուկ խցում, որը կահավորված էր այնպես, ինչպես պատժախցերը: Կոմիտեն ցանկանում է շեշտել, որ հացադուլներին պետք է վերաբերել ավելի շատ բուժիչ, այլ ոչ թե պատժիչ տեսանկյունից: Այդ համատեքստում, անազատության մեջ պահվող համապատասխան անձինք պետք է տեղավորվեն այնպիսի պայմաններում, որ նրանց առողջական վիճակը գտնվի համապատասխան բժշկի անմիջական հսկողության ներքո: Ավելին, նրանք չպետք է պահվեն ազատությունից զրկված մյուս անձանց պայմանների հետ համեմատած ավելի վատ պայմաններում: **ԽԿԿ-ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին նշված դիտարկումների լույսի ներքո վերանայել հացադուլ հայտարարած՝ ազատությունից զրկված անձանց ղեկավարման իրենց քաղաքականությունը:**

7. ԽԿԿ-ի մանդատին առնչվող այլ հարցեր

ա. Քրեակատարողական հիմնարկի անձնակազմը

119. ԽԿԿ–ի պատվիրակությունը պարզել է, որ այցելած քրեակատարողական հիմնարկներից շատերում անազատության մեջ պահվող անձանց հետ անմիջական աշխատող քրեակատարողական հիմնարկի անձնակազմի անդամների թիվը շատ փոքր է: Իրականում «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում, միջին հաշվով, հերթափոխով շուրջօրյա աշխատող մեկ ծառայողին բաժին է ընկնում անազատության մեջ պահվող ավելի քան 60 անձ,

մինչդեռ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի մեկ ծառայողին՝ ազատությունից զրկված 80 անձ:[74] Ավելին, անձնակազմը չուներ համապատասխան անվտանգության ապահովման սարքավորումներ (ինչպես օրինակ՝ անհատական ռադիոկապ կամ ազդանշանային համակարգեր). իրավիճակն այնպիսին էր, որ կարող էր վտանգավոր լինել ինչպես անձնակազմի, այնպես էլ ազատությունից զրկված անձանց համար: Օրինակ՝ «Կոշ» քրեակատարողական հիմնարկում անձնակազմի անդամները պատվիրակությանը հայտնել են, որ տագնապի ժամանակ նրանք պետք է «բղավեն եւ հուսան, որ մյուս ծառայողն իրենց կլսի»: Նույն կերպ նրանք ուշանում էին հիվանդ կամ ծանր վնասվածքներ ստացած՝ անազատության մեջ պահվող անձանց օգնություն ցուցաբերելու ժամանակ (այս առնչությամբ տե՛ս նաեւ 100–րդ պարբերությունը):

Քրեակատարողական հիմնարկում կարգուկանոնը պահպանելու համար ազատությունից զրկված «առաջնորդ» անձանց վրա հույսը դնելը (տե՛ս 67-րդ պարբերությունը) մասամբ այս իրավիճակի հետեւանքն էր:

Անձնակազմի համալրվածության ցածր աստիճանը եւ (կամ) հատուկ անձնակազմի այցերի սակավաթիվ լինելը եւ տեղաբաշխման վատ գործող համակարգերը, որոնք նվազեցնում են ազատությունից զրկված անձանց հետ անմիջական հաղորդակցման հնարավորությունները, բարձրացնում են ազատությունից զրկված անձանց միջեւ առկա ահաբեկման վտանգը եւ անձնակազմի ու անազատության մեջ պահվող անձանց միջեւ լարվածությունը, կանխում են դինամիկ անվտանգության հնարավորությունները եւ բացասական ազդեցություն են ունենում ազատությունից զրկված անձանց համար ապահովվող զբաղվածության որակի եւ մակարդակի վրա: Ավելին, Կոմիտեն գտնում է, որ վերը նշված հերթափոխով շուրջօրյա աշխատելը հակասում է մասնագիտական ստանդարտներին: Միեւնույն ժամանակ ազատությունից զրկված «առաջնորդ» անձանց որոշ լիազորություններ պատվիրակելու պրակտիկան եւ քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով նրանց օգտագործելը կարգուկանոնի եւ անվտանգության ապահովման պարտավորությունից, ինչը հստակ գտնվում է քրեակատարողական հիմնարկի անձնակազմի իրավասության սահմաններում, խուսափելու

[74] Իրավիճակը «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում ավելի բարվոք է, որտեղ քրեակատարողական հիմնարկի մեկ ծառայողին միջին հաշվով բաժին է ընկնում, ազատությունից զրկված 20 անձ:

միջոց է, որի հետեւանքով ազատությունից զրկված ավելի թույլ անձինք կանգնում են անազատության մեջ պահվող մյուս անձանց կողմից շահագործվելու վտանգի առջեւ:

ԽԿԿ-ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին այցելած քրեակատարողական հիմնարկներում արված դիտարկումների լույսի ներքո քայլեր ձեռնարկել անձնակազմի համալրվածության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ եւ փոխել անձնակազմի անդամների այցերի կատարման համակարգը: Ձեռնարկվելիք միջոցները պետք է հիմնված լինեն նաեւ ազատությունից զրկված բոլոր կատեգորիաների անձանց լիարժեք զբաղվածությունը (այդ թվում՝ ամենօրյա բացօթյա զբոսանքը) ապահովելու պահանջի վրա:

բ. Կարգապահությունը

120. Հարկ է վերստին հիշեցնել, որ կալանավորված անձինք պատժախցում կարող են պահվել առավելագույնը մինչեւ 10 օր, մինչդեռ դատապարտյալները՝ մինչեւ 15 օր: Համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել էր, որ նշված ժամկետները հիմնականում պահպանվել էին: Այդուհանդերձ, պատվիրակությունը հայտնաբերել է մի քանի դեպք, երբ դատապարտյալները պատժախցում պահվել էին 20 օր: Անձնակազմը դա բացատրել է այն հանգամանքով, որ դա կարող է տեղի ունենալ, երբ կարգապահական կալանքի ընթացքում թույլ է տրվում կարգապահական նոր խախտում: **ԽԿԿ-ն կցանկանար այս խնդրի վերաբերյալ ստանալ պարզաբանում:**

121. Քրեակատարողական հիմնարկի ներքին կանոնակարգով նախատեսված ընթացակարգը դեռեւս չի երաշխավորում կարգապահական կանոնների խախտման համար մեղադրվող՝ ազատությունից զրկված անձի՝ անձամբ լսվելու իրավունքը: Ավելին, պարզ էր, որ ազատությունից զրկված անձանց բավականաչափ ժամանակ չէր տրվում իրենց պաշտպանությանը պատրաստվելու համար եւ նրանք չէին տեղեկացվում բողոքարկելու հնարավորությունների մասին: **ԽԿԿ-ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին վերանայել պատժախուց տեղափոխելու կարգը՝ ապահովելու համար, որ ազատությունից զրկված համապատասխան անձինք (i) գրավոր տեղեկացվեն իրենց դեմ ներկայացվող**

մեղադրանքների մասին, (ii) բավականաչափ ժամանակ ունենան իրենց պաշտպանությանը պատրաստվելու համար, (iii) ունենան անձամբ լսվելու եւ իրենց անունից վկաներ հրավիրելու եւ իրենց դեմ տրված վկայության առնչությամբ խաչաձեւ հարցաքննությանը մասնակցելու իրավունք եւ (iv) ստանան այն որոշման պատճենը, որտեղ նշվում են պատժախուց տեղափոխելու հիմքերը, եւ որտեղ ներկայացված են իրենց իրավունքների, այդ թվում՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի եւ անկախ մարմնում որոշումը բողոքարկելու միջոցների մասին հստակ տեղեկություններ:

Նախկինում ԽԿԿ–ի մտահոգության առարկան էր[75] բուժանձնակազմի ներգրավումը կարգապահական ընթացակարգում: 2010 թվականի այցի ժամանակ ուսումնասիրված փաստաթղթերից պարզ է դարձել, որ բուժանձնակազմը շարունակում էր հավաստիացնել, որ դատապարտյալների առողջական վիճակը թույլ է տալիս նրանց պատժախուց տեղափոխել:[76] Սա անընդունելի է: ԽԿԿ**–ն կրկնում է իր առաջարկությունը, որ անհրաժեշտ է վերանայել կարգապահական հարցերում բուժանձնակազմի դերակատարմանը վերաբերող՝ գործող իրավական կարգավորումներն ու պրակտիկան:**

122. «Կոշ» քրեակատարողական հիմնարկում պատժախցերում պահելու նյութակենցաղային պայմանները, ընդհանուր առմամբ, ընդունելի էին: Խցերն ունեին նախատեսված թվով անձանց պահելու համար համապատասխան չափ (օրինակ՝ 18 քմ մակերեսով խցում չորս մահճակալ), լավ լուսավորված եւ կահավորված էին (այդ թվում՝ մահճակալներ, սեղան, աթոռներ, առանձնացված զուգարան եւ ջրի ծորակ): Այդուհանդերձ, որոշ խցեր վերանորոգման կարիք ունեին, եւ լոգասենյակը լրիվ քանդված վիճակում էր: ԽԿԿ**–ն առաջարկում է վերացնել այս թերությունները:**

«Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձանց ընդունելու համար նախատեսված երեք խուց, որոնք, անհրաժեշտության դեպքում, օգտագործվում էին որպես պատժախցեր, ունեին անհրաժեշտ պայմաններ՝ մակերեսի, լուսավորության եւ կահավորման առումով: Քիչ դեպքերում, ազատությունից զրկված անձինք

---

[75] Տե՛ս CPT/Inf (2007)47 փաստաթղթի 96-րդ պարբերությունը:

[76] Օրինակ՝ պատվիրակության կողմից ուսումնասիրված՝ պատժախուց տեղափոխելու մասին որոշումները պարունակում էին բժշկի կողմից ստորագրված հետեւյալ եզրակացությունները. «հիմնվելով իր առողջական վիճակի զննության արդյունքների վրա՝ ազատությունից զրկված անձը կարող է պահվել պատժախցում»:

տեղափոխվում էին «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի պատժախցեր՝ չնայած, որ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի՝ ընդունելու համար նախատեսված խցերը զբաղեցված չէին: **ԽԿԿ–ն կցանկանար ստանալ Հայաստանի իշխանությունների դիտարկումներն այս հարցի առնչությամբ:**

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պատժախցերի պայմանները սարսափելի վատ էին: Խցերը քանդված վիճակում էին (այդ թվում՝ խցի ներսում գտնվող զուգարանը), խոնավ եւ գրեթե առանց բնական լույսի հնարավորության: 2010 թվականի սեպտեմբերի 6–ի նամակով Հայաստանի իշխանությունները տեղեկացրել են ԽԿԿ–ին, որ նշված խցերը վերանորոգվում են: **ԽԿԿ–ն կցանկանար մանրամասն տեղեկատվություն ստանալ կատարված վերանորոգման աշխատանքների մասին:**

123. Պատժախուց տեղափոխված՝ ազատությունից զրկված անձինք ամեն օր օգտվում էին մեկժամյա բացօթյա զբոսանքի իրավունքից: Այնուամենայնիվ, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված որոշ անձինք վստահեցրել էին, որ իրենց թույլ չի տրվել դուրս գալ բացօթյա զբոսանքի իրենց կարգապահական կալանքը կրելու ամբողջ ընթացքում: **ԽԿԿ–ն առաջարկում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պատժախցերում պահվող՝ ազատությունից զրկված անձանց համար ապահովել ամեն օր առնվազն մեկժամյա բացօթյա զբոսանք:**

Ավելին, պատժախցում պահվող՝ ազատությունից զրկված անձանց դեռեւս չէր թույլատրվել օգտվելու ընթերցանության համար անհրաժեշտ նյութերից:[77] **ԽԿԿ-ն առաջարկում է փոփոխություններ կատարել համապատասխան կանոնակարգերում՝ այս թերությունը շտկելու համար:**

Հարկ է ավելացնել նաեւ, որ պատժախցերում անազատության մեջ պահվող անձինք ինքնաբերաբար զրկված էին արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու հնարավորությունից (այսինքն՝ տեսակցություններ, հեռախոսազանգեր եւ նամակագրություն): **ԽԿԿ–ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին ձեռնարկել միջոցներ, որպեսզի ազատությունից զրկված անձանց պատժախուց տեղափոխելը նրանց չզրկի ընտանիքի հետ կապ**

[77] Տե՛ս Բանտային ներքին կանոնակարգի 26-րդ հոդվածը:

պահպանելու հնարավորությունից:[78] Ավելին, ընտանիքի հետ հաղորդակցվելու ցանկացած սահմանափակում՝ որպես պատժի ձեւ, պետք է կիրառվի միայն այն դեպքում, երբ նմանատիպ հաղորդակցման ժամանակ խախտում է թույլ տրվել:

գ. Կապն արտաքին աշխարհի հետ

124. Կալանավորված անձանց կարող է մեկ ամսվա ընթացքում տրամադրվել երկու կարճատեւ տեսակցություն (մինչեւ երեք ժամ տեւողությամբ)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կոնկրետ տեսակցությունն արգելվում է քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից կայացված գրավոր եւ հիմնավորված որոշմամբ: Դատապարտյալներին, սովորաբար, մեկ ամսվա ընթացքում տրամադրվում է մեկ կարճատեւ տեսակցություն (մինչեւ չորս ժամ տեւողությամբ) եւ երկու ամիսը մեկ՝ մեկ երկարատեւ տեսակցություն (մինչեւ 72 ժամ տեւողությամբ):[79] Առանձնապես ծանր հանցագործության համար պատիժը կրող՝ ազատությունից զրկված անձանց մեկ տարվա ընթացքում տրամադրվում է երեք կարճատեւ եւ մեկ երկարատեւ տեսակցություններ: **ԽԿԿ-ն դիմում է Հայաստանի իշխանություններին ավելացնել տեսակցությունների թիվը եւ՛ կալանավորված անձանց, եւ՛ դատապարտյալների համար՝ նրանց կողմից ավելի հաճախ տեսակցություններ ունենալու իրավունքը (օրինակ՝ մեկ շաբաթվա ընթացքում մեկ կարճատեւ տեսակցություն, ինչպես նաեւ տեսակցություններ կուտակելու հնարավորություն այն ժամանակահատվածների համար, երբ տեսակցություններ տեղի չեն ունենում) ապահովելու համար: Ավելին, 73–րդ պարբերության մեջ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց վերաբերյալ առաջարկությունը հավասարապես կիրառելի է նաեւ առանձնապես ծանր հանցագործությունների կատարման համար պատիժը կրող անձանց նկատմամբ:**

Այցելած քրեակատարողական հիմնարկներում կարճատեւ եւ երկարատեւ տեսակցությունների սենյակները, ընդհանուր առմամբ, ունեն բավարար պայմաններ:

---

[78] Տե՛ս նաեւ Եվրոպական բանտային կանոնների 60(4) կանոնը:

[79] Տե՛ս «Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը եւ Քրեակատարողական օրենսգրքի 92–րդ հոդվածը:

Այնուամենայնիվ, «Կոշ» քրեակատարողական հիմնարկում տեսակցությունների սպասող անձանց ցանկը տնօրինում է ազատությունից զրկված «առաջնորդը»: Սա անընդունելի է: **ԽԿԿ–ն առաջարկում է «Կոշ» քրեակատարողական հիմնարկում ձեռնարկել միջոցներ, որպեսզի տեսակցությունների հարցի կարգավորումը լինի քրեակատարողական հիմնարկի վարչակազմի բացառիկ իրավասությունը:**

125. Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ազատությունից զրկված անձինք հեռախոսակապից օգտվելու իրավունք ունեն (եթե արգելված չէ քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից՝ կալանավորված անձանց դեպքում): Այդ իրավունքի տրամադրումը գործնականում որոշվում էր յուրաքանչյուր քրեակատարողական հաստատության կողմից:[80]

«Նուբարաշեն» եւ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներում պարզվել է, որ ազատությունից զրկված անձինք ընդհանուր առմամբ հեռախոսազանգից օգտվելու որեւէ խնդիր չունեին: Սակայն, «Կոշ» քրեակատարողական հիմնարկում պատվիրակությունը բազմաթիվ բողոքներ է ստացել հեռախոսակապից օգտվելու հետ կապված, ինչը պայմանավորված էր այն հանգամանքով, որ քրեակատարողական հիմնարկում պահվող բոլոր անձանց համար առկա էր միայն երկու հեռախոս (որոնցից մեկն այցելության ժամանակ չէր աշխատում): **ԽԿԿ–ն առաջարկում է բարելավել հեռախոսակապից օգտվելու հնարավորությունը «Կոշ» քրեակատարողական հիմնարկում:**

126. Մի քանի կալանավորված անձինք, ում հետ զրուցել է պատվիրակությունը, նշել են, որ ոստիկանության քննիչները նրանց ասել էին, որ տեսակցություններն ու հեռախոսազանգերը նրանց կարգելվի այնքան ժամանակ, քանի դեռ չեն խոստովանել իրենց մեղքը: Նմանատիպ մեթոդներ կիրառելը պետք է համարվի անընդունելի, որը չի բխում արդարադատության պատշաճ իրականացման շահերից: **ԽԿԿ–ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին արդյունավետ քայլեր ձեռնարկել՝ ապահովելու համար, որ կալանավորված անձանց տեսակցություններ ունենալու եւ հեռախոսակապից օգտվելու իրավունքն անհիմն կերպով չսահմանափակվի: Տեսակցությունների ցանկացած սահմանափակում պետք է հիմնավորվի քննության պատշաճ ընթացքի կամ անվտանգության ապահովման**

[80] Ազատությունից զրկված անձանց, ընդհանուր առմամբ, թույլատրվել է օգտվել մեկ հեռախոսազանգից շաբաթական մեկ անգամ:

նկատառումներից ելնելով, որի համար պետք է պահանջվի դատական մարմնի հաստատումը եւ պետք է կիրառվի սահմանված ժամկետում՝ նշելով դրա հիմքերը: Ավելին, ցանկացած որոշում, որով արգելվում կամ սահմանափակվում է կոնկրետ կալանավորված անձի՝ հեռախոսակապից օգտվելու հնարավորությունը, պետք է հիմնվի բախման, ահաբեկման կամ այլ ապօրինի գործունեության հիմնավորված ռիսկի վրա, եւ որը պետք է կիրառվի որոշակի ժամկետում: Հարկ եղած դեպքում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել համապատասխան իրավական դաշտում:

դ. Բողոքները եւ հսկման ընթացակարգերը

127. Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ազատությունից զրկված անձինք ազգային եւ միջազգային մարմիններ բողոքներ ներկայացնելու իրավունք ունեն:[81] Այնուամենայնիվ, պատվիրակությունը ազատությունից զրկված անձանցից մի քանի բողոքներ է ստացել այն մասին, որ իրենց նամակները՝ ներառյալ ԽԿԿ–ին հասցեագրված նամակները, իրենց են վերադարձվել դրանք բացելուց հետո: Ավելին, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված որոշ անձինք նշել են, որ քրեակատարողական հիմնարկի անձնակազմն սպառնացել է նրանց նկատմամբ կիրառել կարգապահական տույժ, եթե նրանք բողոքներ ներկայացնեն: **Կոմիտեն առաջարկում է Հայաստանի իշխանություններին ապահովել ազատությունից զրկված անձանց՝ բողոք ներկայացնելու իրավունքի լրիվ արդյունավետությունը՝ երաշխավորելով, մասնավորապես, բողոք ներկայացնող անձանց նկատմամբ հաշվեհարդարի բացառումը: Այս համատեքստում, բողոք ներկայացնելու ընթացակարգը պետք է վերանայվի՝ ապահովելու համար ազատությունից զրկված անձանց՝ բողոքների քննություն եւ հսկողություն իրականացնող մարմինների (այդ թվում՝ ԽԿԿ–ին) հետ ունեցած նամակագրության գաղտնիությունը:** Այս համատեքստում, **ԽԿԿ–ն կցանկանար ընդգծել, որ քրեակատարողական հիմնարկի անձնակազմի կողմից ազատությունից զրկված անձանց՝ Կոմիտեին հասցեագրված նամակների**

[81] Տե՛ս «Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13–րդ հոդվածը եւ քրեակատարողական օրենսգրքի 12–րդ հոդվածը:

բովանդակությանը ծանոթանալու ցանկացած գործողություն կդիտարկվի որպես Կոնվենցիայի 3–րդ հոդվածով սահմանված համագործակցության սկզբունքի խախտում:

128. 2006 թվականի այցի վերաբերյալ զեկույցում Կոմիտեն ողջունել է հսկողության ընթացակարգի մշակումը, մասնավորապես՝ Քրեակատարողական հիմնարկի հասարակական դիտանցման խմբի ստեղծումը: 2010 թվականի այցի ընթացքում պարզվել է, որ դիտանցման խումբը շարունակում էր հաճախակի եւ առանց զգուշացման այցելություններ կատարել Հայաստանի բոլոր քրեակատարողական հաստատություններ: Ավելին, նախկինի պես պարբերաբար այցելություններ էին կատարում նաեւ դատախազները եւ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակազմը: **ԽԿԿ–ն հավատացած է, որ Հայաստանի իշխանությունները կշարունակեն խթանել քրեակատարողական հաստատությունների անկախ դիտանցումը** (տե՛ս նաեւ 8–րդ պարբերությունը)**:**

Ե. Հոգեբուժական հիմնարկները

1. Նախնական դիտարկումները

129. ԽԿԿ–ի պատվիրակությունը հերթական այցելությունն էր կատարել Երեւան քաղաքի Նուբարաշենի հանրապետական հոգեբուժական կլինիկայի հատուկ հսկվող բաժին, որի նպատակն էր գնահատել ԽԿԿ–ի 2002 թվականի այցելությունից ի վեր կատարված փոփոխությունները[82], եւ առաջին այցելությունն էր կատարել Երեւանի «Նորք» հոգեկան առողջության կենտրոն:

130. 2010 թվականի այցելության պահին Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հատուկ հսկվող բաժանմունքներն էին 6–րդ բաժանմունքը՝ դատահոգեբուժական փորձաքննություն անցնող անձանց համար, եւ 7-րդ բաժանմունքը՝ քրեական դատավարության օրենսգրքի դրույթների համաձայն հարկադիր բուժում անցնող անձանց համար (այսուհետ՝ «դատական» հիվանդներ): «Դատական» հիվանդների համար նախատեսված մյուս բաժանմունքը (5-րդ բաժանմունքը) փակվել էր 2003 թվականին եւ պետք է ամբողջովին վերանորոգվեր: 6-րդ

[82] CPT/Inf (2004) 25 փաստաթղթի 103-րդ եւ հաջորդող պարբերություններ:

բաժանմունքում կար 10 մահճակալի հնարավորություն, եւ այնտեղ պահվում էին ութ կալանավորված անձինք (ներառյալ մեկ անչափաս) եւ երկու դատապարտյալ: 7-րդ բաժանմունքում (50 մահճակալի հնարավորությամբ) պահվում էին 53 «դատական» հիվանդներ, այդ թվում՝ երկու կին:[83]

131. Երեւան քաղաքի «Նորք» հոգեկան առողջության կենտրոնը, որը բացվել է 1960 թվականին, գտնվում է Երեւանի ծայրամասում, որտեղ այն զբաղեցնում է ընդարձակ տարածք եւ շրջապատված է պարագծային ցանկապատով: Պաշտոնապես ունենալով 125 մահճակալ (այդ թվում՝ 50 մահճակալ հոգեբուժական փորձաքննություն անցնող զինծառայողների համար)՝ հաստատությունում պահվում էին 73 հոգեկան խանգարումներով տառապող անձինք եւ 48 զինծառայող: Հոգեկան խանգարումներով տառապող անձինք բաշխվել էին երեք բաժանմունքներում՝ կարճաժամկետ բուժման 1-ին բաժանմունքում[84] (երկու սեռի ներկայացուցիչներ միասին), կանանց համար նախատեսված 2-րդ բաժանմունքում եւ երկարատեւ բուժման 3-րդ բաժանմունքում (հիմնականում արական սեռի հիվանդներ, այդ թվում՝ 10 «դատական» հիվանդներ»):[85]

Բոլոր «քաղաքացիական» հիվանդները, բացառությամբ մեկի[86], պաշտոնապես համարվում էին հոժարակամ կարգով գտնվող հիվանդներ: Այնուամենայնիվ, բոլոր բաժանմունքները փակ էին, եւ հիվանդները չէին կարող դուրս գալ առանց անձնակազմի թույլտվության: Այցելության ժամանակ հավաքված տեղեկությունները վկայում էին, որ հիվանդների զգալի մասն իրականում հոժարակամ կարգով չէր գտնվում հաստատությունում, նույնիսկ եթե սա չհաստատվեց որեւէ պաշտոնական ընթացակարգով (տե՛ս 148-րդ պարբերությունը):

---

[83] Եվս 36 «դատական» հիվանդներ պահվում էին կլինիկայի մյուս՝ ընդհանուր բաժանմունքում:

[84] Մինչեւ 24 օր:

[85] Քրոնիկ հիվանդների բուժման միջին տեւողությունը 3-4 ամիս է (առավելագույնը մեկ տարի), իսկ «դատական» հիվանդների բուժման միջին տեւողությունը 2-4 տարի է (առավելագույնը 11 տարի):

[86] Այցելության պահին նրա նկատմամբ հարուցվել էր դատական վարույթ:

2. Վատ վերաբերմունքը

132. Պատվիրակությունը այցելած այդ երկու հաստատությունում չի ստացել անձնակազմի կողմից հիվանդների նկատմամբ ցուցաբերված վատ վերաբերմունքի մասին որեւէ հաղորդում: «Նորք» հոգեկան առողջության կենտրոնում պատվիրակությունը նկատել է, որ մթնոլորտը հանգիստ է, եւ որ անձնակազմը հոգատարությամբ եւ հարգանքով է վերաբերվում հիվանդներին: Ավելին, ոչ մի հաստատությունում չի հայտնաբերվել հիվանդների միջեւ բռնության առկայության խնդիր:

133. Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հատուկ հսկվող բաժանմունքները դեռեւս վերահսկվում էին ներքին գործերի նախարարության անվտանգության աշխատակիցների կողմից,[87] բայց մթնոլորտը բարելավվել էր. մասնավորապես, ԽԿԿ–ի կողմից 2002 թվականին ներկայացված առաջարկությունից հետո բակում այլեւս չէին պահվում պահակաշներ: Անվտանգության աշխատակիցներին չէր թույլատրվում մտնել բաժանմունքներ՝ բացառությամբ արտակարգ իրավիճակների դեպքում, երբ նրանք պետք է գործեն բժշկական անձնակազմի հրահանգով:

Comment [A1]: Բնօրինակում գործված է «Minitsry of Internal Affairs» արտահայտությունը

3. Հիվանդների կենսապայմանները

134. Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հատուկ հսկվող բաժանմունքներ կատարած այցելության ժամանակ պատվիրակությանը հաճելի զարմացրել է այն փաստը, որ 6-րդ բաժանմունքի պատուհանները ծածկող մետաղյա ճաղավանդակները հեռացվել էին: Այնուամենայնիվ, բաժանմունքի պայմանները դեռեւս ծայրահեղ վատ վիճակում էին եւ չէին նպաստում դրական, թերապեւտիկ մթնոլորտի ձեւավորմանը: 7-րդ բաժանմունքում լուսավորությունն ու օդափոխումը, հիգիենան եւ անկողնային պարագաները բավարար մակարդակի վրա էին, բայց որոշ կացարաններ գերծանրաբեռնված էին (օրինակ՝ 8 հիվանդներ 24քմ տարածքում), մահճակալները գտնվում էին շատ մոտ, եւ քայլելու տարածքը փոքր էր: Ավելին, 7-րդ բաժանմունքի երկու կին հիվանդները պահվում էին ճաշարանի մոտ

[87] տե՛ս CPT/Inf (2004) 25 փաստաթղթի 168-րդ պարբերությունը:

գտնվող 12քմ մակերեսով սենյակում, ինչպես նաեւ չէր ապահովվում անձի առանձնությունը, քանի որ ճաղավանդակով միջնորմի միջով նրանց կարող էին տեսնել անցնող տղամարդիկ:

Երկու բաժանմունքում կացարաններն ու սարքավորումները հնամաշ էին եւ օգտագործվում էին համատեղ, ինչով խախտվում էր առանձնության իրավունքը. ոչ մի գործողություն չէր ձեռնարկվել՝ 2002 թվականի այցելության մասին զեկույցում նկարագրված բանտային, դաժան ու հիվանդներին անհատական մոտեցում չապահովող մթնոլորտը բարելավելու ուղղությամբ: Կացարաններն առանձնացված էին ճաղավանդակով միջնորմներով, եւ դեռեւս չկային անհատական փակվող տարածքներ՝ հիվանդների անձնական պարագաները պահելու համար: Ավելին, չկային հանգստի սենյակներ, եւ հիվանդներն օրվա մեջ առնվազն 19 ժամ անցկացնում էին փակ կացարաններում՝ առանց հեռուստացույց դիտելու կամ ռադիո լսելու հնարավորության:

ԽԿԿ–ն աջակցում է Հայաստանի իշխանությունների՝ Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հատուկ հսկվող բաժանմունքների առաջին հարկը (նախկին 5-րդ բաժանմունք) վերանորոգելու ծրագրերին եւ հավատացած է, որ սա հնարավորություն կտա վերակազմակերպելու հիվանդներին պահելու տարածքները՝ նվազեցնելով կացարաններում ծանրաբեռնվածության մակարդակը եւ բաժանմունքներում հստակ առանձնացված տարածք հատկացնելով կանանց:

Բացի դրանից՝ **Կոմիտեն առաջարկում է, որ Հայաստանի իշխանությունները.**

- **հիվանդների համար ստեղծեն առավել հաճելի ու անհատական մոտեցում ապահովող միջավայր եւ նրանց հատկացնեն անհատական փակվող տեղեր՝ անձնական պարագաների համար,**

- **ստեղծեն պատշաճ հանգստասենյակներ, որոնք բավարար կլինեն պահվող հիվանդների թվի համար:**

135. Երեւանի «Նորք» հոգեկան առողջության կենտրոնում տարբեր բաժանմունքներում նյութակենցաղային պայմանները տարբեր էին: 1-ին բաժանմունքը մասամբ վերանորոգվել էր, եւ տիրող մթնոլորտը համեմատաբար ավելի բարենպաստ էր (մասնավորապես, 20 անձի համար նախատեսված պայմաններում՝ բաժանմունքում պահվում էին ընդամենը 12 հիվանդ): Ի հակադրություն դրան՝ 2-րդ եւ 3-րդ բաժանմունքները չափազանց կիսաքանդ եւ

գերբնակեցված էին (10 քմ/մ մակերեսով սենյակում պահվում էին 4 հիվանդ, եւ 23 քմ մակերեսով սենյակում պահվում էին 7 հիվանդ): 3-րդ բաժանմունքը նախատեսված էր 30 հիվանդի համար, սակայն այնտեղ պահվում էին 38 հիվանդ, եւ հավելյալ մահճակալներ տեղադրվել էին միջանցքում: Դրա հետ մեկտեղ՝ հիվանդները կարող էին մեկ բաժանմունքից ազատ գնալ մյուսը:

Լուսավորությունը, օդափոխումը, հիգիենան (ներառյալ սանիտարական պայմանները) եւ անկողնային պարագաները հիմնականում լավ վիճակում էին բոլոր բաժանմունքներում: Այնուամենայնիվ, կացարաններում տիրում էր անտարբեր ու ճնշող մթնոլորտ, եւ շատ հիվանդներին տեղ չէր հատկացվել՝ իրենց անձնական պարագաները պահելու համար, ինչն առավել ակնառու էր 3-րդ բաժանմունքում (որտեղ որոշ հիվանդներ բնակվում էին արդեն 8 տարի): Բացի դրանից ՝ չկային հանգստի սենյակներ:

ԽԿԿ–ն առաջարկում է, որ Երեւանի «Նորք» հոգեկան առողջության կենտրոնի հիվանդասենյակների եւ, մասնավորապես, 3-րդ բաժանմունքի, ծանրաբեռնվածության մակարդակը նվազեցվի, եւ ոչ մի հիվանդ չպահվի միջանցքում:

Բացի դրանից՝ **Կոմիտեն առաջարկում է, որ Հայաստանի իշխանությունները**

- **հիվանդների համար ստեղծեն առավել ջերմ ու անհատական մոտեցում ապահովող միջավայր, եւ հատկացնեն նրանց անհատական փակվող տեղեր՝ անձնական պարագաների համար,**
- **ստեղծեն պատշաճ հանգստասենյակներ, որոնք բավարար կլինեն պահվող հիվանդների թվի համար:**

136. Պատվիրակությանը մտահոգել է այն փաստը, որ այդ երկու հաստատությունում անչափահասները երբեմն պահվում էին չափահասների հետ (այցելության ժամանակ Երեւանի «Նորք» հոգեկան առողջության կենտրոնում կար տասնհինգամյա մի աղջիկ, իսկ Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հատուկ հսկվող բաժանմունքում կար տասնյոթամյա մի տղա): **Հաշվի առնելով դեռահասների խոցելիությունն ու հատուկ կարիքները՝ նրանց պետք է տրամադրվեն պատշաճ կերպով պաշտպանված սենյակներ՝ տվյալ բաժանմունքի հստակ առանձնացված հատվածներում: Բնականաբար, սա չպետք է խոչընդոտի անչափահասներին մասնակցելու հոգեսոցիալական վերականգնման եւ ժամանցային**

միջոցառումներին չափահասների հետ, ինչը պետք է պատշաճ կերպով հսկվի անձնակազմի կողմից:

4. Անձնակազմը

137. Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հատուկ հսկվող բաժանմունքներից 6-րդ բաժանմունքի անձնակազմն ընդգրկում էր հիմնական աշխատող հոգեբույժ, մեկ գլխավոր բուժքույր, չորս բուժքույր եւ ութ սանիտար: Ինչ վերաբերում է 7-րդ բաժանմունքին, անձնակազմը նմանատիպ էր, բայց կային նաեւ երկու լրացուցիչ բուժքույրեր: Բուժքույրերն ու սանիտարներն աշխատում էին 24 ժամ՝ հերթափոխով, եւ յուրաքանչյուր բաժանմունքում գիշերները եւ հանգստյան օրերին հերթապահում էին մեկ բուժքույր եւ երկու սանիտարներ: Բացի դրանից, մեկ բժիշկ հերթապահում էր ամբողջ հիվանդանոցի համար աշխատանքային ժամերից հետո:

Ինչ վերաբերում է հոգեբույժներին, 7-րդ բաժանմունքում իրավիճակը 2002 թվականի համեմատ վատթարացել էր (այդ ժամանակ այնտեղ կային հիմնական աշխատող երկու բժիշկ[88]), եւ հոգեբույժների ու հիվանդների ներկա հարաբերակցությունը պատշաճ չի կարող համարվել: Բացի դրանից, բուժքույրերի ու սանիտարների առումով անձնակազմի ռեսուրսները 7-րդ բաժանմունքում անբավարար են: Նախորդ այցելության ժամանակ նաեւ ստեղծվել էր այն տպավորությունը, որ բուժքույրերի ու սանիտարների մասնագիտական վերապատրաստումը անբավարար մակարդակի վրա էր, եւ այդ իրավիճակն արդեն իսկ քննադատության էր ենթարկվել 2002 թվականին:

Ավելին, թե՛ 6-րդ, թե՛ 7-րդ բաժանմունքի դեպքում, թերապեւտիկ միջոցառումներ կազմակերպելու մեջ մասնագիտացած հոգեբույժների[89] ու այլ բուժաշխատողների բացակայությունը խոչընդոտում էր բազմամասնագիտական մոտեցման վրա հիմնված թերապեւտիկ մթնոլորտի ձեւավորումը:

---

[88] Նախկին 5-րդ բաժանմունքն ուներ հիմնական աշխատող եւս երկու բժիշկ:

[89] Ամբողջ կլինիկայի համար աշխատում էր միայն մեկ հոգեբույժ:

ԽԿԿ–ն առաջարկում է, որ Հայաստանի իշխանությունները Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հատուկ հսկվող բաժանմունքում ձեռնարկեն քայլեր.

- 7-րդ բաժանմունքում հոգեբույժների, բուժքույրերի եւ սանիտարների թիվը ավելացնելու ուղղությամբ,

- միջին բուժանձնակազմի համար հոգեբուժության բնագավառում, այդ թվում՝ հիվանդների իրավունքների վերաբերյալ մասնագիտացված (նախնական եւ ընթացիկ) վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ,

- վճարովի հիմունքներով ներգրավվելու մասնագետներ, ովքեր մասնագիտացած են թերապեւտիկ եւ հոգեսոցիալական վերականգնման միջոցառումներ կազմակերպելու մեջ (օրինակ՝ հոգեբաններ, էրգոթերապեւտներ, հոգեթերապեւտներ եւ սոցիալական ծառայությունների աշխատողներ):

138. Այցելության պահին Երեւանի «Նորք» հոգեկան առողջության կենտրոնի անձնակազմը կազմված էր 88 աշխատակիցներից, այդ թվում՝ հիմնական աշխատող 14 հոգեբույժ, 4 գլխավոր բուժքույր, 32 բուժքույր եւ 32 սանիտար (բոլորը հիմնական աշխատողներ էին): Յուրաքանչյուր բաժանմունքում օրվա ընթացքում գտնվում էին երկու հոգեբույժ եւ մեկ գլխավոր բուժքույր, եւ մեկ քույր ու երկու սանիտար աշխատում էին 24 ժամ՝ հերթափոխով: Ինչ վերաբերում է թերապեւտիկ միջոցառումներ կազմակերպելու մեջ մասնագիտացած բուժաշխատողներին, ապա աշխատում էին երեք հոգեբան, մեկ էրգոթերապեւտ եւ սոցիալական երկու աշխատող:

Այցելության պահին թափուր աշխատատեղեր չկային, իսկ հոգեբույժների եւ հիվանդների հարաբերակցությունը կարող էր համարվել բավարար: Այնուամենայնիվ, բուժքույրերի թիվը անձնակազմում անբավարար էր: Ավելին, պահանջ կար ընդգրկելու կլինիկական հոգեբաններ, էրգոթերապեւտներ եւ սոցիալական աշխատողներ՝ բազմամասնագիտական մոտեցումն ամրապնդելու նպատակով: **ԽԿԿ–ն առաջարկում է, որ Հայաստանի իշխանությունները Երեւանի «Նորք» հոգեկան առողջության կենտրոնում ձեռնարկեն քայլեր.**

- բաժանմունքներում միջին բուժանձնակազմի ու հիվանդների միջեւ հարաբերակցությունը մեծացնելու ուղղությամբ,

- այն մասնագետների խումբը համալրելու ուղղությամբ, ովքեր մասնագիտացած են թերապեւտիկ եւ հոգեսոցիալական վերականգնման գործունեության մեջ:

5. Բուժումը

139. Երկու հաստատությունում հիվանդների բուժումը մեծ մասամբ հիմնված էր դեղորայքային թերապիայի վրա: Չկար նորմայից բարձր դեղաչափի օգտագործման մասին փաստեր: Ավելին, պարզվել է հիմնական հոգեբուժական դեղորայքի պաշարների բավարար լինելը: Հոգեբույժը կանոնավոր կերպով այցելում էր հիվանդներին, եւ զննությունները գրանցվում էին հիվանդի անհատական գործում. այնուամենայնիվ, երկու հաստատությունում ուսումնասիրված գրանցամատյաններում չկային բուժման անհատական պլաններ:

140. Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայում այցելության ժամանակ պարզ դարձավ, որ հոգեսոցիալական վերականգնման միջոցառումները դեռեւս չէին իրականացվում, եւ չի նկատվել բազմամասնագիտական թիմային կլինիկական մոտեցում: Թերապեւտիկ կառուցվածքային միջոցառումների բացակայության արդյունքում հիվանդների մեծ մասը ժամանակի մեծ մասն անցկացնում էր փակված իրենց կացարաններում՝ անկողիններին պառկած կամ պարզապես շրջելով: Այս միապաղաղ կյանքն ընդհատվում էր ճաշի, բացօթյա զբոսանքի եւ բաժանմունքների միջանցքներում հեռուստացույց դիտելու ժամերին: Սենյակային միջոցառումներն ընդգրկում էին սեղանի խաղեր, ընտանիքների կողմից տրամադրված գրքերի ու ամսագրերի ընթերցում, եւ հեռուստացույցի դիտում՝ այն հիվանդների համար, ովքեր կարող էին գնել դա իրենց հաշվին:

Ի հակադրություն դրա՝ Երեւանի «Նորք» հոգեկան առողջության կենտրոնում ղեկավարությունը գիտակցում էր վերականգնողական միջոցառումների կարեւորությունը, եւ ջանքեր էին գործադրվում՝ հիվանդների համար բազմամասնագիտական վերականգնողական միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, այս միջոցառումները (օրինակ նկարչությունը կամ շյուղերով հյուսելը) հազվադեպ բնույթ էին կրում եւ ամրագրված չէին համակարգային անհատական բուժման պլաններում: Ինչ վերաբերում է ժամանցային

միջոցառումներին, ապա դրանք ներառում էին հեռուստացույց դիտելը, սեղանի խաղեր խաղալը եւ ընթերցանությունը:

141. **ԽԿԿ-ն վերահաստատում է 2002 թվականի այցելության զեկույցում նշված այն առաջարկությունը, որ Հայաստանի իշխանությունները պետք է փորձեն Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում զարգացնել թերապեւտիկ եւ հոգեսոցիալական վերականգնման միջոցառումների հնարավորությունները: «Նորք» հոգեկան առողջության կենտրոնում պետք է ջանքեր գործադրվեն՝ թերապեւտիկ ուղղվածության միջոցառումների ծավալն ընդլայնելու եւ հոգեսոցիալական վերականգնողական միջոցառումներին ավելի շատ հիվանդներ ներգրավվելու ուղղությամբ՝ անկախ կյանքին եւ ընտանիքներ վերադառնալուն նրանց նախապատրաստելու նպատակով: Հաստատություններում պահվող յուրաքանչյուր անչափահասի համար պետք է իրականացվեն հատուկ ծրագրեր՝ ներառյալ կրթական, որոնք կհամապատասխանեն հոգեկան խանգարումներով տառապող անչափահասների կարիքներին:**

Երկու հաստատությունում էրգոթերապիան պետք է լինի վերականգնողական ծրագրի բաղկացուցիչ մաս՝ հիվանդների մոտ ձեւավորելով նպատակասլացություն, ապահովելով ուսումնական եւ մարդկանց հետ շփվելու ունակությունների զարգացում, հատուկ կարողությունների ձեռքբերում ու բարձրացված ինքնագնահատականի ձեւավորում:

Ավելին, պետք է ձեռնարկվեն քայլեր՝ յուրաքանչյուր հիվանդի համար բուժման անհատական պլաններ կազմելու ուղղությամբ, որոնք կընդգրկեն դեղորայքային թերապիա եւ տարատեսակ վերականգնողական ու թերապեւտիկ միջոցառումներ՝ ներառյալ բուժման նպատակները, օգտագործվող թերապեւտիկ միջոցներն ու անձնակազմի պատասխանատու անդամները:

142. Ինչ վերաբերում է <u>բացօթյա զբոսանքին</u> եւ մարմնամարզությանը, ապա «Հոգեբուժական օգնության մասին» օրենքի (ՀՕՕ) 2009 թվականի փոփոխությունները ներառում են հիվանդների՝ ամեն օր մաքուր օդի դուրս գալու իրավունքի սահմանումը:[90]

---

[90] ՀՕՕ-ի 22-րդ հոդվածի 1.9 մաս

Այնուամենայնիվ, երկու հաստատությունում պարզ է դարձել, որ որոշ հիվանդներ շատ հազվադեպ էին դուրս գալիս բաժանմունքներից, եւ Երեւանի «Նորք» հոգեկան առողջության կենտրոնում եւ Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի 6-րդ բաժանմունքում դրա պատճառը, հավանաբար, բացօթյա զբոսանքի եւ մարմնամարզության համար անվտանգ տարածքների բացակայությունն էր: Ավելին, Նուբարաշենի 7-րդ բաժանմունքում «դատական» հիվանդների համար բացօթյա զբոսանքի եւ մարմնամարզության պայմանները, որոնց մասով քննադատություն էր եղել 2002 թվականի այցելության ժամանակ կազմված զեկույցում,[91] մնացել էին անփոփոխ. բակը փոքր էր (մոտ 30 քմ)՝ շրջափակված ցանկապատով եւ առանց եղանակային վատ պայմաններից պատսպարվելու հնարավորության:

ԽԿԿ–ն առաջարկում է, որ ձեռնարկվեն քայլեր՝ ապահովելու համար, որ Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հատուկ հսկվող բաժանմունքում եւ Երեւանի «Նորք» հոգեկան առողջության կենտրոնում պահվող բոլոր այն հիվանդները, ում առողջական վիճակը դա թույլ է տալիս, օրական մեկ ժամ բացօթյա զբոսանքի եւ մարմնամարզության հնարավորություն ունենան: Ավելին, Կոմիտեն առաջարկում է, որ հրատապ քայլեր ձեռնարկվեն՝ Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հիվանդների բացօթյա զբոսանքի պայմանները բարելավելու ուղղությամբ:

143. Պատվիրակությանը նաեւ տեղեկացրեցին, որ «Նորք» հոգեկան առողջության կենտրոնում հիվանդներն իրավունք չունեին ուղեկցությամբ կամ առանց ուղեկցության լքելու կենտրոնի տարածքը (օրինակ՝ մոտ գտնվող խանութներից գնումներ կատարելու նպատակով): **ԽԿԿ–ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին ուսումնասիրել՝ հիվանդներին հաստատության տարածքը լքելու իրավունք տալու հնարավորությունները եւ կանխել հոսպիտալացման բացասական հետեւանքները:**

6. Զսպման միջոցները

[91] Տես՝ CPT/Inf (2007) 47 փաստաթղթի 177–րդ պարբերությունը:

144. Ավելի քան յոթ տարի ԽԿԿ–ի՝ զսպման միջոցներ կիրառելու քաղաքականություն ընդունելու մասին տեւական առաջարկությունը[92] մնացել է որպես ապագայում իրագործվելիք: Այնուամենայնիվ, 2010 թվականի այցելությունից առաջ առողջապահության նախարարության կողմից հատուկ ուղեցույցի ընդունումը առաջընթացի ակնհայտ քայլ էր:[93] Ուղեցույցով սահմանվում է, որ զսպման գոտիները պետք է կիրառվեն միայն ծայրահեղ դեպքում, դրանց կիրառումը պետք է կարգադրի բժիշկը, եւ այն չպետք է գերազանցի 4 ժամը (2 ժամը՝ 9-17 տարեկան անձանց դեպքում): Բացի դրանից՝ հիվանդը պետք է անընդհատ գտնվի բուժանձնակազմի հսկողության ներքո եւ պետք է զննության ենթարկվի բժշկի կողմից առնվազն յուրաքանչյուր ժամը մեկ (գրանցելով բժշկական մատյանում): Եթե զսպումը պետք է կիրառվի վերը նշված ժամանակահատվածներից ավելի երկար, բաժանմունքի կամ կլինիկայի ղեկավարը պետք է տա իր համաձայնությունը: Ավելին, ուղեցույցով նախատեսվում է զսպման միջոցների կիրառման հատուկ բժշկական մատյան (որտեղ նշվում են հիվանդի անունը, ախտորոշումը, զսպան միջոցը կիրառելու պատճառը, դրա տեւողությունը, բժշկի կողմից հիվանդի ամենժամյա զննությունը եւ զսպման միջոցների կիրառման արդյունքում անձնակազմին կամ հիվանդին հասցված վնասվածքների մասին տեղեկությունները):

Նոր ուղեցույցը դեռ չէր կիրառվել այդ հաստատություններում, բայց պատվիրակությունը նկատեց, որ, որպես առաջին քայլ, յուրաքանչյուր բաժանմունքում կազմվել էին զսպման միջոցներ կիրառելու բժշկական մատյանները (այցելության պահին մատյաններում դեռ գրառումներ չկային): **ԽԿԿ–ն հույս ունի, որ Հայաստանի իշխանությունները կապահովեն, որ զսպման միջոցներ կիրառելու բոլոր դեպքերը պարբերաբար գրանցվեն այդ նպատակով պահվող նոր բժշկական մատյաններում:**

145. Անհատական մեկուսացումը չէր կիրառվում երկու հաստատությունից ոչ մեկում: Զսպման մեխանիկական մեթոդի դեպքում հիվանդին ամրացնում էին անկողնուն զսպման մեղմ միջոցներով (օրինակ՝ փաթաթած սավաններով) կամ հիվանդի մարմնի վերեւի հատվածը (որպես «զսպաշապիկ») կամ ամբողջ մարմինը փաթաթում էին սավաններով: Մեթոդը

[92] տե՛ս CPT/Inf (2004) 25 փաստաթղթի 188-րդ պարբերությունը եւ CPT/Inf (2007) 47 փաստաթղթի 120-րդ պարբերությունը:

[93] «Հոգեբուժական օգնություն ու ծառայություններ տրամադրող կազմակերպություններում հոգեկան խանգարումներով տառապող անձանց նկատմամբ Ֆիզիկական զսպման միջոցներ կիրառելու ուղեցույցը», ընդունվել է 2010 թվականի մայիսի 3-ին առողջապահության նախարարի թիվ 691/Ա հրամանով

կիրառվում էր բժշկի կարգադրությամբ եւ սովորաբար տեւում էր այնքան ժամանակ, մինչեւ ներարկված հանգստացնող միջոցը կսկսեր գործել (մինչեւ երեք ժամ):

Այնուամենայնիվ, Երեւանի «Նորք» հոգեկան առողջության կենտրոնում հիվանդներին զսպելու մեթոդները կիրառվում էին մյուս հիվանդների ներկայությամբ, եւ նրանց նույնիսկ երբեմն խնդրում էին օգնել անձնակազմին:

ԽԿԿ–ն առաջարկում է, որ Հայաստանի իշխանություններն ապահովեն, որ հիվանդի նկատմամբ զսպման մեխանիկական մեթոդները չկիրառվեն մյուս հիվանդների ներկայությամբ, եթե տվյալ հիվանդն ուղղակի այլ բան չի պահանջում, կամ եթե հայտնի է, որ հիվանդը գերադասում է շրջապատված լինել մարդկանցով: Զսպման միջոցները պետք է հիվանդի նկատմամբ կիրառվեն հատուկ այդ նպատակի համար նախատեսված սենյակում, եւ զսպման միջոցները կիրառելու ժամանակ մյուս հիվանդները չպետք է օգնեն անձնակազմին: Զսպման միջոցը կիրառելուց անմիջապես հետո հիվանդի հետ պետք է անցկացվի զրույց: Սա հնարավորություն է տալիս բացատրելու զսպման միջոցների կիրառման պատճառները՝ այդպիսով նվազեցնելով այդ երեւույթի հոգեբանական ծանր հետեւանքները, ինչպես նաեւ վերականգնելով բժիշկների ու հիվանդների միջեւ հարաբերությունները: Այն նաեւ հիվանդին հնարավորություն է տալիս բացատրելու իր ապրումները զսպման միջոցը կիրառելուց առաջ, եւ դրա միջոցով հիվանդն ու անձնակազմը կարող են ավելի լավ հասկանալ դրսեւորած վարքագիծը:

7. Երաշխիքները

146. Պետք է նկատել, որ քրեական դատավարության օրենսգրքով (ՔԴՕ) նախատեսվում են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառում այն անձանց նկատմամբ, ովքեր արարքը կատարել են անմեղսունակ վիճակում, կամ ովքեր պատժելի արարքից հետո հիվանդացել են հոգեկան հիվանդությամբ՝ հիմնվելով միջնախարարական հոգեբուժական հանձնաժողովի դատահոգեբուժական եզրակացության վրա:[94] Հոսպիտալացումը

[94] Տե՛ս CPT/Inf (2004) 25 փաստաթղթի 190-րդ պարբերությունը, եւ ՔԴՕ–ի 464-րդ հոդվածի 1-ին կետը եւ 471-րդ հոդվածը. միջնախարարական հոգեբուժական հանձնաժողովը կազմված է հինգ հոգեբույժներից, նրանցից մեկը

իրականացվում է դատարանի որոշմամբ՝ անորոշ ժամանակով, բայց հիվանդանոցի ներքին հոգեբուժական հանձնաժողովը, որը իրականացնում է հիվանդի վեցամսյա գնահատում, կարող է առաջարկել դատարանին դուրս գրել հիվանդին/դադարեցնել հոսպիտալացումը: Ավելին, ցանկացած շահագրգիռ անձ (ներառյալ հիվանդի հարազատներն ու օրինական ներկայացուցիչները) կարող են դիմել դատարան՝ վերանայելու հոսպիտալացման մասին որոշումը:

2010 թվականի այցելության ժամանակ հիվանդների ու անձնակազմի հետ զրույցներից եւ հիվանդների անձնական գործերը վերանայելուց հետո պարզ դարձավ, որ պահպանվել է հոսպիտալացման՝ օրենքով սահմանված կարգը, իսկ հիվանդանոցի հոգեբուժական հանձնաժողովը կանոնավոր կերպով (այսինքն՝ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ) վերանայել է յուրաքանչյուր հիվանդի գործը: Ավելին, պարզ է դարձել, որ հանձնաժողովի անդամները անձամբ զրուցում էին հիվանդների հետ: Այնուամենայնիվ, պատվիրակությունը նկատել է, որ հիվանդներին պարբերաբար գրավոր չէին տեղեկացնում հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությունների մասին, եւ նրանք չէին կարող օգտվել իրավաբանական օգնությունից, ինչի հետեւանքով նրանք չէին կարող դիմել դատարան՝ վերանայելու հոսպիտալացումը շարունակելու մասին հանձնաժողովի որոշումը: Ավելին, պարզ է դարձել, որ հիվանդները հազվադեպ էին բողոքարկում դուրս չգրելու/հոսպիտալացումը չդադարեցնելու մասին դատարանի որոշման դեմ, նույնիսկ երբ հոգեբուժական հանձնաժողովը տալիս էր դրական եզրակացություն:

ԽԿԿ–ն առաջարկում է, որ «դատական» հիվանդներին պարբերաբար տրամադրվեն տեղեկություններ հոգեբուժական հանձնաժողովի որոշման եւ դատարանի որոշման մասին (եւ նրանց տրամադրվեն այդ փաստաթղթերի պատճենները), ինչպես նաեւ այդ որոշումները վիճարկելու իրավական պաշտպանության հասանելի միջոցների մասին: Ավելին, նման հիվանդներին պետք է տրամադրվի իրավաբանական օգնություն (տե՛ս նաեւ 150-րդ պարբերությունը):

ներկայացնում է արդարադատության նախարարությունը, իսկ մյուսը՝ առողջապահության նախարարությունը (Կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 4-ի որոշում):

147. 2006 թվականի այցելությունից ի վեր՝ ՀՕՕ–ն, որով կարգավորվում է ոչ հոժարակամ (քաղաքացիական) հոսպիտալացումը[95], լրացվել է մի շարք փոփոխություններով եւ կիրարկող կանոնակարգերով: Մասնավորապես, հիվանդին ոչ հոժարակամ հոսպիտալացումից հետո դատարան դիմելու ժամանակահատվածը երկարաձգվել է մինչեւ 72 ժամ (նախկինում՝ 48 ժամ), եւ սահմանվել են հիվանդների իրավունքները (մասնավորապես իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, բողոքներ ներկայացնելու իրավունքը, կապն արտաքին աշխարհի հետ եւ իրավունքների մասին տեղեկությունները):

Չնայած ՀՕՕ–ում կատարված վերոնշյալ փոփոխություններին՝ երաշխիքներն ապահովելու հարցում դեռեւս կան շատ լուրջ բացեր՝ ոչ հոժարակամ հոսպիտալացման չափորոշիչները դեռ օրենսդրությամբ հստակ սահմանված չեն: Ավելին, ինչ վերաբերում է դուրսգրմանը, ապա օրենքով չի նախատեսվում ոչ հոժարակամ հոսպիտալացման դեպքերի պարբերական վերանայում: **ԽԿԿ–ն վերահաստատում է 2006 թվականի այցելության ժամանակ ներկայացված առաջարկություններն այն մասին, որ պետք է ձեռնարկվեն քայլեր.**

- համապատասխան օրենսդրությամբ ոչ հոժարակամ հոսպիտալացման չափորոշիչները հստակեցնելու ուղղությամբ,

- յուրաքանչյուր վեց ամիսը մեկ ոչ հոժարակամ հոսպիտալացման մասին որոշումների պարբերական վերանայումն ապահովելու ուղղությամբ:

148. Պատվիրակության եզրակացությունները վկայում են, որ հոգեբուժական հիվանդանոց քաղաքացիական ընթացակարգով տեղավորելու դատական կարգը շատ հազվադեպ էր գործնականում կիրառվում, եւ այն հիվանդները, ովքեր տեղավորվել էին հոգեբուժական հաստատությունում իրենց կամքին հակառակ, չէին կարող օգտվել իրավական պաշտպանության երաշխիքներից: Երեւանի «Նորք» հոգեկան առողջության կենտրոնում այցելության պահին այս ընթացակարգը հարուցվել էր միայն մեկ հիվանդի վերաբերյալ (ընդհանուր 63 «քաղաքացիական» հիվանդներից): Հիվանդանոցի տնօրինության հետ քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ ոչ հոժարակամ հոսպիտալացման կարգը կիրառվել էր միայն այն հիվանդների մասով, ովքեր չէին ցանկացել ստորագրել «հոժարակամ»

[95] Տե՛ս CPT/Inf (2007) 47 փաստաթղթի 122–րդ պարբերությունը:

հոսպիտալացման թերթիկը 72 ժամվա ընթացքում, եւ (կամ) ովքեր ակտիվորեն հակառակվում էին հոսպիտալացմանը:[96] Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվել է, հիվանդները պահվում էին փակ պալատներում, եւ շատ հիվանդներ, ում հետ պատվիրակությունը զրուցել է, պնդում էին, որ հաստատությունում պահվում էին իրենց կամքին հակառակ եւ ցանկանում էին դուրս գրվել:

ՀՕՕ–ին համապատասխան ոչ հոժարակամ հոսպիտալացման դեպքերի թվի մասին ճշգրիտ վիճակագրություն չկար, բայց պատվիրակությանը տեղեկացրին, որ այցելության պահին ամբողջ Հայաստանում կային նման կարգով հոսպիտալացված 10 հիվանդներ:

ԽԿԿ–ն կրկին անգամ նշում է 2006 թվականի այցելության ժամանակ կազմված զեկույցում ներկայացված առաջարկությունն այն մասին, որ պետք է ձեռնարկվեն քայլեր՝ ապահովելու համար, որ ՀՕՕ–ի՝ ոչ հոժարակամ հոսպիտալացման մասին դրույթները գործնականում ամբողջովին կիրառվեն: Դրա համար կպահանջվի համապատասխան բոլոր կառույցների եւ անձանց վերապատրաստումը (մասնավորապես բժշկական անձնակազմի, հիվանդանոցի ղեկավարության եւ դատավորների): Նոր օրենսդրության կիրառումը դիտանցելու նպատակով, պետք է ազգային եւ տվյալ հաստատության մակարդակով կազմվի վիճակագրություն ոչ հոժարակամ հոսպիտալացման վերաբերյալ (այդ տվյալները կարող են տարանջատվել՝ ըստ ախտորոշման, սեռի, հիվանդանոցի, բուժման տեւողության եւ այլն):

149. Ինչ վերաբերում է բուժօգնություն ստանալու հիվանդի համաձայնությանը, ապա ՀՕՕ–ի 15(3) հոդվածով սահմանվում է, որ հիվանդները (ներառյալ հաստատությունում ոչ հոժարակամ կարգով գտնվող հիվանդները) իրավունք ունեն հրաժարվելու առաջարկվող բուժօգնությունից, ինչը, սակայն, չի գործում «դատական» հիվանդների դեպքում:

Կոմիտեի կարծիքով ոչ հոժարակամ հիմունքով հիվանդին հոգեբուժական հաստատություն տեղավորելը՝ անկախ այն հանգամանքից, տվյալ անձը քաղաքացիական, թե «դատական» հիվանդ է, չպետք է մեկնաբանվի որպես բուժման թույլտվություն առանց հիվանդի համաձայնության: Յուրաքանչյուր իրավասու հիվանդ՝ թե՛ հոժարակամ, թե՛ ոչ

---

[96] ՀՕՕ–ում 2009 թվականի փոփոխությունների համաձայն՝ հոժարակամ կարգով գտնվող հիվանդի դուրսգրումը պետք է կատարվի հոգեբույժի եզրակացության հիման վրա կամ հիվանդի պահանջով, եթե հիվանդը վտանգ չի ներկայացնում հասարակության համար: Հակառակ դեպքում՝ բժշկի պահանջով հիվանդին կարող են ենթարկել ոչ հոժարակամ բուժման (ՀՕՕ–ի 21-րդ հոդված):

հոժարակամ կարգով հաստատությունում գտնվող, պետք է հնարավորություն ունենա հրաժարվելու բուժումից կամ բժշկական այլ միջամտությունից: Եթե հիվանդը պետք է բուժվի առանց իր համաձայնության մասին տեղեկանալու, պետք է լինեն դա իրականացնելու հստակ չափորոշիչներ եւ դա թույլատրելու ընթացակարգեր (որոնցով պետք է նախատեսվի երկրորդ, անկախ բժշկական եզրակացություն՝ բացի բուժումը նշանակող բժշկի (բժիշկների) եզրակացությունից): **ԽԿԿ–ն առաջարկում է, որ Հայաստանի իշխանությունները քայլեր ձեռնարկեն՝ թե՛ օրենքով, թե՛ գործնականում բուժօգնություն ստանալու հիվանդի համաձայնության սկզբունքը եւ առանց համաձայնության բուժման վերոնշյալ պահանջները նախատեսելու ուղղությամբ:**

150. ՀՕՕ–ի վերոնշյալ փոփոխությունները ներառում են իրավաբանական օգնություն ստանալու՝ հոգեկան խանգարումներով տառապող անձանց իրավունքը,[97] բայց գործնականում անվճար իրավաբանական օգնության տրամադրումը դեռ պետք է կարգավորվի: **ԽԿԿ–ն կցանկանար դրա վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալ:** Ավելին, Կոմիտեն կցանկանար տեղեկատվություն ստանալ այն մասին, թե արդյոք անվճար իրավաբանական օգնությունը կարող է տրամադրվել նաեւ «դատական» հիվանդներին:

151. Հիվանդի՝ մայրենի կամ իրեն հասկանալի մեկ այլ լեզվով տեղեկություններ ստանալու իրավունքը սահմանվել է ՀՕՕ–ում:[98] Այնուամենայնիվ, այցելության ժամանակ պարզ է դարձել, որ այդ հաստատություններում հիվանդներին չէին տրամադրվում ներածական բրոշյուրներ: **ԽԿԿ–ն կրկին անգամ նշում է իր նախորդ առաջարկությունն այն մասին, որ պետք է կազմվեն եւ հիվանդանոց ընդունելու պահին յուրաքանչյուր հիվանդին, ինչպես նաեւ նրանց ընտանիքներին/խնամակալներին տրամադրվեն հիվանդանոցային ռեժիմը եւ հիվանդների իրավունքները (ներառյալ բողոքներ ներկայացնելու միջոցների վերաբերյալ տեղեկատվություն) սահմանող ներածական բրոշյուրներ: Այն հիվանդները, ովքեր ի վիճակի չեն հասկանալու այս բրոշյուրը, պետք է ստանան համապատասխան օգնություն:**

---

[97] ՀՕՕ–ի 22-րդ հոդվածի 1.6 մաս:

[98] ՀՕՕ–ի 22-րդ հոդվածի 1.1 մաս:

152. Ինչ վերաբերում է արտաքին աշխարհի հետ կապին, ապա նամակագրության ու բարեկամների հետ տեսակցությունների սահմանափակումներ չեն եղել:[99] Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է հեռախոսներին, ապա երկու հաստատությունից ոչ մեկում չկային ավտոմատ հեռախոսներ, եւ հիվանդները պետք է թույլտվություն խնդրեին՝ ծառայողական հեռախոսից օգտվելու համար: **ԽԿԿ-ն հորդորում է Հայաստանի իշխանություններին ավելի մատչելի դարձնել հեռախոսակապը հոգեկան խանգարումներով տառապող անձանց համար:**

153. Ինչ վերաբերում է բողոքարկման ընթացակարգերին, ապա հիվանդները կարող էին իրենց բողոքները ներկայացնել տնօրենին եւ տվյալ հաստատությունից դուրս գործող մի շարք մարմինների՝ մասնավորապես դատարաններին, դատախազին, մարդու իրավունքների պաշտպանին եւ ազգային կամ տեղական մարմիններին:[100] Ավելին, առողջապահության նախարարությունը ստեղծել էր թեժ գիծ բողոքներ ներկայացնելու համար: Այդուհանդերձ, հեռախոսակապի մատչելիության եւ գաղտնի հիմունքներով նամակներ ուղարկելու հետ կապված դժվարությունների պատճառով հիվանդները գործնականում չէին կարողանում գաղտնի բողոք ներկայացնել: **ԽԿԿ–ն հորդորում է Հայաստանի իշխանություններին ներմուծել գաղտնի հիմունքներով բողոքներ ներկայացնելու պաշտոնական համակարգ (որը կներառի բողոքների գրանցամատյան եւ բողոքարկման հնարավորություն): Այս համատեքստում կարելի է ներմուծել բողոքների արկղի կիրառումը (անձնակազմի սահմանափակ հասանելիությամբ):**

154. Ինչ վերաբերում է արտաքին վերահսկողությանը, ապա վերահսկող դատախազից բացի հոգեբուժական հիվանդանոցներ կարող են այցելել նաեւ մարդու իրավունքների պաշտպանը եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Այնուամենայնիվ, պարզ դարձավ, որ այս երկու մարմինների կողմից այցելությունները հազվադեպ էին լինում: **ԽԿԿ–ն առաջարկում է, որ Հայաստանի իշխանությունները ձեւավորեն հոգեբուժական հիվանդանոցներ անկախ մարմինների կողմից պարբերաբար կատարվող այցելությունների համակարգ: Այս մարմինը պետք է իրավունք ունենա, մասնավորապես, առանձին զրուցելու հիվանդների հետ, ուսումնասիրելու նրանց կենսապայմաններին եւ բուժմանը վերաբերող բոլոր**

[99] Տե՛ս ՀՕՕ–ի 22-րդ հոդվածի 1.8 մասը, որտեղ սահմանված է ոչ հոժարակամ հիվանդների՝ «թերթերի եւ ամսագրերի, նամակագրության եւ այցելուների հետ հանդիպումների միջոցով արտաքին աշխարհի հետ կապ պահելու իրավունքը»:

[100] Տե՛ս ՀՕՕ–ի 22-րդ հոդվածի 1.4 եւ 1.11 մասերը:

խնդիրները, անմիջականորեն ստանալու նրանց բողոքները եւ անելու անհրաժեշտ առաջարկություններ:

Զ. Սոցիալական օգնության հաստատությունները

1. Նախնական դիտարկումները

155. Պատվիրակությունը Հայաստանում առաջին անգամ այցելել է սոցիալական օգնության հաստատություն՝ Վարդենիսի (նյարդահոգեբանական) տուն–ինտերնատ: Լինելով իր տեսակի մեջ եզակի հաստատություն Հայաստանում՝ այն գտնվում է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ: Տուն–ինտերնատը տեղափոխվել է իր ներկա գտնվելու վայրը 1993 թվականին, եւ զբաղեցնում է 1980-ականներին կառուցված, նախկին ծննդատան շենքը, որը վերանորոգվել է եւ գտնվում է Վարդենիսի տարածաշրջանում: Հաստատության մասնաճյուղը, որը գտնվում է մոտ 2 կմ հեռու՝ քաղաքի մեջ, բացվել է 2008 թվականին՝ նախկին շրջանային հիվանդանոցի վերանորոգված շենքում:

Պաշտոնապես նախատեսված լինելով 370 հիվանդի համար՝ հաստատությունում պահվում էին 390 հիվանդ[101] (169 տղամարդ եւ 221 կին)՝ 18-78 տարեկան: Հիվանդները բաշխվել էին յոթ բաժանմունքում՝ տղամարդկանց համար նախատեսված երկու բաժանմունքում, կանանց համար նախատեսված երկու բաժանմունքում եւ երկու սեռի ներկայացուցիչների համար նախատեսված մեկ բաժանմունքում՝ հիմնական շենքում, եւ երկու սեռի ներկայացուցիչների համար նախատեսված մեկ այլ բաժանմունքում՝ ինտերնատի մասնաճյուղի շենքում: Յուրաքանչյուր բաժանմունքը նախատեսված էր մոտ 50 հիվանդի համար:

Հիվանդների մոտ 60%–ը տառապում էր շիզոֆրենիայով, 35%–ն ուներ սովորելու հետ կապված դժվարություններ, իսկ մի քանի հիվանդ տառապում էր ուղեղի օրգանական

[101] Այցելության պահին տասնյոթ հիվանդ գտնվում էին արձակուրդի մեջ: Կապված հիվանդների փոփոխության հետ՝ պատվիրակությանը տեղեկացրել են, որ հիվանդների դուրսգրումից կամ մահվանից հետո ազատվող անկողիններն արագ լրացվում են նոր հիվանդներով, քանի որ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունն ունի հերթագրվածների ցուցակ:

վնասվածքով կամ տկարամտությամբ: Հիմնական երկու դիագնոստիկ հետազոտության ենթակա անձանց խմբերի հիվանդները պահվում էին երկու սեռի ներկայացուցիչների համար նախատեսված բաժանմունքներում: Ավելին, նախատեսվում էր բացել 40 անկողնով նոր բաժանմունք, ինչը կօգներ կրճատել հերթագրվածների ցուցակն ու որոշ գործող բաժանմունքների գերծանրաբեռնվածությունը:

2. Վատ վերաբերմունքը

156. Հիվանդներից շատերը, ում հետ ԽԿԿ–ն զրուցել է, դրական են արտահայտվել բժշկական անձնակազմի վերաբերմունքի մասին: Ավելին, բժշկական անձնակազմի ու հիվանդների միջեւ հարաբերությունները, ինչպես նաեւ հիվանդների՝ միմյանց հետ հարաբերություններն ամենեւին լարված չէին:

Այդուհանդերձ, պատվիրակությունն ստացել է մի քանի հաղորդում բաժանմունքների աշխատողների կողմից հիվանդների նկատմամբ ֆիզիկական բնույթի վատ վերաբերմունք (օրինակ՝ ապտակելու) ցուցաբերելու մասին. նշվել է, որ նման վերաբերմունք ցուցաբերվել է այն ժամանակ, երբ հիվանդները դարձել են անհանգիստ (նյարդային) կամ չեն ենթարկվել անձնակազմի կարգադրություններին: Ավելին, մի քանի հիվանդներ խոսել են բաժանմունքների անձնակազմի կողմից երբեմն կոպիտ վարքագծի եւ խոսքով վիրավորանք հասցնելու մասին: Տնօրինությունը պատվիրակությանը հայտնել է, որ 2009 թվականի մայիսին անձնակազմի հինգ անդամ ազատվել էին աշխատանքից՝ հիվանդի նկատմամբ ֆիզիկական բնույթի վատ վերաբերմունք ցուցաբերելու կապակցությամբ:

ԽԿԿ–ն ցանկանում է նշել, որ հաշվի առնելով բաժանմունքների անձնակազմի աշխատանքի դժվարին բնույթը՝ նրանց ընտրությունը պետք է լինի խիստ, եւ նրանք պարտականությունները ստանձնելուց առաջ պետք է անցնեն համապատասխան նախնական վերապատրաստում, ինչպես նաեւ ընթացիկ վերապատրաստում (այդ թվում՝ հսկողության եւ զսպման միջոցներ կիրառելու վերաբերյալ): Իրենց պարտականությունների իրականացման ժամանակ անձնակազմը պետք է ենթարկվի կանոնավոր հսկողության: **ԽԿԿ–ն առաջարկում է, որ Վարդենիսի (նյարդահոգեբանական) տուն–ինտերնատում վերանայվի**

բաժանմունքների անձնակազմին ընտրելու կարգը, ինչպես նաեւ անձնակազմի նախնական ու ընթացիկ վերապատրաստումը եւ հսկողությունը՝ նշված նկատառումների լույսի ներքո: Ավելին, **հաստատության տնօրինությունը պետք է լինի զգոն եւ անձնակազմին պարզ հասկացնի, որ հիվանդների նկատմամբ ցուցաբերվող վատ վերաբերմունքի բոլոր ձեւերը՝ ներառյալ խոսքով վիրավորանք հասցնելը, անընդունելի են եւ խստորեն պատժվելու են:**

3. Հիվանդների կենսապայմանները

157. Պատվիրակությունն ընդհանուր առմամբ դրական տպավորություն է ստացել հիվանդների կենսապայմանների մասին: Հաստատությունը վերանորոգվել էր, եւ հիվանդների կացարանները մաքուր էին, լավ լուսավորվում եւ օդափոխվում էին, որոշ տեղերում կային բույսեր եւ դեկորացիաներ: Ավելին, անկողնային պարագաները բավարար մակարդակի վրա էին, եւ բոլոր անկողինները կոկիկ հարդարված էին: Այնուհանդերձ, կացարաններում հիվանդների քնելու համար նախատեսված տարածքը չափազանց փոքր էր (օրինակ՝ մոտ 10 հիվանդ գտնվում էին 36քմ մակերեսով սենյակում, մոտ 6 հիվանդ գտնվում էին 16 քմ մակերեսով սենյակում), եւ հիվանդների համար չէին ապահովվում անհատական պայմաններ ու առանձնություն:

Պետք է նկատել, որ հոգեբանական ու առողջական տարբեր կարիքներով հիվանդներ հաճախ պահվում էին միեւնույն բաժանմունքում: ԽԿԿ-ն ցանկանում է նշել, որ ցանկալի չէ, որ տարբեր կարիքներով հիվանդները, ինչպիսիք են՝ սովորելու հետ կապված դժվարություններ ունեցող անձինք եւ հոգեկան խանգարումներով տառապող անձինք, պահվեն միասին: Ելնելով հիվանդների շահերից՝ Վարդենիսի (նյարդահոգեբանական) տուն-ինտերնատում պետք է տարբերակում լինի երկու խմբերի միջեւ. սա հնարավորություն կտա, որ երկու խմբերի հիվանդներն ստանան այնպիսի բուժում, որը համապատասխանում է իրենց կարիքներին:

ԽԿԿ-ն առաջարկում է, որ Վարդենիսի (նյարդահոգեբանական) տուն-ինտերնատում ձեռնարկվեն քայլեր՝ հիվանդների կացարաններում ծանրաբեռնվածության աստիճանը նվազեցնելու եւ տարբեր հոգեբանական ու առողջական կարիքներով

հիվանդների տարանջատումն ապահովելու ուղղությամբ: Այս համատեքստում, Կոմիտեն կցանկանա ստանալ հավելյալ տեղեկություններ նախատեսվող նոր՝ 40 մահճակալներով բաժանմունքի ստեղծման մասին (տե՛ս 155-րդ պարբերությունը)**:**

Ավելին, պետք է գործադրվեն ջանքեր՝ հիվանդների համար ավելի ջերմ մթնոլորտ ապահովելու ուղղությամբ, այդ թվում՝ հիվանդներին իրենց անձնական պարագաները պահելու համար անհատական փակվող տեղ տրամադրելու միջոցով:

158. Թե՛ ընդհանուր, թե՛ հիվանդների անձնական հիգիենան լավ մակարդակի վրա էր: Հիվանդները կարող էին ազատ օգտվել բաժանմունքների ընդհանուր զուգարաններից եւ կարող էին շաբաթը երկու անգամ լոգանք ընդունել: Ավելին, սանհանգույցը նույնպես գործում էր:

159. Ինչ վերաբերում է սննդին, ապա պատվիրակությունը շատ բողոքներ է ստացել ճաշատեսակների բազմազանության եւ մսի բացակայության մասին: Չնայած բազմաթիվ պահանջներին՝ պատվիրակությունը չի կարողացել ստանալ մանրամասն տեղեկություններ տրամադրվող սննդի մասին: 2010 թվականի սեպտեմբերի 6-ի նամակում Հայաստանի իշխանությունները նշել են, որ արդեն իսկ իրականացվում են միջոցներ՝ ճաշատեսակների ցանկը վերանայելու եւ դրանց բազմազանությունն ավելացնելու ուղղությամբ: ԽԿԿ-ն ողջունում է այս զարգացումը եւ կցանկանար լրացուցիչ տեղեկություններ ստանալ **Վարդենիսի (նյարդահոգեբանական) տուն-ինտերնատում սննդի տրամադրման վերաբերյալ (ընդհանուր բյուջեի, օրական սննդային արժեքի, հիմնական ճաշացանկի եւ այլն)**:

4. Անձնակազմը եւ հիվանդների խնամքը

160. Հաստատության աշխատակիցների ընդհանուր թիվը կազմում էր 430: Բժշկական անձնակազմը կազմված էր 7 բժշկից (մեկ հոգեբույժ, երկու ընդհանուր պրոֆիլի բժիշկ, մեկ նյարդաբան, մեկ բժիշկ-լաբորանտի, մեկ ուլտրաձայնային ախտորոշման մասնագետ եւ մեկ

ատամնաբույժ): Հոգեբույժի եւս երկու պաշտոն որոշ ժամանակ թափուր է եղել:[102] Գիշերները եւ շաբաթ–կիրակի օրերին բժիշկ չէր հերթապահում:

Հաստատությունն ուներ մեկ գլխավոր բուժքույր, ինչպես նաեւ յոթ ավագ բուժքույր, 46 բուժքույր եւ 95 սանիտար, ովքեր աշխատում էին բաժանմունքներում 24 ժամ՝ հերթափոխով, եւ բացի դրանից աշխատում էին նաեւ մի շարք մասնագիտացած բուժքույրեր ու սանիտարներ:[103] Անմիջականորեն հիվանդների հետ աշխատում էին նաեւ չորս հոգեբան, երկու սոցիալական աշխատողներ, 20 էրգոթերապեւտ եւ 13 մանկավարժ, ովքեր տարբեր զբաղմունքներ էին կազմակերպում հիվանդների համար:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ բաժանմունքներում աշխատող եւ բազմամասնագիտական բժշկական անձնակազմն ընդհանուր առմամբ բավարար չափով համալրված էր՝ բացառությամբ հոգեբույժների: Մի հաստատությունում, որտեղ պահվում են 390 հիվանդ՝ լուրջ հոգեկան խանգարումներով եւ սահմանափակ մտավոր կարողություններով, միայն մեկ հոգեբույժի ներկայությունն ակնհայտորեն բավարար չէ: **ԽԿԿ–ն առաջարկում է, որ ձեռնարկվեն հրատապ քայլեր՝ հոգեբույժների թափուր պաշտոնները լրացնելու ուղղությամբ: Պետք է վերանայել հոգեբույժների պաշտոնների թիվն ավելացնելու անհրաժեշտությունը:**

161. Ինչ վերաբերում է բուժմանը, ապա դեղորայքի պաշարները բավարար էին, եւ չկային փաստեր նորմայից բարձր դեղաչափ օգտագործելու մասին: Պատվիրակությանը հայտնել են, որ անհրաժեշտության դեպքում տուն–ինտերնատ այցելում են նաեւ այլ մասնագետ բժիշկներ, եւ հիվանդները կարող էին տեղափոխվել հոգեբուժական հիվանդանոցներ՝ բուժում ստանալու համար: Այնուամենայնիվ, բժշկական մատյաններում մանրամասն տվյալներ չկային: Ավելին, հիվանդների համար անհատականացված բուժման գրավոր պլաններ կազմված չէին:

Ջանքեր էին գործադրվում՝ հիվանդների համար հոգեսոցիալական վերականգնման մի շարք միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ: Գլխավոր շենքում կար էրգոթերապիայի բաժին՝ տարբեր արհեստանոցներով (կոշիկի արտադրության, գործելու, կարի), եւ դահլիճ՝

[102] Մեկը՝ 10 տարի, իսկ մյուսը՝ 9 ամիս:

[103] Ատամնաբուժական մեկ բուժքույր, ֆիզիոթերապիայի մեկ բուժքույր, էլեկրտրասրտագրման մեկ բուժքույր, վեց կրտսեր բուժքույր/հիվանդապահ, հիվանդներին լոգանքի ժամանակ օգնող չորս սանիտար, հիվանդներին՝ կերակրելիս օգնող երեք սանիտար:

սպորտային միջոցառումների համար: Երբեմն հիվանդների համար կազմակերպվում էին նաեւ մեկօրյա էքսկուրսիաներ եւ մշակութային միջոցառումներ: Ավելին, յուրաքանչյուր բաժանմունքում կար հեռուստացույցով ապահովված սենյակ, իսկ գլխավոր շենքում կար փոքր գրադարան:

ԽԿԿ–ն առաջարկում է, որ Վարդենիսի տուն–ինտերնատի հիվանդներից յուրաքանչյուրի համար կազմվի բուժման անհատական պլան, որը կներառի մանրամասն տվյալներ բուժման մասին (օրինակ՝ դեղորայքը, հոգեբանական խորհրդատվությունը, հոգեսոցիալական միջամտությունը եւ բուժման նպատակը):

162. Ինչ վերաբերում է բացօթյա զբոսանքին, ապա թե՛ կենտրոնական շենքի, թե՛ մասնաճյուղի շենքի տարածքում կային մեծ այգիներ՝ ծածկ ունեցող տարածքներով եւ նստելու հարմարություններով: Պատվիրակությանը տեղեկացրել են, որ այն հիվանդները, ում առողջական վիճակը թույլ է տալիս, կարող էին դուրս գալ բակ ամեն օր: Այցելության պահին կենտրոնական եւ մասնաճյուղի շենքի այգիներում կային մոտ 30-40 հիվանդ, որոնց հսկում էին սանիտարները:

5. Զսպման միջոցները

163. Հիմնարկում մեկուսացման պրակտիկա չէր կիրառվում: Ավելին, պատվիրակությունը որեւէ հաղորդում չի ստացել ֆիզիկական զսպման միջոցների (էլաստիկ կապանքների կամ զսպաշապիկների) չարաշահման մասին: Այդուհանդերձ, նման միջոցների օգտագործման դեպքերը գրանցելու համար առանձին մատյան չի պահվում, եւ դրանք նշվում են միայն բուժքույրերի մատյանում:

ԽԿԿ-ն առաջարկում է, որ Վարդենիսի տուն–ինտերնատում զսպման ֆիզիկական եւ (կամ) քիմիական միջոցների կիրառման բոլոր դեպքերը գրի առնվեն նաեւ հատուկ այդ նպատակով բացված մատյանում (այլ ոչ միայն բուժքույրերի մատյանում): Բացի դրանից, Կոմիտեն առաջարկում է սոցիալական օգնություն տրամադրող հաստատություններում կիրառել զսպման հատուկ միջոցների օգտագործման համապարփակ եւ հստակ քաղաքականություն՝ վերջերս առողջապահության նախարարության կողմից ընդունված՝

հոգեբուժական հաստատություններում զսպման միջոցների օգտագործման ուղեցույցի օրինակով (տե՛ս 144–րդ պարբերությունը):

6. Երաշխիքները

164. Պատվիրակությանը տեղեկացրել են, որ Վարդենիսի տուն–ինտերնատում բուժվող հիվանդների տեղավորման հարցը որոշվում է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ բուժվող հիվանդի կամ նրա խնամակալի դիմումի հիման վրա: **ԽԿԿ-ին հետաքրքրում է՝ արդյո՞ք որեւէ բուժվող հիվանդ կարող է տեղավորվել Վարդենիսի (նյարդահոգեբանական) տուն-ինտերնատում՝ «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի ոչ հոժարակամ հոսպիտալացման մասին դրույթների համաձայն:**

Այցելության ընթացքում ստացված տեղեկություններից կարելի է ենթադրել, որ ինտերնատում բնակվող անձանց մեծ մասը տեղավորվել է այնտեղ առանց հոսպիտալացման մասին դիմում կամ գրավոր համաձայնություն տալու: Ինտերնատի բնակիչների միայն մոտ մեկ երրորդն է անմեղսունակ ճանաչվել եւ տեղավորվել հաստատությունում իրենց օրինական խնամակալների դիմումների հիման վրա:[104] Բուժվող հիվանդներն իրականում զրկված էին ազատությունից անորոշ ժամանակահատվածով: Եթե բուժվող հիվանդներից որեւէ մեկը փորձում էր լքել հաստատությունը, անձնակազմը նրան արգելում էր դա անել, իսկ եթե նա այնուամենայնիվ կարողանում էր փախչել, նրան գտնում եւ վերադարձնում էին ոստիկանության օգնությամբ: Բուժվող հիվանդներից շատերը, ում հետ զրուցել է պատվիրակությունը այցելության ընթացքում, նշել են, որ իրենց այդ հաստատությունում պահում են հակառակ իրենց կամքի, եւ ցանկություն են հայտնել ազատ արձակվելու:

ԽԿԿ-ի կարծիքով, ինտերնատում բուժվող հիվանդին տեղավորելու մասին որոշումները, որոնք կայացվում են խնամակալի կամ ընտանիքի անդամի դիմումի հիման վրա, պետք է ունենան համապատասխան իրավական հիմքեր: Մասնավորապես, հոսպիտալացման մասին որոշումը պետք է հիմնված լինի անկախության ու անաչառության սկզբունքների վրա, կայացվի

[104] Մյուս բուժվող հիվանդների գործերը դեռ պետք է քննվեին դատարանի կողմից՝ նրանց իրավունակությունը պարզելու համար:

միայն օբյեկտիվ բժշկական, սոցիալ-հոգեբանական, կրթական փորձաքննության հիման վրա: Ավելին, հաստատությունում ոչ հոժարակամ տեղավորված անձինք պետք է դատական վարույթ հարուցելու իրավունք ունենան՝ ինտերնատում իրենց տեղավորման օրինականությունը հնարավորինս կարճ ժամկետում պարզելու համար. այս պահանջը սահմանված է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայով (5-րդ հոդվածի 4-րդ պարբերություն): Շատ կարեւոր է նաեւ, որ յուրաքանչյուր բուժվող հիվանդին ինտերնատում պահելու հարցը պարբերաբար վերանայվի, եւ այդ գործընթացն ուղեկցվի նույն երաշխիքներով, ինչ ինտերնատում տեղավորելու մասին որոշման կայացման գործընթացը:

ԽԿԿ-ն առաջարկում է, որ Հայաստանի իշխանություններն ապահովեն հոգեկան խանգարումներ կամ սովորելու դժվարություններ ունեցող անձանց սոցիալական օգնության հաստատություններում տեղավորելու ընթացակարգի համապատասխանությունը վերը նշված պահանջներին: Ավելին, Կոմիտեն կցանկանար հավաստիանալ, որ նման հաստատություններում իրենց կամքին հակառակ տեղավորված բոլոր անձինք՝ անկախ խնամակալ նշանակված լինելու փաստից, դատարան դիմելու փաստացի իրավունք ունենան՝ ինտերնատում իրենց տեղավորելու վերաբերյալ որոշման օրինականությունը պարզելու համար, ինչպես նաեւ ունենան իրենց այս իրավունքն իրականացնելու համապատասխան իրավական երաշխիքներ (օր.՝ փաստաբան ունենալու կամ դատավորի կողմից լսվելու եւ նման այլ իրավունքներ):

Կոմիտեն կցանկանար նաեւ տեղեկություններ ստանալ սոցիալական օգնության հաստատություններում ոչ հոժարակամ տեղավորված՝ հոգեկան խանգարումներ կամ սովորելու հետ կապված դժվարություններ ունեցող անձանց բուժման կուրսը հաստատելու կարգի,[105] ինչպես նաեւ այդ անձանց ինտերնատներում պահելու նպատակահարմարությունը պարբերաբար գնահատելու համակարգի մասին:

165. ԽԿԿ-ի մտահոգությունը կապված է այն հանգամանքի հետ, որ իրավունակությունից զրկված բուժվող հիվանդներին հաստատությունում տեղավորելուց հետո հաստատությունը մեխանիկորեն վերածվում է այդ անձանց օրինական խնամակալի:[106] Նման իրավիճակը կարող

[105] Տե՛ս 149–րդ պարբերությունում արված դիտարկումները եւ առաջարկությունները:

[106] Տե՛ս քաղաքացիական օրենսգրքի 37–րդ հոդվածի 4–րդ կետը եւ 41–րդ հոդվածի 2–րդ կետը:

է հեշտությամբ հանգեցնել շահերի բախման՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնամակալի դերը կայանում է իր պատասխանատվության տակ գտնվող անգործունակ անձի իրավունքները հոգեբուժական հաստատությունում պաշտպանելու մեջ (օր.՝ բուժման կուրսին կամ զսպման միջոցների կիրառմանը համաձայնություն տալու առումով): **ԽԿԿ-ն առաջարկում է, որ Հայաստանի իշխանությունները փորձեն գտնել այլընտրանքային լուծումներ, որոնք թույլ կտան խուսափել շահերի նման բախումից եւ երաշխավորել օրինական խնամակալների փաստացի անկախությունը եւ անաչառությունը:**

166. Նաեւ, բացակայում է ինտերնատում գտնվելու հետ կապված հարցերի մասին բուժվող հիվանդներին եւ նրանց ընտանիքներին տեղեկություններ տրամադրելու հատուկ կարգը: ԽԿԿ-ի պատկերացմամբ՝ այդ տեղեկությունները կարող են տրամադրվել ինտերնատի բնակիչներին եւ նրանց ընտանիքներին (խնամակալներին) պարզ ու մատչելի բրոշյուրի միջոցով, որում ներկայացված կլինեն հաստատության ամենօրյա ռեժիմը, բուժվող հիվանդներին ընդունելու եւ դուրս գրելու կանոնները, նրանց իրավունքները եւ հաստատությունից անկախ իրավասու մարմիններին գաղտնիության սկզբունքի պահպանմամբ պաշտոնապես բողոքելու հնարավորությունները: **ԽԿԿ-ն առաջարկում է, որ նման բրոշյուր կազմվի եւ պարբերաբար բաժանվի բուժվող հիվանդներին եւ նրանց ընտանիքներին:**

167. Ինչ վերաբերում է արտաքին աշխարհի հետ կապին, ապա բուժվող հիվանդների ընտանիքների անդամները կարող են այցելել նրանց եւ գիշերել հաստատությունում՝ հատուկ այդ նպատակի համար նախատեսված սենյակներում: Ավելին, առանձին բուժվող հիվանդների ընտանիքի անդամները հանգստյան կամ տոն օրերին կամ ավելի երկար ժամանակահատվածով տանում են տուն: Հաստատությունում ընդհանուր օգտագործման հեռախոսներ չկային, սակայն պատվիրակությանը տեղեկացրել են, որ բնակիչներին հնարավորություն է տրվում օգտվելու բժիշկների սենյակի հեռախոսից՝ նախապես թույլտվություն ստանալուց հետո: **ԽԿԿ-ն հորդորում է Հայաստանի իշխանություններին ավելի մատչելի դարձնել հեռախոսակապը բուժվող հիվանդների համար:**

168. 2010 թվականի այցելության ժամանակ պարզվել է, որ Վարդենիսի (նյարդահոգեբանական) տուն ինտերնատում բուժվող հիվանդների համար չկար <u>բողոքներ ներկայացնելու</u> պատշաճ <u>համակարգ</u>: Ինչ վերաբերում է արտաքին վերահսկողությանը, ապա պատվիրակությունը պարզել է, որ մարդու իրավունքների պաշտպանը եւ տարբեր ՀԿ-ներ

այցելել են հաստատություն, սակայն ասվածից կարելի է ենթադրել, որ այդ այցելությունները կանոնավոր բնույթ չեն կրում: **Տե՛ս 153-րդ եւ 154–րդ պարբերությունների համար արված առաջարկությունները:**

* *
*

169. Եվ վերջապես, ԽՍԿԿ-ն կցանկանար նշել, որ հոգեբուժարանների եւ ինտերնատների վերաբերյալ վերը ներկայացված առաջարկությունները կյանքի կոչելու համար նպատակահարմար կլիներ ընդունել հոգեկան առողջության պահպանման համապարփակ ազգային ծրագիր, որը կներառեր հանրապետության բոլոր հոգեբուժարաններում եւ ինտերնատներում առկա խնդիրների լուծման, ինչպես նաեւ ստացիոնար խնամքից հնարավորինս խուսափելու ռազմավարություն: **Կոմիտեն առաջարկում է Հայաստանի իշխանություններին մշակել այդպիսի ազգային ծրագիր:**

ՀԱՎԵԼՎԱԾ I

ԽԿԿ-Ի ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Համագործակցությունը

Առաջարկություններ

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է, մանրամասն գործողությունների ծրագրերի հիման վրա, ձեռնարկել արդյունավետ քայլեր՝ բարելավելու իրավիճակը՝ հաշվի առնելով Կոմիտեի առաջարկությունները եւ Կոնվենցիայի հիմքում ընկած համագործակցության սկզբունքին համապատասխան (6-րդ պարբերություն):

Տեղեկատվություն ստանալու համար հարցումներ

- ներկայացնել թարմ տեղեկություններ «Կանխարգելման ազգային մեխանիզմի» աշխատանքներում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին ներգրավելու ուղղությամբ ձեռնարկված քայլերի վերաբերյալ՝ մասնավորապես խոշտանգումների կանխարգելման խորհուրդ ստեղծելու միջոցով (8-րդ պարբերություն):

Ոստիկանության հիմնարկները

Նախնական դիտարկումները

Առաջարկություններ

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է քայլեր ձեռնարկել՝ ապահովելու համար, որ ձերբակալման մասին արձանագրությունը կազմվի արգելանքի վերցնելուց հետո անհապաղ: Ավելին, անհրաժեշտ է նաեւ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համար, որ ձերբակալման մասին արձանագրության մեջ նշվի արգելանքի վերցնելու եւ ոստիկանության

հիմնարկ ընդունելու ժամը (ի հավելումն ձերբակալման մասին արձանագրության կազմումը սկսելու ժամի) (9-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է ապահովել, որ կալանավորված անձինք հնարավորինս արագորեն տեղափոխվեն քրեակատարողական հիմնարկ (10-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է, որ նրանք ոստիկանության բոլոր ծառայողներին հստակ զգուշացնեն, այդ թվում՝ մշտական վերապատրաստման միջոցով, որ նրանք, ովքեր կչարաշահեն իրենց դիրքը ազատությունից զրկված անձանցից կամ նրանց հարազատներից դրամ ստանալու նպատակով, կենթարկվեն քրեական հետապնդման: Ընդհանուր առմամբ, այս առնչությամբ հղում է կատարվում Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խմբի (ԳՐԵԿՈ) ներկայացրած առաջարկություններին (11-րդ պարբերություն):

Դիտարկումներ

- կալանավորված անձանց քրեակատարողական հիմնարկ տեղափոխելուց հետո ոստիկանության կողմից հետագա հարցաքննությունները, որոնց անհրաժեշտությունը կարող է առաջանալ, պետք է հնարավորինս իրականացվեն քրեակատարողական հիմնարկներում (10-րդ պարբերություն):

Խոշտանգումները եւ դաժան վերաբերմունքի այլ դրսեւորումներ

Առաջարկություններ

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է պարբերաբար ոստիկանության բոլոր ծառայողներին հստակ զգուշացնել վատ վերաբերմունքի «բացարձակ անհանդուրժելիության» մասին՝ ամենաբարձր մակարդակով ընդունված համապատասխան հայտարարությունների միջոցով: Որպես այդ զգուշացման մի մաս՝ պետք է հստակորեն նշվի, որ ցանկացած տեսակի վատ վերաբերմունք ցուցաբերած, դրան օժանդակած եւ դրդած կամ այն հանդուրժած ոստիկանության ցանկացած ծառայող խստորեն պատժվելու է: Բացի դրանից՝ ոստիկանության

աշխատակիցներին անհրաժեշտ է հիշեցնել, որ խիստ անհրաժեշտ ուժից ավելի ուժ չպետք է կիրառվի արգելանքի վերցնելիս, եւ որ արգելանքի վերցված անձանց հսկողության տակ առնելուց հետո երբեք որեւէ արդարացում չի կարող լինել նրանց հարվածելու համար: Միեւնույն ժամանակ, անազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ մարդասիրական վերաբերմունքը պետք է խրախուսվի (14-րդ պարբերություն).

- էլեկտրահարող սարքերի կիրառումը պետք է վերանայել՝ հաշվի առնելով 16-րդ պարբերությունում ներկայացված դիտարկումները: Համապատասխան օրենքներում ու կանոնակարգերում պետք է կատարվեն անհրաժեշտ փոփոխություններ (16-րդ պարբերություն).

- ոստիկանության գործունեության ոլորտում բարեփոխումների հետագա ծրագրերն իրականացնելիս պետք է հաշվի առնել 18-րդ պարբերությունում ներկայացված նկատառումները, որոնք առնչվում են մասնագիտական վերապատրաստման դասընթացներում իրեղեն ապացույցների վրա հիմնված մոտեցմանը առանձնակի ուշադրություն դարձնելուն (18-րդ պարբերություն).

- անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ ոստիկանության կողմից հարցաքննություններին առնչվող վերապատրաստման դասընթացները, ընթացակարգերը եւ միջոցները վերանայելու համար՝ հաշվի առնելով 18-րդ պարբերությունում ներկայացված դիտողությունները (18-րդ պարբերություն):

<u>Դիտարկումներ</u>

- ԽԿԿ-ն հավատացած է, որ Եվրոպայի խորհրդի փորձագիտական եզրակացությունը հաշվի կառնվի այդ նոր մեխանիզմը մշակելիս, եւ որ կձեռնարկվեն վճռական գործողություններ, այդ թվում՝ համապատասխան ֆինանսավորման միջոցով, այդ մեխանիզմի անկախությունն ու անաչառությունը եւ որպես այդպիսին դրա ընկալումն ապահովելու համար: Քանի որ ոստիկանության հակահիրավական վարքագիծն իր մեջ կարող է պարունակել եւ՛ կարգապահական, եւ՛ քրեական իրավախախտումների տարրեր, պետք է խրախուսել սերտ համագործակցությունը քննչական մարմինների հետ (19-րդ պարբերություն):

Տեղեկատվություն ստանալու համար հարցումներ

- ներկայացնել ուժի եւ «հատուկ միջոցների» կիրառման մասով նոր մշակված չափորոշիչների վերաբերյալ համապատասխան իրավական դրույթների կամ հրահանգների պատճենը (15-րդ պարբերություն).

- 2009 եւ 2010 թվականների համար ներկայացնել հետեւյալ տեղեկությունները.

i) ոստիկանության ծառայողների կողմից «հատուկ միջոցների», մասնավորապես՝ էլեկտրահարող սարքերի կիրառման արձանագրված դեպքերի թիվը,

ii) իրավասու մարմիններին զեկուցված՝ նման միջոցների կիրառման հետեւանքով վնասվածքների եւ մահվան դեպքերի թիվը (16-րդ պարբերություն).

- ներկայացնել մանրամասն տեղեկություններ ոստիկանության հատուկ ուժերում ծառայողների նոր համազգեստները՝ նույնականացման համարներով, այդ թվում՝ ոստիկանության այն հատուկ ուժերի մասին, որոնց կտրվեն այդ համազգեստները (17-րդ պարբերություն):

Ոստիկանության կողմից հնարավոր վատ վերաբերմունքի հետ կապված գործերի քննությունը

Առաջարկություններ

- առաջարկվում է վերսկսել Քրիստափոր Էլազյանի գործի քննությունը (23-րդ պարբերություն).

- առաջարկվում է առավել մեծ ուշադրություն դարձնել հատուկ քննչական ծառայության (ՀՔԾ) կառուցվածքային անկախությանը եւ թափանցիկ ընթացակարգերի առկայությանը, որպեսզի հնարավոր լինի ամրապնդել հանրային վստահությունը (26-րդ պարբերություն).

- առաջարկվում է ապահովել, որ վատ վերաբերմունքի մասին հայտնող անձինք հնարավորություն ունենան դիմելու ՀՔԾ–ին ուղղակիորեն, գաղտնիության պահպանմամբ (26-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ բարձրագույն դատական ատյանների միջոցով եւ (կամ), անհրաժեշտության դեպքում, համապատասխան իրավական ակտերի ընդունմամբ դատավորներին հիշեցվի միջոցներ ձեռնարկելու իրենց պարտականության մասին այն դեպքերում, երբ նրանց մոտ բերվող անձը հաղորդում է ներկայացնում ոստիկանության կողմից բռնության ենթարկվելու մասին: Վատ վերաբերմունքի վերաբերյալ հստակ հաղորդման նույնիսկ բացակայության դեպքում, դատավորը պետք է ապահովի, որ դատաբժշկական քննության անցկացման պահանջ ներկայացվի այլ հիմքերի (օրինակ՝ տեսանելի վնասվածքների, անձի ընդհանուր տեսքի կամ վարքի) առկայության դեպքում, որոնք ցուցաբերված վատ վերաբերմունքի հավանականության մասին ենթադրելու տեղիք են տալիս (27-րդ պարբերություն):

<u>Տեղեկատվություն ստանալու համար հարցումներ</u>

- ներկայացնել համապարփակ տեղեկություններ Վահան Խալաֆյանի գործի արդյունքների մասին (22-րդ պարբերություն).

- ներկայացնել Հայաստանի իշխանությունների դիտարկումները 2008 թվականի մարտի 1-ի դեպքերի հետաքննության արդյունքների մասին (24-րդ պարբերություն).

- 2009 եւ 2010 թվականների համար ներկայացնել հետեւյալ տեղեկությունները.

  - ոստիկանների կողմից վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքների թիվը,
  - այդ բողոքների արդյունքում ՀՔԾ–ի կողմից հարուցված գործերի թիվը,
  - ամփոփագիր՝ նշանակված քրեական պատժամիջոցների մասին.

- ներկայացնել թարմացված տեղեկություններ իրավապահ մարմինների կողմից անազատության մեջ պահվող անձանց՝ վատ վերաբերմունքի մասին բողոքների վիճակագրական տվյալների կենտրոնացված բազա ձեւավորելու գործում արձանագրված առաջընթացի վերաբերյալ (26-րդ պարբերություն):

Ոստիկանության կողմից ցուցաբերվող վատ վերաբերմունքի դեմ ընթացակարգային երաշխիքները

Առաջարկություններ

- անազատության մեջ պահվող բոլոր անձինք ազատությունից փաստացի զրկվելու հենց առաջին իսկ պահից պետք է կարողանան արդյունավետ կերպով օգտվել անազատության մեջ պահելու մասին ծանուցելու իրավունքից: Բացի դրանից՝ անազատության մեջ պահելու մասին ծանուցելու իրավունքի իրականացումը ձգձգող ցանկացած հնարավորություն պետք է հստակ կերպով ամրագրվի օրենքում՝ պահպանելով համապատասխան երաշխիքները (օրինակ՝ ցանկացած հապաղում պետք է գրավոր արձանագրվի՝ նշելով դրա համար հիմք հանդիսացող պատճառները, եւ պարտադիր կերպով հաստատվի գործի հետ կապ չունեցող՝ ներկա գտնվող վերադաս ոստիկանի կամ դատախազի կողմից), եւ ունենա խիստ սահմանափակ ժամանակ (29-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է ապահովել պաշտպանի ծառայություններից օգտվելու՝ ազատությունից զրկված անձանց իրավունքի արդյունավետ իրականացումը ոստիկանության կողմից ազատությունից փաստացի զրկվելու հենց առաջին իսկ պահից: Անհրաժեշտության դեպքում, պետք է փոփոխություններ կատարվեն համապատասխան իրավական դրույթներում (30-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ ոստիկանական մարմին ներկայանալու ծանուցագիր ստացած անձինք համակարգված կերպով տեղեկացվեն ոստիկանությունում հարցաքննությունների ժամանակ իրենց հայեցողությամբ ընտրված պաշտպանի կողմից օգնություն ստանալու հնարավորության մասին (32-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները միջոցներ ձեռնարկեն, այդ թվում՝ հանդես գան օրենսդրական նախաձեռնությամբ, որպեսզի հստակորեն սահմանվի, որ՝

  - բժշկի ծառայություններից օգտվելու իրավունքն իրականացվում է ազատությունից փաստացիորեն զրկվելու պահից.
  - անազատության մեջ պահվող անձանց բժշկական զննությունը պետք է անցկացվի այնպես, որ ոստիկանության աշխատակիցների չկարողանան լսել եւ, եթե բժիշկը տվյալ դեպքում հստակորեն հակառակը չի պահանջում, չկարողանան տեսնել այն.

- յուրաքանչյուր զննության արդյունքները, ինչպես նաեւ անազատության մեջ պահվող անձի ցանկացած հայտարարություն եւ բժշկի եզրակացությունները պետք է պաշտոնապես արձանագրվեն բժշկի կողմից եւ հասանելի լինեն ձերբակալված անձին եւ, վերջինիս պահանջով, նրա պաշտպանին.
- եթե բժիշկը վնասվածքներ է արձանագրում, որոնք համարվում են հնարավոր վատ վերաբերմունքի հետեւանք, ապա արձանագրությունը պետք է համակարգված ձեւով ներկայացվի համապատասխան դատախազի ուշադրությանը (34-րդ պարբերություն).

- ցանկացած ժամանակ, երբ անազատության մեջ պահվող անձը ցույց է տալիս վնասվածքները եւ հայտարարում վատ վերաբերմունքի մասին, ապա նա անհապաղ պետք է բժշկական զննության ենթարկվի ճանաչված դատաբժշկական փորձով անկախ դատաբժշկի կողմից, որը պետք է եզրակացություն կազմի արված հայտարարությունների եւ բժշկական օբյեկտիվ արդյունքների համապատասխանության աստիճանի վերաբերյալ: Անազատության մեջ պահվող անձը պետք է հնարավորություն ունենա ենթարկվելու նման զննության առանց քննիչի, դատախազի կամ դատավորի նախնական թույլտվության (34-րդ պարբերություն).

- առաջարկվում է միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համար, որ բժշկական փաստաթղթերի հետ գործ ունենալիս պահպանվի խիստ գաղտնիություն: Ոստիկանության կողմից անազատության մեջ պահվող անձանց զննող բուժաշխատողները, բնականաբար, կարող են ծառայողական անհրաժեշտության սկզբունքով ոստիկաններին տեղեկացնել անազատության մեջ պահվող անձի առողջական վիճակի, այդ թվում՝ ընդունած դեղամիջոցների եւ առողջությանը սպառնացող կոնկրետ վտանգների մասին (34-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ ոստիկանության կողմից արգելանքի վերցված բոլոր անձանց համակարգված ձեւով բանավոր տեղեկություն տրվի իրենց իրավունքների մասին ազատությունից փաստացի զրկվելու հենց առաջին իսկ պահից: Ինչ վերաբերում է իրավունքների մասին ծանուցմանը, ապա այն համակարգված ձեւով պետք է տրվի անազատության մեջ պահվող բոլոր անձանց, հենց որ նրանք բերվում են ոստիկանության մարմին, եւ հասանելի լինի համապատասխան մի քանի լեզուներով (36-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է ապահովել, որ անազատության մեջ պահվող անձանց հաշվառման գրանցամատյանները վարվեն սահմանված կարգով, ճշգրիտ կերպով արձանագրվեն փաստացի արգելանքի վերցնելու, պահման վայր ընդունելու, խցում տեղավորելու, ազատ արձակելու կամ տեղափոխելու ժամանակը, եւ արտացոլեն անազատության մեջ պահելու հետ կապված բոլոր հարցերը (կոնկրետ վայրը, որտեղ պահվում է անազատության մեջ գտնվող անձը, պաշտպանի, հարազատի, բժշկի կամ հյուպատոսական հիմնարկի ներկայացուցչի հետ տեսակցությունները, հարցաքննության համար խցից դուրս բերվելը, ձերբակալված անձի հետ կապված ցանկացած դեպք եւ այլն) (37-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ իրավասու դատախազները եւ ոստիկանության վերադաս պաշտոնյաները վերահսկողություն իրականացնեն ոստիկանության մարմիններում վարվող՝ անազատության մեջ պահվող անձանց հաշվառման գրանցամատյանների ճշտության նկատմամբ (37-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ Հանրային մոնիթորինգի խմբի լիազորությունների շրջանակն ընդլայնվի այնպես, որ խմբի անդամները կարողանան մուտք գործել ոստիկանության ցանկացած տարածք, որտեղ անձինք կարող են, թեկուզ կարճ ժամանակով, զրկվել ազատությունից (38-րդ պարբերություն):

Դիտարկումներ

- Կոմիտեն կարեւոր է համարում, որ ձերբակալված անձանց պահելու վայրերում աշխատող բուժանձնակազմի անդամները որքան հնարավոր է ներգրավված լինեն համայնքային առողջապահական համակարգից (35-րդ պարբերություն):

Տեղեկատվություն ստանալու համար հարցումներ

- պարզաբանումներ ներկայացնել անազատության մեջ պահելու մասին ծանուցման վերաբերյալ կիրառելի իրավական դրույթների շուրջ (29-րդ պարբերություն).

- ներկայացնել թարմացված տեղեկություններ «Փաստաբանության մասին» օրենքի կիրարկումը բարելավելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերի մասին (31-րդ պարբերություն):

Անազատության մեջ պահելու պայմանները

Առաջարկություններ

- առաջարկվում է վերացնել 39-րդ պարբերությունում նշված այն թերությունները, որոնք առկա են ձերբակալված անձանց պահելու վայրերում (39-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ Երեւանի ոստիկանության քաղաքային վարչության ձերբակալված անձանց պահելու վայրում 24 ժամից ավելի ժամանակով պահվող բոլոր անձինք օրական առնվազն մեկ ժամ տեւողությամբ բացօթյա զբոսանքի հնարավորություն ունենան (39-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է անհապաղ քայլեր ձեռնարկել եւ ապահովել, որ պահման խցերում անազատության մեջ պահելու ժամանակը չգերազանցի երեք ժամը (40-րդ պարբերություն).

- առաջարկվում է անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համար, որ միջանցքները եւ աշխատասենյակները չօգտագործվեն որպես ձերբակալված անձանց պահելու համապատասխան վայրերը փոխարինող տարածքներ (40-րդ պարբերություն):

Ռազմական հիմնարկները

Նախնական դիտարկումները

Առաջարկություններ

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է ապահովել, որ կալանավորված անձինք հնարավորինս արագորեն տեղափոխվեն քրեակատարողական հիմնարկ (42-րդ պարբերություն):

Դիտարկումներ

- կալանավորված զինծառայողին ազատազրկման վայր տեղափոխելուց հետո նրա հարցաքննությունը ռազմական ոստիկանության աշխատակիցների կողմից պետք է հնարավորինս իրականացվեն քրեակատարողական հիմնարկներում (42-րդ պարբերություն):

Տեղեկատվություն ստանալու համար հարցումներ

- ներկայացնել թարմացված տեղեկություններ պլանավորվող փոփոխությունների եւ, մասնավորապես, կարգապահական վաշտ տեղափոխելու հետ կապված կարգապահական միջոցի փոփոխությունների վերաբերյալ: Կոմիտեն, մասնավորապես, կցանկանար տեղեկություններ ստանալ այն մասին, թե արդյոք այդ կարգով տեղափոխման ենթարկվող զինծառայողները որոշակի ժամանակահատվածներում գտնվելու են մեկուսացման վայրերում (43-րդ պարբերություն):

Վատ վերաբերմունքը

Տեղեկատվություն ստանալու համար հարցումներ

- 2009 եւ 2010 թվականների համար ներկայացնել հետեւյալ տեղեկությունները.

- ռազմական ոստիկանության ծառայողների կողմից վատ վերաբերմունքի դեմ բողոքների թիվը,
- այդ բողոքների հիման վրա հարուցված քրեական եւ կարգապահական գործերի թիվը,
- ամփոփագիր՝ նշանակված քրեական պատժամիջոցների մասին (44-րդ պարբերություն):

Երաշխիքները

Առաջարկություններ

- անազատության մեջ գտնվող բոլոր զինծառայողները պետք է ազատությունից փաստացի զրկվելու հենց առաջին իսկ պահից կարողանան արդյունավետ կերպով օգտվել

անազատության մեջ պահելու մասին ծանուցելու իրավունքից: Բացի դրանից՝ անազատության մեջ պահելու մասին ծանուցելու իրավունքի իրականացումը ձգձգող ցանկացած հնարավորություն պետք է հստակ կերպով ամրագրվի օրենքում՝ պահպանելով համապատասխան երաշխիքները (օրինակ՝ ցանկացած հապաղում պետք է գրավոր արձանագրվի՝ նշելով դրա համար հիմք հանդիսացող պատճառները, եւ պարտադիր կերպով հաստատվի գործի հետ կապ չունեցող՝ ներկա գտնվող վերադաս ոստիկանի կամ դատախազի կողմից), եւ ունենա խիստ սահմանափակ ժամանակ (45-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է ապահովել պաշտպանի ծառայություններից օգտվելու՝ ազատությունից զրկված բոլոր զինծառայողների իրավունքի արդյունավետ իրականացումը ազատությունից փաստացի զրկվելու հենց առաջին իսկ պահից (45-րդ պարբերություն):

Դիտարկումներ

- ԽԿԿ-ն հավատացած է, որ Հայաստանի իշխանությունները, հաշվի առնելով ներկայացված դիտողությունները եւ Զինված ուժերում մարդու իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)4 առաջարկությունը, իրավական եւ գործնական միջոցներ կձեռնարկեն՝ ապահովելու համար, որ կարգապահական վարույթներում ներգրավված զինծառայողներն օգտվեն համապատասխան բոլոր երաշխիքներից (46-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է էլ ավելի զարգացնել էլ ավելի զարգացնել մոնիթորինգ իրականացնող անկախ մարմինների կողմից ռազմական հաստատություններ այցելելու համակարգը (47-րդ պարբերություն):

Անազատության մեջ պահելու պայմանները

Առաջարկություններ

- առաջարկվում է ձեռնարկել միջոցներ, որպեսզի ազատությունից զրկված անձանց պատժախուց տեղափոխելը նրանց չզրկի ընտանիքի հետ կապ պահպանելու

հնարավորությունից Ավելին, ընտանիքի հետ հաղորդակցվելու ցանկացած սահմանափակում՝ որպես պատժի ձեւ պետք է կիրառվի միայն այն դեպքում, երբ նմանատիպ հաղորդակցման ժամանակ խախտում է թույլ տրվել (54-րդ պարբերություն).

- Երեւանի կայազորի ռազմական ոստիկանության բաժնի կարգապահական մեկուսարանում եւ Սեւանի կայազորի ռազմական ոստիկանության բաժնի՝ Մարտունիում գտնվող կարգապահական մեկուսարանում առաջարկվում է նվազեցնել ծանրաբեռնվածության մակարդակը՝ ընդհանուր խցերում ապահովելով առնվազն 4 քառակուսի մետր բնակելի տարածք անազատության մեջ պահվող մեկ անձի հաշվով (55-րդ պարբերություն).

- Սեւանի կայազորի ռազմական ոստիկանության բաժնի՝ Մարտունիում տեղակայված կարգապահական մեկուսարանի 4 քմ տարածք ունեցող խցերն առաջարկվում է ընդլայնել կամ հանել օգտագործումից (55-րդ պարբերություն).

- կարգապահական կալանքի ենթարկված բոլոր անձանց գիշերն ապահովել ներքնակներով, ծածկոցներով եւ բարձերով (55-րդ պարբերություն).

- բարելավել Երեւանի կայազորի ռազմական ոստիկանության բաժնի կարգապահական մեկուսարանի սանհանգույցի վերանորոգման եւ մաքրության վիճակը (55-րդ պարբերություն).

- կալանավորված կամ իրենց պատիժը կրող զինծառայողներին խցից դուրս որեւէ զբաղմունք ունենալու հնարավորություն տալ (55-րդ պարբերություն):

<u>Դիտարկումներ</u>

- ԽԿԿ-ի կարծիքով՝ պատժախցերում օրվա ընթացքում մահճակալները պատին ամրացնելը ոչ մի բանով հիմնավորված չէ: Ավելին, կարգապահական կալանքի տակ պահվող զինծառայողները պետք է հնարավորություն ունենան օրվա ընթացքում պառկելու մահճակալին, եթե դա անհրաժեշտ է՝ ելնելով նրանց առողջական վիճակից (53-րդ պարբերություն):

Ազգային անվտանգության ծառայության հիմնարկները

Վատ վերաբերմունքը

Առաջարկություններ

- ազգային անվտանգության ծառայության բոլոր աշխատակիցներին պետք է հստակ հասկացնել, որ անազատության մեջ պահվող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքն անընդունելի է եւ ենթակա է խիստ պատժամիջոցների կիրառման (56-րդ պարբերություն):

- առաջարկում է, որ Հայաստանի իշխանությունները միջոցներ ձեռնարկեն ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության կատարելագործման ուղղությամբ՝ հաշվի առնելով 57-րդ պարբերությունում ներկայացված դիտարկումները (57-րդ պարբերություն):

Դիտարկումներ

- II.Ա.4 բաժնում (Ոստիկանության կողմից ցուցաբերվող վատ վերաբերմունքի դեմ ընթացակարգային երաշխիքներ) արված առաջարկությունները հավասարապես վերաբերվում են նաեւ ազգային անվտանգության ծառայության կողմից ազատությունից զրկված անձանց (57-րդ պարբերություն):

Անազատության մեջ պահելու պայմանները

Առաջարկություններ

- անհրաժեշտ է շտկել ազգային անվտանգության ծառայության՝ Երեւանում տեղակայված ձերբակալված անձանց պահելու վայրում զբոսաբակի վերաբերյալ՝ 59-րդ պարբերությունում նշված թերությունները (59-րդ պարբերություն):

Քրեակատարողական հիմնարկները

Նախնական դիտարկումները

Առաջարկություններ

- Հայաստանի իշխանությունների կողմից ջանքերի կրկնապատկում՝ քրեակատարողական հիմնարկների գերբնակեցման դեմ պայքարելու ուղղությամբ եւ այդ կապակցությամբ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի համապատասխան բոլոր առաջարկություններին հետեւում (61-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանությունների կողմից ջանքերի գործադրում ինչպես դատապարտյալների, այնպես էլ կալանավորված անձանց համար զբաղվածության ծրագրեր մշակելու ուղղությամբ: Նպատակը պետք է լինի ապահովել, որ ազատությունից զրկված անձանց երկու կատեգորիաներն էլ կարողանան իրենց օրվա մի զգալի մասը (8 ժամ կամ ավելի) անցկացնել իրենց խցերից դուրս՝ ներգրավվելով տարբեր բնույթի նպատակային զբաղմունքներում (62-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանությունների կողմից առավել մեծ ջանքերի գործադրում քրեակատարողական համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հարցում: Ավելին, քրեակատարողական հիմնարկի ողջ անձնակազմը եւ քրեակատարողական համակարգի հետ առնչություն ունեցող պետական պաշտոնատար անձինք պետք է հստակ հրահանգավորվեն այն մասին, որ ազատությունից զրկված անձանցից կամ նրանց ազգականներից անհիմն օգուտ ստանալը կամ պահանջելն անընդունելի է. նրանք պետք է համապատասխան պարբերականությամբ եւ համապատասխան կերպով այդ առնչությամբ վերահրահանգավորվեն (63-րդ պարբերություն):

Դիտարկումներ

- ԽԿԿ–ն հավատացած է նաեւ, որ Հայաստանի իշխանությունների քրեակատարողական հիմնարկների կառուցման ծրագիրը կկազմի մարդասիրական քրեակատարողական համակարգ ստեղծելու ընդհանուր ռազմավարության մի մասը, որն ի հավելումն ֆիզիկական

ենթակառուցվածքների բարելավման, հասցեագրում է քրեակատարողական հիմնարկների կառավարման հետ կապված խնդիրները, քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց բաշխվածությունն իրենց տներին հնարավորինս մոտ գտնվող հաստատություններում եւ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց հասարակություն վերաինտեգրվելու հնարավորությունները (61-րդ պարբերություն):

Վատ վերաբերմունքը

Առաջարկություններ

- առաջարկվում է, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի անձնակազմին պարբերաբար հիշեցվի, որ քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքն անընդունելի է, եւ այդպիսի վերաբերմունքի դրսեւորումը խստորեն կպատժվի (64-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի ղեկավարությունը եւ վերահսկողություն իրականացնող դատախազները ուշադրությունը բեւեռեն լրացուցիչ զգոնություն ցուցաբերելու անհրաժեշտության վրա՝ ապահովելու համար, որ քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց նկատմամբ «հատուկ միջոցներ» կիրառելու բոլոր ատյանների վերաբերյալ համապատասխան գրառումներ կատարվեն, եւ որպեսզի «հատուկ միջոցները» երբեք որպես պատժամիջոցներ չկիրառվեն: Ավելին, անհրաժեշտ է վերստին նշել, որ քրեակատարողական հիմնարկում պահվող անձը, որի նկատմամբ կիրառվել են «հատուկ միջոցներ», պետք է ունենա անմիջապես բժշկական զննության ենթարկվելու կամ, անհրաժեշտության դեպքում, բուժանձնակազմից բուժում ստանալու իրավունք: Բժշկական զննության արդյունքները (այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից արված ցանկացած համապատասխան հայտարարություն եւ բուժանձնակազմի եզրակացությունները) պետք է պաշտոնապես գրառվեն եւ հասանելի լինեն քրեակատարողական հիմնարկում պահվող անձի համար, ով պետք է նաեւ ունենա դատաբժշկական փորձաքննություն անցնելու իրավունք (65–րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները ընդունեն քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց միջեւ ահաբեկման պրակտիկայի դեմ պայքարի ազգային

ռազմավարություն, այդ թվում՝ ձեռնարկեն այնպիսի քայլեր, որոնք վերջ կդնեն՝ քրեակատարողական հաստատություններում կարգուկանոն պահպանելու նպատակով քրեակատարողական հիմնարկի ոչ պաշտոնական աստիճանակարգման վրա հույսը դնելուն (68-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ «Կոշ» եւ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկների ղեկավարությունն ու անձնակազմը ձեռնարկեն իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցները՝ քրեակատարողական հիմնարկի ոչ պաշտոնական աստիճանակարգման բացասական ազդեցության եւ ազատությունից զրկված անձանց միջեւ ահաբեկման պրակտիկայի դեմ պայքարելու համար: Քրեակատարողական հիմնարկի ղեկավարությունը պետք է զգոն լինի այնքանով, որ բացառի անձնակազմի եւ «առաջնորդի» միջեւ բախումները, իսկ քրեակատարողական հիմնարկի անձնակազմը պետք է հատկապես արձագանքի անհանգստության նշաններին, հատուկ ուշադրություն դարձնի քրեակատարողական հիմնարկում պահվող մյուս անձանց կողմից քրեակատարողական հիմնարկում պահվող խոցելի անձանց նկատմամբ դրսեւորվող վերաբերմունքին, լինի եւ՛վճռական, եւ՛ պատշաճորեն պատրաստված՝ անհրաժեշտության դեպքում միջամտելու համար (68-րդ պարբերություն):

Ցմահ ազատազրկման դատապարտված անձինք

<u>Առաջարկություններ</u>

- առաջարկվում է վերացնել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց որոշ խցերում նկատված թերությունները (70–րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները մշակեն ցմահ ազատազրկման դատապարտված անձանց զբաղվածության ծրագիր (ներառյալ աշխատանքային, կրթական, շփման ու սպորտային, ինչպես նաեւ նպատակային վերականգնման ծրագրեր) (70-րդ եւ 71-րդ պարբերություններ).

- առաջարկվում է անհապաղ լուծել «Երեւան–Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում պահվող՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց խցերի ոչ

համապատասխան չափերի խնդիրը. կա՛մ խցերի մեծացում, կամ որ առավել նախընտրելի է՝ ազատությունից զրկված նշված երեք անձանց տեղափոխվեն այլ վայր (71-րդ պարբերություն.

- ինչ վերաբերում է հատկապես ցմահ ազատազրկման դատապարտված այն երկու անձանց, որոնք տարիներ շարունակ պահվել են մենախցի ռեժիմով, պետք է շտապ միջոցներ ձեռնարկվեն նրանց՝ քրեակատարողական հիմնարկում պահվող մյուս անձանց հետ շփումն ապահովելու ուղղությամբ (71-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին կոչ է արվում վերանայել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության ապահովման միջոցները՝ նշված դիտարկումների լույսի ներքո: Անհրաժեշտ է անհապաղ քայլեր ձեռնարկել՝ ապահովելու համար, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ նրանց խցերից դուրս բերելիս ձեռնաշղթաներ կիրառվեն բացառիկ դեպքերում՝ միշտ հենվելով ռիսկի գնահատման վրա՝ ելնելով կոնկրետ դեպքից (72-րդ պարբերություն).

- առաջարկվում է փոփոխել օրենսդրությունն այնպես, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց հնարավորություն ընձեռվի քրեակատարողական հիմնարկում պահվող մյուս անձանց հետ հավասար պայմաններով օգտվել տեսակցության հնարավորությունից (73-րդ եւ 124-րդ պարբերություն).

- որպես ընդհանուր կանոն՝ տեսակցությունները պետք է տեղի ունենան առանց բաժանարար միջնորմների (օրինակ՝ սեղանի շուրջ), այդ միջնորմների առկայությամբ տեսակցությունները պետք է բացառություններ կազմեն (73–րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է վերանայել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց մեկուսացմանը վերաբերող օրենսդրությունն ու պրակտիկան՝ ելնելով 74–րդ պարբերության դիտողություններից (74-րդ պարբերություն):

Տեղեկատվություն ստանալու համար հարցումներ

- Կոմիտեն կցանկանար հաստատում ստանալ այն մասին, որ քրեակատարողական հիմնարկում պահվող՝ ցմահ ազատազրկման դատապարտված նշված երկու անձանց խցերում տեղադրվել են հեռուստացույցներ (71-րդ պարբերություն):

Քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացիները

Առաջարկություններ

- առաջարկվում է ձեռնարկել հրատապ քայլեր՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում եւ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի փակ ռեժիմի պայմաններում նվազեցնելու օտարերկրացիների խցերի գերբնակեցումը՝ պահպանելու համար քրեակատարողական հիմնարկում պահվող յուրաքանչյուր անձի հաշվով առնվազն 4 քմ բնակելի տարածք ապահովելու մասին պետական չափորոշիչները (76–րդ պարբերություն).

- առաջարկվում է գործողություններ նախաձեռնել՝ մշակելու համար քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացիների զբաղվածության պատշաճ ծրագրեր (ներառյալ աշխատանք, կրթություն, սպորտ, մշակութային եւ հանգստի գործունեություն) «Նուբարաշեն» եւ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներում (77-րդ պարբերություն).

- առաջարկվում է քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացիներին տրամադրել իրենց հասկանալի լեզուներով ընթերցանության նյութեր, ինչպես նաեւ նրանց ապահովել լեզվի դասընթացներով, եւ միջոցներ ձեռնարկել՝ կրոնական արարողությունների անցկացման համար անհրաժեշտ տարածքների մատչելիության ուղղությամբ «Նուբարաշեն» եւ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներում (77-րդ պարբերություն).

- առաջարկվում է ձեռնարկել համապատասխան միջոցներ այն քրեակատարողական հիմնարկներում, որտեղ հաճախ պահվում են օտարերկրացիներ, ապահովելու համար անձնակազմի եւ քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացիների միջեւ դրական հարաբերությունները՝ ելնելով 78-րդ պարբերության դիտողություններից: Պետք է խրախուսվի անձնակազմի եւ քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացիների միջեւ հաղորդակցման ընդլայնումը (78-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է որդեգրել ճկուն մոտեցում՝ կապված տեսակցությունները հեռախոսազանգերով փոխարինելու հնարավորությունների հետ՝ հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկում պահվող այս կատեգորիայի անձանց հատուկ կարիքները (79-րդ պարբերություն):

Դիտարկումներ

- Հայաստանի իշխանություններին կոչ է արվում «Նուբարաշեն» եւ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներում սնունդ պատրաստելիս հաշվի առնել օտարերկրացիների հատուկ սննդակարգի կարիքների ապահովումը (76-րդ պարբերություն):

Քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց պահելու պայմանները

Առաջարկություններ

- կոչ է արվում Հայաստանի իշխանություններին ստորեւ նշված կետերը սահմանել որպես կարճաժամկետ նպատակներ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի համար.

- ազատությունից զրկված յուրաքանչյուր անձին իր մահճակալով ապահովելը,
- անխափան հոսանքամատակարարում ապահովելը,
- ջրամատակարարումը բարելավելը,
- լոգասենյակները վերանորոգելը եւ առնվազն շաբաթական մեկ անգամ լողանալու հնարավորությամբ ապահովելը,
- անազատության մեջ պահվող բոլոր անձանց օրական, այդ թվում՝ շաբաթ եւ կիրակի օրերին առնվազն մեկ ժամ բացօթյա զբոսանքով ապահովելը,

մինչդեռ ստորեւ նշված կետերը՝ որպես միջնաժամկետ նպատակներ.

- գերբնակեցումը նվազեցնելը՝ բազմատեղանոց խցերում ազատությունից զրկված յուրաքանչյուր անձին առնվազն 4 քմ բնակելի տարածք ապահովելու նպատակով,
- ազատությունից զրկված անձանց խցերը վերանորոգելը եւ դրանց օդափոխությունն ու սանիտարահիգիենիկ պայմանները բարելավելը,
- բոլոր կատեգորիաների ազատությունից զրկված անձանց՝ խցերից դուրս զբաղմունքով (աշխատանք, ժամանց (շփում), կրթություն, սպորտ) ապահովելը (83-րդ պարբերություն).

- կոչ է արվում Հայաստանի իշխանություններին «Կոշ» քրեակատարողական հիմնարկում վերանորոգել զուգարանն ու լոգասենյակը եւ ապահովել, որ ազատությունից զրկված անձանց տրվող սննդի որակն ու քանակը համապատասխանի սննդի պետական չափորոշիչներին (90-րդ պարբերություն).

- առաջարկվում է քայլեր ձեռնարկել «Կոշ» քրեակատարողական հիմնարկում մեծ կացարանները փոքր խցերի վերածելու ուղղությամբ, որը ազատությունից զրկված անձանց կտա առանձնության ավելի մեծ հնարավորություն, իսկ անձնակազմին՝ հսկողություն իրականացնելու ավելի մեծ հնարավորություններ, ինչպես նաեւ նվազեցնել կացարանում պահվող անձանց թիվը՝ պահպանելով ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի հաշվով 4 քմ բնակելի տարածք ապահովելու իրավական պահանջը (90-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է մշակել զբաղվածության ծրագրեր «Կոշ» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձանց համար, մասնավորապես, կրթական կամ մասնագիտական ուսուցման ծրագրեր եւ ավելացնել ազատությունից զրկված անձանց զբաղվածության հնարավորությունները: Ավելին, անհրաժեշտ է մշակել նաեւ ժամանցային, ինչպես նաեւ կազմակերպված սպորտային ծրագրեր (հեռուստացույց, գրքերի, թերթերի տրամադրում, սպորտային միջոցառումների կազմակերպում) (91-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանություններին անհապաղ միջոցներ ձեռնարկեն՝ «Կոշ» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված «համասեռամոլ» անձանց համար ապահովելու միեւնույն նյութակենցաղային պայմանները եւ զբաղվածության ծրագրերը,

ինչ անազատության մեջ պահվող մյուս անձանց համար: Ավելին, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ազատությունից զրկված «համասեռամոլ» անձանց շաբաթական գոնե մեկ հանգստյան օր տրամադրելու եւ կրթություն ստանալու ու այլ գործունեությամբ զբաղվելու համար բավարար ժամանակ տրամադրելու ուղղությամբ (92-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է ջանքեր գործադրել «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի խցերում պահվող անձանց թիվը նվազեցնելու ուղղությամբ՝ պահպանելով ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի հաշվով 4 քմ բնակելի տարածք ապահովելու պետական չափորոշիչը (94-րդ պարբերություն).

- առաջարկվում է գործողություններ ձեռնարկել «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ պահվող տարբեր կատեգորիայի անձանց համար զբաղվածության համապատասխան ծրագրեր մշակելու ուղղությամբ (ներառյալ աշխատանքային, կրթական, սպորտային, մշակութային եւ ժամանցային ծրագրեր) (96-րդ պարբերություն):

<u>Դիտարկումներ</u>

- Հայաստանի իշխանություններին կոչ է արվում, որպես միջնաժամկետ նպատակ, ավելացնել անազատության մեջ պահվող անձի լոգանք ընդունելու հաճախականությունը՝ հիմք ընդունելով Եվրոպական բանտային կանոնների 19.4 կանոնը (83-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին կոչ է արվում «Կոշ» եւ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում ավելացնել անազատության մեջ պահվող անձանց՝ ցնցուղ ընդունելու հաճախականությունը՝ հիմք ընդունելով Եվրոպական բանտային կանոների 19.4 կանոնը (90–րդ եւ 94-րդ պարբերություն).

- Կոմիտեն կցանկանար նաեւ ընդգծել, որ ազատությունից զրկված անձանց պահելու պատշաճ պայմաններ ապահովելու պարտականությունը դրված էր քրեակատարողական հիմնարկի վարչակազմի վրա: Եթե ազատությունից զրկված որոշ անձանց իշխանություն տրվի օգտագործելու իրենց գումարները, ապա սա կարող է շատ արագ թուլացնել քրեակատարողական հիմնարկի վարչակազմի դիրքերը տվյալ հաստատությունում (90-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է ստեղծել անհատականացված զբաղվածության ծրագրեր, որտեղ ներգրավված կլինեն թե՛ հոգեբանական աջակցություն ցուցաբերող մասնագիտացված անձնակազմը եւ թե՛ քրեակատարողական հիմնարկի անձնակազմը, «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ պահվող ցանկացած անձի համար, ով երկար ժամանակ պահվել է անջատ՝ իր իսկ անվտանգությունն ապահովելու նկատառումներից ելնելով (97-րդ պարբերություն):

Տեղեկատվություն ստանալու համար հարցումներ

- տրամադրել առավել մանրամասներ «Նուբարաշենե քրեակատարողական հիմնարկը փակելու եւ Երեւանում նոր քրեակատարողական հիմնարկ կառուցելու մասին (84-րդ պարբերություն):

Առողջապահությունը

Առաջարկություններ

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է համապատասխան գործողություններ ձեռնարկել «Նուբարաշեն», «Կոշ» եւ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկների բուժանձնակազմը բուժակներով եւ (կամ) բուժքույրերով համալրելու ուղղությամբ եւ, մասնավորապես.

- «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկը համալրել առնվազն երկու բուժակով (բուժքույրով),
- համալրել «Կոշ» քրեակատարողական հիմնարկի բուժակների թափուր հաստիքները,
- ապահովել, որ առաջին օգնություն ցուցաբերելու որակավորում ունեցող անձը, ցանկալի է, որ ունենա բուժքրոջ ճանաչված որակավորում, եւ «Կոշ» ու «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներում հերթապահի շուրջօրյա, այդ թվում՝ շաբաթ եւ կիրակի օրերին (102-րդ պարբերություն).

- անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ անհապաղ ապահովելու համար, որ ատամնաբույժը պարբերաբար այցելի «Կոշ» քրեակատարողական հիմնարկ (102-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանություններն ապահովեն հիվանդանոցային բուժման կարիք ունեցող՝ ազատությունից զրկված անձանց արագ տեղափոխումը համապատասխան բուժկետեր: Անհրաժեշտության դեպքում, պետք է վերանայել որոշումների ընդունման գործընթացը (104-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին կոչ է արվում քրեակատարողական հիմնարկներն ապահովել անհրաժեշտ դեղորայքով (105-րդ պարբերություն).

- մանրամասն ցուցումներ տալ բուժանձնակազմին՝ ազատությունից զրկված անձանց բժշկական զննության ենթարկելու առնչությամբ: Մասնավորապես.

  - քրեակատարողական հիմնարկ փոխադրվելուն պես՝ բժշկական զննության առնչությամբ,
  - դրանք երբեք չպետք է իրականացվեն ոստիկանության ուղեկցող անձնակազմի ներկայությամբ,
  - եթե անձը վնասվածքներ է ստացել հնարավոր վատ վերաբերմունքի պատճառով, դրա մասին միշտ պետք է անհապաղ ծանուցվի համապատասխան դատախազին, եւ նրան փոխանցվի վնասվածքների մասին զեկույցը: Անազատության մեջ պահվող անձը եւ նրա պաշտպանը նույնպես պետք է իրավունք ունենան միաժամանակ ստանալու տվյալ զեկույցի պատճենը.

ii) ամեն տեսակի բժշկական զննության առնչությամբ (անկախ այն հանգամանքից, թե դրանք իրականացվում են քրեակատարողական հիմնարկ փոխադրվելիս, թե հիմնարկում տեղի ունեցած բռնության հետեւանքով)՝

- ազատությունից զրկված անձանց բժշկական զննությունը պետք է իրականացվի քրեակատարողական հիմնարկի բուժանձնակազմի անդամ չհանդիսացող անձանց լսողության, իսկ մինչեւ համապատասխան բուժաշխատողի կողմից հակառակը չպահանջելը՝ նաեւ տեսողության սահմաններից դուրս.
- դրանք պետք է լինեն համապարփակ՝ ներառելով վնասվածքների համապատասխան զննությունը.

- Նման զննության ընթացքում ազատությունից զրկված համապատասխան անձի կողմից արված հայտարարությունները, բժշկական զննության օբյեկտիվ արդյունքները եւ բժշկական եզրակացությունները չպետք է հասանելի լինեն քրեակատարողական հիմնարկի բուժանձնակազմի անդամ չհանդիսացող անձանց համար (ազատությունից զրկված անձանց զննող բուժանձնակազմը կարող է, ըստ անհրաժեշտության, տեղեկացնել քրեակատարողական հիմնարկի անձնակազմին քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ պահվող անձանց առողջական վիճակի, այդ թվում՝ անցկացվող բուժման եւ առողջությանը սպառնացող կոնկրետ վտանգների մասին) (107-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է խթանել դատապարտյալներին հոգեբուժական օգնության ցուցաբերումը՝ մասնավորապես ապահովելով «Կոշ» եւ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ հոգեբույժների պարբերաբար այցերը: Ավելին, ինչ վերաբերում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում «հոգեբույժի հսկողության տակ գտնվող» դատապարտյալներին, Կոմիտեն պետք է կրկին ընդգծի այն, որ խոցելի վիճակում գտնվող դատապարտյալները երբեք չպետք է պահվեն այնպիսի կենսապայմաններում, որոնք զիջում են մյուս դատապարտյալներին պահելու նորմալ պայմաններին: Ավելին, հոգեկան խանգարում ունեցող դատապարտյալները, որոնք ստացիոնար հոգեբուժական բուժման կարիք ունեն, պետք է անհապաղ տեղափոխվեն անհրաժեշտ սարքավորումներ եւ համապատասխան վերապատրաստում անցած անձնակազմ ունեցող բուժկետեր (109-րդ պարբերություն).

- Երեւանի «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ–ի հոգեբուժական բաժանմունքում քայլեր պետք է ձեռնարկվեն.

  - նվազեցնելու հոգեբուժական բաժանմունքի սենյակների ծանրաբեռնվածության աստիճանը՝ մասնավորապես օգտագործելով սոմատիկ հիվանդներով զբաղեցրած սենյակները (այս կապակցությամբ տե՛ս 112–րդ պարբերությունը),
  - վերանորոգման կարիք ունեցող սենյակները վերականգնել եւ տեղադրել պատուհանների բացակայող ապակիները,
  - վերանորոգել սանհանգույցը,

- տեղադրել ջեռուցման արդյունավետ համակարգ,
- աջակցել հիվանդներին անձնական հիգիենան պահպանելու հարցում (113-րդ պարբերություն).

- անհրաժեշտ է բարելավել հոգեբուժական բաժանմունքում պահվող հիվանդների բուժումը, որի նպատակն է առաջարկել մի շարք բուժական եւ վերականգնողական աշխատանքներ, այդ թվում՝ աշխատանքային թերապիա, խմբակային եւ անհատական հոգեթերապիա եւ հնարավոր կրթական գործունեություն ու համապատասխան աշխատանք: Դրա համար պահանջվում է բաժանմունքում տեղադրել համապատասխան սարքավորումներ եւ կազմել բուժման անհատական պլաններ (114-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է քայլեր ձեռնարկել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ–ի հոգեբուժական բաժանմունքում թերապեւտիկ եւ վերականգնողական ծառայություններ մատուցելու նպատակով որակավորված մասնագետների, ինչպես օրինակ՝ հոգեբանների, աշխատանքային թերապիայի գծով մասնագետների կանոնավոր հերթապահության ապահովման ուղղությամբ: Բացի դրանից՝ անհրաժեշտ է ջանքեր գործադրել բաժանմունքի կտրվածքով բուժակների (բուժքույրերի) թիվն ավելացնելու եւ սանիտարների թափուր հաստիքները համալրելու ուղղությամբ (115-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները դադարեցնեն ինքնասպանությանն առանձնապես հակված՝ անազատության մեջ պահվող անձանց նկատմամբ կիրառվող պրակտիկան եւ այս դիտարկումների լույսի ներքո քրեակատարողական հիմնարկում ներդնեն ինքնասպանության կանխման համապատասխան ընթացակարգեր (117-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է 118-րդ պարբերության դիտողությունների լույսի ներքո վերանայել հացադուլ հայտարարած՝ ազատությունից զրկված անձանց ղեկավարման իրենց քաղաքականությունը (118-րդ պարբերություն):

Դիտարկումներ

- ԽԿԿ–ն հավատացած է, որ Հայաստանի իշխանությունները ջանք չեն խնայի՝ քրեակատարողական հիմնարկներում տուբերկուլոզի դեմ պայքարելու համար (108-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները բարելավեն քրեակատարողական հիմնարկում հոգեբանական աջակցության տրամադրումը եւ բարձրացնեն քրեակատարողական հիմնարկի հոգեբանների դերը, հատկապես՝ պոտենցիալ խոցելի վիճակում գտնվող՝ անազատության մեջ պահվող տարբեր կատեգորիայի անձանց հետ բուժական աշխատանքներ տանելու առումով (111-րդ պարբերություն):

Տեղեկատվություն ստանալու համար հարցումներ

- տրամադրել հաստատում այն մասին, որ ախտահանիչ սարք է տրամադրվել «Նուբարաշեն», «Կոշ» եւ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներին (103-րդ պարբերություն).

- ներկայացնել Հայաստանի իշխանությունների մեկնաբանությունները, որ բուժկետերում պահվում էին ազատությունից զրկված մի քանի անձինք, որոնք չունեին այնպիսի առողջական խնդիրներ, որոնք կպահանջեին նրանց պահել քրեակատարողական հիմնարկի բուժկետերում (103–րդ պարբերություն).

- տրամադրել վերջին չորս տարիների ընթացքում քրեակատարողական հիմնարկում տուբերկուլոզով (այդ թվում՝ տուբերկուլոզի բազմադեղորայքակայուն տեսակներով) հիվանդացության եւ մահացության դեպքերի վիճակագրական տվյալներ.

- ներկայացնել հոգեբուժական հետազոտությունների եզրակացությունների պատճենները՝ 110-րդ պարբերության մեջ նշված «Երեւան–Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում պահվող՝ ցմահ ազատազրկման դատապարտված երկու անձանց համար (110-րդ պարբերություն).

- ներկայացնել տեղեկատվություն, թե ուր են տեղափոխվել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ–ի հոգեբուժական բաժանմունքի սոմատիկ հիվանդները (112-րդ պարբերություն).

- ներկայացնել հաստատում այն մասին, որ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ–ի հոգեբուժական բաժանմունքում ստեղծվել է նման գրանցամատյան (116–րդ պարբերություն):

ԽԿԿ-ի մանդատին առնչվող այլ հարցեր

Առաջարկություններ

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները, այցելած քրեակատարողական հիմնարկներում արված դիտարկումների լույսի ներքո, քայլեր ձեռնարկեն անձնակազմի համալրվածության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ եւ փոխեն անձնակազմի անդամների այցերի կատարման համակարգը: Ձեռնարկվելիք միջոցները պետք է հիմնված լինեն նաեւ ազատությունից զրկված բոլոր կատեգորիայի անձանց լիարժեք զբաղվածությունը (այդ թվում՝ ամենօրյա բացօթյա զբոսանքը) ապահովելու պահանջի վրա (119-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է վերանայել պատժախուց տեղափոխելու կարգը՝ ապահովելու համար, որ ազատությունից զրկված համապատասխան անձինք (i) գրավոր տեղեկացվեն իրենց դեմ ներկայացվող մեղադրանքների մասին, (ii) բավականաչափ ժամանակ ունենան իրենց պաշտպանությանը պատրաստվելու համար, (iii) ունենան անձամբ լսվելու եւ իրենց անունից վկաներ հրավիրելու եւ իրենց դեմ տրված վկայության առնչությամբ խաչաձեւ հարցաքննությանը մասնակցելու իրավունք եւ (iv) ստանան այն որոշման պատճենը, որտեղ նշվում են պատժախուց տեղափոխելու հիմքերը, եւ որտեղ ներկայացված են իրենց իրավունքների, այդ թվում՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի եւ անկախ մարմնում որոշումը բողոքարկելու միջոցների մասին հստակ տեղեկություններ (121-րդ պարբերություն).

- անհրաժեշտ է վերանայել կարգապահական հարցերում բուժանձնակազմի դերակատարմանը վերաբերող՝ գործող իրավական կարգավորումներն ու պրակտիկան (121-րդ պարբերություն).

– անհրաժեշտ է վերացնել «Կոշ» քրեակատարողական հիմնարկի պատժախցում արձանագրված թերությունները (122-րդ պարբերություն).

- անհրաժեշտ է ապահովել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պատժախցերում պահվող՝ ազատությունից զրկված անձանց համար ամեն օր առնվազն մեկժամյա բացօթյա զբոսանք (123-րդ պարբերություն).

- անհրաժեշտ է փոփոխություններ կատարել համապատասխան կանոնակարգերում՝ ապահովելու համար, ազատությունից զրկված անձինք հնարավորություն ունենան օգտվելու ընթերցանության համար անհրաժեշտ նյութերից (123-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները ձեռնարկեն այնպիսի միջոցներ, որպեսզի ազատությունից զրկված անձանց պատժախուց տեղափոխելը նրանց չզրկի ընտանիքի հետ կապ պահպանելու հնարավորությունից: Ավելին, ընտանիքի հետ հաղորդակցվելու ցանկացած սահմանափակում՝ որպես պատժի ձեւ, պետք է կիրառվի միայն այն դեպքում, երբ նմանատիպ հաղորդակցման ժամանակ խախտում է թույլ տրվել (123-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ քայլեր ձեռնարկվեն, որպեսզի տեսակցությունների հարցի կարգավորումը լինի քրեակատարողական հիմնարկի վարչակազմի բացառիկ իրավասությունը (124-րդ պարբերություն).

- բարելավել հեռախոսակապից օգտվելու հնարավորությունը «Կոշ» քրեակատարողական հիմնարկում (125-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է արդյունավետ քայլեր ձեռնարկել՝ ապահովելու համար, որ կալանավորված անձանց տեսակցություններ ունենալու եւ հեռախոսակապից օգտվելու իրավունքն անհիմն կերպով չսահմանափակվի: Տեսակցությունների ցանկացած սահմանափակում պետք է հիմնավորվի քննության պատշաճ ընթացքի կամ անվտանգության ապահովման նկատառումներից ելնելով, որի համար պետք է պահանջվի դատական մարմնի հաստատումը եւ պետք է կիրառվի սահմանված ժամկետում՝ նշելով դրա հիմքերը: Ավելին, ցանկացած որոշում, որով արգելվում կամ սահմանափակվում է կոնկրետ կալանավորված անձի՝ հեռախոսակապից օգտվելու հնարավորությունը, պետք է հիմնվի բախման, ահաբեկման կամ այլ ապօրինի գործունեության հիմնավորված ռիսկի վրա,

եւ որը պետք է կիրառվի որոշակի ժամկետում: Հարկ եղած դեպքում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել համապատասխան իրավական դաշտում (126-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանություններն ապահովեն ազատությունից զրկված անձանց՝ բողոք ներկայացնելու իրավունքի լրիվ արդյունավետությունը՝ երաշխավորելով, մասնավորապես, բողոք ներկայացնող անձանց նկատմամբ հաշվեհարդարի բացառումը: Այս համատեքստում, բողոք ներկայացնելու ընթացակարգը պետք է վերանայվի՝ ապահովելու համար ազատությունից զրկված անձանց՝ բողոքների քննություն եւ հսկողություն իրականացնող մարմինների (այդ թվում՝ ԽԿԿ–ին) հետ ունեցած նամակագրության գաղտնիությունը (127-րդ պարբերություն):

Դիտարկումներ

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է ավելացնել տեսակցությունների թիվը եւ՛ կալանավորված անձանց, եւ՛ դատապարտյալների համար՝ նրանց կողմից ավելի հաճախ տեսակցություններ ունենալու իրավունքն (օրինակ՝ մեկ շաբաթվա ընթացքում մեկ կարճատեւ տեսակցություն, ինչպես նաեւ տեսակցություններ կուտակելու հնարավորություն այն ժամանակահատվածների համար, երբ տեսակցություններ տեղի չեն ունենում) ապահովելու համար (124-րդ պարբերություն).

- ԽԿԿ–ն կցանկանար ընդգծել, որ քրեակատարողական հիմնարկի անձնակազմի կողմից ազատությունից զրկված անձանց՝ Կոմիտեին հասցեագրված նամակների բովանդակությանը ծանոթանալու ցանկացած գործողություն կդիտարկվի որպես Կոնվենցիայի 3–րդ հոդվածով սահմանված համագործակցության սկզբունքի խախտում (127-րդ պարբերություն).

- ԽԿԿ–ն հավատացած է, որ Հայաստանի իշխանությունները կշարունակեն խթանել քրեակատարողական հաստատությունների անկախ դիտանցումը (128–րդ պարբերությունը):

Տեղեկատվություն ստանալու համար հարցումներ

- պարզաբանումներ, թե արդյոք հնարավոր է դատապարտյալներին պատժախցում պահելը սահմանափակել 20 օրով, երբ կարգապահական կալանքի ընթացքում թույլ է տրվում կարգապահական նոր խախտում (120-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանությունների մեկնաբանություններն այն դեպքերի առնչությամբ, երբ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկվում պահվող ազատությունից զրկված անձանց տեղափոխում էին «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի պատժախցեր՝ չնայած, որ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի՝ ընդունելու համար նախատեսված խցերը զբաղեցված չէին (122-րդ պարբերություն).

- մանրամասն տեղեկատվություն «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պատժախցերում վերանորոգման աշխատանքների մասին (122-րդ պարբերություն):

Հոգեբուժական հիմնարկները

Հիվանդների կենսապայմանները

Առաջարկություններ

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է.

  - հիվանդների համար ստեղծել առավել հաճելի ու անհատական մոտեցում ապահովող միջավայր եւ նրանց հատկացնել անհատական փակվող տեղեր՝ անձնական պարագաների համար,
  - ստեղծել պատշաճ հանգստասենյակներ, որոնք բավարար կլինեն պահվող հիվանդների թվի համար (134-րդ պարբերություն).

- նվազեցնել Երեւանի «Նորք» հոգեկան առողջության կենտրոնի հիվանդասենյակների եւ, մասնավորապես, 3-րդ բաժանմունքի, ծանրաբեռնվածության մակարդակը եւ միջանցքում հիվանդ չպահել (135-րդ պարբերություն).

- Հայաստանի իշխանություններին առաջարկվում է.

  - հիվանդների համար ստեղծել առավել ջերմ ու անհատական մոտեցում ապահովող միջավայր, եւ հատկացնել նրանց անհատական փակվող տեղեր՝ անձնական պարագաների համար,
  - ստեղծել պատշաճ հանգստասենյակներ, որոնք բավարար կլինեն պահվող հիվանդների թվի համար (135-րդ պարբերություն):

Դիտարկումներ

- ԽԿԿ–ն հավատացած է, որ Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հատուկ հսկվող բաժանմունքների առաջին հարկի (նախկին 5-րդ բաժանմունք) վերանորոգումը հնարավորություն կտա վերակազմակերպել հիվանդներին պահելու տարածքները՝ նվազեցնելով կացարաններում ծանրաբեռնվածության մակարդակը եւ բաժանմունքներում հստակ առանձնացված տարածք հատկացնելով կանանց (134-րդ պարբերություն).

- հաշվի առնելով դեռահասների խոցելիությունն ու հատուկ կարիքները՝ նրանց պետք է տրամադրվեն պատշաճ կերպով պաշտպանված սենյակներ՝ տվյալ բաժանմունքի հստակ առանձնացված հատվածներում: Բնականաբար, սա չպետք է խոչընդոտի անչափահասներին մասնակցելու հոգեսոցիալական վերականգնման եւ ժամանցային միջոցառումներին չափահասների հետ, ինչը պետք է պատշաճ կերպով հսկվի անձնակազմի կողմից (136–րդ պարբերություն):

Անձնակազմը

Առաջարկություններ

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հատուկ հսկվող բաժանմունքներում ձեռնարկեն քայլեր.

- 7-րդ բաժանմունքում հոգեբույժների, բուժքույրերի եւ սանիտարների թիվը ավելացնելու ուղղությամբ,

- միջին բուժանձնակազմի համար հոգեբուժության բնագավառում, այդ թվում՝ հիվանդների իրավունքների վերաբերյալ մասնագիտացված (նախնական եւ ընթացիկ) վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ,

- վճարովի հիմունքներով ներգրավվելու մասնագետներ, ովքեր մասնագիտացած են թերապեւտիկ եւ հոգեսոցիալական վերականգնման միջոցառումներ կազմակերպելու մեջ (օրինակ՝ հոգեբաններ, էրգոթերապեւտներ, հոգեթերապեւտներ եւ սոցիալական ծառայությունների աշխատողներ) (138-րդ պարբերություն):

Բուժումը

<u>Առաջարկություններ</u>

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները պետք է փորձեն Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում զարգացնել թերապեւտիկ եւ հոգեսոցիալական վերականգնման միջոցառումների հնարավորությունները: «Նորք» հոգեկան առողջության կենտրոնում պետք է ջանքեր գործադրվեն՝ թերապեւտիկ ուղղվածության միջոցառումների ծավալն ընդլայնելու եւ հոգեսոցիալական վերականգնողական միջոցառումներին ավելի շատ հիվանդներ ներգրավվելու ուղղությամբ՝ անկախ կյանքին եւ ընտանիքներ վերադառնալուն նրանց նախապատրաստելու նպատակով: Հաստատություններում պահվող յուրաքանչյուր անչափահասի համար պետք է իրականացվեն հատուկ ծրագրեր՝ ներառյալ կրթական, որոնք կհամապատասխանեն հոգեկան խանգարումներով տառապող անչափահասների կարիքներին (141–րդ պարբերություն).

- երկու հաստատությունում էրգոթերապիան պետք է լինի վերականգնողական ծրագրի բաղկացուցիչ մաս՝ հիվանդների մոտ ձեւավորելով նպատակասլացություն, ապահովելով ուսումնական եւ մարդկանց հետ շփվելու ունակությունների զարգացում, հատուկ կարողությունների ձեռքբերում ու բարձրացված ինքնագնահատականի ձեւավորում (141–րդ պարբերություն).

- պետք է ձեռնարկվեն քայլեր՝ յուրաքանչյուր հիվանդի համար բուժման անհատական պլաններ կազմելու ուղղությամբ, որոնք կընդգրկեն դեղորայքային թերապիա եւ տարատեսակ վերականգնողական ու թերապեւտիկ միջոցառումներ, ներառյալ բուժման նպատակները,

օգտագործվող թերապեւտիկ միջոցներն ու անձնակազմի պատասխանատու անդամները (141–րդ պարբերություն).

- պետք է ձեռնարկվեն քայլեր՝ ապահովելու համար, որ Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հատուկ հսկվող բաժանմունքներում եւ Երեւանի «Նորք» հոգեկան առողջության կենտրոնում պահվող բոլոր այն հիվանդները, ում առողջական վիճակը դա թույլ է տալիս, օրական մեկ ժամ բացօթյա զբոսանքի եւ մարմնամարզության հնարավորություն ունենան: Ավելին, հրատապ քայլեր պետք է ձեռնարկվեն՝ Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հիվանդների բացօթյա զբոսանքի պայմանները բարելավելու ուղղությամբ (142–րդ պարբերություն):

Դիտարկումներ

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները ուսումնասիրեն՝ հիվանդներին Երեւանի «Նորք» հոգեկան առողջության կենտրոնում հիվանդներին հաստատության տարածքը տարածքը լքելու իրավունք տալու հնարավորությունները եւ կանխել հոսպիտալացման բացասական հետեւանքները (143–րդ պարբերություն):

Զսպան միջոցները

Առաջարկություններ

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանություններն ապահովեն, որ հիվանդի նկատմամբ զսպման մեխանիկական մեթոդները չկիրառվեն մյուս հիվանդների ներկայությամբ, եթե տվյալ հիվանդն ուղղակի այլ բան չի պահանջում, կամ եթե հայտնի է, որ հիվանդը գերադասում է շրջապատված լինել մարդկանցով: Զսպման միջոցները պետք է հիվանդի նկատմամբ կիրառվեն հատուկ այդ նպատակի համար նախատեսված սենյակում, եւ զսպման միջոցները կիրառելու ժամանակ մյուս հիվանդները չպետք է օգնեն անձնակազմին: Զսպման միջոցը կիրառելուց անմիջապես հետո հիվանդի հետ պետք է անցկացվի զրույց (145-րդ պարբերություն):

Դիտարկումներ

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները ապահովեն, որ զսպման միջոցներ կիրառելու բոլոր դեպքերը պարբերաբար գրանցվեն այդ նպատակով պահվող նոր բժշկական մատյաններում (144-րդ պարբերություն):

Երաշխիքները

Առաջարկություններ

- առաջարկվում է, որ «դատական» հիվանդներին պարբերաբար տրամադրվեն տեղեկություններ հոգեբուժական հանձնաժողովի որոշման եւ դատարանի որոշման մասին (եւ նրանց տրամադրվեն այդ փաստաթղթերի պատճենները), ինչպես նաեւ այդ որոշումները վիճարկելու իրավական պաշտպանության հասանելի միջոցների մասին: Ավելին, նման հիվանդներին պետք է տրամադրվի իրավաբանական օգնություն (146-րդ պարբերությունը).

- պետք է ձեռնարկվեն քայլեր.

  - համապատասխան օրենսդրությամբ ոչ հոժարակամ հոսպիտալացման չափորոշիչները հստակեցնելու ուղղությամբ,
  - յուրաքանչյուր վեց ամիսը մեկ ոչ հոժարակամ հոսպիտալացման մասին որոշումների պարբերական վերանայումն ապահովելու ուղղությամբ (147-րդ պարբերությունը).

- պետք է ձեռնարկվեն քայլեր՝ ապահովելու համար, որ ՀՕՕ–ի՝ ոչ հոժարակամ հոսպիտալացման մասին դրույթները գործնականում ամբողջովին կիրառվեն: Դրա համար կպահանջվի համապատասխան բոլոր կառույցների եւ անձանց վերապատրաստումը (մասնավորապես բժշկական անձնակազմի, հիվանդանոցի ղեկավարության եւ դատավորների): Նոր օրենսդրության կիրառումը դիտանցելու նպատակով, պետք է ազգային եւ տվյալ հաստատության մակարդակով կազմվի վիճակագրություն ոչ հոժարակամ հոսպիտալացման վերաբերյալ (այդ տվյալները կարող են տարանջատվել՝ ըստ ախտորոշման, սեռի, հիվանդանոցի, բուժման տեւողության եւ այլն) (պարբերություն 148).

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները քայլեր ձեռնարկեն՝ թե՛ օրենքով, թե՛ գործնականում բուժօգնություն ստանալու հիվանդի համաձայնության սկզբունքը եւ առանց

համաձայնության բուժման վերոնշյալ պահանջները նախատեսելու ուղղությամբ (149–րդ պարբերություն).

- պետք է կազմվեն եւ հիվանդանոց ընդունելու պահին յուրաքանչյուր հիվանդին, ինչպես նաեւ նրանց ընտանիքներին/խնամակալներին տրամադրվեն հիվանդանոցային ռեժիմը եւ հիվանդների իրավունքները (ներառյալ բողոքներ ներկայացնելու միջոցների վերաբերյալ տեղեկատվություն) սահմանող ներածական բրոշյուրներ: Այն հիվանդները, ովքեր ի վիճակի չեն հասկանալու այս բրոշյուրը, պետք է ստանան համապատասխան օգնություն (151-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանություններն ավելի մատչելի դարձնեն հեռախոսակապը հոգեկան խանգարումներով տառապող անձանց համար (152-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները ներմուծեն գաղտնի հիմունքներով բողոքներ ներկայացնելու պաշտոնական համակարգ (որը կներառի բողոքների գրանցամատյան եւ բողոքարկման հնարավորություն): Այս համատեքստում, կարելի է ներմուծել բողոքների արկղի կիրառումը (անձնակազմի սահմանափակ հասանելիությամբ) (153-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները ձեւավորեն հոգեբուժական հիվանդանոցներ անկախ մարմինների կողմից պարբերաբար կատարվող այցելությունների համակարգ: Այս մարմինը պետք է իրավունք ունենա, մասնավորապես, առանձին զրուցելու հիվանդների հետ, ուսումնասիրելու նրանց կենսապայմաններին եւ բուժմանը վերաբերող բոլոր խնդիրները, անմիջականորեն ստանալու նրանց բողոքները եւ անելու անհրաժեշտ առաջարկություններ (154-րդ պարբերություն):

<u>Տեղեկատվություն ստանալու համար հարցումներ</u>

- հավելյալ տեղեկություններ հոգեկան խանգարումներով տառապող անձանց գործնականում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մասին (150-րդ պարբերություն).

- տեղեկություններ, թե արդյոք անճար իրավաբանական օգնությունը կարող է տրամադրվել նաեւ «դատական» հիվանդներին (150-րդ պարբերությունը):

Սոցիալական օգնության հաստատությունները

Վատ վերաբերմունքը

Առաջարկություններ

- առաջարկվում է, որ Վարդենիսի (նյարդահոգեբանական) տուն–ինտերնատում վերանայվի բաժանմունքների անձնակազմին ընտրելու կարգը, ինչպես նաեւ անձնակազմի նախնական ու ընթացիկ վերապատրաստումը եւ հսկողությունը՝ հաշվի առնելով 156-րդ պարբերությունում նշված նկատառումները (156-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ հաստատության տնօրինությունը լինի զգոն եւ անձնակազմին պարզ հասկացնի, որ հիվանդների նկատմամբ ցուցաբերվող վատ վերաբերմունքի բոլոր ձեւերը՝ ներառյալ խոսքով վիրավորանք հասցնելը, անընդունելի են եւ խստորեն պատժվելու են (156-րդ պարբերություն):

Հիվանդների կենսապայմանները

Առաջարկություններ

- առաջարկվում է, Վարդենիսի (նյարդահոգեբանական) տուն–ինտերնատում ձեռնարկվեն քայլեր՝ հիվանդների կացարաններում ծանրաբեռնվածության աստիճանը նվազեցնելու եւ տարբեր հոգեբանական ու առողջական կարիքներով հիվանդների տարանջատումն ապահովելու ուղղությամբ: (157–րդ պարբերություն).

- պետք է գործադրվեն ջանքեր՝ հիվանդների համար ավելի ջերմ մթնոլորտ ապահովելու ուղղությամբ, այդ թվում՝ հիվանդներին իրենց անձնական պարագաները պահելու համար անհատական փակվող տեղ տրամադրելու միջոցով (157-րդ պարբերություն):

Տեղեկատվություն ստանալու համար հարցումներ

- տրամադրել հավելյալ տեղեկություններ Վարդենիսի (նյարդահոգեբանական) տուն–ինտերնատում 40 մահճակալներով նոր բաժանմունք ստեղծելու մասին (157-րդ պարբերություն).

- հավելյալ տեղեկություններ ստանալ Վարդենիսի (նյարդահոգեբանական) տուն–ինտերնատում սննդի տրամադրման վերաբերյալ (ընդհանուր բյուջեի, օրական սննդային արժեքի, հիմնական ճաշացանկի եւ այլն) (159-րդ պարբերություն):

Անձնակազմը եւ հիվանդների խնամքը

Առաջարկություններ

- պետք է ձեռնարկվեն հրատապ քայլեր՝ հոգեբույժների թափուր պաշտոնները լրացնելու ուղղությամբ: Պետք է վերանայել հոգեբույժների պաշտոնների թիվն ավելացնելու անհրաժեշտությունը (160-րդ պարբերություն).

- Վարդենիսի տուն–ինտերնատի հիվանդներից յուրաքանչյուրի համար պետք է կազմվի բուժման անհատական պլան, որը կներառի մանրամասն տվյալներ բուժման մասին (օրինակ՝ դեղորայքը, հոգեբանական խորհրդատվությունը, հոգեսոցիալական միջամտությունը եւ բուժման նպատակը) (161-րդ պարբերություն):

Զսպան միջոցները

Առաջարկություններ

- առաջարկվում է, որ Վարդենիսի տուն–ինտերնատում զսպման ֆիզիկական եւ (կամ) քիմիական միջոցների կիրառման բոլոր դեպքերը գրի առնվեն նաեւ հատուկ այդ նպատակով բացված մատյանում (այլ ոչ միայն բուժքույրերի մատյանում) (163-րդ պարբերություն).

- բացի դրանից՝ Կոմիտեն առաջարկում է սոցիալական օգնություն տրամադրող հաստատություններում կիրառել զսպման հատուկ միջոցների օգտագործման համապարփակ եւ հստակ քաղաքականություն՝ վերջերս առողջապահության նախարարության կողմից ընդունված՝ հոգեբուժական հաստատություններում զսպման միջոցների օգտագործման ուղեցույցի օրինակով (163–րդ պարբերություն):

Երաշխիքները

Առաջարկություններ

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանություններն ապահովեն հոգեկան խանգարումներ կամ սովորելու դժվարություններ ունեցող անձանց սոցիալական օգնության հաստատություններում տեղավորելու ընթացակարգի համապատասխանությունը 164-րդ պարբերությունում նշված պահանջներին (164–րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները փորձեն գտնել այլընտրանքային լուծումներ, որպեսզի սոցիալական օգնության հաստատությունը մեխանիկորեն չվերածվի իրավունակությունից զրկված բուժվող հիվանդների օրինական խնամակալ՝ դրանով իսկ խուսափելով շահերի բախումից եւ երաշխավորելով օրինական խնամակալների փաստացի անկախությունն ու անաչառությունը (165-րդ պարբերություն).

- ԽԿԿ-ն առաջարկում է, որ հեշտ ըմբռնելի բրոշյուր կազմվի եւ պարբերաբար բաժանվի Վարդենիսի (նյարդահոգեբանական) տուն ինտերնատում բուժվող հիվանդներին եւ նրանց ընտանիքներին (166-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանություններն ավելի մատչելի դարձնեն հեռախոսակապը բուժվող հիվանդների համար (167-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները ներմուծեն գաղտնի հիմունքներով բողոքներ ներկայացնելու պաշտոնական համակարգ (որը կներառի բողոքների գրանցամատյան եւ բողոքարկման հնարավորություն): Այդ համատեքստում, կարելի է ներմուծել բողոքների արկղի կիրառումը (անձնակազմի սահմանափակ հասանելիությամբ) (168-րդ պարբերություն).

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները ձեւավորեն հոգեբուժական հիվանդանոցներ անկախ մարմինների կողմից պարբերաբար կատարվող այցելությունների համակարգ: Այս մարմինը պետք է իրավունք ունենա, մասնավորապես, առանձին զրուցելու հիվանդների հետ, ուսումնասիրելու նրանց կենսապայմաններին եւ բուժմանը վերաբերող բոլոր խնդիրները, անմիջականորեն ստանալու նրանց բողոքները եւ անելու անհրաժեշտ առաջարկություններ (168-րդ պարբերություն):

Դիտարկումներ

- առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները ընդունել հոգեկան առողջության պահպանման համապարփակ ազգային ծրագիր, որը կներառեր Հանրապետության բոլոր հոգեբուժարաններում եւ ինտերնատներում առկա խնդիրների լուծման, ինչպես նաեւ ստացիոնար խնամքից հնարավորինս խուսափելու ռազմավարություն (169-րդ պարբերություն)

Տեղեկատվություն ստանալու համար հարցումներ

- արդյո՞ք որեւէ բուժվող հիվանդ կարող է տեղավորվել Վարդենիսի (նյարդահոգեբանական) տուն-ինտերնատում՝ «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի ոչ հոժարակամ հոսպիտալացման մասին դրույթների համաձայն (164-րդ պարբերություն).

- հաստատում առ այն, նման հաստատություններում իրենց կամքին հակառակ տեղավորված բոլոր անձինք՝ անկախ խնամակալ նշանակված լինելու փաստից, դատարան դիմելու փաստացի իրավունք ունեն՝ ինտերնատում իրենց տեղավորելու վերաբերյալ որոշման օրինականությունը պարզելու համար, ինչպես նաեւ ունեն իրենց այս իրավունքն իրականացնելու համապատասխան իրավական երաշխիքներ (օր.՝ փաստաբան ունենալու կամ դատավորի կողմից լսվելու եւ նման այլ իրավունքներ) (164-րդ պարբերություն).

- տեղեկություններ սոցիալական օգնության հաստատություններում ոչ հոժարակամ տեղավորված՝ հոգեկան խանգարումներ կամ սովորելու հետ կապված դժվարություններ ունեցող անձանց բուժման կուրսը հաստատելու կարգի, ինչպես նաեւ այդ անձանց

ինտերնատներում պահելու նպատակահարմարությունը պարբերաբար գնահատելու համակարգի մասին (164-րդ պարբերություն):

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՈՐՈՆՑ ՀԵՏ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ԱՆՑԿԱՑՐԵԼ

Ա. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Արդարադատության նախարարություն

պրն Գեւորգ Դանիելյան	Արդարադատության նախարար
պրն Նիկոլայ Առուստամյան	Արդարադատության նախարարի տեղակալ
պրն Վահե Դեմիրճյան	Միջազգային իրավական հարաբերությունների վարչության պետ
պրն Արթուր Հովհաննիսյան	Եվրաինտեգրման վարչության պետ
պրն Աշոտ Գիզիրյան	Քրեակատարողական վարչության պետ
պրն Ռաֆայել Հովհաննիսյան	Քրեակատարողական վարչության պետի տեղակալ
պրն Արա Հովհաննիսյան	Քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի պետի տեղակալ

Ոստիկանություն

պրն Հունան Պողոսյան	Ոստիկանության պետի առաջին տեղակալ
պրն Արթուր Օսիկյան	Ոստիկանության պետի տեղակալ
պրն Էդուարդ Ղազարյան	Ոստիկանության աշխատակազմի պետ
պրն Գագիկ Ավետիսյան	Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչության պետ
պրն Աղասի Կիրակոսյան	Հասարակական կարգի ապահովման վարչության պետ

պրն Արտյոմ Բաբաջանյան	Ներքին անվտանգության վարչության պետ
պրն Սայաթ Շիրինյան	Հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության պետ
պրն Հովհաննես Քոչարյան	Իրավական ապահովման վարչության պետ

Պաշտպանության նախարարություն

պրն Արա Նազարյան	Պաշտպանության նախարարի տեղակալ
պրն Լեւոն Այվազյան	Պաշտպանական քաղաքականության վարչության պետի տեղակալ
պրն Արա Մեսրոպյան	Պաշտպանական քաղաքականության վարչության բաժնի պետ
պրն Արման Պողոսյան	Քննչական ծառայության պետի տեղակալ
պրն Հայկ Ստեփանյան	Ռազմական ոստիկանության պետի տեղակալ
պրն Սասուն Սիմոնյան	Իրավաբանական վարչության բաժնի պետ

Առողջապահության նախարարություն

պրն Ալեքսանդր Ղուկասյան	Առողջապահության նախարարի տեղակալ
պրն Սուրեն Քրմոյան	Առողջապահության նախարարի իրավական հարցերով խորհրդական

Բ. <u>ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐ</u>

Գլխավոր դատախազություն

պրն Աղվան Հովսեփյան	Գլխավոր դատախազ

պրն Կորյուն Փիլոյան	Ավագ դատախազ
տկն Նելի Հարությունյան	Միջազգային իրավական հարաբերությունների բաժնի պետ
պրն Վարդան Ավետիսյան	Պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության պետի պաշտոնակատար
տկն Սոնա Տրուզյան	Մամուլի քարտուղար

Հատուկ քննչական ծառայություն

պրն Անդրանիկ Միրզոյան	Հատուկ քննչական ծառայության պետ

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ

պրն Արմեն Հարությունյան	Մարդու իրավունքների պաշտպան

Գ. <u>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակության երեւանյան գրասենյակ

Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության երեւանյան գրասենյակ

Դ. <u>ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>

Ձերբակալվածների իրավունքների պաշտպանության վերահսկման հանրային մոնիթորինգի խումբ

Ոստիկանության ՁՊՎ–ների հանրային մոնիթորինգի խումբՔաղաքացիական հասարակության ինստիտուտ

Մարդու իրավունքների Հելսինկյան ասոցիացիա

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա – Վանաձոր

Հայաստանի Հելսինկյան կոմիտե

«Ֆորում» իրավաբանական կենտրոն

Հոգեկան առողջության հիմնադրամ

Պատասխաններ

Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին Եվրոպական կոմիտեի (CPT) պատվիրակության կողմից 2010թ. մայիս ամսին Հայաստանի Հանրապետություն կատարած պարբերական այցելության արդյունքում կազմված զեկույցի վերաբերյալ

<u>ՀՀ ոստիկանություն</u>

Զեկույցի 9-րդ կետի վերաբերյալ

Դեռեւս 2006թ.-ին ոստիկանության իրավաստեղծ նախաձեռնությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը լրացվել է 131.1. հոդվածով, որը երաշխավորում է փաստացի ձերբակալված անձանց նկատմամբ 3 ժամվա ընթացքում քրեական գործ հարուցելու եւ դատավարական ձերբակալում իրականացնելու հնարավորությունը: Հարցի հետ ուղղակիորեն առնչվում է ոստիկանության կողմից կիրառվող բերման ենթարկելու գործողության իրավաչափությունը, որը գործնականում չի դիտվում իբրեւ ձերբակալում՝ դրանից բխող բացասական հետեւանքներով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս մշակվում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ, ուստի բերման ենթարկելու պահից ձերբակալման արձանագրություն կազմելու գործընթացը կկանոնակարգվի նոր օրենսդրության շրջանակներում:
Ներկայումս ՀՀ ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է ձերբակալված անձանց ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ բերելիս անհապաղ կազմել էլեկտրոնային արձանագրություն, կիրառելով ոստիկանության համացանցին միացված հայելային դիսփլեյով համակարգիչներ: Բացի այդ, նախատեսվում է մշակել ոստիկանության ստորաբաժանումներ բերված անձանց իրավունքների վերաբերյալ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով հուշաթերթիկներ /բուկլետներ/:

Զեկույցի 10-րդ կետի վերաբերյալ.

ՀՀ քր.դատ.օր.-ի 137-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կալանավորված անձը չի կարող 3 օրվանից ավելի պահվել ձերբակալվածներին պահելու վայրերում, բացի այն դեպքերից, երբ նրա տեղափոխումը հնարավոր չէ տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով: Բացի այդ, «Ձերբակալված եւ կալանավորված անձնաց պահելու մասին» ՀՀ օրենքի

6-րդ հոդվածի համաձայն, քննչական գործողություններ կատարելու կապակցությամբ կալանավորվածներին պահելու վայրից կալանավորված անձին ամեն օր փոխադրելու անհնարինության դեպքում, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ կալանավորված անձը կարող է տեղափոխվել ձերբակալվածներին պահելու վայր՝ մինչեւ 3 օր տեւողությամբ:
Նշված բացառիկ դեպքերից բացի, կալանավորված անձանց ՁՊՎ-ներում օրենքով նախատեսված ժամկետից ավել պահելու դեպքերը կանխելու նպատակով՝ ՀՀ ոստիկանության պետի կողմից արձակվել են 29.01.2009թ. թիվ Ց-2 ցուցումը եւ 14.10.2009թ. թիվ 2625-Ա հրամանը: Մասնավորապես, վերը նշված հրամանով ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումներին հանձնարարվել է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները բացառելու համար՝
1/ գիշերային ժամերին ձերբակալված անձանց ձերբակալվածներին պահելու վայրերից դուրս պահելու դեպքերը՝ բացառությամբ անհետաձգելի դեպքերի,
2/ գիշերային ժամերին հանցանք կատարելու մեջ կասկածվող անձանց հետ օպերատիվ հարցումների կամ կասկածյալի /մեղադրյալի/ մասնակցությամբ քննչական գործողությունների իրականացումը՝ բացառությամբ անհետաձգելի դեպքերի,
3/ հանցանք կատարելու մեջ կասկածվող եւ բերված անձին առանց կասկածյալի դատավարական կարգավիճակի 3 ժամից ավելի պահելը,
4/ կալանավորված անձանց երեք օրվանից ավելի ձերբակալվածներին պահելու վայրերում պահելը, եթե դա պայմանավորված չէ ձերբակալվածներին պահելու վայրից քննչական մեկուսարան կամ օրենքի պահանջներին համապատասխան կալանավորվածներին պահելու այլ վայրեր տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով տեղափոխելու անհնարինությամբ:

Զեկույցի 11-րդ կետի վերաբերյալ.

Լիովին գիտակցելով խնդրո առարկայի կարեւորությունը, ՀՀ ոստիկանության պետի 09.12.2009թ. թիվ 3140-Ա հրամանով հաստատվել է ՀՀ ոստիկանությունում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիր: Միեւնույն ժամանակ, ՀՀ ոստիկանության ղեկավարության նախաձեռնությամբ ՀՀ ոստիկանության Ակադեմիայում եւ Ուսումնական կենտրոնում դասավանդվող առարկաների ցանկում ներառվել է «Ոստիկանության էթիկա» ուսումնական առարկան: Բացի այդ, թե՛ ՀՀ-ում եւ թե՛ արտասահմանյան մի շարք երկրներում ոստիկանության ծառայողները շարունակաբար մասնակցում են նմանատիպ թեմաներով կազմակերպվող դասընթացների: Նշված թեմաները ընդգրկված են նաեւ

ստորաբաժանումներում անցկացվող ծառայողական պարապմունքների թեմատիկ պլաններում:
Ներկայումս ՀՀ ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների ծրագրի շրջանակներում մշակվում է ոստիկանության ծառայողների հակակոռուպցիոն վարքագծի ուղեցույց:
Այս ամենով հանդերձ, ՀՀ ոստիկանությունը հայտնում է իր պատրաստակամությունը ոստիկանության ծառայողների կողմից կոռուպցիոն դրսեւորումների վերաբերյալ CPT պատվիրակության կողմից առարկայական տեղեկատվություն տրամադրելու դեպքում կատարել ծառայողական քննություններ եւ մեղավոր ծառայողներին ենթարկել համարժեք պատասխանատվության:

Զեկույցի 12-րդ կետի վերաբերյալ.

ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ կոպիտ, անհարգալից վերաբերմունք դրսեւորելու, առավել եւս՝ խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ցանկացած դեպք ՀՀ ոստիկանությունում դառնում է լայն քննարկման առարկա, մեղավոր անձինք ենթարկվում են խիստ կարգապահական պատասխանատվության:
Այսպես, 2010 թվականի ընթացքում ստացվել է ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ կոպիտ, անհարգալից եւ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի վերաբերյալ 81 բողոք /2009թ.՝ 245/, որոնց քննությամբ հիմնավորվել են 19-ը /2009թ.՝ 37/: Կատարված ծառայողական քննությունների արդյունքում ոստիկանության 23 ծառայող ենթարկվել է կարգապահական պատասխանատվության /2009թ.՝ 51/, 4 ծառայող՝ քրեական պատասխանատվության /2009թ.՝ 2/: Ի դեպ, քրեական պատասխանատվության կանչված 1 ոստիկանության ծառայող դատապարտվել է ազատազրկման, 1 ծառայող՝ կալանքի, իսկ 2 ծառայողի նկատմամբ վճռվել է նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել եւ սահմանել փորձաշրջան:
Ինչ վերաբերում է 2010թ. ապրիլի 17-ին Երեւան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի տարածքում հանցավոր «պարզաբանմանը» մասնակից 53 անձանց բերման ենթարկելու լայնամասշտաբ օպերատիվ-կանխարգելիչ միջոցառմանը, ապա դրան մասնակից ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների համազգեստի վրա առկա են եղել համապատասխան տարբերանշաններ /տե՛ս, www.a1plus.am լրատվամիջոցի էլեկտրոնային կայքի, 17.04.2010թ.-ին տեղադրված լուսանկարները/: Ի դեպ, բերման ենթարկված անձանց մոտից առգրավվել է 13 միավոր հրազեն, 8 միավոր սառը զենք եւ զգալի քանակությամբ ռազմամթերք:

Հասարակական կարգի պահպանությունն ապահովող ոստիկանության ծառայողների համազգեստի վրա անձնապես նույնականացնող համարանիշերի կիրառումն ապահովելու նպատակով «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածում 22.12.2010թ.-ին կատարվել է համապատասխան լրացում, իսկ 23.03.2011թ.-ին ՀՀ ոստիկանության պետի կողմից ստորագրվել է թիվ 34-Ագ հրամանը, որով սահմանվել է ոստիկանության ծառայողների նույնականացման համարանիշերի կիրառման կարգը:

Զեկույցի 13-րդ կետի վերաբերյալ.

ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժնում Վահան Խալաֆյանի մահվան փաստով ՀՀ ոստիկանության կողմից կատարված ծառայողական քննության արդյունքում 6 ծառայողներ /այդ թվում նաեւ ոստիկանապետը/ ենթարկվել են խիստ կարգապահական պատասխանատվության, որոնցից 4-ը՝ նաեւ քրեական պատասխանատվության: Ընդհանուր իրավասության դատարանի կողմից ոստիկանության նախկին 2 ծառայողի նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ, որը բողոքարկվել է եւ ներկայումս քրեական գործը գտնվում է ՀՀ Վերաքննիչ դատարանի վարույթում:

Զեկույցի 14-րդ կետի վերաբերյալ.

Տե՛ս, զեկույցի 10-րդ եւ 12-րդ կետերի վերաբերյալ ՀՀ ոստիկանության նկատառումները:

Զեկույցի 15-րդ կետի վերաբերյալ.

2010թ. դեկտեմբերի 22-ին «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ ոստիկանության ծառայողը պարտավոր է ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, հրազեն գործադրելու (օգտագործելու) հետեւանքով վիրավորվածների կամ մահվան բոլոր դեպքերի, ինչպես նաեւ հատուկ միջոցներ (բացառությամբ ձեռնաշղթաների եւ ռետինե մահակի) եւ հրազեն գործադրելու (օգտագործելու) յուրաքանչյուր դեպքի մասին անհապաղ զեկուցել վերադասության կարգով:
Օրենքով չնախատեսված դեպքերում ոստիկանության ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ հրազենի գործադրումը կամ սահմանների անցումով դրանց գործադրումն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:
Ոստիկանության պետական կառավարման մարմնի ղեկավարը ոստիկանության ծառայողի կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ,

հրազեն գործադրելու (օգտագործելու) հետեւանքով վիրավորվածների կամ մահվան բոլոր դեպքերի մասին անհապաղ տեղեկացնում է դատախազին:

Զեկույցի 16-րդ կետի վերաբերյալ.

Հատուկ միջոցների, այդ թվում՝ էլեկտրահարող սարքերի կիրառման վերաբերյալ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում 2010թ. դեկտեմբերի 22-ին կատարվել են փոփոխություններ եւ լրացումներ: Մասնավորապես՝ արգելվել է ոստիկանության սպառազինության մեջ հատուկ միջոցների այնպիսի տեսակներ ընդգրկելը, որոնք ըստ իրենց մարտավարատեխնիկական բնութագրերի՝ կարող են մարդու առողջությանը պատճառել ծանր վնաս կամ մարդու օրգանիզմում առաջացնել անդառնալի փոփոխություններ կամ մահ պատճառել կամ չհիմնավորված ռիսկի աղբյուր են: Բացի այդ, մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները սահմանելու պարտականությունը օրենքով վերապահվել է ՀՀ առողջապահության նախարարությանը: Օրենքով հստակեցվել են նաեւ էլեկտրահարող սարքերի, կայծային պարպիչների կիրառման հիմքերը (տես՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերը):
Հատուկ միջոցների տեսակները ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկվել են ՄԱԿ-ի «Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց կողմից ուժի եւ հրազենի գործադրման հիմնական սկզբունքների» 2-րդ կետին համապատասխան, համաձայն որի՝ իրավապահ մարմինները նախատեսելու են ոստիկանության սպառազինության այնպիսի տեսակներ, որոնք մահացու չեն, բացառապես ունեն վտանգը չեզոքացնող եւ վնասազերծող հատկություն, եւ գործադրվում են վիրավորելու կամ մահ պատճառելու հնարավորությունները սահմանափակելու նպատակով: Ոստիկանության աշխատակիցները ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ եւ հրազեն գործադրելու համար պարբերաբար անցնում են հատուկ պատրաստություն:
Ոստիկանության կողմից կայծային պարպիչներ գործադրելու եւ դրա հետեւանքով մարմնական վնասվածքների վերաբերյալ ՀՀ ոստիկանությունում տեղեկություններ չեն ստացվել:

Զեկույցի 17-րդ կետի վերաբերյալ.

Տե՛ս, զեկույցի 12-րդ կետի վերաբերյալ ՀՀ ոստիկանության նկատառումները:

Զեկույցի 18-րդ կետի վերաբերյալ.

ՀՀ ոստիկանության համակարգում փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ, փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող ծառայողների վերապատրաստման, մասնագիտական որակների բարձրացման եւ կատարելագործման նպատակով ՀՀ ոստիկանության պետի 01.02.2011թ. թիվ Ց-5 ցուցումի համաձայն ՀՀ ոստիկանության քննչական եւ հետաքննական լիազորություններ ունեցող ծառայողները սահմանված գրաֆիկին համապատասխան, տեղերում պետք է մասնակցեն «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվող դասընթացներին: Բացի այդ, նշված ծառայողների տեսագործնական գիտելիքները բարելավելու նպատակով ՀՀ ոստիկանության Ակադեմիայում կազմակերպվում են վերապատրաստման ամենամյա դասընթացներ:
Ինչ վերաբերում է հարցաքննության տեխնիկայի կատարելագործմանը, ապա ՀՀ ոստիկանության բարեփոխումների ծրագրի 27-րդ կետով նախատեսված է ստեղծել հայելապատ սենյակներ, իսկ ՀՀ քր. դատ. օր.-ի 209-րդ հոդվածի համաձայն՝ հարցաքննվող անձի ցանկությամբ հարցաքննության ընթացքը կարող է ձայնագրվել:

Զեկույցի 19-րդ կետի վերաբերյալ.

Արձանագրենք, որ 2010թ. ընթացքում ոստիկանության ծառայողին ոչ վայել արարք կատարելու համար 105 ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության: Ընդհանուր առմամբ, կարգապահական տույժի են ենթարկվել 1014 ծառայողներ (2009թ՝. 939), որոնցից 74-ը ազատվել են ոստիկանությունից (2009թ՝ 44), պաշտոնն իջեցվել է 13-ի, կոչումն իջեցվել է 5-ի, զգուշացվել են պաշտոնին ոչ լրիվ համապատասխանելու մասին 30 ծառայողներ եւ այլն:
2010թ. ընթացքում ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից թույլ տրված տարբեր օրինախախտումների փաստերով հարուցվել է 46 քրեական գործ 74 ծառայողների նկատմամբ, որոնցից դատապարտվել են 15-ը:
Ոստիկանության ծառայողներից 23-ը քրեական պատասխանատվության են ենթարկվել կոռուպցիոն տարատեսակ դրսեւորումների համար: Հարկ է նշել, որ օրինախախտումների մոտ կեսը ի հայտ է բերվել ոստիկանության նախաձեռնությամբ:
Այս առումով բավականին սերտ է ՀՀ ոստիկանության եւ ՀՀ հատուկ քննչական ծառայության փոխհամագործակցությունը:
Հատուկ քննչական ծառայությունը գործում է «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված գործառույթների շրջանակներում:

Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ՀՔԾ-ն իրականացնում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաեւ ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն:
Հատուկ քննչական ծառայությունն ինքնուրույն պետական մարմին է եւ լիազորություններն իրականացնելիս անկախ է:

Զեկույցի 20-րդ կետի վերաբերյալ.

Տե՛ս, զեկույցի 19-րդ կետի վերաբերյալ ՀՀ ոստիկանության նկատառումները:

Զեկույցի 28-րդ կետի վերաբերյալ.

Ձերբակալված անձանց իրավունքները՝ իրենց իրավիճակի մասին մերձավոր ազգականին կամ այլ անձանց հայտնելու, պաշտպան եւ բժիշկ ունենալու վերաբերյալ, այլ իրավունքների հետ մեկտեղ, ամրագրված են «Ձերբակալված եւ կալանավորված անձնաց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածում:
Տարվա ընթացքում միջազգային կազմակերպությունների եւ տեղական հասարակական դիտորդական խմբերի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում նշված իրավունքների խախտումների լուրջ դեպքեր չեն արձանագրվել:

Զեկույցի 29-րդ կետի վերաբերյալ.

Իրոք, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ եւ ՀՀ քր. դատ. օր.-ի 63-րդ հոդվածների միջեւ առկա է հակասություն. մի դեպքում սահմանված է ծանուցման 3 ժամ, մյուս դեպքում՝ ոչ ուշ, քան 12 ժամ: Հակասությունն անհրաժեշտ է վերացնել ՀՀ քր. դատ. օր.-ում փոփոխություն կատարելով:
Միեւնույն ժամանակ պետք է նշել, որ օրենսդրական նման կոլիզիայի դեպքում գործում է ձերբակալվածի համար առավել բարենպաստ նորմը՝ այսինքն 3 ժամյա ծանուցման դրույթը:
ՀՀ ոստիկանությունը երախտապարտ կլիներ, որպեսզի ոստիկանության ծառայողների կողմից պատշաճ չծանուցման դեպքերի վերաբերյալ CPT պատվիրակությունը իրազեկեր ՀՀ ոստիկանությանը՝ ծառայողական քննություններ անցկացնելու նպատակով:

Զեկույցի 30-րդ կետի վերաբերյալ.

Ինչ վերաբերում է բերման ենթարկված եւ ձերբակալված անձանց ծանուցված լինելու եւ փաստաբան ունենալու իրավունքի իրացման խնդրին, ապա ՀՀ ոստիկանության պետի 03.04.2010թ. թիվ 12-Ց ցուցումով ՀՀ ոստիկանության հետաքննություն իրականացնող ստորաբաժանումների պետերին հանձնարարվել է՝
1) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի հիմքով բերման ենթարկված անձանց խնդրանքով ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները փաստաբան հրավիրելու համար,
2) բերման ենթարկվածին հնարավորություն ընձեռել բացատրություն տալ փաստաբանի մասնակցությամբ, եթե մինչեւ ձերբակալման արձանագրություն կազմելը կամ խափանման միջոց ընտրելը անհրաժեշտություն է առաջացել անձից վերցնել բացատրություն կամ անցկացնել օպերատիվ հարցում,
3) անշեղորեն պահպանել ՀՀ կառավարության 14.06.2007թ. «Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը եւ ծանուցման կարգը հաստատելու մասին» թիվ 818-Ն որոշման այլ պահանջները:
Ներկայումս ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ թվարկված իրավական ակտերի անշեղ կատարումն ապահովելու ուղղությամբ:

Զեկույցի 32-րդ կետի վերաբերյալ.

Փաստաբանի ներկայությամբ վկայի հարցաքննության իրավունքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված է, սակայն, հաշվի առնելով մի շարք եվրոպական երկրների իրավական ակտերի վերլուծության արդյունքները, հնարավոր է ընդլայնել փաստաբանի դատավարական լիազորությունների շրջանակը (վկայի հարցաքննության ժամանակ)՝ վկաների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն ուժեղացնելու համար:

Զեկույցի 33-րդ կետի վերաբերյալ.

«Ձերբակալված եւ կալանավորված անձնաց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն «ձերբակալված անձը իրավունք ունի առողջության պահպանման, այդ թվում՝ ստանալ բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաեւ զննվել իր ընտրած բժշկի կողմից իր դրամական միջոցների հաշվին»: Ինչ վերաբերում է ձերբակալվածին դատաբժշկի կողմից զննվելուն, ապա նույն օրենքի 15 հոդվածի համաձայն «ձերբակալված կամ կալանավորված անձը, իսկ

ձերբակալված կամ կալանավորված անձի համաձայնության դեպքում նաեւ նրա պաշտպանը իրավունք ունեն պահանջելու անցկացնել դատաբժշկական հետազոտություն»:
ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշման 13-րդ կետի համաձայն՝ «Ձերբակալվածի մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատ լինելու դեպքում ոստիկանության մարմնի հերթապահը հրավիրում է բուժաշխատողի: Հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել նաեւ ձերբակալված անձի ցանկությամբ ընտրված բժիշկը: Բժշկական զննությունն իրականացվում է ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչեւ բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաեւ տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները գրանցվում են գրանցամատյանում, անձնական գործում եւ դրա մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաեւ քրեական վարույթն իրականացնող մարմնին»: Ի դեպ, «Ձերբակալված եւ կալանավորված անձնաց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ձերբակալված անձը իրավունք ունի իր իրավունքների եւ ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին, նրանց վերադաս մարմիններին, դատարանին, դատախազությանը, մարդու իրավունքների պաշտպանին, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին եւ կուսակցություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաեւ մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին:

Զեկույցի 34-րդ կետի վերաբերյալ.

Տե՛ս, զեկույցի 33-րդ կետի վերաբերյալ ՀՀ ոստիկանության նկատառումները:

Զեկույցի 35-րդ կետի վերաբերյալ.

Տե՛ս, զեկույցի 33-րդ կետի վերաբերյալ ՀՀ ոստիկանության նկատառումները:

Զեկույցի 36-րդ կետի վերաբերյալ.

Տե՛ս, զեկույցի 9-րդ կետի վերաբերյալ ՀՀ ոստիկանության նկատառումները:

Զեկույցի 37-րդ կետի վերաբերյալ.

ՀՀ կառավարության 05.06.2008թ. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 574-Ն որոշման համաձայն ՁՊՎ ընդունված յուրաքանչյուր ձերբակալվածի վերաբերյալ հերթապահի կողմից գրանցումներ է կատարվում «ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» գրանցամատյանում, որտեղ նշվում է ձերբակալվածի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը, բնակության վայրը, ում կողմից է ձերբակալվել, ՁՊՎ ընդունելու հիմքը, ձերբակալման ամսաթիվը եւ ժամանակը, նախկին դատվածությունը, նշումներ ձերբակալվածի տեղաշարժի մասին եւ ՁՊՎ-ից ազատելու հիմքը, ամսաթիվը, ժամը: Բացի այդ յուրաքանչյուր ձերբակալվածի համար ՁՊՎ-ում կազմվում է անձնական գործ, որում ներառվում են ձերբակալման եւ ազատման ամսաթվերը, անհատական քարտը, բերման ենթարկելու մասին արձանագրությունը, հագուստի եւ անձնական իրերի անվանացուցակի վերաբերյալ արձանագրությունը, նախկինում դատվածության մասին տեղեկանքը, խուզարկության արձանագրությունը, մատնադրոշման տվյալները, հանձնուքի, տեսակցության դիմումները, անձնական հաշվի գումարի շարժը եւ ձերբակալվածին վերաբերող այլ փաստաթղթեր:
ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի համաձայն ՁՊՎ-ների գրանցամատյաններում եւ ձեւաթղթերում թերություններով լրացումները հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:
ՁՊՎ-ները ոստիկանության առավել թափանցիկ վայրերն են, որտեղ գործող օրենսդրության համաձայն իրենց լիազորությունների սահմաններում հսկողություն եւ վերահսկողություն իրականացնող մարմիններն ու կազմակերպությունները առանձնակի ուշադրություն են դարձնում գրանցամատյանների ճիշտ լրացմանը: Նշված գործառույթի բարելավումը գտնվում է ոստիկանության ղեկավարության վերահսկողության ներքո:
Ներդրվում է գերատեսչական ցանց, որով նախատեսվում է ավտոմատացնել նշված պրոցեսը, ինչը հնարավորություն կտա իրական հսկողություն սահմանել ձերբակալված անձանց պահման ժամկետների, նրանց տեղաշարժերի նկատմամբ: /Տե՛ս, նաեւ զեկույցի 9-րդ կետի վերաբերյալ ՀՀ ոստիկանության նկատառումները/

Զեկույցի 38-րդ կետի վերաբերյալ.

Հաշվի առնելով, որ ոստիկանության ստորաբաժանումներում բերման ենթարկված անձինք կարող են գտնվել 3 ժամից ոչ ավելի /ՀՀ քր. դատ. օր.-ի

131.1 հոդված/ ուստի հասարակական մշտադիտարկման խմբին ոստիկանության բաժիններ կոնկրետ փաստերով մուտք գործելու թույլտվությունը իրատեսական չէ: Բացի այդ, նշված խմբի գործունեությունը կարող է խոչընդոտել քննությանը, «տաք հետքերով» հանցագործության բացահայտմանը, խախտել նախաքննության տվյալների գաղտնիության սկզբունքը:

Զեկույցի 39-րդ կետի վերաբերյալ.

ՁՊՎ-ների շիանարարական առանձնահատկությունները սահմանված են ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ: Հարկ է նշել, որ ոստիկանությունում գործող ՁՊՎ-ների մեծ մասը ունի կառուցման 30-40 տարվա վաղեմություն, ուստի ՁՊՎ-ներում պայմանների բարելավելը կպահանջի ֆինանսական մեծ ներդրումներ:
Ինչ վերաբերվում է զբոսանքի տեւողությանը, ապա գործող օրենսդրության համաձայն այն պետք է լինի 1 ժամից ոչ պակաս, սակայն որոշ դեպքերում ընդառաջելով ձերբակալվածի ցանկությանը, այն կարող է կրճատվել, ինչի մասին համապատասխան գրառում է կատարվում գրանցամատյանում:
ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումներում մինչեւ 3 ժամ պահելու համար նախատեսված խցերը նախատեսված չեն գիշերելու համար, սակայն այն դեպքերում, երբ իրավախախտ անձը նշված ժամկետում հնարավոր չի լինում պարզել, ապա այդ ժամկետը կարող է երկարել: Նշված խնդիրը իր լուծումը կստանա ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի շրջանակներում: /Տե՛ս, նաեւ զեկույցի 9-րդ կետի վերաբերյալ ՀՀ ոստիկանության նկատառումները/

Զեկույցի 21-ից 27-րդ եւ 31-րդ կետերում արծարծվող խնդիրները ոստիկանության իրավասություններից դուրս են:

<u>ՀՀ պաշտպանության նախարարություն</u>

2009 և 2010թթ. ընթացքում Ռազմական ոստիկանության անձնակազմի կողմից անազատության մեջ պահվող զինծառայողների նկատմամբ անմարդկային կամ վատ վերաբերմունքի դիմում-բողոքներ չեն ներկայացվել:

Երևանի կայազորի կարգապահական մեկուսարանի խցերի վատ վիճակը, սանհանգույցների կեղտոտ և քայքայված հանգամանքը վերացված է, քանի որ դրանք դեռևս 24.01.2007թ. հիմնովին վերանորոգվել են:

Խցերի չափերի բարեփոխումները պայմանավորված են ներկայումս ընթացող օրենսդրական փոփոխություններով: Այնուամենայնիվ, Ռազմական ոստիկանության անձնակազմը կարգապահական մեկուսարանների խցերում պահվող յուրաքանչյուր զինծառայողի համար աշխատում է ապահովել նվազագույնը չորս քմ կեցության տարածք՝ խցերում տեղադրված տախտակամածների քանակից թվով քիչ զինծառայողներ պահելով:

Օրենսդրական բարեփոխումներով է պայմանավորված նաև կարգապահական մեկուսարաններում պահվող զինծառայողների պայմանների բարելավման հարցերը: Մասնավորապես, կարգապահական մեկուսացման մեջ գտնվող ազատազրկվածներին գիշերվա համար ներքնակներով և բարձերով ապահովելն ու խցերում օրվա ընթացքում պատերին գամված մահճակալներից օգտվելն արգելված է գործող օրենսդրությամբ:

ՀՀ ԶՈՒ կայազորային և պահակային կանոնագրքով նախատեսված չէ կալանավորված կամ պատիժը կրող զինվորական անձնակազմին որևէ արտախցային գործունեությամբ ապահովելը:

ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքի նախագծի դրույթների համաձայն՝ կարգապահական վաշտերը գործելու են կայազորային սկզբունքով, նման կարգապահական տույժի ենթարկված զինծառայողները կարգապահական վաշտ տեղափոխվելու են, ինչպես նաև կարգապահական վաշտից իրենց զորամաս վերադառնալու են համապատասխան զորամասի ուժերով, իսկ տեղափոխման համար միջանկյալ տեղակայման վայրեր չեն գործելու:

ՀՀ պաշտպանության նախարարությունը օրենսդրական փոփոխությունների ընթացքում հաշվի կառնի կոմիտեի առաջարկությունները:

<u>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն</u>

Քրեական գործերով կասկածյալների հետ գործ ունեցող ՀՀ ԱԱԾ աշխատակիցները պարբերաբար հրահանգավորվում են կասկածյալների (կալանավորվածների) նկատմամբ վատ վերաբերմունքի անթույլատրելիության և դրա հետ կապված պատասխանատվության ենթարկվելու մասին: Զեկույցի 58-59-րդ կետերում նշված բացթողումների վերաբերյալ ձեռնարկվում են քայլեր՝ նշված թերությունները վերացնելու ուղղությամբ:

<u>ՀՀ արդարադատության նախարարություն</u>

Նախնական դիտարկումներ

61-րդ կետի վերաբերյալ

Քրեակատարողական հիմնարկների գերբնակեցման և շենքային պայմանների հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկվել և ձեռնարկվում են համապատասխան միջոցներ: 2001 թվականին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած քրեակատարողական համակարգի բարեփոխումների ծրագրով նախատեսվում էր բարեփոխումների իրականացում մի քանի ուղղություններով: Բնական է, որ այդ բարեփոխումներն առաջին հերթին պետք է վերաբերեին ծառայության կարգավիճակի օրենսդրական սահմանմանը: Հենց այս իմաստով էլ՝ 2003 թվականին ընդունվեց «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, իսկ 2005 թվականին ընդունվեց հիշատակված օրենքի բարեփոխված տարբերակը: Քրեակատարողական ծառայության գործունեությունը պատշաճ կերպով ապահովելու համար ցայսօր ընդունվել են բազմաթիվ իրավական ակտեր: Բացի իրավական ապահովումից, բարեփոխումների ծրագիրը նախատեսում էր գործնական և ենթակառուցվածքային միջոցառումներ: Վերջինս ենթադրում էր քրեակատարողական ծառայության, մասնավորապես քրեակատարողական հիմնարկների նյութական բազայի համապատասխանեցում թե նոր կենսական պայմաններին, և թե միջազգային չափանիշներին: Այլ կերպ ասած, անհրաժեշտ է քրեակատարողական հին և ոչ օպտիմալ օգտագործելի հիմնարկների գործունեության դադարեցում, առկա շինությունների վերափոխում և միջազգային չափանիշներին համապատասխանեցում, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխանող նոր քրեակատարողական հիմնարկների կառուցում: Բնական է, որ հիմնարկների՝ խորհրդային ժամանակներից ժառանգություն ստացած արդեն իսկ բարոյապես և ֆիզիկապես մաշված շենք-շինություններն իրենց վիճակով անբավարար են մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան պատժի կատարման համար: Քրեակատարողական ծառայության բարեփոխումների ծրագրի սկզբնական փուլում՝ 2001-2006 թվականներին, վերանորոգվել են քրեակատարողական չորս հիմնարկներ՝ համակարգի առջև ծառացած խնդիրների ժամանակավոր լուծման համար: Իհարկե, պետք է փաստել, որ նույնիսկ վերանորոգված հիմնարկների պայմաններում չենք կարող խոսել համակարգի ենթակառուցվածքների՝ եվրոպական չափանիշներին լիարժեք համապատասխանելու մասին: Այլ

կերպ ասած, մինչ այժմ կատարված բարեփոխումների արդյունքում վերանորոգված քրեակատարողական հիմնարկները կարող են համարվել միայն անցողիկ փուլ ապահովող:
ՈՒսումնասիրելով այլ երկրների փորձը՝ ներկայիս միջազգային չափորոշիչների համապատասխան բանտեր ունենալու գործում, կատարվել է հետևություն, որ նմանատիպ բանտեր կարելի է ունենալ ոչ թե արդեն իսկ առկա անհամապատասխան բանտերը չափորոշիչներին համապատասխանացնելով, այլ կառուցելով եվրոպական չափորոշիչներին համապատասխան բանտեր:
Այդ իսկ պատճառով, քրեակատարողական նոր հիմնարկների կառուցումն անհրաժեշտություն է և խնդրի լուծման նպատակով ՀՀ կառավարության կողմից հավանություն է տրվել քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրին:
Այսպիսով, քրեակատարողական ծառայության՝ օրենքով նախատեսված խնդիրների կատարումը լիարժեք և պատշաճ ապահովելու նպատակով, նախատեսվում է առաջիկա 10 տարիների ընթացքում շահագործման հանձնել չորս նոր քրեակատարողական հիմնարկներ և կապիտալ վերանորոգել ևս չորսը:
Խորհրդային տարիներից մինչև այժմ ուղղիչ հիմնարկներում դատապարտյալները բնակվում էին հիմնականում հանրակացարանային տիպի բնակելի տարածքներում, մինչդեռ անհրաժեշտություն է առաջացել անցում կատարելու ամբողջությամբ խցային տիպի բնակելի տարածքների: Խնդիրը կարևորվում է երկու տեսանկյունից: Նախ՝ այն բխում է միջազգային չափանիշներին համապատասխան՝ պատժի անհատականացման սկզբունքն իրագործելու անհրաժեշտությունից, ապահովելով պայմաններ, որպեսզի քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալները փոքր խմբերով պահվեն առանձին խցերում կամ բնակելի կացարաններում, յուրաքանչյուր խցում ապահովելով առանձնացված սանհանգույց և այլ հարմարություններ: Բացի այդ, խնդիրը կարևորվում է վարչակազմի կողմից անվտանգությունն ապահովելու առումով:
Այսպիսով, քրեակատարողական ծառայության առջև դրված խնդիրները լիարժեք կատարելու նպատակով, նախատեսվում է առաջիկա 10 տարիների ընթացքում շահագործման հանձնել փակ, կիսափակ և կիսաբաց ուղղիչ հիմնարկի, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրի (բաշխվածությունը՝ ըստ տարածաշրջանների) պայմաններին բավարարող քրեակատարողական հիմնարկներ:
Գերծանրաբեռնվածությունը կրճատելու ուղղությամբ նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ հրատապ միջոցառումները՝

- Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կիրառման արդյունավետության բարձրացում,

- Բաց տեսակի ուղղիչ հիմնարկներում պատիժը կրելու չափանիշների վերանայում, որով էականորեն կավելանա բաց տեսակում պատիժ կրող դատապարտյալների թիվը:

Գերծանրաբեռնվածության վերացման ուղղությամբ նախատեսվում է նաև հետևյալ ռազմավարական խնդիրների լուծումը, որը ենթադրում է նաև օրենսդրական բարեփոխումներ՝

- Ազատազրկմանը այլընտրանք հանդիսացող պատժատեսակների թվի ավելացում և կիրառման պրակտիկայի արմատավորում,
- Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու դեպքերի կրճատման ուղղությամբ միջոցառումների իրականացում:

Ինչպես նշվեց 2009թ. դեկտեմբերին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների հայեցակարգը, որով նախատեսվում է մինչև 2018 թվականը կառուցել նոր՝ միջազգային չափանիշներին համապատասխանող քրեակատարողական հիմնարկներ և փակել որոշ հին քրեակատարողական հիմնարկներ, ինչով էապես կբարելավվեն կալանավորված անձանց և դատապարտյալների պահման պայմանները:

Այս խնդիրների լուծման նպատակով 2011 թվականի մարտ ամսին ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի համագործակցությամբ Երևանում կազմակերպվեց գիտաժողով, որին հրավիրված էին մասնակցելու ԵԽ հեղինակավոր փորձագետներ, որտեղ քննարկվեց պատիժների առումով ՀՀ քրեական օրենսդրությունը վերափոխելու անհրաժեշտությունը՝ առավել շատ այլընտրանքային պատժատեսակներ նախատեսելու, վերահիտեգրացման հետ կապված և այլ էական խնդիրներ, որոնց լուծումը անհրաժեշտ է համակարգում առկա թերությունները վերացնելու առումով:

62-րդ կետի կապակցությամբ

Կալանավորված անձանց և դատապարտյալների զբաղվածության առումով հարկ է նշել, որ սույն թվականի հունվար ամսին «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամին արդեն ներկայացվել է դատապարտյալների մասնագիտական հմտությունների անվանացանկ, որոնք ուղղված են ըստ արհեստագործական ունակությունների դատապարտյալներին աշխատանքի ներգրավելուն: Այդ աշխատանքերում կներգրավվեն ինչպես դատապարտյալները այնպես էլ կալանավորված անձինք:

Բացի այդ, 2011թ. ապրիլի 6-ին <<Աբովյան>> քրեակատարողական հիմնարկում բացվել է արտադրական նոր մասնաշենք, որն ունի հրուշակեղենի և հացամթերքի արտադրամասեր, այդ աշխատանքներում ներգրավվելու են տասնյակից ավել կալանավորված անձինք և դատապարտյալներ, ինչը որոշակի առումով կլուծի այդ հինարկում զբաղվածության խնդիրը, նախատեսվում է առաջիկաում ընդլայնել նշված արտադրության ծավալները՝ բացելով նոր արտադրամասեր:
Այժմ նախագծման փուլում է գտնվում լամպերի արտադրամասի իրականացման ծրագիրը, որում ներգրավված կլինեն մոտ 2 տասնյակ դատապարտյալներ և կալանավորված անձինք: ՀՀ քրեակատարողական ծառայությունը <<Աջակցություն դատապարտյալին հիմնադրամի>> հետ համագործակցությամբ մշտապես փնտրում է արդյունավետ եղնականեր դատապարտյալների և կալանավորված անձանց զբաղվածության ապահովման ուղղությամբ:

63-րդ կետի կապակցությամբ

ՀՀ քրեակատորաղական ծառայությունում առկա կոռուպցիոն ռիսկերը կրճատելու ուղղությամբ ՀՀ <<Իրավաբանական ինտիտուտում>> պարբերաբար իրականացվում է վերապատրաստման և ուսուցման դասընթացներ քրեակատարողական ծառայողների համար, որը նպատակ ունի կատարելագործել նրանց գիտելիքները և հմտությունները, ինչպես նաև աջակցել նրանց իրավագիտակցության բարձրացմանը, կոռուպցիայի կրճատման ուղղությամբ միջոցառումներ են նախատեսված նաև <<Քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրում>>: <<2009-2012թ.թ. Կոռուպցիայի դեմ պայքարի ազգային ծրագրում>> ևս նախատեսված են մի շարք միջոցառումներ քրեակատարողական համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ: Վերջին երեք տարիների ընթացքում արձանագրվել է քրեակատարողական ծառայությունում կաշառք վերցնելու երկու դեպք, որոնցով հարուցվել են քրեական գործեր, և անձինք ենթարկվել են քրեական պատասխանատվության, և հեռացվել են համակարգից:

2. Դաժան վերաբերմունք
Զեկույցի 64-րդ 65-րդ կետերի կապակցությամբ

Քրեակատարողական ծառայողի օրինական պահանջները չկատարելու կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտելու դեպքերում քրեակատարողական ծառայողն իրավունք ունի գործադրելու ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք:

Զեկույցում նշված այն դիտարկման կապակցությամբ, ըստ որի ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ազատազրկման դատապարտված դատապարտյալներից ոմանք ենթարկվել են մահակներով ծեծի, պետք է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող որևէ անձ ծեծի չի ենթարկվում: «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն քրեակատարողական հիմնարկում գտնվող անձի կողմից քրեակատարողական ծառայողի օրինական պահանջները չկատարելու կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտելու դեպքում քրեակատարողական ծառայողն իրավունք ունի գործադրելու ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ: Ֆիզիկական ուժ և հատուկ միջոցների կիրառման յուրաքանչյուր դեպքում կազմվում է արձանագրություն, անհրաժեշտության դեպքում ցուցաբերվում է բժշկական օգնություն, ինչի մասին սահմանված կարգով իրազեկվում է հսկողություն իրականացնող համապատասխան մարմիններին:

Զեկույցի 66-ից 68-րդ կետերի կապակցությամբ

Դատապարտյալների միջև ոչ ֆորմալ աստիճանակարգված հարաբերությունները հանդիսանում են սովետական ժամակաշրջանից մնացած երևույթներ, որոնց դեմ ՀՀ քրեակատարողական ծառայության ղեկավարությունը իրականացնում է ակտիվ միջոցներ: Այդ հարաբերությունների վերացմանը կնպաստի նաև ապագայում կառուցվելիք քրեակատարողական հիմնարկների տեխնիկական հագեցվածությունը և խցային պայմանները, որոնք էականորեն կկրճատեն ցանկացած ոչ ֆորմալ հարաբերություններ բանտարկյալների միջև:
Ինչ վերաբերվում է հոմոսեքսուլիստ բանտարկյալներին, ապա դրանց մեկուսացումը պայմանավորված է իրենց իսկ անվտանգության նկատառումներով, և շատ հաճախ արվում է իրենց իսկ խնդրանքով:
Քրեակատարողական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն պատիժը կատարելու կարգն ու պայմանները տարածվում են բոլոր դատապարտյալների վրա՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, քաղաքական և այլ համոզմունքից, ազգային և սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, ծննդից, գույքային կամ այլ դրությունից: Վերոհիշյալ հոդվածի պահանջները, ինչպես նաև կալանավորված անձանց կամ դատապարտյալների միջանձնային հարաբերությունները քրեակատարողական հիմնարկներում ապահովվում և հսկվում են համապատասխան ծառայությունների կողմից:

Այնուամենայնիվ լրացուցիչ անգամ ցուցում կտրվի քրեկատարողական ծառայողներին առավել աչալուրջ հսկելու բանտարկյալների միջև ոչ ֆորմալ հարաբերությունների կանխարգելման խնդրի իրականացման ուղղությամբ:

3. Ցմահ դատապարտվածներ

Զեկույցի 69-րդ և 70-րդ կետերի կապակցությամբ

<<Նուբարաշեն>> քրեակատարողական հիմնարկի 77 և 79-րդ խցերում մետաղյա ճաղավանդակների առկայությունը պայմանավորված է անվտանգության նկատառումներով, ինչպես նաև այդ խցերի տեղակայմամբ: Հաշվի առնելով գերծանրաբեռնվածությունը՝ այժմ ուղիներ են փնտրվում այդ խցերում պահվող դատապարտյալներին այլ խցեր տեղափոխելու ուղղությամբ, սակայն տվյալ հարցը էականորեն կապված է բանտերի ծանրաբեռնվածության հարցի լուծման հետ: Հարցի լուծումը վերջնականապես կկարգավորվի <<ՀՀ քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրի>> իրականացման արդյունքում: Ինչ վերաբերվում է <<Նուբարաշեն>> քրեակատարողական հիմնարկում պահվող ցմահ դատապարտյալների կրությանը, ապա օրենքով կրթության հնարավորությունը ապահովված է և դատապարտյալներից միայն երկուսն են ցանկություն հայտնել ներգրավվել կրթական ծրագրերում և այժմ անցնում են հեռակա ուսուցում: Աշխատանքի հետ կապված խնդիրները պայմանավորված են օբյեկտիվ հանգամանքերով, այն է շենքային պայմաններ, սոցիալ տնտեսական վիճակ և այլն, սակայն ՀՀ քրեակատարողական ծառայությունը ուղիներ է փնտրում նաև այս կատեգորիայի դատապատյալներին աշխատանքով ապահովելու ուղղությամբ: ՀՀ քրեակատարողական ծառայության սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ստորաբաժանումը ակտիվորեն ներգրավված է ցմահ դատապարտյալների հետ տարվող աշխատանքներում:

Զեկույցի 69-րդ, 70-րդ և 71-րդ կետերի կապակցությամբ
<<Երևան-Կենտրոն>> քրեակատարողական հիմնարկում պահվող երկու ցմահ դատապարտյալներին հեռուսատացույցով ապահովելու կապակցությամբ, հարկ է նշել, որ ըստ ՀՀ օրենսդրությամբ քրեակատարողական ծառայությունը չունի դատապարտյալին հեռուսատցույցով ապահովելու պարտականություն, նշված հիմնարկի ղեկավարությունը չի արգելում դատապարտյալին ունենալ հեռուստացույց, սակայն միիևնույն ժամանակ պարտավոր չէ ապահովել դրանով:

Դատապարտյալներին թույլատրվում է իրենց հաշվին կամ հարազատների միջոցով ձեռք բերել հեռուստացույց: Զեկույցում նշված «Երևան–Կենտրոն» ՔԿՀ-ի երկու դատապարտյալների կողմից իրենց կամ հարազատների միջոցներով ձեռք բերելու վերաբերյալ առաջարկ չի եղել:
Ինչ վերաբերվում է նրանց խցային պայմաններին, ապա <<ՀՀ քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծարգրով>> նախատեսվում է ընդհանրապես դադարեցնել <<Երևան-Կենտրոն>> քրեակատարողական հիմնարկի գործունեությունը: Ինչ վերաբերվում է նրանց այլ վայր տեղափոխելու խնդրին, ապա այն գտնվում է քննարկման փուլում:

Զեկույցի 72-րդ կետի կապակցությամբ

Ցմահ ազատազրկման դատապարտվածները դատապարվում են առանձնապես ծանր հանցագարծություններ կատարելու համար և որպես կանոն ունեն ռիսկայնության բարձր աստիճան, նրանց ռիսկի գնահատումը յուրաքանչյուր դեպքում կատարվում է առանձնացված, սակայն որոշակի գնահատական ստանալու համար անհրաժեշտ է բավարար ժամանակ, որի ընթացքում կհաստատվի տվյալ դատապարտյալի առավել ցածր ռիսկայնության աստիճանը: Տեխնիկապես առավել հագեցված հիմնարկներ ունենալու դեպքում, երբ զգալիորեն կկրճատվի դատապարտյալի փախուստի կամ այլ հակաօրինական քայլեր կատարելու հավանականությունը, առավել լայն հնարավորություններ կստեղծվեն առանց ձեռնաշղթաների դատապարտյալների խցերից դուրս բերելու համար: Դատապարտյալներին ձեռնաշղթաներով խցերից հանելու պրակտիկան պայմանավորված է նաև հենց իրենց անվտանգությամբ:

Զեկույցի 73-րդ կետի կապակցությամբ

ՀՀ օրենսդրությամբ տեսակցությունների առավելագույն քանակի սահմանափակում չկա, օրենքով նախատեսված է միայն նվազագույն չափը, ինչը բխում է դատապարտյալի շահերից:
ՀՀ օրենսդրության համաձայն դատապարտյալին կարճատև տեսակցություն տրամադրվում է ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչև չորս ժամ տևողությամբ, իսկ համատեղ բնակվելու իրավունքով և միայն մերձավոր ազգականների հետ երկարատև տեսակցություն տրամադրվում է երկու ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչև երեք օր տևողությամբ: Առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տրամադրվում է տարվա ընթացքում առնվազն երեք կարճատև և մեկ

երկարատև տեսակցություն: Կալանավորված անձին ամսվա ընթացքում տրամադրվում է առնվազն երկու տեսակցություն՝ մինչև երեք ժամ տևողությամբ: Այսինքն, ՀՀ օրենսդրությամբ տեսակցությունների թվի սահմանափակում չկա, այն առաջանում է միայն այն դեպքում, երբ անազատության մեջ գտնվող անձը ունի գործող կարգապահական տույժ: Տեսակցությունների տրամադրման թույլտվությունը տալիս է քրեակատարողական հիմնարկի պետը կամ նրան փոխարինող անձը:
Ինչ վերաբերում է բաժանարար միջնորմերով տեսակցություններ կազմակերպելուն, ապա պետք է նշել, դատապարտյալներին տեսակցություններից հավասար պայմաններով օգտվելու հնարավորությունը ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ապահովված է, իսկ բաժանարար միջնորմերով տեսակցությունները տրամադրվում են անվտանգության ապահովման նկատառումներից ելնելով, քանի որ հիմնարկն ունի հնարավորություն նաև տրամադրելու տեսակցություն առանց միջնապատերի, այդ թվում երակրատև տեսակցություններ և տրամադրում է այդ տեսակցությունները: Միջնապատով տեսակցությունները տրամադրվում են միայն, երբ առկա է անվտանգության խնդիր:

Զեկույցի 74-րդ կետի կապակցությամբ

Առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց միասին պահելու պահանջը սահմանված է օրենքով, սակայն միևնույն ժամանակ օրենքը նախատեսում է ցմահ ազատազրկման դատապարտված անձի մեկուսացվածության առավել ցածր աստիճանի հիմնարկ տեղափոխելու հնարավորություն, մասնավորապես պատժի առնվազն 20 տարին կրելուց հետո: Խնդրին առավել ամբողջական լուծում տալու համար օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը կքննարկվի ՀՀ արդարադատության նախարարությունում:

4. Օտարերկրյա դատապարտյալներ

Զեկույցի 75-րդ և 76-րդ կետի կապակցությամբ

Գերծանրաբեռնվածության խնդիրն առկա է բոլոր քրեակատարողական հիմնարկներում, և դրա վերացման ուղղությամբ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ (տես՝ Զեկույցի 61-րդ կետի կապակցությամբ ներկայացված մեկնաբանությունը):
Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձը ապահովվում է օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար անհրաժեշտ սննդով: Սննդի որակը և սննդարարությունը սահմանված չափաբաժիններից որևէ

կերպ պակասեցնելը, այդ թվում՝ որպես տույժի միջոց, արգելվում է: Հղի, կերակրող մայր, անչափահաս կամ հիվանդ դատապարտյալն ապահովվում է հավելյալ սննդով:
Բացի այդ, ՀՀ կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագրում և գերակա խնդիրներում նախատեսվել է վերանայել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձնաց սննդի օրական միջին չափաբաժինները, որով պետք է նախատեսվի հատուկ սննդակարգ օտարերկյա այն քաղաքացիների համար, ովքեր ունեն հատուկ սննդակարգի կարիքներ:

Զեկույցի 78-րդ կետի կապակցությամբ

Օտարերկրյա դատապարտյալների գործունեության ծրագրերի, օտարալեզու գրականության բացակայության, օտարերկրյա դատապարտյալների համար հասկանալի լեզուներով ընթերցանության նյութեր ապահովելու նպատակով նախատեսվում է 2011 թվականի մայիս ամսից պարբերաբար համագործակցել դեսպանատների հետ՝ նրանց միջոցով օտարերկրյա գրականություն ստանալու և «Նուբարաշեն», «Վարդաշեն» ՔԿՀ-ին հանձնելու համար:
Օտարերկրացի դատապարտյալների ըստ խցերի տեղաբաշխման ընթացքում հնարավորինս հաշվի է առնվում միջանձնային հաղորդակցման հնարավորությունները, մշակութային յուրահատկությունները, ինչպես նաև նրանց ազգությունը, այն առումով, որ միևնույն ազգի ներկայացուցիչները հնրավորինս տեղաբաշխվում են նույն խցերում: ՀՀ քրեակատորղական ծառայության սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ստորաբաժանումը հատուկ ուշադրություն է դարձնում օտարարեկրացի ազատազրկվածների հետ տարվող աշխատանքներին:

Զեկույցի 79-րդ կետի կապակցությամբ

Համաձայն օրենքի յուրաքանչյուր դատապարտյալի մեկ հեռախոսային խոսակցության տևողությունը չի կարող գերազանցել 15 րոպեն, բացի այդ, հաշվի առնելով ազատազրկված կողմից ներկայացված հիմնավոր պատճառաբանությունը, այդ ժամկետը կարող է երկարացվել ևս 10 րոպեով:
Ինչ վերաբերվում է Կոմիտեի այն առաջարկին, որ օտարերկրյա դատապարտյալների դեպքում տեսակցությունների իրավունքը փոխարինվի հեռախոսային խոսակցություններով, ապա այն ընդունելի է և կքննարկվի օրենքում համապատասխան փոփոխությունների կատարելու հարցը:

5. Դատապարտյալների մնացած մասին պահելու պայմանները

ա. Այց Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկ

Զեյկույցի 81-րդ կետի կապակցությամբ

Չնայած Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում առկա գերբնակեցվածությանը, բոլոր ազատազրկվածները ապահովված են անհատական քնելու տեղերով: Գերբնակեցվածության, ինչպես նաև խցերի վատ վիճակի հետ խնդրի հետ կապված ՀՀ իշխանությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ (տես՝ 61-րդ կետի մեկնաբանությունը):
Ինչ վերաբերվում է հոմոսեքսուլ դատապարտյալների խցերին, ապա <<Նուբարաշեն>> քրեակատարողական հիմնարկում բոլոր խցերն ունեն վերանորոգման լուրջ կարիք: Էլեկտրականության անջատումները <<Նուբարաշեն քրեակատարողակն հիմնարկում>> տեղի են ունենում շատ հազվադեպ և տևում են շատ կարճ:
Զեկույցում նշված, ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում կատարված դիտարկման կապակցությամբ պետք է նշել, որ կալանավորվածներին պահելու վայրի մասնաշենքը 2007թ.-ին կապիտալ վերանորոգվել է, սակայն կիսաքանդ սանհանգույցները անբարեխիղճ շահագործման արդյունք են: Լոգարաններն ապահովված են համապատասխան գույքով, լոգանքը տրամադրվում է ներքին կանոնակարգին համապատասխան:
Այժմ <<Նուբարաշեն>> քրեակատարողական հիմնարկում ջրամատակարարումն ապահովում է օրը 12-ից 14 ժամ:

Զեկույցի 82-րդ կետի կապակցությամբ

Ոչ աշխատանքային օրերին կալանավորված անձանց և դատապարտյալներին բացօթյա զբոսանք տրամադրելու իրավունքի իրացման նպատակով ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ և ներկայումս քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց ոչ աշխատանքային օրերին ևս սահմանված կարգով տրամադրվում է բացօթյա զբոսանք:

Զեկույցի 83-րդ կետի կապակցությամբ

Նշված կարճաժամկետ նպատակների հետ կապված խնդիրները ընդունելի են դրանց մի մասի պատասխանները ներկայացվեցին նախորդող կետերում: Ինչ վերաբերվում է միջնաժամկետ նպատակներին, ապա դրանց լուծումները նախատեսվում է տալ <<Քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրի>> իրականացմամբ:

Զեկույցի 84-րդ կետի կապակցությամբ

Բացի սույն պատասխանների 61-րդ կետում նշվածից անհրաժեշտ է ավելացնել նաև, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրի հիմնական խնդիրներից մեկը քրեակատարողական հիմնարկների խցերի և կացարանների սանիտարական բոլոր պահանջներին համապատասխանեցնելն է, ընդ որում, այս ծրագրի շրջանակներում ուշադրություն է դարձվում այդ կառույցների ծավալներին, նվազագույն մակերեսի ապահովմանը, լուսավորությանը, բավարար ջերմության ապահովմանը և օդափոխմանը: Հատկապես կարևորվում է նաև բանտային կառույցները սանիտարական տեսակետից ճիշտ կառուցելու գործոնը: Խցերում կամ դրան կից տեղակայված զուգարանները պետք է ունենան կափարիչով զուգարանակոնքեր և պետք է գոնե միջնապատով առանձնացված լինեն բնակելի շինությունից: Դա հատկապես կարևոր է այլ հիմնարկներում, որտեղ ազատությունից զրկված անձինք ճաշում են խցերում:

Նախատեսվող բարեփոխումների շրջանակում ստեղծվող քրեակատարողական հիմնարկները միջազգային չափանիշներին համապատասխանելու և կառավարելիության բարձր աստիճան ունենալու համար պետք է բավարարեն կառուցվածքային որոշակի պահանջների, մասնավորապես՝ անհրաժեշտ է, որ քրեակատարողական հիմնարկների բոլոր շինություններն ունենան քրեակատարողական հիմնարկին համապատասխան ջրամատակարարման և ջրահեռացման, ջեռուցման, օդափոխության, բնական և արհեստական լուսավորության, էլեկտրական սնուցման, կապի և այլ հնարավորություններ՝ հակահրդեհային, սանիտարահիգիենիկ կանոնների պահպանմամբ: Միաժամանակ, բոլոր նշված հանգույցները գործառութային իմաստով պետք է լինեն միմյանցից տարանջատված, սակայն ծավալային իմաստով պետք է լինեն մեկ ամբողջություն: Հիմնարկները պետք է ապահովված լինեն անվտանգության ապահովման ժամանակակից տեխնոլոգիաներով՝ իրենց տեսակին համապատասխան: Անհրաժեշտ է, որ ազատությունից զրկված անձանց բնակեցման համար նախատեսված բնակելի մասնաշենքն ունենա հետևյալ հանգույցները՝

- կացարանային,
- ստացիոնար բուժսպասարկման,
- խոհանոցային,
- կարանտինային,
- պատժախցային
- կարճատև և երկարատև տեսակցությունների կազմակերպման:

Կացարանային հանգույցը անհրաժեշտ է նախատեսել այնպես, որ յուրաքանչյուր անձին բաժին հասնի առնվազն 5 քառակուսի մետր խցային կամ կացարանային տարածք: Կացարանային հանգույցում անհրաժեշտ է զբոսանք կազմակերպել յուրաքանչյուր բլոկում՝ պահպանելով միջազգային՝ բաց «երկինք և բացօթյաե չափանիշը: Տարածքային պահանջները պետք է համապատասխանեն եվրոպական չափանիշներին, խցերը և կացարանները պետք է ունենան սանհանգույց և լոգանքի հարմարություններ: Ստացիոնար բուժսպասարկման հանգույցի կազմակերպումը պետք է նախատեսված լինի տվյալ հիմմարկի լրակազմի 10%- ի հաշվարկով, յուրաքանչյուր խցում կացարանում՝ 2-3 հոգու հաշվարկով: Յուրաքանչյուր անձին պետք է բաժին հասնի առնվազն 5 քառակուսի մետր տարածք: Բլոկները պետք է ունենան զբոսանքի կազմակերպման հնարավորություն: Պատժախցային հանգույցը պետք է կազմակերպվի տվյալ հիմնարկի 5%-ի հաշվարկով, (ընդ որում՝ մեծ մասը մենախուց): Յուրաքանչյուր անձին պետք է բաժին հասնի առնվազն 5 քառակուսի մետր խցային տարածք: Բլոկը պետք է ունենա զբոսանքի կազմակերպման հնարավորություն: Յուրաքանչյուր խուց պետք է ունենա սանհանգույց, սակայն լոգանքի հնարավորությունը պետք է ապահովվի բլոկի ընդհանուր լոգարանում: Կարանտինային բլոկը պետք է կազմակերպել տվյալ հիմնարկի 2,5%-ի հաշվարկով, երկու, չորս և վեց տեղանոց: Յուրաքանչյուր անձին պետք է բաժին հասնի առնվազն 5 քառակուսի մետր խցային տարածք: Բլոկը պետք է ունենա զբոսանքի կազմակերպման հնարավորություն: Խոհանոցային հանգույցը անհրաժեշտ է նախատեսել կալանավորվածներին պահելու վայրերի, փակ, կիսափակ և բուժական ուղղիչ հիմնարկների համար սնունդը խուց մատակարարելու սկզբունքով, իսկ կիսաբաց և բաց ուղղիչ հիմնարկներում՝ ճաշարանային ձևով՝ իր ֆունկցիոնալ և պահեստային համապատասխան հարմարություններով: Երկարատև տեսակցությունների կազմակերպման հանգույցը պետք է ներառի սանիտարահիգիենիկ և խոհանոցային պայմաններ ունեցող սենյակներ՝ յուրաքանչյուրն առնվազն 12 քառակուսի մետր (ՀՀ քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրի ժամանակացույցը կցվում է):

<<Կոշ>> քրեակատարողական հիմնարկ

Զեկույցի 86, 87 , 88-րդ, 89-րդ և 90-րդ կետերի կապակցությամբ

<<Կոշ>> քրեակատարողական հիմնարկում առկա թերությունների հաղթահարումը ևս նախատեսվում է ՀՀ քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրով, որի կապակցությամբ մեկնաբանությունները տրվել են նախորդ կետերում:

<<Կոշ>> քրեակատարողական հիմնարկում սննդի որակի հետ կապված խնդիրը կքննարկվի ՀՀ քրեակատարողական ծառայության ղեկավարության կողմից և կառնվի հատուկ ուշադրության տակ:
<<Կոշ>> քրեակատարողական հիմնարկում բաղնիքները հիմնովին վերանորոգվել են:

Զեկույցի 91-րդ կետի կապակցությամբ

Զեկույցում նշված դիտարկումը քրեակատարողական հիմնարկների կրթական ծրագրերի, ոչ բավարար քանակությամբ հեռուստացույցների առկայության, աղքատիկ գրադարանի, դատապարտյալների աշխատելու հնարավորության, սպորտային խաղերի և ժամանցի ծրագրերի բացակայության վերաբերյալ, հարկ է նշել, որ սույն թվականի հունվար ամսին «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամին արդեն ներկայացվել է դատապարտյալների մասնագիտական հմտությունների անվանացանկ, որոնք ուղղված են ըստ արհեստագործական ունակությունների դատապարտյալներին աշխատանքի ներգրավելուն: Տարվա ընթացքում նախատեսվում է մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում, մասնավորապես՝ թենիսի, ֆուտբոլի առաջնությունների, ինտելեկտուալ խաղ մրցույթի կազմակերպում, գրադարանների համալրում:

Զեկույցի 92-րդ կետի կապակցությամբ

Ոչ միայն հոմոսեքսուալ այլ ընդհանրապես բոլոր ազատազրկվածների աշխատանքի անցնելը իրականացվում է բացառապես նրանց դիմումի հիման վրա: Աշխատանքում ներգրավված բոլոր դատապարտյալներն ունեն հանգստյան օրեր:
Հոմոսեքսուալ ազատազրկվածների նկատմամբ այլ դատապարտյալների որոշակի բացասական վերաբերմունքն իրոք առկա է քրեակատարողական հիմնարկներում, այդ վերաբերմունքը ունի անցյալից եկող արմատներ, որի վերացման համար անհրաժեշտ է մենթալիտետի որոշակի փոփոխություն և բնականաբար որոշակի ժամանակ: Քրեակատարողական հիմնարկների ղեկավարության կողմից ձեռնարկվում են բոլոր հնարավոր միջոցները խտրական ցանկացած վերաբերմունք նրանց նկատմամբ բացառելու ուղղությամբ:

գ. Վարդաշենի քրեակատարողական հիմնարկ

Զեկույցի 93-րդ և 94-րդ կետերի կապակցությամբ

<<Վարդաշեն>> քրեակատարողական հիմնարկի գործունեության դադարեցումը նախատեսվում է իրականացնել 2018 թվականին, երբ շահագործման կհանձնվի նորակառույց <<Երևան>> քրեակատարողական հիմնարկը: Հիմնարկի գերծանրաբեռնվածության և նյութակենցաղային որոշ խնդիրներ կլուծվեն նշված նոր քրեակատարողական հիմնարկի շահագործմամբ, չնայած մինչ այդ ևս կձեռնարկվեն հնարավոր բոլոր քայլերը այդ թերությունները վերացնելու ուղղությամբ:
Այժմ առկա շենքային պայմանները թույլ չեն տալիս որոշ քրեակատարողական հիմնարկներում ապահովել շաբաթական նվազագույնը 2 անգամ լոգանքի ընդունումը, սակայն ձեռնարկվում են քայլեր առկա սուղ պայմաններում այդ հնարավորությունն ապահովելու համար: Այդ հնարավորութունն ունենալուց հետ ՀՀ օրենսդրության մեջ կկատարվի համապատասխան փոփոխություն լոգանք ընդունելու իրավունքը շաբաթական նվազագույնը մեկ անգամից դարձնելով 2 անգամ:

Զեկույցի 95-րդ և 96-րդ կետերի կապակցությամբ

Ինչ վերաբերվում է <<Վարդաշեն>> քրեակատարողական հիմնարկի փակ տիպում պահվող ազատազրկվածներին օրվա մեծ մասը խցում անցկացնելուն, ապա այդ հանգամանքը պայմանավորված է փակ տիպի առանձնահատկությամբ: Զբաղվածության խնդիրը առկա է ոչ միայն քրեակատարողական համակարգում այլ ողջ հասարակության մեջ: Բացի այդ, <<Վարդաշեն>> քրեակատարողական հիմնարկում պահվում են հիմնականում իրավապահ մարմինների նախկին աշխատակիցները, որոնց մասնագիտական առանձնահատկությունների պատճառով, աշխատանքով ապահովելը ներկայացնում է որոշակի դժվարություն:

Զեկույցի 97-րդ կետի կապակցությամբ

Անձնական անվտանգության շահերից ելնելով մեկուսացված դատապարտյալների նկատմամբ տարվում են առավել խորը սոցիալ-հոգեբանական աշխատանքներ, այնուամենայնիվ նշված դեպքի հետ կապված հանձնարարական կտրվի կազմել անհատական գործողությունների ծրագիր և առաջնորդվել այդ մասնագիտական ծրագրով:

6. Առողջապահություն
ա. բժշկական անձնակազմի միջոցներն ու հնարավորությունները

Զեկույցի 98-րդ, 99-րդ, 100-րդ, 101-րդ և 102-րդ կետերի կապակցությամբ

Քրեակատարողական հիմնարկների բժշկական անձնակազմի, ստորաբաժանման միջոցների և հնարավորությունների հետ կապված պետք է նշել, որ ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿՀ-ի 2 թափուր հաստիքներից համալրվել է 1-ը: «Կոշ» և «Վարդաշեն» ՔԿՀ-ների 3-րդ կարգի մասնագետների թափուր հաստիքների համալրման ուղղությամբ տարվում են աշխատանքներ: Բժշկական աշխատողների գիշերային և շաբաթ-կիրակի օրերին հերթապահությունների հարցը կատարվում է առկա անձնակազմի ուժերով: «Կոշ» ՔԿՀ-ի ատամնաբույժի համալրման հարցը ընթացքում է, իսկ այդ ծառայությունը ժամանակավորապես մատուցվում է նեղ մասնագիտացված բուժակի կողմից:

Զեկույցի 103-րդ և 104-րդ կետերի կապակցությամբ

2009-2010 թվականներին նախատեսված էր «Կոշ» ՔԿՀ-ին հատկացնել ստերիլիզացիոն սարք, սակայն ֆինանսական միջոցների բացակայության պատճառով այն չի կատարվել: Հարցը ներառված է 2011 թվականի բժշկական սարքերի ձեռքբերման ծրագրում:
Ինչ վերաբերվում է Զեկույցում նշված այն դիտարկմանը, ըստ որի բժշկական հաստատություններում պահվել են մի քանի դատապարտյալներ, որոնք չեն ունեցել այնպիսի առողջական խնդիրներ, որոնց առկայության պարագայում անհրաժեշտ լիներ նրանց հիմնարկի բժշկական հաստատությունում պահելը, ինչպես նաև «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ տեղափոխելու լուրջ հետաձգումներին, ապա ՀՀ ԱՆ ՔԿՎ բժշկական սպասարկման բաժնի և բժշկական աշխատանքային հանձնաժողովի կողմից պարբերաբար կատարվել են այցելություններ քրեակատարողական հիմնարկներ, որոնց արդյունքում ներկայումս ստացիոնար բուժում են ստանում միայն դրա կարիքը ունեցող կալանավորված անձինք և դատապարտյալները: «Դատապարտյալների հիվանդանոց» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ների բժշկական սպասարկման բաժնի ստացիոնար ընդունվում են բացառապես ստացիոնար բուժման կամ հետազոտման կարիք ունեցողները: Ինչ վերաբերվում է հետաձգումներին, ապա նման երևույթներ չեն արձանագրվել, անհապաղ ստացիոնար բուժման կարիք ունեցողների տեղափոխությունները կատարվում են շտապ կարգով:

Զեկույցի 105-րդ կետի կապակցությամբ

Չնայած այն հանգամանքին, որ դեղորայքի ձեռք բերման հետ կապված առկա են որոշակի ֆինանսական դժվարություններ, այնուամենայնիվ աճող ֆինանսավորման հետ մեկտեղ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունը ձեռք է բերում նորանոր դեղորայք և բժշկական պարագաներ:

բ. բժշկական զննություն ընդունելիս/բռնության կանխարգելում

Զեկույցի 106-րդ և 107-րդ կետերի կապակցությամբ

Ինչ վերաբերում է քրեակատարողական հիմնարկներ մուտք գործած անձանց մակերեսային բժշկական զննություն կատարելուն («Կոշ»), հիմնարկի անձնակազմի կամ ուղեկցող ոստիկանական անձնակազմի ներկայությամբ («Նուբարաշեն», «Վարդաշեն»), բժշկական զննություն կատարելուն պետք է նշել, որ ՀՀ ԱՆ ՔԿՎ պետի կողմից 2010 թվականին բոլոր քրեակատարողական հիմնարկներին հանձնարարվել է պատշաճ ձևով կատարել կալանավորված անձանց և դատապարտյալների առաջնային բժշկական զննումը և արդյունքները գրանցել բժշկական մատյանում:
ՀՀ ԱՆ ՔԿՎ բժշկական սպասարկման բաժնի կողմից քրեակատարողական հիմնարկների բժշկական ստորաբաժանումներին հանձնարարվել է խստորեն պահպանել ՀՀ կառավարության 26.05.2006 թվականի թիվ 825-Ն որոշման 37-րդ կետի պահանջները, այն է՝ բոլոր բժշկական զննությունները պետք է անցկացվեն քրեակատարողական կամ այլ ծառայությունների լսողության սահմաններից դուրս, կալանավորվածներին պահելու վայր ընդունելիս (այդ թվում՝ տարանցմամբ), անձինք անցնում են նախնական բժշկական զննություն, որի արդյունքներն արձանագրվում են համապատասխան մատյանում՝ բժշկական օգնություն ցույց տալու և մարմնական վնասվածք կամ առողջական վիճակի վերաբերյալ այլ գանգատ արձանագրելու նպատակով: Կալանավորված անձի կամ դատապարտյալի բժշկական զննության արձանագրումը պետք է ներառի՝
1. բժշկական զննության ենթակա անձի կողմից արված բոլոր հայտարարությունների ամբողջական պատկերը (ներառյալ իր առողջական վիճակի նկարագրությունը և վատ վերաբերմունքի մասին ցանկացած հայտարարություն),
2. օբյեկտիվ բժշկական զննության արդյունքների ամբողջական պատկերը,
3. բժշկի եզրակացությունը՝ հիմնված սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերի վրա:
Եթե բժշկական զննության արդյունքում հայտնաբերված մարմնական վնասվածքը կամ առողջության վիճակի վերաբերյալ գանգատը կալանավորված անձի կամ դատապարտյալի հայտարարության հետևանք է, նրա նկատմամբ հանցագործության հատկանիշներ պարունակող որևէ արարք, ապա բժշկական զննություն իրականացնող անձը դրա մասին

տեղյակ է պահում կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմին:
Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմը դրա մասին տեղյակ է պահում իրավասու մարմիններին:
Ցանկացած բժշկական զննության արդյունքները, ինչպես նաև կալանավորված անձի հայտարարությունները և բժշկի եզրակացությունները պետք է մատչելի լինեն կալանավորված անձի կամ դատապարտյալի և վերջինիս կողմից լիազորված անձի համար:

գ. տուբերկուլյոզ
Զեկույցի 108-րդ կետի կապակցությամբ

Վերջին չորս տարիների կտրվածքով քրեակատարողական հիմնարկներում տուբերկուլյոզի հիվանդության աճի և մահացության դեպքերի վերաբերյալ վիճակագրության տվյալներ,

N	Տարի	Ռեգուլյար		ՏԲ	Բազմադեղորայքային		
		Քանակ		Այդ թվում նոր դեպքեր			
	Մահ	Քանակ		Այդ թվում նոր դեպքեր			
		Մահ					
1.	2007	39	16	0	17	0	0
2.	2008	61	33	1	20	3	1
3.	2009	70	43	0	27	12	0
4.	2010	45	28	0	25	7	0

դ. այցելած բանտային հաստատություններում առկա հոգեբուժական և հոգեբանակն օգնությունը

Զեկույցի 109-րդ կետի կապակցությամբ
Զեկույցում նշված կալանավորված անձանց և դատապարտյալների հոգեբուժական օգնության տրամադրման անբավարար վիճակի, ՀՀ ԱՆ «Կոշ» և «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներում հոգեբույժների բացակայության կապակցությամբ պետք է նշել, որ քրեակատարողական հիմնարկներին հոգեբուժական օգնություն մատուցվում է պարբերաբար՝

«Դատապարտյալների հիվանդանոց» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ների հոգեբույժների կողմից: Բժշկական աշխատանքային հանձնաժողովի կազմում ընդգրկված է հոգեբույժ: Հոգեբուժական բնույթի ստացիոնար բժշկական օգնություն ստանալու նպատակով կալանավորված անձինք կամ դատապարտյալները տեղափոխվում են «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի հոգեբուժական բաժանմունք: Անհրաժեշտության դեպքում դատապարտյալները տեղափոխվում են նաև ՀՀ առողջապահության նախարարության Նուբարաշենի հոգեբուժական կլինիկա:

ե. Երևանի բանտային հիվանդանոցի հոգեբուժական մեկուսարանը
Զեկույցի 112-րդ, 113-րդ և 114-րդ կետերի կապակցությամբ

Ինչ վերաբերում է այն դիտարկմանը, որ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի հոգեբուժական բաժանմունքում հոգեկան խանգարումներով հիվանդները պահվում են սոմատիկ հիվանդների հետ, հոգեբուժական բաժանմունքի սենյակները վերանորոգման կարիք ունեն, չեն պահպանվում անձնական հիգիենայի կանոնները, հիվանդների զբաղմունքի հնարավորությունները տարրական են, չկան համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ, ապա պետք է նշել, որ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի հոգեբուժական բաժանմունքում ներկայումս բուժում են ստանում միայն հոգեկան խանգարում ունեցող հիվանդներ, իսկ սոմատիկ հիվանդները տեղափոխվել են համապատասխան բաժանմունքներ: Պահպանվում են յուրաքանչյուր հիվանդի համար սահմանված անհրաժեշտ տարածքային նորմատիվները: Վերանորոգվել են սենյակները, նորացվել և փոխվել է սանհանգույցը, հիվանդներին տրամադրվում են հիգիենայի պարագաներ: Բաժանմունքի սանիտարին հանձնարարվել է կատարել հիվանդների ամենօրյա համայց՝ պարբերաբար անցկացնել սանիտարական գրագիտության աշխատանքներ անձնական հիգիենայի կանոնների պահպանման վերաբերյալ: Հիվանդներին տրված է ոչ մոլուցքային խաղերի և հեռուստացույց դիտելու հնարավորություն, նրանք օգտվում են գեղարվեստական գրականությունից:
ՀՀ առողջապահության նախարարության հետ սերտ համագործակցության շրջանակներում կազմակերպվում են հանրապետության առաջատար հոգեբույժների կողմից խորհրդատվություններ:

Զեկույցի 115-րդ և 116-րդ կետերի կապակցությամբ
Դատապարտյալների հիվանդանոց հոգեբուժական բաժանմունքի համալրման ուղղությամբ ձեռնարկվել և ձեռնարկվում են համապատասխան միջոցներ: Առողջապահության նախարարության 2010թ. մայիսի 3-ի

կարգավորումներով նախատեսված գրանցամատյային վերաբերյալ տեղեկություններ չկան: Քայլեր կձեռնարկվեն ճշտելու նման կարգավորումների գոյության փաստը և կքննարկվի դրանցով առաջնորդվելու նպատակահարամարությունը:

զ. ինքնասապնության կանխարգելումը

Զեկույցի 117-րդ կետի կապակցությամբ
Նշված կետում ներկայացված դիտողությունը ընդհանուր առմամբ ընդունելի է, սակայն պետք է նշել, որ ինքնասպանությանը հակված ազատազրկվածների հետ մշտապես իրականացվում են հոգեբանական աշխատանանքներ համապատասխան մասնագետների միջոցով: Այնուամենայնիվ, ոլորտը կանոնակարգելու անհրաժեշտությունն առկա է և թերևս անհրաժեշտ է ունենալ հստակ կանոնակարգ-ուղեցույց, որը կօգնի համապատասխան մասնագետներին ադեկվատ կերպով արձագանքելու ինքնասպանության հակում ունեցող ազատազրկվածներին, ինչպես նաև կկարգավորի այդ խնդիրները:

է. հացադուլ
Զեկույցի 118-րդ կետի կապակցությամբ

Հացադուլավոր ազատազրկվածները մշտապես գտնվում են բժիշկների հսկողության ներքո: Ըստ օրենքի նրանք պահվում են մյուս ազատազրկվածներից առանձին: Ինչ վերաբերվում է նրանց կարգապահական բաժնի ներսում պահելուն, ապա պետք է նշենք, որ օրենսդրությամբ կարգապահական խցերը (պատժախցերը) սովորական խցերից տարբերվում են միայն նրանով, որ ցերեկային ժամերին կարգապահական խցերից հավաքվում են անկողնային պարագաները: Բնականաբար հացադուլավորների դեպքում նման բան չի արվում: Այդուամենայնիվ, նշված ոլորտը ևս ունի կանոնակարգման կարիք:

7. CPT մանդատին վերաբերվող այլ խնդիրներ
ա. բանտի անձնակազմ
Զեկույցի 119-րդ կետի կապակցությամբ
Քրեակատարողական համակարգի կադրային հագեցվածության վիճակը հետևանք է սոցիալ տնտեսական պայմանների, որոնք էլ ավելի սրվեցին համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով: Այնումենայնիվ, այդ խնդիրը մշտապես գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության ներքո, ՀՀ կառավարության ապրիլի 14-ի որոշմամբ ՀՀ քրեակատարողական ծառայությունում ավելացվել է 100 նոր հաստիքային միավոր, որի նպատակն

է հենց զեկույցի նշված պարագրաֆում առաջ քաշված խնդիրների որոշակի չափով լուծումը:

բ. կարգապահություն

Զեկույցի 120-րդ կետի կապակցությամբ

Կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ «պատժախուց տեղափոխում» կարգապահական տույժի կիրառման ժամանակային սահմանափակումները մշտապես պահպանվում են և օրենսդրությամբ նախատեսված ժամանակահատվածից ավել ոչ մի անազատության մեջ պահվող անձ տույժի չի ենթարկվում: Ինչ վերաբերում է զեկույցում նշված դեպքերին, որ դատապարտյալները պատժախցում պահվել են 20 օր ժամկետով, ապա պետք է նշել, որ այս դեպքում ոչ թե դատապարտյալին տրվել է մեկ կարգապահական տույժ՝ 20 օր ժամկետով պատժախուց տեղափոխելու վերաբերյալ, այլ վերջիններս տարբեր խախտումների համար ենթարկվել են 2 կամ ավելի կարգապահական տույժերի և դրանց կրման արդյունքում պատժախցում գտնվելու ժամանակահատվածը կազմել է 20 օր: Այսինքն, դատապարտյալը կատարել է կարգապահական խախտում, կատարած խախտման համար նրա նկատմամբ կիրառվել է, օրինակ, 10 օր ժամկետով «պատժախուց տեղափոխում» կարգապահական տույժը և պատժախցում գտնվելու ընթացքում դատապարտյալը թույլ է տվել նոր կարգապահական խախտում, որի համար ևս նրա նկատմամբ կիրառվել է 10 օր ժամկետով պատժախուց տեղափոխում կարգապահական տույժը, արդյունքում դատապարտյալը պատժախցում է հայտնվել 20 օրով, բայց ոչ թե մեկ, այլ մի քանի տարբեր կարգապահական խախտումների համար:

Զեկույցի 121-րդ կետի կապակցությամբ

Կատարված խախտման կապակցությամբ կալանավորված անձից կամ դատապարտյալից պահանջվում է գրավոր բացատրություն, իսկ այն տալուց հրաժարվելու դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն: Իրավունքի այս ամրագրումը հանգեցնում է կալանավորված անձին կամ դատապարտյալին վերագրվող խախտումների կատարման կապակցությամբ նախապես վերջինիս տեղեկացնելու հանգամանքին, ինչպես նաև նրա լսված լինելու, անհրաժեշտության դեպքում վերջինիս կողմից մատնանշված անձանց որպես վկա ներգրավելու և այլ անհրաժեշտ գործողություններ կատարելու համար: Բացի այդ՝ ՀՀ օրենսդրությամբ ամրագրված է նաև, որ տույժը պետք է լինի արդարացի և պետք է կիրառվի միայն համապատասխան ուսումնասիրությունների արդյունքում ընդունված որոշման

հիման վրա: Կատարված կարգապահական խախտումը քննելիս կարգապահական տույժ նշանակելիս կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պետը ծանոթանում է կատարվածի վերաբերյալ կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի ծառայողի ներկայացրած գրավոր նյութերին, ընդունում համապատասխան որոշում, որը կցվում է կալանավորված անձի կամ դատապարտյալի անձնական գործին: Կարգապահական տույժի տեսակն ընտրելիս հաշվի են առնվում կատարված խախտման պայմանները, կալանավորված անձի կամ դատապարտյալի անձը, վարքը մինչև խախտում կատարելը և ընդհանուր բնութագիրը: Տրվող տույժը պետք է համապատասխանի կատարված խախտման ծանրությանը և բնույթին: Տույժի կիրառման մասին որոշմանը ծանոթանում է կալանավորված անձը կամ դատապարտյալը: Կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ տույժի միջոցի կիրառումը կարող է բողոքարկվել կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին, ինչպես նաև դատական կարգով:

Պատժախուց տեղափոխելուց առաջ ազատազրկվածին բժշկական զննության ենթարկելը բխում է նախ և առաջ հենց նրա շահերից, և նպատակ ունի կանխել այն դեպքերը, երբ պատժախուց կտեղափոխվի այն անձը, ով ունի պատժախցում պահվելու հետ անհամատեղելի հիվանդություններ: Պատժախուց տեղափոխելուց առաջ ազատազրկվածին բժշկական հետազոտության ենթարկելու անհրաժեշտությունը շեշտվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից:

Այնուամենայնիվ, ՀՀ օրենսդրությունը մասնավորապես, <<Կալանավորված անձնաց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմերի ներգրավելու կարգը>> նման պարտադիր պահանջ չի նախատեսում:

Զեկույցի 122-րդ կետի կապակցությամբ

<<Կոշ>> քրեկատարողական հիմնարկի պատժախցերի վիճակի բարելավման ուղղությամբ նախատեսվում է ձեռնարկել համապատասխան միջոցներ: Ինչ վերաբերվում է <<Վարդաշեն>> և <<Նուբարաշեն>> քրեակատարողական հիմնարկներին, ապա ՀՀ ԱՆ «Վարդաշենե ՔԿՀ-ի գերբնակեցման պատճառով երեք պատժախցերը օգտագործվում են որպես սովորական խցեր կամ կարանտինային խցեր և մշտապես զբաղված են, այդ իսկ պատճառով «պատժախուց տեղափոխում» կարգապահական տույժը կիրառելու համար դատապարտյալները տեղափոխվում են ՀՀ ԱՆ «Էրեբունի»

քրեակատարողական հիմնարկի պատժախուց: <<Նուբարաշեն>> քրեակատարողական հիմնարկի պատժախցերում իրականացվել են շին. վերանորոգման աշխատանքներ հետևյալ ուղղություններով՝

1. կապիտալ վերանորոգվել են խցերի պատերը
2. խցերից տարանջատվել և վերանորոգվել են սանհանգույցները
3. կապիտալ վերանորոգվել են կոյուղագծերը և ջրամատակարարման խողովակաշարը,
4. խցերում մոնտաժվել են էլեկտրամատակարարման նոր հաղորդալարեր:

Զեկույցի 123-րդ կետի կապակցությամբ

<<Նուբարաշեն>> քրեակատարողական հիմնարկի պատժախցում պահվող ազատազրկվածներն այժմ օգտվում են նվազագույնը օրական մեկ ժամ բացօթյա զբոսանքից ամեն օր:
Ինչ վերաբերվում է պատժախցում պահվողներին ընթերցանության համար անհրաժեշտ նյութեր չտրամադրելուն, տեսակցություններ և հեռախոսային խոսակցություններ ունենալու և նամակներ ուղարկելու և ստանալու իրավունքից զրկելուն, ապա դա սահմանված է <<Քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի>> 231-րդ կետով, ինչպես նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 98-րդ հոդվածով, ինչպես նաև <<Ձերբակալված և կալանավորված անձնաց պահելու մասին>> ՀՀ օրենքով:
Պատժախուց տեղափոխելը պետք է իր մեջ պարունակի պատժի որոշակի տարրեր, այլապես կկորցնի իր իմաստն ու նշանակությունը, մանավանդ որ անձը պատժախցում կարող է պահվել առավելագույնը 10 կամ 15 օր:

Զեկույցի 124-րդ կետի կապակցությամբ

Տես՝ 73-րդ կետի կապակցությամբ արված մեկնաբանությունը:

Զեկույցի 125-րդ կետի կապակցությամբ

<<Կոշ>> քրեակատարողական հիմնարկի անսարք հեռախոսն արդեն փոխարինվել է նորով, բացի այդ հիմնարկի ղեկավարությունը քայլեր է ձեռնարկում հեռախոսների թիվն ավելացնելու ուղղությամբ:

Զեկույցի 126-րդ կետի կապակցությամբ

Կալանավորված անձանց տեսակցությունների կամ հեռախոսազանգերի արգելման խնդիրը դուրս է ՀՀ արդարադատության նախարարության իրավասությունների շրջանակներից, այն գտնվում է կոնկրետ քրեական գործավ վարույթն իրականացնող անձի կամ մարմնի իրավասության ներքո:

դ. բողոքները, հսկողություն իրականացնելու ընթացակարգերը

Զեկույցի 127-րդ կետի կապակցությամբ

ՀՀ օրենսդրության համաձայն անազատության մեջ պահվող անձն իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմելու պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմ, նրանց վերադաս մարմիններ, դատարան, դատախազություն, մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական միավորումներ և կուսակցություններ, զանգվածային լրատվության միջոցներ, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ կամ կազմակերպություններ: Քրեակատարողական հիմնարկում պահվող անձն իր առաջարկությունները, դիմումները և բողոքները կարող է ներկայացնել ամեն օր ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Գրավոր բողոքները ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում, ուղարկվում են հասցեատերերին: Դատապարտյալի առաջարկությունները, դիմումներն ու բողոքները գրաքննության ենթակա չեն: Արգելվում է որևէ ձևով հետապնդումը անազատության մեջ պահվող անձի նկատմամբ իր իրավունքների և օրինական շահերի խախտումների վերաբերյալ առաջարկություններ, դիմումներ, բողոքներ ներկայացնելու դեպքում: Նման հետապնդում իրականացնող անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն: Օրենսդրության նշված պահանջները խստագույնս պահպանվում են:
Այնուամենայնիվ, քրեակաարողական հիմնարկների ղեկավարներին մեկ անգամ ևս խստագույնս կհանձնարարավի պահպանել վերը նշված դրույթները և պատշաճ հսկողություն կիրականացվի դրանց պահպանության նկատմամբ:

<u>ՀՀ առողջապահության նախարարություն</u>

Նախնական նկատառումներ

- Նորքի հոգեբուժական կլինիկայի վերաբերյալ հայտնում եմ, որ հոգեբուժական ստացիոնար ընդունվելիս հիվանդները տալիս են իրենց գրավոր համաձայնությունը, բացառությամբ այն հիվանդների, որոնք ընդունվում են ոչ հոժարակամ՝ դատարանի որոշման համաձայն:
- Հաշվի առնելով, որ նշված կլինիկայի բաժանմունքներում բուժվում են ինչպես կամավոր ընդունված, այնպես էլ և դատարանի որոշմամբ ոչ հոժարակամ հիմունքներով բուժվող սոցիալապես վտանգավոր հիվանդները, բաց դռների սկզբունքը իրագործելի չէ:

Հիվանդների կենցաղային պայմաններ

- Կլինիկաների մետաղական ճաղերը հանվել են:
- Հատուկ տիպի հարկադիր բուժման բաժանմունքում բուժվող երկու կանայք տեղափոխվել են այլ հիվանդասենյակ, որտեղ պայմանները ավելի բարվոք են:
- Նախատեսվում է կլինիկայում կատարել վերանորոգման աշխատանքներ և բարելավել հիվանդների կենցաղային պայմանները՝ համապատասխան ֆինանսավորման դեպքում:

Անձնակազմ

- ՀՀ ԱՆ հրավերով Ֆրանսիայից ժամանած մասնագետները ներկայում անց են կացնում թվով 25 բուժքույրերի վերապատրաստում:
- Անձնակազմի թիվը և կառուցվածքը հաստատվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից համաձայն գոյություն ունեցող կարգի:

Բուժում

- 6-րդ բաժանմունքին կից կառուցվել է ցանկապատ տարածք, որտեղ փորձաքննվողները զբոսնում են և կարող են զբաղվել մարմնամարզությամբ:
- Ձսպման միջոցները օգտագործվում են հազվադեպ՝ համաձայն ՀՀ ԱՆ հրամանով հաստատված կարգի:

Պահակախումբ

- ՀՀ ոստիկանության պարետային ծառայության աշխատակիցները ղեկավարվում են ՀՀ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով:

- Բոլոր կլինիկաներում հոգեկան խանգարում ունեցող հիվանդները ծանոթանում են անվճար իրավաբանական ծառայությունների հետ կապված իրենց իրավունքներին և նշանակված բուժման հետ, ինչի համար ստորագրում են և նշված փաստաթուղթը կցվում է հիվանդության պատմագրի մեջ:
- Հոգեկան խանգարումներով հիվանդների բուժումը և խնամքը կազմակերպվում է համաձայն <<Հոգեբուժական օգնության մասին>> ՀՀ օրենքի պահանջներին:
- Նորքի և Ավանի կլինիկաներում այժմ տեղադրվել են վճարովի հեռախոսներ:

<u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</u>

Ի պատասխան Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատի գործունեության վերաբերյալ բարձրացված հարցադրումների, ի սկզբանե հարկ ենք համարում շեշտել, որ որ վերջինս բժշկական հաստատություն չէ, այլ համաձայն ՀՀ Կառավարության 2007թ. դեկտեմբերի 7-ի թիվ 1874-Ն որոշման, նախատեսված է 18 տարին լրացած քրոնիկ հոգեկան հիվանդություն կամ մտավոր հետամնացություն ունեցող հաշմանդամների, ծերունական փսիխոզով, ծանր արտահայտված սկլերոզով տառապող անձանց շուրջօրյա խնամքի, սոցիալական սպասարկման և մշտական բնակության համար:

Զեկույցում բարձրացված խնդիրների ու հիմնահարցերի կապակցությամբ հայտնում ենք.

Տուն-ինտերնատի անձնակազմի ընտրությունը
Անձնակազմի ընտրությունը և նրանց աշխատանքի ընդունումը սկսած 2009թ-ից կատարվում է տուն-ինտերնատի տնօրենի կողմից ստեղծված հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Աշխատակիցների վերապատրաստումը

Խնամքի ծառայություններ տրամադրող աշխատակիցները և մասնագետները տարին մեկ անգամ մասնակցում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին: Դասընթացների ավարտին նրանք ստանում են համապատասխան հավաստագրեր: Վերապատրաստման դասընթացների ծրագրով աշխատակիցները ձեռք են բերում գիտելիքներ

սոցիալական աշխատանքի, օրենսդրության /սոցիալական պաշտպանության բնագավառի և հոգեբուժական օգնության վերաբերյալ/, հոգեբանության, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:

Աշխատակիցների վերաբերմունքը խնամվողների նկատմամբ

Աշխատանքի ընդունվելիս, բոլոր աշխատակիցները զգուշացվում են խնամվողների նկատմամբ հարգալից վերաբերմունքի, նրանց անձի արժանապատվության նկատմամբ հարգանքի դրսևորման անհրաժեշտության մասին, ինչպես նաև ծանոթանում են աշխատողների էթիկայի կանոններին ու նորմերին: Նշված հարցերը մաս են կազմում նաև համակարգի աշխատակիցների վերապատրաստման ծրագրերի: Խնամվողների նկատմամբ կոպտություն կամ անհարգալից վերաբերմունք դրսևորող աշխատակիցները պատժվում են կարգապահական տույժի սահմանված կարգով:

Մտավոր և հոգեկան խնդիրներ ունեցող խնամվողների միմյանցից առանձին պահելը
Մտավոր խնդիրներ ունեցող խնամվողները տեղավորվում են առանձին մասնաշենքում: Ելնելով շենքային պայմաններից ոչ բոլոր դեպքերում են տարբեր կարիքներ ունեցող խնամվողներ բնակվում առանձին, սակայն սոցիալ-հոգեբանական ծառայությունները, այդ թվում՝ աշխատանքի թերապիան, տրամադրվում է ըստ իրենց կարիքների և կարողությունների: Հնարավորինս առանձնացվում են նաև հոգեկան առողջության տարբեր խնդիրներ ունեցող անձինք:

Բնակելի մակերեսով ապահովվածությունը, խնամվողների թվի ավելացումը 40-ով
Ելնելով շենքային պայմաններից, իրոք, բնակելի մակերեսով յուրաքանչյուր խնամվողի ապահովվածությունը լիովին չի համապատասխանում ՀՀ Կառավարության սահմանած չափորոշիչներին՝ 5 մ2: Վերոհիշյալ խնդիրը կարգավորելու նպատակով 2010թ.-ին 40 տեղով ավելացվել է տուն-ինտերնատում խնամվողների տեղերի թիվը: Այդ նպատակով ոչ թե կառուցվել է նոր մասնաշենք, այլ վերանորոգվել է 7-րդ մասնաշենքի երկրորդ հարկը: Արդյունքում ավելացվել է 5 սենյակ, որտեղ տեղավորվել են նոր ընդունված խնամվողները:

Խնամվողների իրերը առանձին փակ պահարանում պահելու անհրաժեշտությունը

2010թ.-ին տուն-ինտերնատը ձեռք է բերել անհրաժեշտ քանակով պահարաններ և յուրաքանչյուր խնամվող ունի իր առանձին պահարանը, որտեղ պահում է իր իրերը:

Սննդի չափորոշիչների մասին

Տուն-ինտերնատի խնամվողների սննդապահովումը կազմակերպվում է ՀՀ Կառավարության 2007թ. մայիսի 31-ի թիվ 730-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչներին համապատասխան, ըստ որի հատուկ տիպի տուն-ինտերնատում խնամվողներին տրամադրվող սննդի օրական սպառման նվազագույն էներգետիկ արժեքը չպետք է պակաս լինի 2200 կկալ-ից /Վարդենիսի տուն-ինտերանտում այն փաստացի կազմում է 3500կկալ/: 2010 թվականին սննդի բյուջեն եղել է 194,3 մլն. դրամ: Վարդենիսի տուն-ինտերնատում յուրաքանչյուր խնամվողի մեկ օրվա ծախսը 2011թ.-ին կազմում է 5066,3 դրամ, որից 1579,6 դրամը սննդի համար /2010թ.-ին՝ համապատասխանաբար՝ 5021,1 դրամ և 1387,0 դրամ/, այստեղից հետևում է, որ սննդի համար տրամադրվող միջոցները տարեց-տարի ավելացվում են: Ամենօրյա ճաշացանկը կազմվում և ստորագրվում է տուն-ինտերնատի տնօրենի և գլխավոր բժշկի կողմից և փակցվում է ճաշարանում՝ տեսանելի տեղում: Ստանդարտ ճաշացանկերի օրինակները կցվում են:

Հոգեբույժների թափուր տեղերը

Տուն-ինտերնատում առկա է հոգեբույժի թափուր հաստիքներ: Տուն-ինտերնատի տնօրինությունն ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը դիմել էին համապատասխան մարմիններին՝ անհրաժեշտ մասնագետներ Վարդենիս գործուղելու խնդրանքով, սակայն նկատի ունենալով տեղն ու աշխատավարձի չափը, դիմողներ չեն եղել: Աշխատանքները շարունակվում են: Ներկայումս տուն-ինտերնատում նախատեսված հոգեբույժի 4 հաստիքից զբաղված է հոգեբույժի 2 հաստիքը:

Խնամվողների անհատական բուժման գրավոր պլաններ
Ինչպես արդեն ի սկզբանե պարզաբանվել է՝ Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատը բժշկական հաստատություն չէ, այլ համաձայն ՀՀ Կառավարության 2007թ. դեկտեմբերի 7-ի թիվ 1874-Ն որոշման, նախատեսված է 18 տարին լրացած քրոնիկ հոգեկան հիվանդություն կամ մտավոր հետամնացություն ունեցող հաշմանդամների, ծերունական փսիխոզով, ծանր արտահայտված սկլերոզով տառապող անձանց շուրջօրյա խնամքի, սոցիալական սպասարկման և մշտական բնակության համար, տուն-ինտերնատի յուրաքանչյուր խնամվողի համար

լրացվում է սոցիալ-հոգեբանական անհատական վերականգնման քարտ, որտեղ նշվում են թե վերականգնման ինչ միջոցառումներ են իրականացվում սոցիալական աշխատողի և հոգեբանի կողմից: Ինչ վերաբերում է խնամվողի բժշկական քարտին, ապա բոլոր խնամվողներն ունեն անհատական բժշկական քարտեր, որտեղ բժշկի կողմից կատարվում են համապատասխան գրառումներ նշանակված բուժական միջոցառումների, դեղորայքի վերաբերյալ: Անհատական բժշկական քարտերը պահվում են բժշկի մոտ:

Մեկուսարանների վերաբերյալ

Տուն-ինտերնատն ունի երկու մեկուսարան, որոնք բացվել են 7-րդ մասնաշենքում 2010թ.-ին, վերանորոգումից հետո:

Ֆիզիկական կամ քիմիական զսպման միջոցների կիրառումը /զսպաշապիկ և այլն/

Համաձայն <<Հոգեբուժական օգնության մասին>> ՀՀ օրենքի, հոգեբուժական կազմակերպություններում գտնվող՝ ոչ հոժարակամ հոսպիտալացված հոգեկան խանգարմամբ տառապող անձի նկատմամբ կարող են կիրառվել ֆիզիկական զսպման /գոտիներ, հատուկ հագուստներ/ ու մեկուսացման միջոցներ և հանդարտեցման բժշկական մեթոդներ միայն հոգեբույժի պատճառաբանված որոշմամբ, որոնց կիրառման և տևողության մասին բժշկական փաստաթղթերում կատարվում են համապատասխան գրառումներ:

Վարդենիսի տուն-ինտերնատում ևս պահպանվում է վերը նշված կարգը, բացառությամբ գոտիների և հատուկ հագուստների կիրառման: Տուն-ինտերնատում հիմնականում զսպման միջոցները քիմիական են, այսինքն՝ դեղորայքային, որը նշանակվում հոգեբույժի որոշմամբ և ինչի մասին կատարվում է համապատասխան գրառում հատուկ մատյանում, որը պահվում է գլխավոր բժշկի մոտ: Ելնելով խնամվողի ագրեսիվ վարքագծից կարող է որոշվել նաև նրան ժամանակավորապես մեկուսացնել:

Հարազատների հետ կապը

Խնամվողների հարազատների կողմից տուն-ինտերնատում խնամվողների վերաբերյալ հարցումներին տրամադրվում է անհրաժեշտ տեղեկատվություն: Սոցիալական աշխատողների և խնամք իրականացնող այլ աշխատակիցների միջոցով մշտական կապ է պահպանվում խնամվողների հարազատների հետ: Անհրաժեշտության դեպքում սոց. աշխատողները այցելում են հարազատներին, ինչի վերաբերյալ համապատասխան գրառում է կատարվում խնամվողի անձնական գործում:

Տուն-ինտերնատում կան նաև տեսակցության գրքեր, որոնցում հարազատների կողմից այցելությունների ժամանակ կատարվում են գրառումներ, այդ թվում գրանցվում են բողոքներ:
Տուն-ինտերնատում առկա է խնամվողների համար նախատեսված 8 հեռախոս:

Խնամվողների ընդունելության կարգը

Վարդենիսի տուն-ինտերնատ, որպես բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ հաստատություն, քաղաքացիների ընդունելությունը կազմակերպվում է արդեն հիշատակված ՀՀ Կառավարության 2007թ. դեկտեմբերի 7-ի թիվ 1874-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան: Այսպես՝ խնամք ստանալու համար դրա կարիքն ունեցող հաճախորդը կամ նրա խնամակալը /եթե անձը դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ/ դիմում էհաճախորդի բնակության վայրի սոցիալական ծառայությունների տարածքային մարմին, ներկայացնելով համապատասխան փաստաթղթերը:

Դիմումը հաճախորդի խնամակալի կողմից ներկայացվելու դեպքում ներկայացվում են նաև՝
ա/խնամակալի անձը հաստատող փաստաթուղթը և դրա պատճենը,
բ/ քաղաքացուն անգործունակ ճանաչելու մասին դատարանի որոշման պատճենը,
գ/քաղաքացու նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման պատճենը:

Վարդենիսի տուն-ինտերնատ ոչ հոժարակամ հոսպիտալացում, որպես այդպիսին չի իրականացվում, քանի որ այնտեղ հիմնականում ընդունվում են դատարանի կողմից անգործունակ ճանաչված անձինք, որոնց համաձայնությունը չի պահանջվում: Եղել են դեպքեր, երբ Վարդենիսի տուն-ինտերնատ է ընդունվել անգործունակ չճանաչված անձը՝ իր դիմումի համաձայն, այսինքն՝ իրականացվել է հոժարակամ հոսպիտալացում: Այս դեպքում խնամվողը կարող է դուրս գրվի իր կամքով, հոգեբույժի եզրակացության հիման վրա:

Լրացուցիչ հարցեր

- Անհրաժեշտ է մշակել մտավոր առողջության ազգային համապարփակ ծրագիր, որը կլրացնի հոգեբուժական բժշկա-սոցիալական հաստատություններում առկա բացերը

Մտավոր առողջության ազգային համապարփակ ծրագիր մշակելու հարցը կքննարկվի ՀՀ առողջապահության նախարարության հետ:

- Դատարան դիմելու՝ խնամվողի իրավունքը

Ինչպես վերը նշվեց, Վարդենիսի տուն-ինտերնատում խնամվում են հիմնականում անգործունակ քաղաքացիներ, նրանք քաղաքացիական օրենսդրության համաձայն որևէ իրավական գործողություն կատարելու իրավասություն չունեն, նրանց փոխարեն կարող են դատարան դիմել նրանց խնամակալները: Իսկ եթե տուն-ինտերնատի խնամվողը դատարանի որոշմամբ անգործունակ ճանաչված չէ, ապա ինքը կարող է դիմել և իրացնել իր իրավունքներն առանց սահմանափակման:

- Տուն-ինտերնատից դուրս գրման հնարավորությունը կապված խնամվողի վիճակի փոփոխության հետ

Անգործունակ չճանաչված անձինք իրենց դիմումի և հոգեբույժի եզրակացության հիման վրա կարող են դուրս գրվել տուն-ինտերնատից: Նման դեպք եղել է տուն-ինտերնատում՝ 2008թ. և 2010 թ. տուն-ինտերնատից դուրս են գրվել խնամվողներ՝ կապված իրենց առողջական վիճակի փոփոխության հետ:

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրի

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկի անվանումը	1-ին փուլ 2009-2012թթ.				2-րդ փուլ 2013-2015թթ.			3-րդ փուլ 2016-2018թթ.		
	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
'Էջմիածին' (անվանումը՝ պայմանական, ստեղծվելիք)	Կապիտալ շինարարության կատարում	Կապիտալ շինարարության կատարում	Կապիտալ շինարարության ավարտ և շահագործման հանձնում							
'Մեղրի'	Գործունեության դադարեցում									
'Գորիս'	Հողատարածքի ձեռք բերում Գորիսին հարակից վայրում և նախագծանախահաշվային աշխատանքների կատարում	Նախագծանախահաշվային աշխատանքների ավարտ, Կապիտալ շինարարության կատարում	Կապիտալ շինարարության կատարում	Կապիտալ շինարարության ավարտ և շահագործման հանձնում						
'Սևան'	Ներկայիս հիմնարկին հարակից և անհրաժեշտ հողատարածքի ձեռք բերման	Ներկայիս հիմնարկին հարակից և անհրաժեշտ հողատարածքի ձեռք բերում	Նախագծանախահաշվային աշխատանքների կատարում	Կապիտալ շինարարության կատարում	Կապիտալ շինարարության կատարում	Կապիտալ շինարարության կատարում	Կապիտալ շինարարության ավարտ և շահագործման հանձնում			

	հարցի ուսումնասի-րում									
‘Կոշ’								Գործունեության դադարե-ցում ‘Սևան’ ՔԿՀ-ի շահա•որ-ծումից հետո		
‘Երևան’ (անվանումը՝ պայմանական, ստեղծվելիք)				Անհրա-ժեշտ հողա-տարածքի ձեռք բեր-ման հրնա-րավորու-թյան ու-սունասի-րում	Անհրաժեշտ հողատա-րածքի ձեռք բերում	Նախագծա նախահաշ-վային աշխատան քների կատարում	Կապիտալ շինարարու թյան կատարում	Կապիտալ շինարարու թյան կատարում	Կապիտա լ շինարար ության կատարու մ	Կապիտալ շինարարո ության ավարտ և շահագործ ման հանձնում
‘Նուբարաշեն’										Գործու-նեության դադարե-ցում ‘Երևան’ ՔԿՀ-ի շահա•ործ ումից հետո
‘Էրեբունի’										Գործու-նեության դադարե-ցում ‘Երևան’ ՔԿՀ-ի շահա•ործ

										ումից հետո
‘Վարդաշեն’										Գործու-նեության դադարե-ցում ‘Երևան’ ՔԿՀ-ի շահագործ ումից հետո
‘Դատապարտյալների հիվանդանոց’										Գործու-նեության դադարե-ցում ‘Երևան’ ՔԿՀ-ի շահագործ ումից հետո
‘Երևան-կենտրոն’										Գործու-նեության դադարե-ցում ‘Երևան’ ՔԿՀ-ի շահագործ ումից հետո
‘Աբովյան’				Նախա•ծա նախահաշ-վային աշխատան քների կատարում	Կապիտալ շինարարու-թյան և վերանորո•-ման կատարում					
‘Վանաձոր’										Կապիտալ վերանորո գման

										նախագծա նախահաշ վային աշխատա նքների կատարում
‘Արթիկ’										Կապիտալ վերանորո գման նախագծա նախահաշ վային աշխատա նքների կատարում
‘Հրազդան’										Կապիտալ վերանորո գման նախագծա նախահաշ վային աշխատա նքների կատարում